

891 99a/v

+

3 7 032



ՀԱՆԴԵՍ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Պ 2 ✓2

ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ

Փ Ա Ր Ե Զ

1934




"V E M,"
REVUE BIMESTRIELLE ARMÉNIENNE
Directeur : S. VRATZIAN

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

*

Յ. Ճ. Սիրոհնի — Ապրիլեան Եղեռնը	1
Յ. ԶԱՀՐԵԱՆ — Սայեաք Նովա	12
Հ. ԲԱԼՈՒԵԱՆ — Միսաք Մեծարեց	21
Յ. ՔԻՒՐՏԵԱՆ — Քուչակեան տաղաշարքերու հմագոյն տպագրութիւնը	41
Վ. ՓԱՓԱԶԵԱՆ — Հայկական Բարենորոգումները (Վեբչ)	54
Զ. ԱԽԱՂՈՎ — Բարումի Խորհրդաժողովը	80
ՄՈՒՐԱՏԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ (Վեբչ)	94
ՄԵՐ ՀԱՐԵՒԱՆՆԵՐԻ ՄՈՏ — 1. Մի Խօրոմի Պատմութիւն.	
2. Մուսաւաքի Հաղորդագրութիւնը	109
ԱՆՑԵԱԼՔ — Մ. Վարանդեան — Թ. Թորոմանեան — Ս. Դեմուրեան — Ռ. Անոփեան	119
ԿԵԼՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅՑԹ — Արովեանի Մահիան Շուրջ, Խ. «Անյուշ» թէ «Անյուշ», Խ. — Ս. Խաչատրեանի Պատկերախորհրդային Գրողների Միուրեան կանոնագիրը — հանդէսը — Հայ Գրողների Ընկերակցութեան Միցանակը — Ղազարոս Աղայեանի Անյայտ Ռուանաւորը	123
ԳԻՒԹ ԵՒ ՄԱՄՈՒԼ — Մելքոնեան Ֆոնդը — Ճարտարապետ Բունիածնի «Գառնին» — Պրոֆ. Մելիքսէրէկի Աշխատութիւնները — Հայկական Հեմեաքներ — Թաւշէ Դիլիտատորը — Կարմոյ Աշխարհ	129
ԳՐԱԽՈՍԱԿԱՆ — Կարլո Սփորցա, «Եւրոպայի Բունատիրութիւնները», Ն. Բաղալեան — Ս. Բախտիկեան, «Արարէկի եւ Շրջակայի Դիւղերը», Ա. Սեւան — Ա. Դիւլխանդանեան, «Հայ-Թաքարական Բնդիարումները», Ս. Վ. — Գր. Յ. Աղարքեան, «Հայաստանի Լեռսիտները», Վ.	132
ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ	141
ՅԱԿԵԼԻԱԾ — Վահրամ Եալ. Մանկունի, «Գէորգ Գ. եւ իր Ժամանակը»	49-64

Gérant: V. Hampartzoumian



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԻՇ
ՄՇԱԿՈՅՑԹԻ ԵՒ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Խմբագիր՝ Ս. ՎՐԱՅԵԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 2

1934

ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ

Յ. Ճ. Սիրոհնի

ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԸ

(Վերապրողի մը յուշերէն)

I

Ուրկէ՞ ուր միտքդ ինկաւ մոխերը խառնել, Վէ՞մ բարեկամ։ Կարծեցիր թէ քսան տարին բաւակա՞ն է որպէսզի սպի կապեն վէրքերը, ու ա՛լ չկոստայ սուգը։

Հարւածը զոր կրեցինք դուն եւ ես, ու մեզ հետ, ամբողջ ցեղ մը, կրնա՞ն մեղմել տարիները՝ որքան ալ գեղեն իրարու վրա, ու իրարու վրա գեղեն դէպքերը՝ մէկը միւսէն աւելի դաժան։

Աղէտը, որ 1915ին պայթեցաւ մեր ժողովրդի գլխուն, գեռ վերջացած չէ։ Ան մեր ցեղը ցնցեց իր հիմէն, ու գեռ կը ցնցէ։ Յոյսի եւ հիասթափութեան, ցնծութեան ու արցունքի շատ պահեր ապրեցանք անկէ յետոյ, բայց դժւար թէ ցեղը իր մէջքը շտկէ այնքան շուտ։ Աղէտը գեռ կը գալարէ մեր հոգիները։ Ու մեր ժողովուրդը գեռ կը մոնչէ վիրաւոր առիւծի մը պէս։

Երբ գեռ վէրքը կը կսկծայ այսպէս մեր ներսը, ինչպէ՞ս կուդես որ փորձէի մէկը նժարը զնել Աղէտը, ու զայն պատմել նորեռուն՝ քսան տարի իսկ չանցած այն զարհուրելի գիշերէն ի վեր որ Ապրիլ Տասնըմէկ կը կոչէի։

Օ՛, այդ պատմութիւնը թող օր մը գրեն գալոց տղաքը, անոնք որ աղէտը չտեսան, չապրեցան կսկիծն ու սուգը, ու կրնան դէպքերը քննել պաղարիւն, դատաւորի մը պէս։ Իսկ ինծի թոյլ տուր, որ պահ մը յուշերս պրատեմ, հին օրերը ապրելու համար ի նորոյ իրենց յուղումներով ու խոռվքներով։



502 - 2001

II

ԹՈՒՐՔԸ ԴԻՄԱԿԸ ԿԸ ՊԱՏՌԵ

Հնդկանուր պատերազմը պատուց թուրքին դիմակը: Կարծես թէ ան զգաց որ եկած է կապանքները փշրելու ժամը: Ան հայուն սկսաւ նայիլ այլեւս իբրեւ զանցառելի քանակութեան մը: Ան այլեւս չէր սեպեր հսկա'յ Եւրոպան. բանի տեղ կը դրէք հայը:

Պատերազմը, միւս կողմէ, սթափեցուց հայերը իրենց գինովութենէն: Զգացինք որ ի զուր են եղեր մեր ցնծութիւնները. բարենորոգումներու խնդիրը անգամ մըն ալ ջուրը կիյնար՝ թուրքին քրքիջներուն մէջ: Վէսթէնէնկ, հոլանտացի ընդհանուր իբր թէ պիտի հսկէր Կարնոյ, Սեբաստիոյ, Տրասլիզոնի մէջ կիրարկւելիք բարենորոգումներուն վրա, կընդհատէր իր ուղեւութիւնը դէպի թուրքիա: Իր պաշտօնակիցը, Հոփ, որ արդէն Վան հասած էր՝ իբր քննիչ Վանի, Բաղէշի, Տիգրանակերտի եւ Խարբերդի նահանգներուն, շուտով ետ կը դառնար, իր եկած տեղը:

Թուրքը դեռ պատերազմի մէջ մտած չէր՝ իր դժոխային ծրադիրները աւելի ազատ գլուխ հանելու համար: Բայց արդէն դաշոյնը կը սրէր մութին մէջ: Քայլ առ քայլ կը դիմէր իր եղեւնական յատակապծին:

Որպէսզի իթթիհատը կարենար վաղը ջախջախել հայ ժողովները՝ պէտք էր որ նախ անոր ակռաները քաշէր: Ան ջանաց նախ երիտասարդութիւնը անվնաս դարձնել, ու նիւթապէս ընկճել հայ ժողովուրդը:

Զօրաշարժը ըրած էր արդէն, ու զէնքի տակ կը ժողվէր հայն ալ թուրքին հետ: Աւելի քան հարիւր հաղար հայ դինուրներ թուրք բանակն էին, մեծ մասը ցրւած բանուրական վաշտերու (ամելէ քապուրու) մէջ, որպէսզի բռնկումի մը պահուն զէնք չունենան ձեռքերնին:

Ու պէտք էր նաեւ տնտեսապէս կոտրէր հայ ժողովուրդին մէջքն ալ: Պատերազմական տուրք (թէքալիֆաքը հարալիյէ) զոր կառավարութիւնը դրաւ ապրանք ժողվելու համար առեւտրականներէն, լաւագոյն առիթն էր տնտեսապէս ալ շշմեցնելու համար հայը:

Բայց իթթիհատը մութին մէջ կը պատրաստէր նաեւ մեծ ծրադիրը: Միւտափայը Միլլիէն (Ազգային Պաշտպանութեան Մարտին) թեւերը սոթտած դրամ կը ժողվէր: Զեւականին մէջ հայրենիքն նիւթապէս օգնելու համար կազմւած էր ան. նոյնիսկ հայեր կանչւած էին իր զանազան մասնաճիւղերուն մէջ: Բայց ամենէն

վտանգաւոր հիմնարկութիւններէն մէկն էր, որովհետեւ իր ժողոված դրամները պիտի յատկացւէին բացառապէս չէթէներու կազմակերպութեան, չէթէներ՝ որոնք հետագային հայ միայն բնաջնջեցին:

Անդին, Թէշֆիլաքը Մախսուսէն (Մասնաւոր կազմակերպութիւնը) մարմին կառնէր մութին մէջ, Պէհակտտին Շաքիրի ջանքերով: նապատակն էր չէթէներ կազմակերպել՝ որպէսզի նեղեն ուռւսերը, երբ կուրը փրթի: Հետագային հայ միայն ջարդեցին այդ չէթէները:

Առառ մը ազգ մը փակցւած կը գտնենք Զինուրական վարժարանի պատը: — Խոլամ սպացուներէն անոնք որ կը փափաքին անկանոն ուժերու մէջ ծառայել, կը հրաւիրւին ներկայանալ դպրոցի հրամանատարութեան:

Ազդը մտահոգիչ է: Ինչո՞ւ միայն իսլամ սպացուները:

Արար ընկեր մը հետ ի հետ լուր կը բերէ յաջորդ առառուն, երբ քանի մը հայ սպաներ հաւաքւած ենք դպրոցի պատին տակ, մտահոգ ու ընկճած: Կըսէ թէ ինքն ալ դիմեր է, բայց մերժեր են, զուտ թուրք ըլլալուն: Կաւելցնէ թէ արձանագրւողները անմիջապէս դրւեր են դպրոցի ուսուցիչներէն հարիւրապետ Վէյսէլ՝ պէյի հրամանին տակ՝ իբր չէթէի հրամանատար մարզւելու համար:

Լուրը կը հասցեմ Ազատամարտ: Արդէն իսկ բաւական մտահոգիչ է դէպքը: Ու երեւակայել թէ թուրքերը պատերազմի մէջ դեռ մտած ալ չեն: (Վէյսէլ պէյի մարզած այս չէթէ-քօմանտանիները եղան որ յետոյ ցրւեցան հայաշատ շըջանները՝ ջարդերը զեկավարելու համար):

Արդէն պարզ է մեզ համար թուրքին դժոխային ծրագիրը: Բայց նաւած ենք խելօք մը, իրենց մահւան սպասող դառնուկներու պէս: Ոչ մէկ խլրտում, ոչ մէկ ընդզում, ոչ մէկ բողոքի ճիչ, որպէսզի սպատրւակ դառնար թուրքերուն ձեռքը: Նոյնիսկ Հ.Յ.Դ. Ցրտ Ընդհ. Ժողովը, գումարւած 1914 թ. ամառը Կարնոյ մէջ, — երբ արդէն թնդանօթները կը դոռային եւրոպական ճակատներու վրա, — գարով հանդերձ «այն եղրակացութեան որ կուսակցութիւնը պիտի շարունակէ մնալ անյողդողդ ընդդիմադրի եւ անաչառ քննադատի դերին մէջ հանդէպ իթթիհատի, պայքարելով անոր ազգայնական վնասակար եւ հակապետական քաղաքականութեան դէմ», չժխտեց «ողործակցութեան սկզբունքը այն համապետական կարեւոր ինդիրներու համար, որոնք համապատասխան են կուսակցութեան ծրապային պահանջներուն»:

Աւելին: Դաշնակցութեան գերագոյն մարմինը դէմ ըլլալով հանդերձ պատերազմին, եւ զայն վնասակար գտնելով հանդերձ որդքան հայ ժողովուրդի, նոյնքան թուրք պետութեան շահերուն, եւ միեւնոյն ատեն որոշելով հանդերձ համոզել թուրք վարիչները, որպէսզի զոհ չերթան արկածախնդրութեանց, կը հռչակէր հանդիսաւորապէս «որ ամէն ոք պարտաւոր է կատարել իր քաղաքացիականութիւնը իր երկրին հանդէպ :»

Ոչ մէկ պատրւակ, մանաւանդ պատերազմի պայթումէն յետոյ, որպէսզի թուրքը կարենար չքմեղացնել Սարսափները որոնց կերպիտի տար չուտով ամբողջ ժողովուրդ մը :

Ու այս համակերպութիւնը նոյն իսկ վրդովիչ դէպքերուն ի լուր՝ որոնց արձագանգը կը հասնէր արդէն դաւառներէն : Սպանութիւններն ու թալանը յաճախաղէս էին արդէն դաւառներուն մէջ . Բայց Երզնկայի առաջնորդ Սահակ վարդ . Օտարաշեանի սպանութիւնը ժամբան, առաջին ահազանգը եղաւ :

Քօսթանցայի 1914ի հնչակեան պատգ . ժողովէն անմիջապէս յետոյ թալէաթը սպաննելու նոպատակով Պոլիս մտնող հնչակեան ահարեկիչներու ձերբակալութիւնն իսկ չէր կրնար պատրւակ դաւառալ : Մասնակի դէպք մըն էր, եթէ կուգէք՝ տղայական ձեռնարկ մը, որուն չէր կրնար պատասխանատու նկատել ժողովուրդ մը : Բայց թալէաթ շահազործեց զանիկա, որպէսզի սարսափի եւ մզձաւանջի տակ պահէ հայ ժողովուրդը : Հնչակեաններով բանտերը լեցուց՝ առանց մաղելու յանցաւորները, մինչեւ որ անոնցմէ քսանր կախել տւաւ Պայազիտի հրապարակին վրայ, անմեղն ալ յանցաւորին հետ :

Պատրւակները յետոյ է որ կարկանդակ թուրքը՝ իր զարհուրելի ցաւը չքմեղացնելու համար :


III

ՄՂՋԱՒԱՆՁԲ

Երթան, երթան ու ետ չդառնան այն զարհուրելի ամիսները, որոնք սկսան 1914 յուլիսին եւ եկան հասան մինչեւ 1915ի ապրիլը : Ամբողջ ինը ամիս ապրեցանք ահոելի մզձաւանջ մը :

Անշուշտ որ շատ էին մեր մէջ լաւատեսները՝ որոնք կը կարծէին թէ քանի մը շարթւան ինդիր է ընդհ . պատերազմը : Եթէ պետութիւններ եղան որոնք կարծեցին թէ շուտով վերջ կը դանէ ամէն բան, շատ չտեսնենք մեր ժողովուրդին միամտութիւնը :

Նոյն իսկ մեղմէ շատերը չէին կարծէր որ թուրքիան պատե-



բազմի կը մտնէ, ու կօգտուի առիթէն հայ ժողովուրդը դիտապաստ փոքրու համար: Արկածախնդրութիւն էր թուրքին համար, իր զէնքերուն բախտը փորձել, ու չէր կարծւեր որ այնքան յիմար կը լան թուրքերը արկածախնդրութիւն մը մէջ նետւելու համար:

Քանի՛ քանիները մէր երէց ընկերներէն կրնային արտասահման անցնել ու դահիճին ճանկը չի յնալ: Շահրիկեանը, Ակնունին, եւ ուրիշ շատ շատերը գործ մը չունէին Պոլիս, ոչ աւ ընտանեկան կապեր: Սակայն յամառեցան չմեկնել Պոլիս: Եթէ դասն օրերու մէջ հայ ժողովուրդը առանձին չգտելու մտահոգութիւնը կար իրենց այս յամառութեանը տակ, կար նաեւ միամտութիւնը թէ դէպքերը չեն կրնար հասնիլ իրենց ծայրայեղութեան:

Ու զեռ կայ աւելի՛ եղերականը: Կարծես թէ ճակատագիրը զիրենք դէպի աղէտը քաշեր՝ նոյն իսկ Պոլիս դարձան արտասահման դժուող մէր ընկերներէն շատերը, որոնք եւս զոհ պիտի դատնային յետոյ հայաջինջ եղեննին: Արդարեւ, 1914ի ամրան Եւրոպա էին Գ. Խաժակը, Բարսեղ Շահպաղը, Սիամանթօն, եւ ընդհանուր սկսած էր արդէն՝ երբ թուրքիա դարձան:

Կարնոյ Տրդ Ընդհ. Ժողովէն մոայլ վերադարձան սակայն մէր ընկերները: Էօմէր Նամին եւ Իթթիհատի կեդրոնի անդամներէն Պէհակտունին Շաքիրը՝ որոնք Կարնոյ մէջ իսկ չփում ունեցեր էին Հ. Յ. Ընդհ. Ժողովի անդամներուն հետ, ապահովելու համար Դաշնակցութեան գործակցութիւնը ուստերուն դէմ թրքական ձեռնարկի մը պարագային, զգացուցեր էին թէ Իթթիհատը վճռած է հարթել իր ճամբուն վրա բոլոր խոչընդուները:

Զգուշական միջոցներ ձեռք առնեցան իսկոյն կուսակցութեան ծոցին մէջ: Կազմակերպութիւնը վերածւեցաւ դաւադրական զըջանի դրութեան: Զնջւեցան ժողովները, վիճաբանութիւնները, ընտրութիւնները: Ստեղծւեցան նշանակովի մարմիններ, որոնք, մէծ մասմբ նոր դէմքերէ բաղկացած, անծանօթ էին շարքերուն: Կազմւեցան մտաւորական, կանացի, զինւորական անջատ շատ մը խումբեր՝ որոնք իրենց հաւաքումները կունենային ու դասախոսութիւնները: Հայկ. Հարցն էր բոլորին ալ ընթացիկ օրակարգը. Խաժակը կը դասախոսէր մտաւորական ընկերներու, որոնցմէ ամէն մէկը կերթար կրկնել խումբի մը:

Հայ ժողովուրդը իր սուտար զանդւածով լաւատես էր սակայն: Կը հաւտար ու կը ցանկար Փրանսական զէնքերու յաղթանակին: Դեռ Գերմանիոյ զինակիցը դարձած չէր թուրքիա՝ որպէսզի հայ ժողովուրդը իր համակրութիւնը կապէր Գերմանիոյ ոսոխներուն

միմիայն ի հեճուկս թուրքերուն։ Աւանդական համակրութիւն մըն էր աւելի որ Հայերը կը մզէր դէպի մըրանսան։ Զգիտենք տարբէ՞ր կըլլար հայ ժողովուրդին բախտը՝ եթէ իր համակրանքը կամէր Գերմանիոյ։ Պարզ էր միայն որ հայ ժողովուրդը կը ցանկար Դաշնակիցներու յաղթանակին։ Ի դուր չէ որ Գարակօօ թուրք երգիծաթերթը անգամ մը նկատել կուտար ծաղրանկարի մը տակ։ «Հայերուն դէմքը նայեցէք, ու պիտի հասկնաք թէ յաղթողը Փրանսացիներն են թէ գերմանացիները»։

Միամտութիւն կըլլար կարծելու թէ հոգեկան այս դրութեան մէջ՝ հանրային ու մշակութային կեանքը կրնար շարունակւիլ Պոլս։ Դադրած էր հանրային ամէն ձեռնարկ։ Ազգ. Երեսփ. Ժողովը ա'լ նիստ չէր ընէր, ու միութիւնները գրեթէ կազմալուծած էին։ Ազատամարտն անգամ առանց խմբագրականի լոյս կը տեսնէր ա'լ։ Օրւան նորութիւնը առողջապահական դասախոսութիւններն էին՝ զորս Հայ Բժշկական Միութիւնը կը սարգէր Բերայի արհեստանոցին մէջ, հրւանդապահ պատրաստելու համար Օսմ. բանակին։

Իսկ թուրքը, անդին, կը տեսնէր իր նախապատրաստութիւնները։ Կը ճշտէր հասցէնները՝ որպէսզի իր աչքին տակ ունենայ իրեն պէտք եղողները։ Շատ մը ընկերներ իրեւ թէ թիւրիմացութեամբ պահականոց կը տարւին։ Հասցէնին կառնւի ու թող կը տրւին։ Նըման փորձի կենթարկւին, օրինակի համար, Սարգիս Մինասեանը, Արիս Խորայէլեանը եւ ուրիշներ։

Արտասովոր գաղտնիք մը պարզած պիտի չըլլամ եթէ ըսեմ թէ Դաշնակցութիւնը տեղեակ էր թրքական «նախապատրաստութեանց»։ Լուր ունէինք, – տեղը չէ յիշատակելու մեր ունեցած աղբիւրները, – թէ ցանկեր զրկւած են ոստիկանութեանց, որպէսզի ոստիկանութեան աչքը հոն մատնանշւած անձերուն վրա ըլլայ՝ մինչեւ որ նոր «Հարահանգ» զրկւի։ Միամիտ չէինք չկասկածելու համար որ բանին մէջ բան կայ։ Դաշնակցութեան համապատասխան մարմինը նոյնիսկ զդուշութեան յորդոր կարդացած էր ընկերներէ մեծ մասին, եւ մեղքը իրենը չէ երբ անփոյթ գտնւեցան անոնք ու մըջոցներ ձեռք չառին իրենց հետքը կորսնցնելու համար, – չեմ լսեր փախելու, որովհետեւ երբ իմացւեցաւ ցանկերու պարագան՝ արդէն փակ էին ճամբաները։

IV

ՄԱՆԳԱՂԸ

Ու ահա վերջին շաբաթը։ Ամէն անգամ որ կը յիշեմ այդ զարգութելի շաբաթը՝ փուշ փուշ կըլլան մազերս։

Դժբախտ բան է զգալ որ մթնոլորտին մէջ անշնչելի թոյն մը կայ, որ կը թանձրանայ երթալով։ Զգալ մանաւանդ որ մութին մէջ կը յեսանւի դաշոյնը, ու վայրկեանէ վայրկեան սպասել որ դահիճը դուռդ ծեծէ։

Անշուշտ դարձեալ կան լաւատեսները մեր մէջ։ Իրենք ալ կը զգան որ խորհրդաւոր բան մը կանցնի-կը դառնայ մութին մէջ, բայց դեռ կըհաւատան որ արտասովոր բան մը չկայ Հայերուն համար։ Ամիսէ մը ի վեր է որ Դաշնակից նաւատորմը Տարտանէլը կը ծեծէ, ահուգողի մատնելով թուրքերը՝ Բարձր Դուռն ալ հետը։ Նոյն իսկ ստոյդ տեղէ լուր ունինք թէ արդէն պալատին ու Բ. Դըրան մէջ կապոցները կը կապւին Անատոլու փոխադրելու համար Սուլթանն ու կառավարութիւնը, որովհետեւ օրէ օր կը սպասել դաշնակից նաւատորմին ներս մտնելուն։ Արդ, թուրքերուն խորհրդաւոր իրարանցումները այս մտահոգութեան վերագրողներ կան մեր մէջ։ Շատ շատ կը կարծեն որ եթէ կառավարութիւնը Անատոլու քաշչի քանի մը հարիւր հայ երեւելիներ ալ թերեւս հետը տանի իրը պատանդ։ Ակնունին այս կարծիքէն է։ Զկրնար հաւտալ որ թալքաթն ու իր ընկերները այնքան ստորին կըլլան որ կը բնաջնջեն իրենց երկկւան բարեկամները։ Թերեւս միտքը կը բերէ որ քանի մը տարի առաջ, Քեամիլ փաշայի դահլիճին օրով, ինքն էր Իթթիհատական պետերը բանտէն փրկողը, ու չի յուսար, որ այդքան պերախտ կըլլան անոնք հիմա։ (Մարտ 31ի դէպքին ալ քանի մը իթթիհատական պետեր Զօհրապ ինքն էր պահեր իր տունը։)

Բախտը բերեր էր որ միւսներէն քիչ մը աւելի զգուշ ըլլայ այս տողերը գրողը։ Իրեւ սպայութենէ փախստական արդէն ամիսներէ ի վեր կը ջանայի հետքս ծածկել, ու գիշերները միայն տպարան կուգայի։ Թէեւ դեռ տուն տուն խուզարկել սկսած չէին, բայց կըրնային ձեռք անցնել դիպւածով, տունը կամ փողոցը։ Մեղքը չէի մտներ եթէ քիչ մը զգուշ ըլլայի։ Մեր ընկերներէն շատ շատերուն հոգը չէր սակայն։ Ոչ մէկ զգուշութիւն։ Զնայելով որ ապապրւած էր իրենց մէջտեղները շատ չերենալ, հետքերնին կորսնցնել, փոխել իրենց բնակարանը։ Տեսակ մը ընդարձացում թուլցուցեր էր ամէնուն հոգին, ինչպէս ոչխարը զոր սպանդանոց ճամբայ կը հանեն։

Ապրիլ 7-20. — Գիշերը արտասովոր խորհրդակցութիւն մը կայ Ազատամարտի շէնքին մէջ։ Հոն են պատասխանատու բոլոր ընկերները։ Մտահոգիչ են օրւան լուրերը, ու անհրաժեշտ է կարգադրութիւններ ընել։ Վարդպէսը լուր է տւած թէ Բարձր Դրան մէջ այդ օրը արտասովոր է եղած յուղումը։ Կըսւի թէ թուրք վարիչները կը

վախնան որ անգլիացիները, նեղուցը անցնելու իրենց ձախող փորձէն յետոյ, հիմա ալ ցամաքէն կը գրաւեն թերակղզին: Կը խօսւի նոյնպէս Վանէն Բ. Դուռ հասած մտահոգիչ լուրերու մասին: Սարդիս բարսեղեանը, — որ այն օրերուն Բիւրօն կը ներկայացնէր Պոլսոյ մէջ, — կը թելադրէ որ ամէն ընկեր ա'լ իր գլխուն ճարը նայի: Պէտք չկայ որ անոնք մէջտեղը շատ երեւան, ոչ ալ Ազատամարտ գաներթան:


Ժողովէն կելլենք երկուքով-երեքով: Դուրս ելած միջոցիս հետըս են Յովհ. Զէօկիւրեան ու Բարսեղ Շահպաղը: Երկու գաղտնի ոստիկաններ հետուէն կը հետեւին մեղ, — մէկը ի վերջոյ կցւելով պոչիս, ու միւսը հետապնդելով Զէօկիւրեանը: Կերեւայ պէտք չունին ստուգելու Բարսեղին հասցէն: Ոստիկանը ետեւէս ինքն ալ հանրակառք կը ցատկէ, աչքին պոչովը միայն հետեւելով ինծի: Հանրակառքին արագ գացած մէկ պահուն վար կը նետւիմ ես, ու շունչս կառնեմ մութ փողոց մը:

Ապրիլ 8-21. — Առողուն ստուգապէս լուր կառնենք թէ հաւանաբար այս շարթուան ընթացքին խուզարկելի Ազատամարտը: Բերայի ոստիկանութեան հրահանգ է գացած խստացնել հսկողութիւնը Ազատամարտի շէնքին վրա: Կիմանանք նաեւ որ գոց-պահարաններ զըրկըւած են Պոլսոյ բոլոր ոստիկանութեանց՝ շարթւան վերջը բացւելու համար: Ա'լ տարակոյս չկայ: Այս շարթու իսկ պիտի պայթի փոթորիկը:

Զանց ընելով ամէն զգուշութիւն, անմիջապէս Ազատամարտ կուգամ, Բիւրօնի ներկայացուցչութեան կից կազմւած արտասովոր մարմնի հրահանգով, փճացնելու, Բարսեղ Շահպաղին հետ մէկտեղ, ամէն առարկայ ու թուղթի կտոր որ կրնայ վտանգել այս կամ այն անձը երբ ոստիկանութեան ձեռքը անցնի: Կեդր. Կոմիտէի քարտուղարը Բարթող Զօրեան՝ որ կը դուրգուրայ ամէն մէկ թուղթի կը տորի վրա, ի զուր կը բողոքէ: Կը փճացնենք ինչ որ մեր ձեռքը կանցնի, — անւանացանկեր, հասցէներ եւայլն:

Երկու օրերը որ կը յաջորդեն՝ մզձաւանջի օրեր են: Ազատամարտ մտնող-ելլող շատ չկայ:

Եւ ահա Ապրիլ 11-24 շարաթ օրը: Օգտւելով փախստական զինւորներուն չնորհւած ներումէ մը, օր-ցորեկով դուրս կելլեմ ու կերթամ կիւլհանէի հիւանդանոցը պահանջելու համար որ բժշկական նոր քննութենէ մը անցնեն զիս: Պապը-Ալիի պողոտային վրա վարդգէսը կելլէ դէմս: Բարձր. Դուռնէն դուրս կելէ շփոթ ու վըրդապէս գացեր է թալէաթին բարեխօսելու Թէոդիկին համար, որ



ԱՄՐԻՒՄ ԲԱՐՄԵԳԵԱՆ

Photo -- Francis Jongh-Lausane

բանսն է 1915ի իր տարեցոյցին մէջ տպած ըլլալուն պատճառով
կյատըսթընի կողմէ 1897ին Հավարտընի մէջ խօսւած ճառ մը, եւ
ալատկերն ու կենսագրութիւնը Բէհբուդ Շէլքովնիքով գնդապետին
որ 1877ին Կարինն էր գրաւած:

— Վիճակնիս գէշ է, կըսէ Վարդգէս:

Ու կը պատմէ թէ Թալէաթ ա'լ հին Թալէաթը չէ: Թոյնով ու
սպառնալիքով խօսած է հետը: Զղայնացած Կովկասի ճակտին վրա
հայ կամաւորներու ըրածներէն, ու վրդովւած Վանէն հասնող լու-
րէրէն, զգացուցած է թէ հեռու չէ պատուհասը որ կը սպասէ հայ
ժողովուրդին:

Վարդգէսը կը թողում ու կը մտնեմ Եփրատ գործակալու-
թեան գրախանութը, որ, Պաղը-Ալիի պողոտային վրա, տեսակ մը
կայք էր մեզ համար: Այդ պահուն իսկ լուր կը բերեն թէ ձերբակա-
լած են Աստոմ Շահէնը իր տպարանէն:

Շունչս կառնեմ Շաւարշին, Արծիւ գրավաճառանոցը, Մար-
փուճճըլար փողոցին վրա: Հոն ալ լուր կը բերեն թէ գերձակի իր
իստերն ունած տարած են Ասպարէզ լսարանին ատենապետը,
Յարութիւն Գօնիալէան: Ա'լ կասկած չկայ: Ոստիկանութիւնը բա-
ցած է գոց-պահարանները...

Ազատամարտ կուզամ շտապով: Արդէն ուշ է ատենը, ու շա-
տերը մեկնած: Գեղամ Բարսեղեանն ու Սրենցը կան միայն, որոնք
նստեր են անտարբեր մը: Կըսեմ թէ բանը բանէն անցած է, ու ամէն
մարդ պէտք է ա'լ գլխուն ճարը նայի: Հազիւ մեկնած եմ՝ կը կո-
իւն Ազատամարտը: Կառնեն կը տանին ով որ կը գտնեն:

Այն գիշերը չեն կրնար հետքս գտնել:

... Ու անկէ անդին կըսկսի զարհուրելի դէպքը որ Ապրիլ տաս-
նըմէկ կը կոչւի: Չորս հարիւր հոգի ձերբակալած են գիշերը,—
զրեթէ բոլոր աչքառու մտաւորականները որ Պոլսոյ մէջ կան: Ու
երկու օր յետոյ բոլորն ալ քշած են աքսոր, մէկ ժամը Այաշ, միւս-
ները Զանդըրը: Անոնցմէ քիչե՞րը դարձան...

V

ԱՂԵՏԵՆ ՑԵՏՈՑ

Հիմա որ մօտ քսան տարի անցեր է այդ եղերական գիշերէն ի
վեր, գժւար կուզայ ամփոփել աղէտը եւ իր բացած վիճը: Իր մտա-
ւոր եւ տնտեսական վերելքին մէջ զգետնւած ժողովուրդի մը հոըն-
դիւնն է ան որ գեռ կը տեւէ: Գոցւած չէ վիճը: Ու պիտի չգոցւի
գեռ երկար ատեն:

Թուրքը արդարեւ հասաւ իր նպատակին:

— Այսպէս մը պիտի ընեմ որ յիսուն տարւան մէջ Հայը չգտնէ ինքինքը, սպառնացեր էր թալէաթ:

Այդպէս ալ ըրաւ: Նախ գլխատեց մէր ժողովուրդը: Հնձեց տարաւ ամենէն առաջ ընտրանին: Ան խլեց ինչ որ ցեղը ունէր իր արժէք, — զբական գէմքեր՝ ինչպէս Զարդարեան ու Զօհրապ, Վարուժան ու Սիամանթօ, Երուխան եւ Հրանդ, Թլկատեցին ու Արտաշէս Յարութիւնեանն էին, մտաւոր արժէքներ՝ ինչպէս Խաժակն ու Շահրիկեանը, Ակնունին ու Տաղաւարեանը, Սարդիս Մինայեանն ու Յովհ. Գաղանճեանը, քաղաքական ու յեղափոխական գործիչներ իշխանին ու Վոամեանին, Հրաչին ու Սարդիս Բարսեղեանին, Վարդպէսին ու Մարզպանին, Մուրատին ու Բարսեղ Շահպաղին պէս, ու զբական նոր սերունդը յանձին Գեղամ Բարսեղեանի ու Տիգրան Զէօկիւրեանի, Ռուբէն Սեւակի ու Գրիգոր Եսայեանի, Արմէն Տօրեանի ու Տիգրան Գասապեանի, ու գեռ պատկառելի հոյլը կըթական մշակներու եւ լրագրողներու, հոգեւորականներու եւ բըժիշկներու:

Դիմատելի յետոյ այսպէս ցեղը՝ դահիճը զանգւածները փճացուց, կենսունակ, բարօր, մտաւոր եւ տնտեսական ճիգերով բուրնկած ժողովուրդէ մը լոկ խլեակներ ճգելով: Դարերու ընթացքին յաճախ ջարդւած է Հայը: Բայց ոչ մէկ սպանու այնքան համատարած եղած է, եւ այնքան դիւային կազմակերպութեամբ, ոչ մէկ մարտիրոսագրութիւն այնքան զոհ խլած է եւ այնքան մոխիր դիզած՝ որքան Ապրիլեան Հունձքը, Տեղահանութիւնն ու Զարդը որ կցւեցան անոր:

Ու միմիայն անոր համար որ Հայը հողեպէս բարձր էր իր շըրջապատէն, տնտեսապէս աւելի բարգաւաճ, ու լի՝ հնարաւորութիւններով:

Պատրւակներ անշուշտ որ ունեցեր էին թուրքերը:

— Աս ի՞նչ պատկեր է, ըսեր էր անգամ մը թալէաթ Վարդպէսին, ցոյց տալով անոր Հայրենիքի մէջ թիւը՝ ուր հայ կամաւորներու երգման մէկ նկարը կար, Դրօն, Խեցն եւ Արմէն Գարօն մէջը:

Ու աւելցուցեր՝ ակնարկելով Արմէն Գարոյին.

— Սա մէր Գարեգին էֆէնտին չէ՞:

— Անիկա քշւած է հիմա Դաշնակցութենէն, կարկտեր էր Վարդպէս:


— Ամենուն լոլո, ինծի՞ ալ լոլո, ըսեր էր թալէաթ. դուն ալ ասոնց մէջը կըլլայիր՝ եթէ կովկաս ըլլայիր:

Ամբոխը գրգռելու կամ չքմեղանք կարկտելու համար դիւրի՞ն բան է պատրւակ ստեղծելը: Բայց Ապրիլեան Աղէտը վաղուց վըձուած բան էր, երբ տակաւին ոչ հայ կամաւորական գունդերը կային կովկասեան ճակտին վրա, ոչ ալ վանն ու Շ. Գարահիսարը, Սուէտիան եւ Եղեսիան կը խորհէին դէնք բարձրացնել թուրք կառավարութեան դէմ: Իթթիհատը վճռած էր հայ ժողովուրդը մաքրել երբ գեռ ոչ խկ բարենորոգմանց խնդիրը վերարծարծած էր Պատրիարքարանը, ոչ ալ երբ գեռ ոեւէ հայ կը խորհէր դէշմարդ ըլլալ թուրքին հետ:

Հայուն բնաջնջումը իթթիհատը ծրագրած էր՝ երբ գեռ կը համբուրէիր Հայուն հետ: Ծրագիր մըն էր ան զոր ժառանգած էր ինքն ալ Համբիտէն: Թուրք ցեղին յղացումն էր ան՝ խսպառ չքացնելու համար ուրիշ ցեղ մը, զոր խոչընդուռ մը կը նկատէր իր ազգային իտշալներու ճամբուն վրա: Համաթրքութեան յաղթանակին սիրոյն պէտք էր որ Հայը զոհէիր: Ու զոհւեցաւ:

Դահիճը խտիր չդրաւ զոհերուն միջեւ, — ջարդեց բողոքականն ու կաթոլիկը՝ լուսաւորչականին հետ, հնչակեանն ու ուամկավարը՝ ինչպէս դաշնակցականը, ծեր ու մանուկ, այր թէ կին, աղքատ ու հարուստ: Ան հայ ցեղն էր որ կուգէր չքացնել ցմիշտ: Ու պիտի չքանայ ցեղը՝ եթէ անոնք որ կապրին եղածը մոռնան:

Պուքիշ



ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԱԻՐԵԱՆ

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱ

XIII

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՆ ՇԱՂՐԱԾՈՒ

Սայեաթ Նովայի կենսագրութեամբ զբաղւող բոլոր ուսումնասիրողներից միայն Լէոնիձէն պնդում է, թէ Սայեաթ Նովան ոչ միայն եղել է Իրակլի թագաւորի աշուղը, այլեւ նրա ծաղրածուն։ Լէոնիձէն համոզւած է, թէ կարողացել է հաստատել իր այս կարծիքը, որ մէկից աւելի անդամներ կրկնում է իր գրքում։ Պ. Աստուրը՝ գրախօսելով Լէոնիձէի գիրքը՝*) տրամադրութիւն է ցոյց տալիս ընդունելու նրա կարծիքը, միայն մի քիչ մեղմացրած ձեւով։ Նա ասում է, թէ Սայեաթ Նովայի գիրքը Իրակլիի արքունիքում եղել է խիստ ցած եւ դրանով է բացատրւում, որ, հայերէն եւ թուրքերէն երգերի համեմատութեամբ, նրա վրացերէն երգերի բովանդակութիւնն ու ոգին աւելի թեթեւ են։

Ես համաձայն չեմ այս տեսակիտին։ Ի հարկէ պալատական աշուղի վիճակը չէր կարող չանդրադառնալ նրա «պալատական» ստեղծագործութեան վրա։ Նա չէր կարող որոշ չափով հաշւի չառնել իր կախումը թագաւորից։ Չէր կարող բոլորովին զերծ լինել եւ աշխարհի հօրներին հաճելի լինելու զգացմունքից։ Յամենայն դէպս, բնական է, որ նա պիտի ջանար խուսափել բարձր իշխանաւորների դժուհութիւնը յարուցանող քայլերից։ Միակ զօրաւոր ուժը նրա ձեռքին՝ երգիծանքն էր՝ թագաւորի եւ նրա շրջապատի հասցէին, մի ուժ, սակայն, որ երկսայրի զէնք էր եւ կարող էր սպառնալ արսոր, կամ, թերեւս, է՛լ աւելի ծանր հետեւանքներ։

Այդպէ՞ս էր Վրաստանի պալատական բանաստեղծութեան ըլ-նոյթը: Բանաստեղծները սահմանափակւում էին միայն ջատագո-վութիւններով: Վրաց պատմագրերը այսպէս են բնորոշում նրանց: «Երգիչները նստած զովաբանում էին թէյմուրազ արքայից արքա-ին»: **)

Բոլորովին այլ դիրք ունեմ Սայեաթ Նովան իրակիի պայտ-

*) «ՆՈՐ ՈՒՂԻ», 1930, № 4-5, էջ 156

**) „ისხდენ მგოსანი და აქებდენ მეფეთ - მეფე თეიმურაზს“.
ქართლის ცხოვრება, ტ. II. გვ. 392.

տում : Նա արծարծում էր հասարակական բնոյթ կրող հարցեր, զբաղւում էր առանձին անհատներով եւ, առհասարակ, չօշափում էր իրեն հետաքրքրող ամէն խնդիր : Այսպէս, մենք գիտենք արդէն, որ նա սաստիկ յարձակում գործեց դաժան կալւածատէրերի վրա : Երբ նրան վիրաւորեց արքայազն Վախթանգը, Սայեաթ Նովան ծաղրի ենթարկեց նրան :

Հակառակ դրան, անկասկած է, որ պալատական աշուղի վիճակը չէր կարող չանդրադառնալ Սայեաթ Նովայի ստեղծագործութեան վրա եւ դրանով է բացատրւում մասսամբ, որ նրա վրացերէն երգերը աւելի թոյլ են համեմատած հայերէն եւ թուրքերէն երգերի հետ: Այն էլ պէտք է ասել, որ վրացերէն երգերը մեզ հասել են աղջատաւծ, չատ անկատար վիճակում: Նրանք բոլորը գրի են առնըւած յիշողութեամբ, զանազան ձեռքերից անցնելուց յետոյ, յօրինւելուց շատ տարիներ անցած: Սայեաթ Նովայի ձեռքով գրւած ոչ մի վրացերէն երգ չի հասել մել: Վրացերէն երգերի հրատարակիչը խոստովանում է, թէ ինքը ոչ մի խմբագրական ուղղում չի մըսցրել, այլ առանց փոփոխութեան հրատարակութեան է տւել ինչ որ ընկել է իր ձեռքը:

Ահա ա՛յս հանդամանքներով պէտք է բացատրէլ Պ. Ասաթուրը
Սայեաթ Նովայի վրացերէն երդերի համեմատական թուղութիւնը
և ոչ թէ դրանից հետեւցնէր, թէ Սայեաթ Նովան եղել է Իրակիի
թագավորի ծառածուն:

իսկ ի՞նչ ապացոյցներ է բերում լէռնիձէն՝ հաստատելու համար իր պնդումը:

Ամէնից առաջ նա վկայութեան է կանչում Սայեաթ Նովայի հոսքերը վրագերէն երկու երգերից .

ա) «Իմ ձեռքին կայ ոսկենաշխ թաշկինակ, Դու հո գիտե՞ս՝ ես չառաջու եմ:»)

и) «Если шашка входит в лунку, то она выходит из нее» (**).

Առաջին խօսքը պարունակող ստանալուրը մի զիմում է Սայեաթ
Նովայի կողմից իր սիրականին՝ մի անհստածայնութեան առթիւ:
Աշուղն ամէն կերպ գովում ու հաւատացնում է իր սիրուհուն, թէ
նա ինչպէս որ ուզի կարող է վարւել իր հետ, թէ ինքը վառում է
սիրուց, թէ իր միակ տենչանքը նրան տեսնելն է:Նա գանդատւում
է, որ խիստ տիտուր է, որ չի կարողանում նետ կամ նիզակ գտնել:

1) „მომაქტს ზარის ხელმანდილი,
ხუმარი გარ, იკი განა“. ვრიშტაშვილი, გვ. 112.

2) „ხან—ხუმარი კარ,ღვთინარი“. გრიშაშვილი, გვ. 119.

որպէսզի իր կուրծքը ծակէ, եւ հաւատացնում է, թէ ինքը գլխի ու կրծքի ցաւ ունի եւ այդ հիւանդութիւնից բժշկւելու համար նա դեղ չի ճարի, մինչեւ որ չգտնի սիրուհու կրծքի վրա թափնւած նուռը. Ի դէպ, վերջացնում է երգիչը խորամանկութեամբ, հրապուրելով իր գեղեցկուհուն. ես իմ ձեռքին ունիմ ոսկիով նաշխւած մի թաշ-կինակ, չէ՞ որ դու գիտես՝ ես ծաղրածու եմ:

Պարզ է, որ այս ոտանաւորի մէջ խօսք չկայ Սայեաթ Նովայի գիրքի մասին թագաւորական պաշտում. նա մերթ թախանձագին աղաջում է, մերթ զւարթ կատակով աշխատում վերագտնել իր սիրուհու համակրանքը: Ուրիշ եղբակացութիւնն կարելի չէ հանել:

Լէոնիձէի երկրորդ վկայութիւնը առնւած է այսպէս կոչւած անբանք - ֆերա - այրութենի զովասանքից : Սա ոտանաւորի մի տեսակ է, տարածւած հայերի եւ վրացիների մէջ 17-18րդ դարերում, որ նպատակ ունէր այրութենի, այն ժամանակւայ հասկացողութեամբ ընդհանրապէս գիտութեան ջատագովանքը : Աշուղը այրութենական կարգով թւում է բոլոր տառերի անունները եւ իւրաքանչիւր տառին տալիս է կարճ բնորոշում : Ի հարկէ, նման ոտանաւորներից կարելի չէ սպասել՝ բանաստեղծական բարձր արժանիքներ կամ կենսագրական տեղեկութիւններ . դրանք առանձին կարճ խօսքեր են կամ իրար հետ որոշ իմաստով չկապւած բառեր, յաճախ առանձին խօսքերի մէջ, նոյն իսկ զուրկ ներքին բովանդակութիւնից : Լէոնիձէի յիշած ոտանաւորը մեզ հասել է շատ վատ վիճակում . այրութենի տառերը շատ անդամ չեն համապատասխանում առաջ բերւող բառերի սկզբնատառերին, ոտանաւորների չափը պահպանւած չէ, եւ բերւած արտայայտութիւնները յաճախ անհեթեթ են : Դժւար է համաձայնել Լէոնիձէի հետ, որ նրա յիշած խօսքը ունի ինքնակենսագրական նշանակութիւն :

Զգալով իր դիրքի տկարութիւնը՝ լէսնիձէն աշխատում է վկայութեան կանչել կալմասորայի հեղինակ Խելացվիլիին՝ յիշելով վերջնիս խօսակցութիւնը Սայեաթ Նովայի հետ։ Այդ տեղ Սայեաթ Նովան խօսելով իր ունեցած յաջողութեան մասին վրաց արքունիքում, ի միջի այլոց, ասում է. «Ինձ ամենքը սիրով ընդունում էին, ոչ միայն իմ երգելու արւեստիս, այլև գարբութեանս (խումբութիցայ) եւ մարդկանց մէջ ինձ լաւ պահել գիտնալուս պատճառով» (էջ 30)։ Լէսնիձէն ուզում է հաւատացնել, թէ խումբորա նշանակում է ծաղրածութիւն, մինչ վրաց լեզւի մէջ չառ գործածական այդ բառը նշանակում է գարբութեան, կատակ :*)

*) ხუმრიობა — წყლიანობა (ესე არს სიტყვა, კოთილი და გამაცინებული ქათა) — სულხან-საბა ორბელიანი, ლექსიკონი, გვ. 460.

Որ Խելաշվիլին խումբոքա բառը հասկանում է «կատակի, զւարթութեան» իմաստով, երեւում է կալմասոբայի հէնց նոյն կտորից, ուր մի քանի տող վար Խելաշվիլին գործ է ածում խումբոքա բառը արդէն պարզ զւարթութեան իմաստով. վերջացնելով իր վէճը Սայեաթ Նովայի հետ՝ Խելաշվիլին ասում է. «Այսպէս խաղաղ ու կատակով - խումբոքեթ - մենք վերջացրինք մեր կերակուրք»:

Որպէս վերջին փաստ, Լէոնիձէն ասում է (Էջ 18) «իբրեւ պալատական ծաղրածու, աւանդական կարգով, Սայեաթ Նովան, մէջ-լիսների ժամանակ, հագնում էր կարսմիր գոյնի հագուստ»։ Իր այս կարծիքը նա հիմնաւորում է Սայեաթ Նովայի միայն մի մասով մեզ հասած վրացերէն երգի կտորով։

«Թագաւորներից մէջլիսի կանչւող,

«իշխաններից սկսուով ուրախութեամբ ընդունեող, «կարմբագոյն կարայում պահած» .*)

Ակներեւ է, որ այս կտորն էլ չի կարող արդարացնել Լէոնիձէի պնդումը. ծաղրածուներին թագաւորներն իրենց մէջլիսներին չեն կանչում, նրանք ի պաշտօնէ պարտաւոր են ներկայ լինել: Նմանապէս եւ իշխանները, նոյն իսկ թագաւորական ծաղրածուներին պատռով չեն ընդունում, այլ միայն թոյլ են տալիս ներկայ գտնւել իրենց խնջոյքներին: Իսկ ինչ վերաբերում է Սայեաթ Նովայի ծաղրածուի հազուստին, բոլորովին անհասկանալի է, թէ Լէոնիձէն ինչ վրա հիմնաւծ պնդում է, թէ կարմիր գոյնը ծաղրածուի հագուստի գոյնն է բնորոշում: Ընդհակառակը, յայտնի է, որ մահմետական արեւելքում, հետեւաբար եւ Վրաստանում, ուր 17 եւ 18րդ դարերում իշխում էին պարսկական բարքերն ու սովորութիւնները, մարդիկ հագնում էին դեղին եւ կարմիր գոյնի հագուստաներ: **

Մեզ հասել են Սայեաթ - Նովայի երկու ծաղրական ոտանաւորները : Մէկը առաջին անդամ Հրատարակել է Ե. Տակայշվիլին : ***) կցելով հետեւեալ ծանօթութիւնը . «Դիւանքէկ» (Մդիվանքէկ) ձա-

*) „მეცნიერთაგან მეჯლისს მოწოდებული,
„თაგადებთან პატივისებით შეკიბული,
„ალისთერის კატით გამშვინებული“.

* *) Dozy, Dictionnaire des Vêtements chez Arabes, p. 6-7, Mohl,
Le livre des rois. t. 7, p. 242.

***) Е. Такаишвили. Описание рукописей общества грамотности, стран, 322.

սլուռ Ղապլանիշվելիի^{**}) հարսանիքին իշխան Բագրատիոն - Մուխ-
րանցու աղջկայ հետ, երբ հարսութեսին առաջնորդեցին ննջասեն-
եակ, Սայեաթ Նովան, որ ներկայ էր այնտեղ եւ գտնւում էր իշխա-
նազն Գէորգիի շքախմբում, աեսնելով նիհար, կուզ, շիլ, գուրս ըն-
կած փորով փեսային եւ բարձրահասակ ու բարեկազմ հարսին,
յանպատրաստից մի ոտանաւոր ասաց, որով ծաղրում էր փեսայի
այլանդակութիւնը, եւ իր խօսքը վերջացրեց ասելով, թէ, այնուա-
մենայնիւ, հարսը շուտով պիտի դադարի աղջկել լինելուց»:

Երկրորդ ստանաւորը, որ Սայեաթ Նովայի որդի հվանի ձեւ-սագրից առնելով, առաջին անգամ հրատարակել է Լէոնիձէն (էջ 18), վերաբերում է վրաց Անտոնիոս Ա. Կաթողիկոսին (1720-1788)։ Սա Վախտանգ Դ. թագաւորի թոռն էր, 1744 թվին, 24 տարեկան հասակում օծւել էր կաթողիկոս, իր ժամանակի համար լայն զարգացման տէր մի մարդ էր եւ շատ մտերիմ էր Թէյմուրազ, ապա Իրակլի թագաւորների հետ։ Նա դժոնւում էր սերտ յարա-բերութեան մէջ կաթոլիկ միսիոնարների հետ, որոնք աշխատում էին Թիֆլիսի եւ Գորիի հայութիւնը կաթոլիկութեան դարձնել։ Մօտիկութիւնը կաթոլիկների հետ պատճառ դարձաւ, որ Անտոնիո-սի հակառակորդները 1755 թ. օդոսաւ։ 16ին, Մցիւեթի եկեղեցական ժողովում, զրկեն նրան կաթուղիկոսութիւնից։ Իր անկումից յետոյ Անտոնիոսը զնաց Ռուսաստան եւ այնտեղ մնաց մինչեւ 1762 թ., երբ, Թէյմուրազի մահից յետոյ, Իրակլին յետ բերեց եւ նորից բարձրագրեց կաթուղիկոսական աթոռը։

Այս Անտոնիոսի դիմք է ուղղված Սայեաթ Նովայի երկրորդ ուտանաւորը, որ կօրինաւած է 1755 թ. կէսերին, երբ Անտոնիոսը դեռ կաթոլիկոս էր, բայց անկումն արդէն նախորոշւած էր։ Ահա՝ այդ ոտանաւորը։

- 1) Դիմում Անտոնիոսին .
«Սրբազնագոյն Կաթուղիկոս ,
«Քե՛զ է պատկանում մեր յարդանքը .
«Ասում են գրպանդ լիքն է , այդ ո՞նց պատահեց» :

2) Անտանիոսի պատախանը .
«Ուղղեցիք կրծքիս մահաբեր հրացանը ,
«ինձ սուֆի (աղաստախոհ) են կոչում .

^{**)} Սա բանաստեղծ ու փիլիսոփայ իշխան Մզկենարուկ Օրբելիանին էր 1736-1794), որ վրաց նզովպոսի անուն էր ստացել: Լաւ ծանօթ էր հայերէն լեզուին և հայերէնից վրացերէնի էր քարգմանի յունարէն Փէրի Արմէնիաս փիլիսոփայական երկը:

«Ես կորցրի խելքիս տոպլրակը, այդ ո՞նց պատահեց»:

ի հարկէ, այս երկու ոտանաւորներն էլ կարելի չէ կոչել «ծաղրածու» երգեր : Նրանք յանդուզն են եւ անպատկառ, մանաւանդ վերջինը, որ ուղղաւծ է վրաց եկեղեցու թէկուզ եւ գիրքով խախտած, բայց դեռ իր պաշտօնի գլուխը գտնուզ կաթուղիկոսի հացեին : Այդ քայլը, ի հարկէ, չի կարող պատիւ բերել Սայեաթ Նովային, որ քար էր նետում ընկածի գլխին, բայց միւս կողմից ապացոյց է նաեւ քաղաքացիական մեծ քաջութեան : Նա պարզ ու որոշ կերպով ակնարկում է թէ կաթուղիկոսի նիւթական կախումը կաթուղիներից եւ թէ նրա անխելքութեան հասնող ազատամտութիւնը : Թէեւ Անտոնիոսն այն ժամանակ արդէն քնորհազուրկ էր, գըտնուում էր պաշտօնապղկութեան նախօրեակին, բայց եւ այնպէս նա վրաց եկեղեցու պետ էր, եւ Սայեաթ Նովայի յանդգնութիւնը չափից աւելի էր : Ինչպէս յետոյ կը տեսնենք, Սայեաթ Նովան շատ թանգ վճարեց իր այդ վարմունքի համար :

XIV

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՆ ԴԵՍՊԱՆ

Այն կարծիքը, թէ Սայեաթ Նովան, չնորհիւ իր մտերմութեան իրակլի թագաւորի հետ եւ վերջինիցս վայելած առանձին վստահութեան, մէկից աւելի անդամներ գեսպանի պաշտօն է կատարել հարեւան պետութիւնների մօտ, ծաղել է վրաց գրականութեան մէջ։ Այդ ենթագրութիւնն առաջին անդամ իր գրքում յայտնել է Գրիշաշվիլին, 1918 թւին։ Առաջ բերելով այն աւանդութիւնը, որ իր թէ Սայեաթ Նովան յաճախ գեսպանական ճամբորգութիւններ է կատարել հարեւան խանների մօտ, Գրիշաշվիլին եղրակացնում է, թէ այդ աւանդութիւնն այնքան էլ ճշմարտութիւնից զուրկ չէ եւ յենւում է Սայեաթ Նովայի յայտնի ոտանաւորի վրա (էջ 107), որ գրւած է, երբ Սայեաթ Նովան արդէն քաջանայ էր եւ պատրաստըւում էր վարդապետ դառնալ։ Այդ ոտանաւորի մէջ Սայեաթ Նովան յիշում է իր առաջւայ փայլուն եւ յաջողութիւններով լի կեանքը վը բացաւորների արքունիքում եւ համեմատութիւն է անում իր առաջւայ եւ ներկայի կեանքի միջեւ։ Ոտանաւորում ի միջի այլոց, կայ հետեւեալ տողը—

(Սայեաբ Նովան) Էլ չի երբ-այ ոչ քագաւորների,
ոչ խանների մօռ.*)

^{*)} ველარ წავა ხონთქართან, ყეენთანა. გთიშაშვილი, გვ. 107.

Այս տողը Գրիշաշվիլին հասկանում է այն իմաստով, որ Սայեաթ Նովան այլեւս վրաց թագաւորի կողմից դիւնադիտական յանձնարարութիւններ կատարելու չէ ոչ խոնդկարների, այսինքն՝ պարսից շահերի եւ օմանեան սուլթանների, ոչ էլ հարեւան խաների մօտ:

Գրիշաշվիլիի կարծիքը բաժանում է եւ պրոֆ. Կ. Կեկելիձէն, որ յենելով Սայեաթ Նովայի մտերիմ յարաբերութիւնների վրա Իւսակի թագաւորի եւ սրա որդիների, մանաւանդ Գէորգիի հետ, շատ որոշ կերպով պաշտպանում է Սայեաթ Նովայի դեսպանութեան վարկածը:

Հայոց գրականութեան մէջ Սայեաթ Նովայի դեսպանութեան ինդիրը յարուցեց 1926 թւին եւ վէճի առարկայ եղաւ մի կողմից լէօի եւ Սաշա Օգանէզաշվիլիի եւ միւս կողմից Գ. Ասատուրի միջեւ («Խորհ. Հայաստան», «Մարտակոչ»): Ըստ էութեան այդ բանավէճը ոչ մի նոր եւ արժէքաւոր նիւթ չտւեց, բայց հետաքրքրական է հարցադրութեան եւ խնդրի քննութեան տեսակէտից (Տէ՛ս Մելիքսէթրէդի գիրքը, էջ 118-122):

Լէօն, հիմնելով Սաշա Օգանէզաշվիլիի իրեն արած պատմութեան վրա, պնդում է, որ Սայեաթ Նովան արքայազն իրակլիի հետ դտնել է Նադիր Շահի գօրքերի մէջ Հնդկաստանում: (1738 թ.):

Բացի այդ, ըստ Լէօնի, Սայեաթ Նովան սպանել է ոչ թէ, ինչպէս հաստատած է համարւում, եկեղեցու շեմքին, այլ ճանապարհին դէպի պարսից բանակը գնալիս՝ համոզելու համար Շապարհին, որ դադարեցնէ Թիֆլիսի անպաշտպան բնակիչների տմարդի կոտորածը:

Մի ուրիշ յօդւածում նոյն Լէօն պնդում է, որ եթէ Սայեաթ Նովան որոշել է դնալ Շահի մօտ, պատճառն այն էր, որ նա շատ նշանաւոր մարդ էր Պարսկաստանում եւ կապեր ունէր բարձր շրջանների հետ շնորհիւ այն բանի, որ, իրեւ դեսպան, յաճախ այցելում էր Պարսկաստանը. այս հանդամանքը նա ինքն էլ է վկայում իր վրացերէն երգերից մէկում:

Իր հերթին Սաշա Օգանէզաշվիլին, հիմնելով Աբրահամ Կրետացու պատմութեան եւ Զօր. Քիշմիշեւի ուսումնասիրութեան վրա, հաւատացնում էր, թէ Սայեաթ Նովան արքայազն իրակլիի հետ 1737 թ. եղել է Պարսկաստանում եւ Հնդկաստանում, Նադիր Շահի կողմից Վրաստանում հաւաքած գօրքերի հետ: Այդ ժամանակ Սայեաթ Նովան դեռ նշանաւոր (դաստան) աշուղ չէր, ասում է Օգանէզաշվիլին:

թէ Լէօն եւ թէ Օգանէզաշվիլին արժանի պատասխանը տւեց Գ. Ասատուրը, որ ապացուցեց, թէ երկսի սսածն էլ արդիւնք է երեւակայութեան: Նա հաստատեց, որ Սայեաթ Նովայի Շահի մօտ գնալիս ճանապահին սպանւած լինելու մասին աւանդութիւն գոյութիւն չի ունեցել: Անչիմն երեւակայութիւն է եւ Սայեաթ Նովայի դիմուրական ծառայութեան մէջ գտնուիլն ու Նադիր Շահի գօրքերի հետ Հնդկաստան գնալը: Շատ բանաստեղծների պէս, Սայեաթ Նովան էլ սիրում է խօսել իր գոյութիւն չունեցած ճշմարտութիւնների մասին: Այդ հանդամանքը իրաւունք չի տալիս բնաւ անդոյ փաստերով ճոխացնելու նրա կենսագրութիւնը:

Միւս կողմից, Մելիքսէթրէդը քննելով վերոյիշեալ ոտանաւոր՝ ցոյց է տալիս, որ Սայեաթ Նովան սիրում է իր երգերում խօսել իր այցելած եւ տեսած շատ երկրների մասին: Նման յիշատակութիւններ պատահում են թէ Հայերէն, (8, 5, 25, 1, 27, 1, 30, 3) եւ թէ վրացերէն (108, 5, 114, 5) երգերում, ուստի Մելիքսէթրէդը չի բաժանում Ասատուրի կարծիքը, թէ Սայեաթ Նովայի ճանապարհորդութիւնները լոկ բանաստեղծական այլաբանութիւններ են, եւ հիմնելով Թամբրուրի Արութինի պատմութեան վրա, եւ այս վերջինս ընդունելով Սայեաթ Նովայի տեղ, պնդում է, թէ Սայեաթ Նովան իրօք կատարել է այդ ճանապարհորդութիւնը: Մենք արդէն տեսանք, թէ Թամբրուրի Արութինը ոչ մի առընչութիւն չունի Սայեաթ Նովայի հետ:

Սայեաթ Նովայի դեսպան լինելու ենթադրութիւնը հազիւ թէ իրական հիմք ունենալ: Դրա դէմ է խօսում նախ հասարակ տրամադրանութիւնը: Վրաստանի գրութիւնը Պարսկաստանի հանդէպ չափազանց բարդ էր ու փափուկ. թէ յմուրազը, ապա Իրակլին ստիպւած էին ճարտարօրէն դիրք պահել Պարսկաստանի եւ Ռուսաստանի միջեւ: Նրանք ձգտում էին ազատել Պարսկաստանի գերիշխանութիւնից եւ մօտենալ Ռուսաստանին, եւ նրանց դեսպանները պէտք է լինէին նրբամիտ ու ճարպիկ մարդիկ, որոնք կարողանային պարսից արքունիքում յարգանք ներչնչել ոչ միայն իրենց անձնական կարողութիւններով, այլեւ ծագումով եւ իրենց հայրենիքում վայելած դիրքով: Որքան եւ տաղանդաւոր՝ Սայեաթ Նովան պարզ աշուղ էր չէր կարող դեսպանի պաշտօնով ներկայանալ ո՛չ միայն Պարսկաստանի հզօր վեհապետի արքունիքում, այլեւ Վրաստանի հարեւան խաների մօտ: Անշուշտ Թէ յմուրազի կամ Իրակլիի մտքովն

էլ չէր անցնի իր պալատական աշուղին դեսպան ուղարկել որեւէ թագաւորի կամ խանի մօտ :

Ինչպէս արդէն ասել եմ, ինձ համար ոչ մի կասկած չկայ, որ Սայեաթ Նովան եղել է Պարսկաստանում էլ, Հնդկաստանում էլ, այլեւ, անշուշտ, Վրաստանին մօտ գտնող երկրներում, բայց ոչ որպէս դեսպան, այլ իր աշուղական արևեստը կատարելագործելու նպատակով, հաւանաբար, արհեստաւորի կամ վաճառականի գործակատարի պաշտօնով :


Եթէ Սայեաթ Նովան դեսպանութիւն արած լինէր, այդ մասին որեւէ հետք կը մնար նրա երգերում, այն ինչ ամենահեռաւոր ակնարկ իսկ գոյութիւն չունի, բայց վերեւ յիշւած եւ ոմանց շփոթութիւն պատճառող վրացերէն երգի մի տողից. Սայեաթ Նովան «էլ չի երթայ ոչ թագաւորների, ոչ խաների մօտ»: Այս տողը աշխատում է բացատրել եւ Լէոնիձէն (էջ 19-20), բայց նոյնպէս անյաջող :

Ի նկատի ունենալով, որ Սայեաթ Նովան իր երգերում յաճախ իրակլիին անւանում է «խան», Լէոնիձէն կարծում է թէ «թագաւորներ», «խաններ» ասելով աշուղը հասկանում է իրակլիին: Բանաստեղծական այս արտայայտութեամբ նա ուզում է ասել որ արքունիքից հեռանալուց յետոյ այլեւս իրակլիի մօտ վերադառնալու չէ: Մի բռնազրօսիկ բացատրութիւն, որ, ի հարկէ, հարցի լուծումը չէ:

Ինձ թւում է, որ այդ տողը պէտք է հասկանալ բառական մըտքով, այսինքն՝ որ Սայեաթ Նովան յայտնում է, թէ իրակլիի մօտից հեռանալուց յետոյ այլեւս նոր հովանաւոր փնտռելու չէ, եւ չի ձգտելու պալատական աշուղ դառնալ «ոչ թագաւորների, ոչ խաների մօտ»: Յայտնի է որ մի թագաւորի կամ խանի մօտից որեւէ պատճառով հեռացող աշուղները, շատ անգամ, նոր հովանաւոր էին որոնում եւ սրա մօտ շարունակում իրենց արւեստը: Սայեաթ Նովան ուզում է ասել, թէ իրեն համար պալատական աշուղի պաշտօնը վերջացած է, ինքը նոր հովանաւորի յետեւից չի ընկնելու:

Փարիզ

(Շարունակելի)



ՀՐԱՆԴԻ ԹԱԼՈՒԵԱՆ

ՄԻՍԱՓ ՄԵԾԱՐՔԵՆՑ

(1886 - 1908)

I

1908ի ամրան, Պոլսոյ Խշանաց կղզիներէն մէկուն մէջնիհա՞ր և հիւծած երիտասարդի մը շրթունքները, նման չորցած դեղին երկու տերեւներու, իրարու թո՛յլ հպումէ մը վերջ կը թափէին, եւ նոյն օրն իսկ ըսին թէ՝ արշալոյսէն առաջ քերթող մը մեռած էր:

Փոլ Վէոլէն գիրք մը ունի, «Անիծւած Բանաստեղծները» վերնագրով: Հոտ կարտայայտւի վեց քերթողներու մասին, վեց հատչակցւածներ իրենց ժամանակակիցներէն: Տարբեր նշանակութեամբ անիծւածներու շարք մըն ալ մէնք ունինք, բանաստեղծներ, որոնք հազիւ կեանքի բուն սեմին մօտեցած, կարմիր հազի թել մը եկած անդարձ հեռացուցած է զիրենք մէր մտերմութենէն: Պետրոս Դուրեան, Հրանուշ Արշակեան, Միսափ Մեծարքնեց, Վահան Տէրեան, Մատթէոս Զարիքեան, Եւայլն, այս բոլորն ալ չիջեցան նո՛յն ախտէն և գրեթէ նոյնանման տարիքներու մէջ, 20էն 27: Բայց ամենէն հետաքրքիրը, անոնք հազիւ հրապարակ ելած՝ քանի մը տարւան մէջ լլիւ արտաքրեցին իրենց արւեստին ինքնատիպ կազմութիւնը եւ ունեցան հետեւորդներ: Սաեղծւեցաւ հայ գրականութեան մէջ Դուրեանականութիւն, Մեծարքնեցի դպրոց, Տէրեանի ըրջան, Եւայլն:

Այլապէս զարմանալի երեւոյթ մըն ալ Մեծարքնեցի եւ Տէրեանի նո՛յնաժամանակ և նո՛յնատեսակ երեւումնին է: Երկուքն ալ յայտնըւեցան գրեթէ նո՛յն թւականներուն, մէկ մէկ նիհար, մէկզմէկու նըմանող գրքոյկներով: Մին նոր-Նախիջևան, իսկ միւսն ալ Պոլսոյ մէջ: Մէկուն վերնագիրը՝ Մթնշաղի Անուրջներ, իսկ միւսինը՝ Ծիածան, Նոր Տաղեր: Երկու գրքոյկներուն առաջին էջերուն վրա գետեղւած առաջին բանաստեղծութիւնները իրարու կը նմանէին ձեւի, զգայութեան եւ խորքի տարբերով: Երկուքն ալ տեսողական, հեռու Դուրեանի ցցուն զգացողականութենէն:

Մեծարքնեց կը գրէր.

Թոյլ ըրշին մը, յետոյ բոյր մը մշկենի
Եւ յամրագին գիրքը ձեռքին կիյնայ վար.

Երազներու պերճուիին է որ կանցնի,
Ու կը փոքի ծովակն հոգւոյս՝ մեղմավար:
Ու կը փոքի ծովակն հոգւոյս մեղմավար,
Եւ ալիք մը թեւը բացած կը վազէ:
Գրկել ափունին իդախո ուկի աւազէ:
Ո՞վ քաղձրութիւնը նայւածքին իր ծաղիկ.
Ո՞վ պերճութիւնը գընացքին իր երպարտ.
Ճամբուն վրա՝ իր բայլերուն հետքը վարդ՝
Ուր հեշտօրէն կը յածի դեռ իմ մենիկ
Սիրտըս՝ բո՞ց մը՝ մըքնշաղին մէջ անենտ....:

Իսկ Տէրեան

Սահուն բայլերով, աննշմար, որպէս քնիոյշ մուքի թեւ—
Մի համրոյր անցաւ, ծաղիկ ու կանաչ մեղմիւ շոյերավ.
Իրինաժամին թփերն օրօրող հովի պէս թեթեւ—
Մի ուրու անցաւ, մի գունատ աղջիկ ներմակ շորերով:
Արձակ դաշտերի ամայութեան մէջ նա մեղմ շշնչաց,—
Կարծես թէ սիրոյ անուշ խօսի ասեց նիրեռող դաշտերին.—
Եւ ծաղկունանց մէջ այդ Անուրջ-կոյսի շշուկը մընաց,
Եւ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին:

Ռւրեմն, վերջալոյսին երկու բանաստեղծներուն ալ հոտի ալիքի
մը պէս աղջիկ մը կերեւի, մէկուն բառովը «երազներու պերճուհի»,
իսկ միւսին համար՝ «Անուրջ կոյս», եւ երկուքն ալ կը լեցւին այդ
էակին բոյրովլը: Այս զգայութիւնը համատարած իրենց ամբողջ
ստեղծագործութեանց մէջ: Երկուքին մօտ ալ աղջկան շուքը, շունչը,
նայւածքն է որ կը թափառի՝ քան թէ մարմինը: Թղթատեցէ՛ք մեր
այս երկու նրբին արւեստագէտներուն գործերը եւ հոտ պիտի տես-
նէք մօտաւորապէս նո՛յն բնանկարները, նո՛յն հողեվիճակները, նո՛յն
հարուստ երաժշտութիւնը ու մանաւանդ երկուքն ալ օժտւած նո՛յն
առաքելութեամբ: Այսինքն անկախ այն հանդամանքէն որ անոնք կը
բերեն հայ գրականութեան հարուստ թէքնիք մը եւ արտայայտու-
թեան բոլորովին ինքնատիպ ձեւեր (Տէրեանի մօտ գերազան), միեւ-
նոյն ատեն կը հանդիսանան մէկ մէկ օղակ կապող՝ Արեւելահայ կամ
Արեւմտահայ բանաստեղծութիւնը նոյն օրերուն Արեւմուտքի մէջ
զարդացող խորհրդապաշտ գրական հոսանքին:

Սոյն տեսութեան նիւթը Մեծարենցն է, հետեւաբար կը կեղրո-
նանամ իր կեանքին ու գործին վրա:

Անտեղեակ եմ իր կենսագրութեան: Արդէն ի՞նչ կեանքի շար-

ժում կը սպասւի երիտասարդէ մը որ կը շիշի քսանեմէկ տարե-
կանին:

Կը ծնի գաւառու Բինկեանի մէջ, 1886ին: Մինչեւ 8-9 տարեկանը
զաշտի տղայ մը ու յետոյ զինքը կը դրկեն Սեբաստիա: Քիչ ժամա-
նակ վերջ Անաթոլիա գոլէճ՝ ուր կը մնայ չորս տարի: 1902ին կը
մտնէ Պոլսոյ Կեդրոնական վարժարանը, բայց չաւարտած՝ հիւծախ-
տի ճամբուն մէջ եւ կը փոխադրւի Թօփ-Գափու, յետոյ Սամաթիա ու
վերջապէս Հալքի կղզին սենեակ մը որ կը հանդիսանայ իր վերջին
օթեւանը:

Կարճ եղաւ կենսագրութիւնը, բայց կը ներկայացնեմ իր կեան-
քին մտերմիկ զրւաղներ՝ որոնք քաղած եմ բուն իսկ մօրը բերնէն:

Մօաւորապէս տասը տարի առաջ, Պոլսոյ մէջ երիտասարդ-
ներէ կազմւած Գրակ. Միութիւն մը կորոշէր Մեծարենցի մահւան
15րդ տարեկիցը տօնել: Այդ առթիւ բախտը ինծի ալ կը վիճակւէր
երթալ իր ծերուկ մայրը դասախոսութեան հրաւիրելու:

Շաբաթ իրիկուն մըն էր, եւ մենք Պէշիք-թաշի զառիվերը ելեկէ
վերջ կը մտնէինք հայոց եկեղեցին փողոցը: Մեր առաջնորդը վայ-
տաշէն պղտիկ տուն մը ցոյց տալով ըստաւ. «Ահա Մեծատուրեաննե-
րու բնակարանը»: Այդ պահուն եկեղեցին թաւ ճայն մը «Եկեալք»
ի մտանել արեգականն տեսաք զլոյս երեկոյիս»ը կերպէր: Տարօրի-
նակ ընկճում մը մեզ իրար նայիլ տւաւ, Մեծարենցի «Կիրակմուտք»ը
յիշեցինք:

Տունէն ներս պղտիկ դարձւածք մը: Սենեակին անկիւնը նստած
75 տարեկան զողղոջ ծերուկի մը ձեռքերը իրրեւ մասունք համբու-
րեցինք: Զէ՞ որ Մեծարենցի շթիւները առաջին անդամ հոտ հանդ-
չած էին:

Ոչ մէկ հարցում, ձկեցինք որ ինք խօսի: Նախ Միսաքի մէկ քա-
նի խօսքերը յիշեց, նկարագրէն քանի մը գիծեր, լուսանկարը ու յե-
տոյ արցունքի կաթիլներ զինքը լուցուցին:

«Բանի հազար անգամներ կըսէի, տղա՛ս, մի՛ կարդար, մի՛
գրեր, ինքինքտ մի՛ հատցներ, պիտի մեռնիս: Մտիկ չէր ըներ: Դըպ-
րոցին դարձին սա գրասեղանին առջեւ՝ մինչեւ կէս գիշեր գլուխը
վեր չէր առներ գիրքերուն մէջին: Երբ զինքը կընդմիջէի՝ կրուզ: «Անուշիկ մայրիկու, ինծի հայրենի երգերէն երդ մը ըսէ՛», ու իրը
թէ իմ երդս էր որ մտիկ կընէր՝ ինք դարձեալ թուղթերուն մէջ թաղ-
ւած միշտ կը գրէր:

Գիւղի հագուստներով զինքը Սեբաստիա տարինք: Զափազանց
ծոյլ տղայ մըն էր, միշտ իր երեսին կը սկսայի, դուն մարդ պիտի

չըլլաս: Կը խնդար: Ոչ փողոցը ընկերներու հետ կը խաղար եւ ոչ ալ մարդու մէջ կելէք, կը քաշւէք այգիներու շուքին եւ ժամելով ծա-սերուն մինակութիւնը դիտել վերջ՝ երեկոյեան հովիւներուն հետ կը դառնար տուն: Զղայնոտ, մաքրութիւնը կը հասցնէք այլեւս ծայ-բայեղութեան: Իր հագուստներուն վրա փոշիի բիծ մը պիտի չգտնէք, պէտք էք հագւեք կոկիկ, ճերմակ եւ մաքուր:

Վերջին ծայր կատակամէք. իրիկունները երբեմն Միսաքը մեզի խնդարնէք ժամերով. իր կեանքը տարօրինակ սրամտութիւննե-րով լեցուն ամբողջ քրքիջ էք ու գւարթութիւն»:

Մաքրութեան հանդէպ իր ծայրայեղ զգուշութիւնը տարածւած էր քիչ մը ամէն կողմ: Դպրոցի ընկերները կորոշեն խաղ մը կազմա-կերպել: Կեդրոնականի մէջ իր նստած գրասեղանին վրա կը զետե-ղեն հաւկիթ մը, ու հազիւ ան վրան նստած՝ ճերմակ հագուստը կը դեղնի. սարսափելի կըլլայ խեղճ տղուն յուղումը եւ կարտասէ ժա-մերով: Կենդանիները շատ սիրելուն, — մանաւանդ էչն ու գորաը—դպրոցի շրջանակին մէջ իրեն ալ փոխ կուտան կենդանիի անուն մը եւ կը կոչեն մի սագ. . . :

«Խպնոտ, — շարունակեց մայրը՝ աղջիկներէն շիկնող բնաւորու-թիւն մը. կը սարսաւը՝ երբ մատները դպչէին բարեկամուհիի մը, ու այդ զգայութիւնը տեսեց մինչեւ իր մահը: Հիւանդութեան սկզբնաւորութիւնը օրերով դադանի պահեց. կըսէի, Միսա՛ք տղաս, ինչո՞ւ տժոյն ես, ի՞նչ կըլլաս. . . :

— Ոչինչ մայրիկ, պղտիկ յուղում մը. եւ այդքան:

Երբ օդափոխութեան համար զինքը փոխազրեցինք թօփ-Գափու, կրկին իր նախկին ապրելակերպը: Պատշգամը արեւին տակ ժամե-րով նստած՝ չէինք կրնար դիրքերը առնել ձեռքէն:

Ու յանկարծ Միսաքի լուսանկարը վերցնելով մօտակայ սեղա-նին վրայէն՝ ըստ.

«Մեռած օրն ալ ասանկ Յիսուսին պէս պղտիկ մօրուք մը ու-նէր. . . »:

**

Երեկոյ մը Պոլիս լուսկեաց փողոցի մը պատի կողքէն յամբաքայլ Մեծարենց կը կարդայի: Բանաստեղծ Վ. Թաթուլը հանդիպեցաւ, Սիսաքի ամէնէն մտերիմ ընկերներէն մին ու սկսաւ Մեծարենցի կեանքը քրքրել: «Նոր Տաղեր» հատորիկը ձեռք առնելով առաջին բացւածքին Անանուն վերնագրով քերթւածը՝ ու ըստ.

«Կեանքիս մէջ այդ օրը չեմ կրնար մոռնալ. թօփ-Գափու Մե-ծարենցը տեսնելու դացած էի. առաջարկեց քիչ մը դաշտ բարձրա-

նալ. ճամբան ցորենի արտի մը եղերքը պատահմամբ ցանկապատի մը տակ պղտիկ ծաղիկ մը գտնելով հարցուց.

— Վայրի՛ ծաղիկ, անունդ ի՞նչ է:

Ու քիչ անդին ծունկերուս վրա «Անանուն»ը ստեղծագործելով վերջաւորութեան՝

Գիտե՞ս ծաղիկ, անունն ի՞նչ է

Դողին՝ գր ֆեզ տըլաւ հովիկ,

Ու ձայնին որ զիս կը կանչէ. . . :

Այդ պահուն առաջին անգամ համարձակեցաւ ինձ ըսել. «Վահ-րա՛մ, քիչ քիչ պիտի հատնիմ. . . »:

Ուրեմն Պոլիս, Մեծարենցի նւիրւած գրական հաւաքոյթը տեղի պիտի ունենար մէր տւած այցելութեան յաջորդ օրը: Կիրակի առա-ւոտ մինակս գացի մայրը ցերեկոյթին բերելու:

Ճամբան Մեծարենցի վերջին վայրկեանները նկարագրելով՝ «Այդ ամառը, շարաթէն կիրակի լուսնալու գիշերը աքաղաղներու կանչէն պահ մը առաջ, տղուս անկողինին վրա ոտքերուն կողմը նստած կը հսկէի: Կուրծքին հերքը այլեւս չէր լսւեր: Մերթ ընդ մերթ չոր հաղ մը, պղտիկ չշիւններ եւ այդքան: Մէկէն ինծի դառնալով. «Մայրի՛կ, վայրկեան մը դուրս կելլե՞ս, ես հիմա քեզի պիտի կան-չեմ եւ դարձեալ կը նստիս մօտս, շա՛տ մօտս»: Դուրսը քանի մը վայրկեան վերջ լսեցի իր ձայնը որ կը հծծէր՝ «Հոգի՛ս, հոգի՛ս»: Հինգ վայրկեան դրան առջեւ սպասելի վերջ ձայնեցի. Միսա՛ք, աը-դաս, ներս մտնե՞մ: Ոչ մէկ ձայն: Կրկնեցի՝ լուռ էր: Ու ատկէ վերջ վայրագ կերպով ինկայ անկողինին վրա. . . : Խե՞զ եւ անուշի՛կ աղաս, սիրաց այնքան բարի էր որ նոյնիսկ մահը չուղեց ինձ ցոյց տալ՝ տառապումս նւազեցնելու մտադրութեամբ»:

ՇՐՋԱՆԸ

Նախ պղտիկ փորձ մը պարզելու համար այն ժամանակամիջոցը որուն մէջէն կաղմաւորեցաւ Մեծարենց:

Դուրեանականութիւնը եւ Պէշիկթաշեանի մեղեդին դժւարաւ կը հասնին մինչեւ «Հայրենիք»ի սեմին: Այդ օրերուն բանաստեղծ չու-նինք: Կայ միայն այն խմբակը որ Փրանսական գրականութենէն աղ-դաս՝ կը տարւի ապրւած գրականութիւն մը ընելու տենդէն ու կը ստեղծէ իրապաշտ հոսանքը մէր մէջ:

Տարիները կը քալեն: Կը սկսի քաղաքական հալածանքը իր որոշ ձեւը հագնիլ, ու կը վոնտէ ցեղին հողիէն «Եղբայր եմք մենի»ի սար-սուռը: Կը համնիք 1900 թւականը: Հոսկէ կը սկսի արդէն շրջան մը

որուն գումատութիւնը, արտաբերած արւեստին կեղծիքը երբեք իրմէ առաջ կամ վերջ ուրիշ սերունդներ չարձանագրեցին:

Զօպանեան վերջնականապէս կը փակէ իր Ծաղիկը ու կը հեռանայ: Լ. Բաշալեան՝ դասալիք: Օտար երկրներ կապաստանին Լ. Շանթ, Ա. Արփիարեան, Կամսարական, Օտեան եւ ուրիշներ: Լուածեն Եսայեան, Զօհրապ, Կիւրմեան: Դուրեան Սրբ. կը շքաւորւի հանգիսաւոր օրերուն ոտանաւորով մը ու միշտ հանդէսներու առաջին էջին վրա: Սիպիլ իր «Մայրամուտի Կոյսեր»ով վէով կը շարագրէ բանաստեղծութեան դիմակին տակ: Ու գրականութիւնը կը մնայ այն քանի մը ձանձրախտ դէմքերուն մօտ որոնք անյազօրէն կը քամեն մէր զմայլելի լեզւին համն ու արիւնը: Դժւար թէ ուրիշ շրջանի մը մէջ կարելի ըլլայ գտնել հոտ արտաբերւած բառին տժգունութիւնը: Դարձեալ այդ օրերուն հազարիւտ է գտնել ճշմարիտ բանաստեղծ մէ որ գիշեր ատեն միս մինակը ծառի մը տակ Զարիֆեանին նման գոնէ արտասւէ:

Սկզբնաւորութեան իրենց նիւթերը կը կազմէին միուզոդիսին փառաբանութիւնը: Յետոյ՝ «թէ ես ի՞նչպէս կը ներշնչւիմ» եւ կամ «ի՞նչպէ՞ս կը գրեմներ ու աւելի վերջ ճամբան ցուցափեղկերու առշեւ սլքտումներ՝ աղջկան մը մարմնոյն դպչելու մտադրութեամբ: Ցուրտ արւեստ մը: Արդէն արւեստ կոչւած տարր գոյութիւն ալ չունէր:

Նման անկումի մը, 1903-ին, Մեծարենց հրապարակ կուգար Փունքիր վերնագրով բանաստեղծութեամբ մը:

Մինչեւ 1906 ան չի տարբերիր իր շրջապատէն թէ նիւթերու ընտրութեամբ եւ թէ արւեստով: Անոնք գունատ, խորքէ զուրկ պատկերներ են որոնք կը հանդուրժւին միայն այն երաժշտութեանը համար որ Մեծարենցին ամենէն հաւատարիմ առաքինութիւնը մնաց: Ինքնատիպ պատկերներ որոնելու իր վախը, յանդգնութիւններէ զդուշանալու պարկեշտութիւնը ըրած են զինք իր ժամանակին բանաստեղծը: Ան նստած էր ճիշդ մօտիկը Խանճեաններու, Ուղուրլեաններու եւ ուրիշ բոլոր անոնց՝ որոնք այդ օրերուն Մասիսի էջերը կը լեցնէին:

Ինչպէ՞ս կըլլայ որ այնքան զարտուղի ձեւով անձնաւորող բանաստեղծ Մեծարենցը մէկ երկու տարի առաջ ունեցած չըլլայ այդ թարթափումները, ու մանաւանդ ընդնշմարած չըլլայ այն չքեղ հոռիզոնը որ պիտի տաղաւարէր իր ամբողջ բանաստեղծութիւնը: Ու կրկին, ի՞նչպէս կըլլայ որ անակնկալօրէն առաւոտ մը կունենայ տե-

սակ մը հոգիի պոռթկում, զգացումի լայն եւ խորունկ հոսում մը ու կուտայ մեղի իր հոգիին երգը՝ որ ամենունը եղաւ:

Գաղտնիք մըն է ասիկա ու պատահած նոյնութեամբ Վարուժանին ալ: Հորտ Պայրըն ալ ըստու. «Առաւոտ մը երբ արթնցայ՝ հանձար մը եղած էի»:

Նիկո Եհ ԵրԱԿ

Մեծարենցի գործերը կը կազմեն երկու նիհար հատորներ, «Միածան» եւ «Նոր Տապեր»:

Առաջին անգամ «Միածան»ը հրատարակեց: Երկու հատորներն ալ 1907ին հրապարակ եկան:

Այդ երկու գործերէն զատ ունի մաս մը գեղեցիկ կտորներ ցանուցիր՝ «Արեւելեան Մամուլ»ի, «Լոյս»ի եւ տարեցոյցներու մէջ: Անտիպ քանի մը կտորներ կը մնան իր եղբօրը քով: Պղտիկ տետրակ մըն ալ հանդուցեալ Հ. Ասատուրի՝ որուն բովանդակութիւնը ընտրանօք լոյս տեսաւ 1922ի թէոգիկի տարեցոյցին մէջ: Նոյնպէս հանդէսներու մէջ արձակ էջեր ու քանի մը քննադատութիւն: Հետագէսներու մէջ արձակ էջեր ու քանի մը քննադատութիւն: Հետագան միանալ այդ բոլորին մէջ, բոյրի մը պէս մշուշոտ, կանցնի իր բանաստեղծական մայր երակը հետեւեալ լայն, բայց պրկւած բովանդակութեամբ:

Առաջին բնութեան չափազանց նրբացած համապատկեր մը ուրիշու մասնայատուկ գոյն, մանրամասնութիւն եւ նկարչի ճշգութիւն կուգան միանալ այդ կարկառներուն լաւագոյն կերպով յարմարւող հոգեկան դրութեան մը:

Երկրարդ կարօտի խորունկ գոյ մը: Հոտ կը հոսի երազւած հայրենիքի մը, գիւղին յորդահոս ջուրը որ իր մէջ կը ցոլացնէ բոյր վայրի ծաղիկներուն գոյնն ու քաղցրութիւնը:

Երրորդ Ազգայնական շեշտ մը խառնւած հայրենաբաղձ հոգիի մը որ բուռն է եւ զավւած: Անիկա զգուշաւոր կերպով իր տողերուն կը ծածկէ իտէալացած սարսուռ մը որ ցեղին խորքէն կուգայ:

Այս ներքին, ծածկւած մասէն վերջ կանցնիմ արտաքինին, բայց ոչ ձեւին, այլ բովանդակութեան, նիւթերուն:

Երկու հատորներուն ցանկէն կը տեսնենք կրկնած վերնագիր-

ներ, նիւթեր եւ տեսարաններ՝ որոնք զանազան պահերն ու զանազան հոգեբանութիւններն են միեւնոյն մայր տեսիլին։ Այսպէս՝ այդ, այգային, ցայգային, ցայգանւագ, ցայգն է պայծառ, իրիկնային, իրիկւան մէջ խորին, իրիկւան իղձ, իրիկունը, հովը, հովին անցքը, եւայլն։

Ամենէն աւելի յաճախող պահն է այդը եւ իրիկունը։ Յետոյ երազի վայրկեաններ եւ առհասարակ ատոնց մօտիկը ու ատոնց մէջէն հոգիի օրիանքախներ։

Դասաւորում մը իր մօտ, առաջին գծին վրա պիտի բերէ բնութեան զգացում մը տեսնւած իր զանազան երեսներուն վրա, ինչպէս զիւղական վերյիշումներ, երեւակայած անկիւններ, միս-մինակ ծառեր, եւայլն։ Անմիջապէս վերջ կեանքի պատկերներ ընդհանրապէս վերցւած հետաւոր զիւղէ մը եւ հակառակ անոր որ ապրած է Պոլիս՝ քիչ ցոլացումը այդ քաղաքին։

Հետեւաբար, բնութիւն, քիչ մը հոգի որ կը վախնայ ինքզինքը լանալու, առատ երազանք, ձայնի եւ բոյրի ալիքներ, մաս մը յիշտակ, աղու յուզումներ եւ ոսկեգոյն մշուշ մը՝ թերեւս կարմրած իր հիւանդութենէն։

ԲՆՈՒԹԻՒՆԸ ՄԵԾԱՐԵՆՑԵՆ ՆԵՐՍ

Նիւթերու ընդհանրացման տեսակէտով ամենէն աւելի խոշոր եւ լայն կերպով առաջ եկող մասը կը կազմէ բնութիւնը։

Զանանք համեմատական զնացքով պարզել այս տարրը։ Առանց նկատի առնելու Մխիթարեաններն ու Ալիշան, որոնց արտադրութիւններուն մէջ նկատելի է բնութեան զգացումը, կը համինք մինչեւ Դուրեկան։

Դուրեկանի մօտ բնութիւնը տեսակ մը շրջանակ է որ կարծես զետեղւած է հոն իր ներքին հոգեկան յուզումները մէկ մէկ կառկառներու վերածելու, յար եւ նման՝ թէքէեանի բանաստեղծութեան։

Ահա իր Թրքուիին. «Կըսես հիմա կը մարի»։ Այս հոգեկան համառումի միջոցին պոլսական վերջալոյսը որ միայն երանգ կուտայ առանց քերթւածին մէջ տիրական ձեւ հագնելու։ Ու ասիկա Դուրեկանի բոլոր քերթւածներուն համար։

Դուրեկանէն մինչեւ Մեծարենց մեր բանաստեղծութիւնը նկարչութեան կողմանէ տեսակ մը ընդհատած ճամբայ է՝ որուն եզերքը երբեմն բուսած են հարսնուկներ ու վայրի կակաչներ եւ երբեմն ալ չորցած խոտերու փլուզումներ։

Սիպիլի պղտիկ գիծերը, Յարութիւններն նկարները, Զօպան-

նանի փասդէլները երբեք տպաւորութիւնը չեն տար ապրւած անկիւնի ժը։

Վահան Թէքէեան հոգիներով զբաղած է։ Տիրան Զրաքեանի ներքնապէս թաւալող նուրբ երանդները մեր նկատողութենէն դուրս կը մնան։

Ու կրկին Զօպաննեանի Փրանսական ստերով շրջանակւած բնութեան տեսիլները յուղումէ զուրկ կտորներու կը նմանէն։

Այս սեպին մէջ եղակի խառնւածքով բանաստեղծը Մեծարենցն է։

Անոր մօտ բնութեան ծաւալը ընդարձակ է ու կերկարի Պոլսին մինչեւ գաւառ։

Եթէ վայրկեան մը Մեծարենցի բանաստեղծութիւններուն մէջէն անջաւոելու ըլլանք զգացումը եւ սուերը, պիտի մնայ միմիայն փեյզած մը վերցւած հեռաւոր զիւղի մը ապրւած, իրական մարզերէն բայց շատ աղօտւած – քանի որ բանաստեղծը կանուխէն ձգած է զիւղը – ինչպէս օրինակ՝ Զրտուք, Հիւղը, Ազգային, եւայլն։ Այդ բնութիւնը տեսիլքի մը պէս երկար ատեն իր հոգիին խորը պարփակելէ վերջ, կամրողացնէ գիծերու փափկութեամբ, գոյներու քաղցրութիւնով մը։ Կաւելցնէ նաեւ այդ երազային դաշտանկարին վրա պղտիկ հոգի կտոր մը Արեւելքն, ու ատով իսկ կը դառնայ՝ կը գուագիս գեղեցիկ։

Գետ, ճամբայ, աղբիւր, միս մինակ ծառ մը, ջուրի ճամբաններ, արցակ մը յուսամ, այծտերեւ, ցանկապատ ու ամբողջ սարսուռները Սրեւելքին – ահա Մեծարենցի նկարներուն նիւթերը։

Պարիկներ կամ համբոյրով դողդողացող բերաններ՝ որոնց դէմքը կը պակսի։

Պղտիկ կենդանիներ, հովի ձայներ, թիթեռնիկ եւ ամբողջ հաւաքածոն գեղեցիկ քարերուն։ Տերեւներ մերթ կանաչ, մերթ ոսկիի գոյն որ թո՛լ շրշիւնի մը մէջէն կը թափին համբընթաց ու անկէ վերջ կը հագնին աղջկան անորոշ ձեւեր։ Ուռենիներ՝ որոնց սառած շուքը կերկնայ մինչեւ ճամբաններուն եղերքը։ Մանաւանդ ցայգեր հազար անգամ կրկնւած, բայց միշտ տարբեր իրենց վլաններուն մէջ։

Իր բնանկարներէն կը սողոսկի երբեմն կրօնական միսթիք չունչ մըն ալ որ խորհուրդի եւ աղօթերգութեան շղարշի մը մէջ կը փաթթըւի։ Խարուսիկ՝ բայց նրբացած երանդներով։ Հոս ալ միշտ տեսողական զգացողութեամբ՝ քան թէ զուր զգայական։ Հեռու Թէքէեանի «Ճէ՛ր»երէն որոնք անդիտակցական աշխարհի մը կը կատւին։

ԱՀԱ ԻՐ Կիրամուտքէն հատւածներ .

Յուշիկ փախչող իրիկւան ծիրանի լոյսն է զըւարք ...

Ուկի քելեր՝ պլլըւած յունկի քաւիշ մըշուշին .

Կապոյտ ծովեր, ծիածան, ծըփուն ձայներ, միստի՛ք վարդ

Լոյսէ արցունիք մոմերու՝ որոնիք հանդարտ կը մաշին :

Զահերն հիմակ կերագե՞ն համակ զիմբիւր ու քարշիշ ...

Կամարներն, յորանեն կը ծագին լոյս ու ծիծաղ .

Հոգիս ժիշ կը քաղլի անուրջին մէջ այս չքնաղ :

Այս շարքէն է իր «Աստւածամա՛ր»ը, «Տուր ինծի, Տէ՛ր»ը ու մանաւանդ Հոգեհանգիստը զոր գուրս կը մնայ իր երկու հատորներէն : Հոս կարտագրենք ամբողջութեամբ :

Կը քրվույ զանգակին վանկը քռչուն .

Ուկի նափորտ հագած շարաք իրիկւան

Տիրանըրէր դղանցքին տակ դողդոցուն,

Ու ծուխին մէջ մքնշաղին երկեւան :

Անդոհութեան ալիք մը ներս կը խուժէ

Պիրկ յօրանցքին պատուհանիս կիսարաց .

Հովին ծեծէն, մարդուն բաղդէն յուսափած .

Թուչնիկ մըն է՝ որ իր ցաւը կը գուժէ :

Եկանիկ մը՝ դեղնակիտուած, հողմահար

Թեւիկներով՝ իրիկւան մէջ մուրուն,

Անծայրածիր իրիկւան մէջ դողահար՝

Կեղրայրանայ յուսիցիս գրած իրերուն :

Իրիկուն է յուսնիկ ու ցաւով մքգամած .

Խնկամանն է ծուխով, քռչնիկն ոգեւար .

Հոգիիս մէջ կը զգամ շարժում մը դժւար,

Անդրաշխարհին հակող շարժում մը կամաց :

Նրբանցքին մէջ մայրս աղօք՛ մը կը հեծէ,

Կապրեցնէ սիրելիներն իր աւէն .

Լոյսերու մէջ բնկողմանած՝ մեկնումէն

Վերջ իրիկւան, ժպսող՝ անսես մէկ յուսից :

Թուչնակն հոգին տախտակներուն կը ծեծէ,

Ու պատերուն, ու հոգիս վրդոված .

Թուչնակն հոգին կուլդէ անտես մէկ զիծէ,

Անծանօթին մէջ որոնել իր Աստւած :

Ենունի նամբայ՝ կուզէր անցքին անդրաշխարհ .

Հէ՛ քռչնակին հոգին կըլլայ այդ նամբան .

Եւ քռչնակն ալ կուզէր անմիւր մէկ դամբան .

Խումկին ծուխը կը պարուրէ իր նշխար :

Աներկրային խաղաղ ձայնը կը յսէ

Մեռածներու յուշքին՝ հոգիս իմ հանգիստ .

Օ՛հ, ես չկա՞մ իրիկւան մէջ լրուանիստ՝

Հոծ իրիկւան մէջ այս երանգ ու լոյսէ :

Մայրս աղօքէն վերջ արցունիքն կը սրբէ .

Խաչանիշ մը կըլլայ քռչնիկն՝ օրինական

Սյա վայրկեանին զոր կարծարէ լուսինելան,

Կողչագուրէ իր ծոցին մէջ սատափէ . . . :

Լրացնելու համար ընութիւնը Մեծարենցի մօտ, պէտք է նիշենք նուեւ բնույթեան երկրորդւած սահման մը . այսինքն թէ երբ իր փէյ- գամներէն տող մը կը կարդանք, անիկս իր տւած պատկերովը մեր մտքին մէջ կը բանայ շատ աւելի լայն է . հարուստ խորութիւններ, եւ մեղի ասիթը կուտայ իրեն հետ միասին մտածել, զգու; ու վեր- ջապէս քիչ մըն ալ ստեղծել: Ու որքան որ բնդարձակ է այն իրակա- սութիւնը որ պարփակւած է բանաստեղծին տւած բնանկարին մէջ, այնքան ալ մեծ է թոփչքը՝ որ կընէ մեր միտքը գեղարւեստա- կան պատկերին տպաւորութեանը տակ:

Ըսինք թէ Մեծարենցի բանաստեղծութիւններէն եթէ անջատենք զգացումը եւ ստուերը, կը մնայ միայն բնանկար մը: Հոս բնանկարը պարզ նկարագրական ըլլալէ աւելի միջոց մըն է Հոգեկան վիճակնե- րը դրսկուրելու: Այլ բառով՝ ընութիւնը ոգեկոչող իր ամէն մէկ տողին տակ թաքնւած կը դանենք էապէս անձնական ներքին յու- զումներ: Այդ է դարձեալ պատճառը որ մարդկային շարժումը իր աշխատանքներով չարտացոլար իր գրականութեան մէջ: Բացառու- թիւն Զրուուքը ուր տեղ կը թափառի մարդկային ստուեր մը:

Գիշերային ջրտուքի ժամն է. լոյսին մէջ կայնած ,

Մշակն անելուն, կը սպասէ՛, ոտքը բռպիկ, բահն ուսին .

Պարտէզներուն վրա կիշնիկ քերեւ քոյք մը միգամած ,

Ու ծղրիթներ՝ յուսնակով արքշին՝ անվերջ կը խօսին:

Թումրերն անդուլ կը բացին, զուրի անդադար կոռոնգէ

Վարդենիքը, քըրապատան, եւ ածուները բոլոր .

Բահի երկու հարւածով նայիս առուն կը քեֆէ

Օձանապուկ ձեւերով նեղուկ իրանն իր ոլոր:

Զուրն անընդմէջ կը հոսի, ածուները կը լինան .

Ու դարձուցէ՛ք, կը կանչէ ծեր մը մուրին ընդմէշէն .

Խիներուն ու սիկին մէջ, բահերը՝ խո՛լ կը հնչեն,

Ու դարձուցէ՛ք, դարձուցէ՛ք, կը կոչէ ձայնն անխափան :

Աղջընակ մը արիշին տակ նստած, շե՛ր կը կանչէ,
Որ յոգնարեկ մըշակին օրօրի մը պէս կուզայ.
Հողը ծըծեց ջուրերուն տարփանին՝ որ դեռ կը հնչէ,
Եւ իմակ քա՞ց՝ կը խոկայ իր երկունիքին ապագայ:
Քրուուքը, որպէս բնանկարի համարութիւն կը հանդիսանայ
Մեծարենցի եւ նոյնիսկ ամրող հայ քերթողութեան դոհարներէն
մին: Հոտ բառերը իրենց իմաստին մէջ վերջնական: Կառուցման
ճարտարապետութիւնն ալ լիուլի լրիւ:

ԵՐԱԾՏՈՒԹԻՒՆԸ

Երեկոյեան երբ արեւը քամւելէ վերջ կը տարածւի թափանցիկ
քողը իրիկւան, այն պահուն՝ երբ լուռթեան երաժշտութիւնն է որ
կը տիրէ, կը նշմարենք գլխահակ հոգի մը որ կը քաշքաւի թաւուտա-
ներու եղերքին, ցանկապատերու տակ եւ պատերու կոնակին:

Պահը որ ըստ Տէրեանի «լոյս է եւ մութ», ամէն նիւթ կը հագ-
նի իր անանուն երաժշտութիւնը: Զուրը որ կը քալէ, ծղրիթ մը որ
կերգէ ինքնայատուկ քերթւած մըն է որ աչքերուն խօսելու չափ գի-
տէ դպչիւ ականջին ալ:

Մեծարենց ականջի բանաստեղծ մը, բնութեան այս տարրերուն
մէջէն կրցաւ իւրացնել նախ նիւթին սեփական երաժշտութիւնը: Ան
ուսումնասիրեց իւրաքանչիւր երեւոյթի ներքին կշոոյթը, զգալէ ա-
ռաջ ապրեցաւ տերեւի մը անկման գեղեցկութիւնը, նոյնացաւ մէս-
քին հետ: Ատով իր քերթողութիւնը ըլլալէ առաջ բառերու քաղց-
րահնչիւնութիւն մը, վերածւելէ առաջ գիրերու ներդաշնակութեան,
դարձաւ տեսակ մը զուտ բանաստեղծական վերադարձի դդայու-
թիւններ, համակ կշոական: Այդուն է «կիրակմուտք»ը, պահին
խոյանքովն ալ աղւորցած:

Մեծարենցի արւեստին երաժշտական զարգացումը պէտք է
գնատել նոյնպէս իր գործին գեղադիտական կազմութեանը մէջ: Աղ-
եցութիւններ՝ որոնց մէջէն ամենէն գլխաւորը կազմեց ժողովր-
դական ոգին: Հոտկէ առաւ իր մտային եւ զգայական ապրումները:
Բայց նախ ըստ՞նք թէ ան աշակերտն է դպրոցի մը որուն վարպետը
յայտարարած է «Լ.Ա. Պոէթիք»ին մէջ՝ «Տը լա միւզիք ալան քուր-
շոզ» – ամենէն առաջ երաժշտութիւն: Մեծարենց դիւղի տղայ, ե-
րաժշտական միջավայրի մը մէջէն ամենէն առաջ ինքն էր որ պիտի
նետւէր գիրկը այդ դպրոցին: Ան մեծ թափով փարեցաւ հաւաքել
ուամիկ գեղջուկներու բերնէն ժողովրդային ասացւածքներ, երգեր
ու զրոյցներ: Իր ծերուկ մայրը յուզումով կը յիշէր ինձ այն ան-
եւ զրոյցներ:

դառնալի պահերը երբ Միսաքին հետ գլուխ գլխի կարտառանէր եր-
գեր ընդօրինակւելու համար: Իր զրականութեան ուսուցիչը չ: Ա-
սատուր ալ տեսած է անոր ձեռագիր տետրակները որոնք լեցուն են
եղած Ակնայ Անտունիներով:

Մեծարենցին ոճը կազմւեցաւ մէր ժողովրդական բանաստեղծու-
թեան եւ մասնաւորաբար ն. Քուչակին մօտ: Ան ժողովրդային եր-
գերուն միայն կշոոյթը որդեգրելով զետեղեց բառերուն ներսը ա-
սանձին հնչիւն եւ ատոնց չնորհիւ կարողացաւ համնիլ լաւագոյն
արդիւնքներու: «Զուրէն Դարձին»ը որ կը նմանցնէ ձանին բնա-
կանութիւնը, եւ մէնք լոել կը կարծենք րլուրն ի վար սափորով ժը
լջնող աղջկան ոսկիներուն ձայնը:

Երբ բըլուրն ի վար
Աղրիւրէն դարձին,
իր վարսի խուրձին
Մէջը սողոսկի
նուրբ մատիկն ոսկի
Արեւին լոյսին.
Հիր սափորն ուսիմ
Երբ բըլուրն ի վար
Աղրիւրէն դարձին,
Մեղմով ծածանի
Լաջտկն հողմալար՝
Թիւով թռչունի.
Ու ծիածանի
Թոյյրով պապրայ
Աչքն իր գեղանի.
Եւ երբ որ ցնծայ
Հնչիւնը՝ ծեծդայ
Զարդոսկիներուն.
Տենչանին անհուն
Հոգիս պիտ սոսիմ...

Գանձեր՝ զոր չունի:
Ծարաւ շիղին պէս
Պիտ՝ լղաց անի,
Երկու կարիլ զուր
Շուրբերուն իր կեզ:
Եւ իր նակատին՝
Զովացքը ցրտին,
Ճակատին կըրակ՝
Զովացքը ցրտին,
Կարմիր սափորի
Զուրին սառնորակ
Ցողովը բերրի՝
Կակաչ ձեռքերու...:
Ա՛հ, այս իրիկուն
Սափորն իր ուսիմ
Աղրիւրէն դարձին՝
Սիրոյս անանուն
Զերմ սարսուներով
Կը դողայ սոսիմ...:

ԱԶԳԱՑՆԱԿԱՆ ԼԱՐ

Միսաք Մեծարենց աղկային վիշտը, ցեղին աղատագրումն ալ
երգող բանաստեղծ մը եղած է:

Գուցէ քիչ մը տարօրինակ թւի Մեծարենցին աղկայնական ան-
ւանումն: Մարդ կը տարւի մտածել թէ ի՞նչպէս իր այդքան քնքու:
նրբին քերթւածներէն վերջ պիտի կընար բուռն ու արիւնի համ տը-
ւող տողեր արտադրել: Օտար զրականութիւններու մէջ նման երե-
ւոյթներ շատ կան:

Մեծարենց ըրջապատւած շարք մը գաղափարապաշտ յեղափո-
խական երխտասարդներով (Շ. Միսաքեան, Գ. Բարսեղեան, Բժ.

Գասպարեան, Վ. Թաթուլ, Եւն.) , իրենց հետաքրքրութիւնը կը դեղէր մեր ազգային դատին շուրջ : Դրօշակի թիւերը ձեռքէ ձեռք կը խլէն : Մեծարենց, ազգւած շրջապատի տղոց ռազմատենչ ոգիէն , ոկած էր այդ տրամադրութիւնները արտարերող քերթւածներ մըուտել : Կեդրոնական գրդիչ ուժը Հայրենասիրութիւնն էր : Ու այդ դգայութիւնը հետզհետէ Մեծարենցի մօտ դարձաւ լական բառերէ հեռու զսպւած ցաւ մը , կատաղի , միեւնոյն ատեն հաւատքով յիցուն :

Իրմէ Հատ մը միայն կապրի :

ԵՐԳ

Քո՛յր , մօսեցի՛ր կրրակին ,
Ծըխէ տերեւն այս բուրեան ,
Զի ամէն բան ինձ կրկին
կը դարձրնէ հոտն արեան :
Քո՛յր , մօսեցիր դարակին
Ու բեր հեղուկն հրճանեան ,
Զի ամէն բան ինձ կրկին
կը դարձրնէ համն արեան :
Քո՛յր մօսեցիր նրագին ,
Մարկ' զայն , բող լուսրեկան , կը յիշեցնէ Վրէ՛ժն արեան . . . :

ՍԻՐԵՐԳԱԿԸ

Լուսեղէն ձամբայ մը որուն եղերքէն սպատանի Մեծարենց , երադուն , թափառելէն իր սէրր կը մինառէ : Կարծես օր մը այդ ձերմակ ձամբուն մէջ ժպիտով մը ծնունդ առաւ եւ հիմա մնացեր է միայն բոյրը աղջկան՝ քաշքշւոյ իր կեանքին թեյին պէս : Պիտի զտնէ՞ էտկը որ իր հոգիէն ներս ամէն բան յոյս եւ համբոյր կը դարձնէ .

Համբոյրներ կուգան հովկն ու ծովկն ,
Համբոյր՝ լոյսէն որ չորսդիս կը ծաղկի՛ ,
Այս գիշեր տօն է հոգւոյս՝ կիրակի՛ ,
Համբոյրներ կուգան հովկն ու ծովկն :

Մեծարենցի 90ի համնող բանաստեղծութիւններուն մէջէն Հաղի բանի մը հատն է որ սիրոյ դգայութիւնը կը յուցադրէ , այդ այ շատ ողու գիծերու տակ , քանի մը Հատ Սիրերգներ , Թղթիկը , Ըլլային երուն մէջէն բանի մը տող եւ ա'յդքան : Անոր մօտ այդ դգայութիւնը չափազանց ամէկոտ յուղում մըն է , քողարկւած , որ հաղիւ հաղերեմն իր դորձին մէջ անակնիալորէն տեղ մը երեւան կուգայ , ծիածանի գոյներուն պէս խարուսիկ , բայց անոր պէս ալ չփեղ : Երիտասարդ սիրտն է անիկա , Համակ նրբին յուղումներով օժուած որ փոխանակ իր տեհնանքները իրական մարմիններու վրա պտրոցնելու երեւակայութեանը մէջ աղջկան դէմքեր կը շինէ ձեւի եւ մշուշէ

քաղցրութիւններով հարստացուցած : Արտակարդ երեւոյթ մըն է ասիկա երբ գարձեալ նկատի կառնենք իր շրջանը : Երբ Մեծարենց հրապարակ եկաւ , տակաւին Դուրեանի սիրոյ ազաղակող շեշտը կը լեցնէր մթնոլորտը : «Թրքուհին» անցնող եւ համեցող երեւոյթ մըն էր մեր բանաստեղծներուն երեւակայութեանը մէջէն : Իսկ Տէմիր ձիպաշեան ամէն օր սիրոյ յուսահատեցնող նոր ինքնավերլուծութիւն մը ունէր կատարելիք Մօտալի բարձունքն : Այս արտակարդ կանչերուն , այս պոռթկացող ցանկութիւններուն մէջ ահա Մեծարենցի ժուժկալ , զուսպ հաղին եւ արխւնին դոյնովը շպարւած սիրոյ նուրը աղերսանքները :

Շրբունիս են ծարաւ միակ համբոյրին . . . :

Եւ կամ՝ Տո՛ւր ինձի , Տէր , ուրախութիւնն անանական . . . :

Ասոնք առաւելապէս հեծեծանքներ են , հատնող սրտի յուզումներ , որոնց արտարերմանը մէջ անզամ բանաստեղծը մեզմէ փոխանակ արցունք մուրալու՝ նախ մեզի կը սքանչացնէ իր արւեստի մտահոգութիւններուն համար , աւելորդ զեղումը կարենալ իր մէջ ծածկելու , սպաննելու առաւելութեամբր :

Սիւն աղջբակ՝ որ հիւսիսէն կը քնիշանայ հոգւոյս վըրան .

Ահա՝ կանցնի , մըշուշած բի կազու տեսի մ'ալ զերք ալիք .

Զարմանուի մ'է վարագեղ , կար ու վարդի՛ հըրաշալիք . . .

Յաւերժահարս կար ու վարդէ , ծաղիկ , նախանչ , զուր ու զեփիւն , Շատ էր յեցուն հոգւոյս , ով Տէր , բազմազեղումն այս շրջասփիւն . . . :

Մեծարենցի մօտ սէրը , ինչպէս նաև իր բոլոր տրամադրութիւնները իրական գետին մը չունին այս աշխարհին վրա : Երեւակայական կոյսեր իրմէ ծնած օր մը դարձեալ իրեն վերագառնալու համար : Կը կարծէ թէ մատներ տրցակ մը հուսամ եւ տրցակ մըն աւ ուրց պիտի թափեն իր ճամբուն երկայնքն . . . : Յուսախար պահ մը կանդ առած կը հարցնէ իր հոգիին .

. . . Դեռ մինչեւ ե՞րբ , ըսէ՛ , հոգի՞ս ,

Դեռ մինչեւ ե՞րբ տառապիմ

Թրպտելով անքանէիխս

Թօշ ծաղիկը մտերիմ :

Գուցէ վաղը մթնէ հոգիս ,

Գուցէ դուն ալ բարշամիս

Մ'եղծեր հմայքն անը զանքիս ,

Ու ծաղիկը պաշտումիս . . . :

Իտալացի արձանագործ մը իր սիրած աղջկան մարմարէ արձանը կերտելէ վերջ իւրաքանչիւր մօտենալուն կը կարծէր թէ անոր

մէջ հոգի մըն ալ կապրի, եւ նոյնիսկ քարէ շրթունքները կը շարժին: Այդ գերիվեր ապրումը մինչեւ հիւծախտ տարած է զինքը:

Կոռու Համսունի «Պան»ի հերոսին ալ կը թւէր թէ իր խրճիթին առջեւ ինկած կոչտ քարն անգամ բարեացակամ է տրամադրուած դէպի աղջիկը Եղուարդան:

Այս ինքնամոռաց յափշտակութիւններուն պէս Մեծարենցի մօտ ալ հոգեկան տրամադրութիւնները զինքը կը հասցնեն որոշ գետին մը ուրկէ անդին սէրը ձեւափոխում մը կը ստանայ եւ փոխանակ քարէ շրթունքի մը՝ ինքղինքը կը տանի ծածկել աքասիաներու շուքին: Այսպէս Մեծարենցի համար բնութիւնը դարձաւ գեղեցկութեան եւ սիրոյ աղբիւր մը որմէ սքանչացած մոոցաւ իր եսը ու զնաց խառնըւիլ, հիւսւիլ քիչ մը հովին, քիչ մըն ալ դաշտի ճամբուն վրա սպասող միս մինակ հիւղին հետ:

Իր հոգին ներս բաղձանքներ ծնունդ կառնեն նմանելու, ըլլալու իրիկուններ, ծիրանի լոյսեր: Վայրկան մը ինքղինքը ա'յնքան նոյնացած կը զգայ բաղձանքներուն հետ որ ատոնցմէ հարստացած այս տրտում էակը ինքղինքը կը բաշխէ «վրան ամէն հոգիի»:

Մեծարենցի մօտ ոչինչ բուռն, հասարակ, թատերական սիրոյ զգացումին արտայայտութեանը մէջ: Նոյնիսկ երեւակայտական հասցէի գացող այդ տողերը բացարձակապէս պարդ են: Կարելի չէ գրտնել տող մը որուն մէջ զգացումը խոչոր գիծերով յայտնւած ըլլայ:

«Մեռելոց» է վերնագրեր քերթւածը՝ որուն մէջ միս մինակ կը տանի սէրը թաղել:

Զըմեռ օր մը, ճիւնին մէջէն մի՛սմինակ,
Զիւնին մէջէն, տարի դամբանն իմ հոգւոյս,
Ժըպիտով մը ծընած նախկին սէր մը կոյս,
Ըսպիտակ վարդ՝ որ ստոցաւ ճիւնին տակ:
Գարուն մըն էր, եւ համբոյրով մը բացած
Դամասկեան վարդ, գինով արփին գաղց գոլէն,
Նրւաղեցաւ ուրիշ սէր մը. սէ՛րն, Աստած՝
Զոր քաղեցի՝ յուսատ՝ կեանքին կանչելէն:
Ամրան վերջն էր, նայւածենով մը բողբոշած
Դեղին վա՛րդս ալ իմկաւ աշնան շունչին տակ.
Զայն վերցուցի՝ արդէ՛ն եղած յիշատակ՝

Ու նետեցի փոսին մէց, ցա՛ծ, ահ, շա՛տ ցած:
Հիմակ ամէն մեռելոցի ես կերպամ
Անոնց մարմար դամբանին վրա ցրտաշունչ,
Աղօք-քով մը, կորած մէգին մէջ տարտամ

Անոնց յուշին, մըտաք-ափառ, լուռ ու մունջ:
Ու մըտածումս ալ, հէ՛ֆ նժդեհ քահանայ,
Խաչ հանելով կըսէ բառեր լուսեղէն.
Ու նայւածքը կը բաժնըլի երբ հողէն,
Հոգիս զանոնք անգա՞մ մըն ալ կը մոռնայ...:

ՆԱՅԻԱԾՔԻ ՆՈՐՈՒԹԻՒՆ

Բանաստեղծ մը որ իր շրջանակէն գուրս կուգայ, գրականութեան մէջ իր ինքնուրոյն տեղը գրաւելու համար պարտաւոր է նախորդներէն տարբեր նորութիւն մը, չըսւած նիւթ մը եւ կամ թէ ըսւածը իր արւեստագէտի խառնւածքն անցուցած պահուն իր հոգին ալ կաոր մը փրցնելէ եւ գեղարւեստօրէն զայն մարմնաւորելէ վերջ հասարակութեան տայ:

Մեծարենց հոգի մըն է որ իրերը զգացած է հոն՝ ուր ուրիշներ հաղիւ պղտիկ յուկում մը պիտի կարողանային բանտել իրենցմէ ներս: Դաշտի կաոր մը, կածանի մը հմայքը, հեծք մը Մեծարենցի համար կը դասնան անհուն աշխարհ մը որուն մէջ թաղւելէ վերջ գուրս կուգայ մեծ, անսովոր գիտողը, ու այդ պարզ նիւթերուն կը հազցնէ երանգներ արւեստի զգլիսիչ չունչովը գեղեցկացուցած:

Շինելու համար նկարագիրը իր րերած նորութեան, պէտք է բաել որ անիկա զգայական ըլլալէ աւորի տեսողական ստեղծագործութիւն մըն է: Իրմէ առու զ անտեսւած յատկութիւն մըն էր տալ իրերուն իրենց անսուզ, մթամած իստոնուրդին մասնայտուկ գոյնը:

Մեծարենցի մօտ կը գտնենք նոյնալէս զոյնի նորութիւն մը փոփաղբւած ծաղիկներէն եւ թանկագին քարերէն: Այսպէս իր շատ մը տենչացած զոյները մեղի կը հասցնէ ծաղիկներու միջոցաւ, օրինակ՝ հուսամը, ուրցը, ծօթրինը, բալասանը, եւայլն, բոլորն ալ իրմէ առաջ չըսւած անուններ որոնց բոյրէն աւելի զոյնն է որ կը ցոլայ իր բանտառեղծութիւններուն մէջ:

Կան տակաւին թանկագին քարերու անունները, ինչպէս՝ մեղեսիկ, թարշիչ, զմրուխտ, եւայլն:

ՀԻՒՍԻԱԾՔ

Ֆրանսացի անւանի գեղագիտ Ժ. Կիւյօ խորհրդապաշտ բանաստեղծներուն հոգերանական խառնւածքները եւ իրենց թոյլ կողմերը վերլուծած պահուն կըսէ. «Անոնք արտայայտութեան ձեւերը

կը հասցնեն այնպիսի կատարելութեան մը՝ պարզապէս ընթերցողին մէջ պատրանք ստեղծելու եւ բովանդակութեան տկար կողմերը ծածկելու համար»։ Նոյնպէս Փոլ Վէուլէն խօսելով բանսատեղծութեան մը երաժշտականութեանը մասին կըսէ։ «Երեմն երաժշտականութիւնը միանալով տարտամ անորոշութեան հետ, կուտայ ընթերցողին այն՝ ինչ ո՞ր ստեղծագործութեան մէջ կը պակսի»։

Իսկապէս երբեմն կը հանդիպինք գեղարւեստագէտի մը գըլ-
ւածքին որուն խիստ յաջող կերպով տւած ձեւը, բառերու միահըն-
չիւն վերջաւորութիւնը մեր հոգիէն ներս կը ստեղծեն այնպիսի
զմայլելի երածշատութիւն մը որ այլեւս մոռնալով թէ ասիկա կրնայ
զըչի խաղ մը եղած ըլլալ՝ կիյնանք իր ձգած ազգեցութեանը տակ,
ու աւելին, կը սկսինք մեր մէջ զգացումներ արթնցնել որմէ բա-
յարձակապէս զուրկ է բանաստեղծութիւնը:

Մեծարենց ալ ըլլալով խորհրդապաշտներու ազգեցութեանը տակ, իր առաջին գիրքն կարդ մը բանաստեղծութիւններ տարտամ, չամբողջացած իմաստ մը կառնեն, մանաւանդ իր սկսնակի փորձեցուն մէջ: Թէեւ պէտք է յիշել թէ չըսւածը վնասուելու ճիգն ալ մէծ դեր կատարած է զինքը մղելով անորոշութեան:

Երկու գիրքերը՝ Ծիածան և Նոր Տաղեր ձեւով զգալի կերպով
կը տարբերին իրալմէ :

«Ծիածան»ը մեծ մասամբ ազդեցութիւնը կրած է աւանդապաշտ ստանալորին, իսկ «Նոր Տաղեր»ուն մէջ կը գտնենք բանաստեղծը ձերբազատւած բոլոր կաշկանդումներէն :

Կը հանդիպինք իր մօտ եւրոպական նոր մոքիվներու, յաջող իր ազատ չափի օրինաւոր գործածութեամբը: Երբեմն ալ հնչեակներու առաջին երեք տուները բազկացած չորսական, իսկ վերջին տունն ալ երեք տողերէ:

Նոյնպէս հնչեակներ բազկացած լուր տուներն ալ երեքական տողերէ, որով կազմին կուտան ձեւերու յաջող զանազանութիւն մը:

ԱՃ ԵՒ ՀԵԶՈՒ

Գեղարւեստական ստեղծագործութեան մէջ լեզուն եւ ոճը ամենէն էական յատկանիշներն են : Ոճն է արտայայտութեան գումարը արևեստագէտի մը հոգիին : Գեղեցիկ, մշակւած լեզու մը կը բարձրացնէ գործին գեղարւեստական արժէքը : Իսկ ընդհակառակը, անկատար լեզուի մը մէջ ոճը կը կորսնցնէ իր հրապոյը :

Մեծարենցի ոճը չափազանց նուրբ է, շքաւորւած եւ կենդանի։ Զգալի է ճիգը որ թափած է զայն գեղեցկացնելու համար։ Ոչ մէկ տւելորդ զարդ։ Եթէ պատահինք տողերու որոնց ածականները քիչ մը չափազանցւած վազք մը առնեն՝ ատիկա պէտք է վերագրել բանաստեղծին ճոխ երեւակայութեանը որ զիտցած է ամէն մէկ բառին մէջ նոյնքան տարբեր իմաստ մը ներփակել։

Ինչպէս իր առօրեայ կեանքին՝ նոյնպէս գրականութեան՝ մէջ զգուշացած է փոշիի բիծ մը նստեցնել իր որեւէ մէկ տողին վրա, ու ատոր համար Մեծաբենցի լեզուն զմայլելի ըլլալու չափ մաքուր է, ամփոփ եւ պապդուն:

իր ընդհանուր գլուածքին գեղեցկագիտական արժէքը ամբողջութեամբ անցած է ոճին : Զկան քերթւածներուն մէջ կոպտութիւններ և կամ արտառող ձայներ :

ինչպէս ըսինք, Մեծարենցին ոճը կազմւեցաւ մեր ժողովրդական բանաստեղծութեան և Քուչակին մօտ։ Նարեկացիէն վերջ իր ամենէն սիրած հեղինակը Քուչակն է եղած։ Ոճի ներդաշնակութեանը, գնացքին Հետ երբեմն համարձակած է վերցնել նոյնիսկ մօտաւոր պատկերներ մեծ երգիչէն, «ըլլալու», «նմանելու» արամագրութիւններով, անշուշա պահելով անհատական ինքնուրոյնութիւններն ու համեմատութիւններ։

Կարմէ հոս յիշել նաեւ Մեծարենցի բարի հետաքրքրութիւնը վերապրեցնելու բառեր՝ որոնք իրմէ առաջ անտեսւած, մեր բառարաններուն գերկը կը քննանային: Մեր զրագէտներէն շատեր աւելորդ փորձ մը համարած են կատարել այդ խիստ գնահատելի աշխատանքը: Այդ ուղղութեամբ զրագւիլ վիճակւեցաւ Խրիմեան Հայրիկին, Սրւանձտեանցին, Վարուժանին, Թլկատենցիին, Ռ. Զարդարեանին եւ Գեղամին:

Մեծարենց, Զարդարեան եւ Վարուժան, չնորհիւ իրենց օտար լեզվի ծանօթութեան, ճաշակի նրբութեան, հայ ժողովրդական լեզ-ւէն մասնիկի մը վերարտադրութեան մէջ գիտցան զայն գունաւորել արւեստագէտի դրոշմով։

ԲԱՑԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐ

Վերջացնելու ատեն այս հակիրճ տեսութիւնը Մեծարենցի մասին, կուգէի երկու խօսքով շեշտել իր մէկ քանի հիմնական թերութիւնները, որոնք իրենց զգալի հակասութեամբը ըլլայ դեղարւեստական ամբողջութենէն եւ կամ խորքէն անհետացուցած են մասսամբ արժէքներ :

Քաղցր պահ մըն է մտիկ ընել երաժշտական եղերերգ մը որ իր մէ՛զմ տրտմութեամբը կրնայ լացնել մեր հոգին : Սակայն այդ եղանակին հնչիւններուն անվերջ կրկնութիւնը կը դառնայ տակաւ միօրինակ եւ, ինչո՞ւ չէ, նոյնիսկ կը դադրի այլեւս մեզի յուղելէ :

Մեծարենցի մէջ ալ խոչոր զգացումներու պակասը եւ իր մէջ ծաւալող անհուն մեղմութիւնը զինքը տարած են որոշ չափով միօրինակութեան :

Ճիշտ է թէ մենք՝ առանց ձանձրոյթ զգալու, կարող ենք մէկ շունչով կարգալ իր նոր Տաղերը կամ Ծիածանը, սակայն այդ առաւելութիւնը կը պարտինք գլխաւորաբար իր ոճին սահունութեան՝ քան թէ խորքին :

Պատկերներու մէկ մասը – գլխաւորաբար Ծիածանի մէջ – թաթիւած է չափազանցւած մշտւշի մը մէջ որ զինքը անկապ ըլլալու առաջնորդած են : Դժւարաւ կարելի է երեւան բերել պրկւած յուղումը որ կայ այդ ձեւ տողերուն մէջ :

Սիրերգներուն մէջ զգացումը միօրինակ է : Կը պակսին տարբերակներ : Զանազանութիւն դնել սիրոյ յոյզերուն միջեւ՝ անհնարին է, միայն շրջանակն է որ կը ձեւափոխւի :

Մեծարենցի անհետացումէն վերջ ահա քառորդ դար մըն է անցեր, ու տակաւին իր արևեստը և շունչը կը պապզայ հայ դրական երկնակամարին վրա : Շքեղ է ան եւ պարտադրիչ իր ինքնատիպ կեցւածքովը : Ոմանք իր մօս ոճը կը պեղեն, ուրիշներ՝ ձեւը : Այսօր իր աղղեցութիւնը զգալի է թէ՝ Հայաստանի եւ թէ արտասահմանի երիտասարդ գրողներուն վրա :

Մեծարենց արդէն հայ դրականութեան մէջ իր վերջնական տեղը գրաւած է վէճ չվերցնող իր վարպետի հանգամանքովը : Գրականութիւնը որ բերաւ մեր մէջ նոր էր իր բոյրի, գոյնի եւ տեսանի համադրութեամբը : Ու տարիները որ պիտի սահին, մեզմէ ալ վերջ դարձեալ ան պիտի մնայ նոր, անկորուստ եւ աղւոր այնպէս՝ ինչպէս կըլլան աշնան առաւօտները մելամաղձոտ :

Փարիզ.

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ՔՈՒՉԱԿԵԱՆ ՏԱՂԱՇԱՐՔԵՐԻ ԴՆԱԳՈՅՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Նիւթեր միջնադարեան հայ տաղաչափութեան համար)

Դեռ կը շարունակւին Քուչակեան նոր տաղեր գտնուիլ հին ձեռապիրներու մէջ : Ասոնցմէ վերջիններէն է 1932ին Բազմավէպի թիւ 10-11ին մէջ իմ հրատարակած «ՔՈՒՉԱԿԵԱՆ ՆՈՐ ՏԱՂԱՇԱՐՔ ՄԼ» անստիպ տաղերու շարքը, որ արտադրած էի 1931ին Երուսաղէմի Ս. Յակոբեանց Մատենագրաբանի Հայերէն Զեռագրաց ճոխ հաւաքածույին թիւ 2323 ձեռագրէն : Հանդիպումը պատահական էր, որովհետեւ այդ տաեն Քուչակեան տաղերու շարքին կը պատկանէին եւ ունէին բազմաթիւ շահեկան անտիպ քառեակներ :

Դարձեալ պատահաբար, հաւաքածոյիս հին հայերէն տպագրած գիրքերու մէջ պրատումի մը միջոցին, հանդիպեցայ Քուչակեան ուրիշ խրատական տաղաշարքի մը, որ ստորեւ կարտատպեմ : Հրատարակութիւնը որուն մէջ հանդիպեցայ այս տաղաշարքին կը կոչէի «Գիրք պատմութեան» : Որ կոչի Պղնձէկ Քաղաք : Եւ բանի Խրատական եւ օգտակարք՝ Խիլարայ Խմաստուն : Եւ այլ բանի պիտանիի : Տպագրեցեալ ի Հայրապետութեան Գերագոհ Արոռոյն Սրբոյ Էջմիածնի Տեառն Ղուկասու Սրբազն Կաթողիկոսի Ամենայն Հայոց : Եւ ի Պատրիարքութեան Սրբոյ Երուսաղէմի Տեառն Յովակիմայ Երջանկափայլ Վարդապետի : Վեհափառ Հրամանաւ Մեծի Արքայանիստ Մայրաքաղաքին Կոստանդնուպոլայ Սրբազն Արիի Եպիսկոպոսի Մայրաքաղաքի Զաքարիայ Ազգասէր Կարդացեալ Աստուածարան Պատրիարքի : Ի բուին Հայոց ումխա . Յունվար ը. ի տպարանի Յովիաննիսի եւ Պօղոսի :»

Թւականը՝ ՌՄԽԱ (1792) ցոյց կուտայ, որ արդէն ժլ գարուն քուչակեան տաղաշարքեր հրատարակութեան արժանի նկատւած եւ հրատարակւած են : Քանի մը երկտող քառեակներու ալ հանդիպած եմ հին հրատարակւած Յայսմաւուրքի մը մէջ, որմէ ըրած ընդօրինակութիւններս ունիմ, սակայն մանկութեան օրերուս ըրած այդ ընդօ-

ըինակութեանցս հետ չեմ զետեղած նաեւ հրատարակութեան տարեթիւը, եւայլն, որ ըստ իս գարձալ ժի դարէն ըլլալու էր:

Ներկայ տաղաշաբաթը կարտասութեմ 1792ի այս հրաժարակութենէն առնելով։ Հրաժարակութեան 224 էջերուն 220էն կըսկսի, «Բանք պիտանիք եւ օգտակարք՝ ասացեալ յառաջնոց»։ դժբախտաբար ու րիշ ոչինչ, ոչ իսկ ծանօթութեան պատառիկ մը։ Քառեակները կաւարտին էջ 223։

Տաղերուս հրատարակութեան կը կցեմ ծանօթութիւններ :

Բանք պիտանիք եւ օգտակարք ասացեալ յառաջնորդ

Առաջին մեջ կարող է լինել առաջային առաջավայր՝ առաջավայր հայության համար:

Հայութ կ ստուգի նորման, ի պնդին վերայ կու վազէ:

Գիտուն մարդն յարեւ նրման, խօսքն զէտ արեւ կու ծագ

Անգետ մարդն օձու նըման, հանապազ զմարդն. կու խոցէ:

Այսպիսով կայուն առ ա(1·000)աժէ, ս(1·000) կայ որ մէկ մ

լին մարդն որ ո աժէ, յանգէտին բով փռդ մի չարժէ:

թագան ի յանտառ մորին, քէպէտ բու՝ քէպէտ բազայ է.

Ճնհարճ ի ծովի միջին, քեպէտ քար՝ քեպէտ նիհա

կելօնն ի յանգետն ի մօս, միստ արէ՛ քէ ինչ նըմա

Ճրագն ի առջեւ կուրին, կու վառի՝ ինքըն չըգիտէ:

ԽԵլօֆն է ի ծով նըման, որ քանի չափեն՝ նա տանի.

Անգէտն է ի տիկ նըման, չափս յաւել լընուն՝ կու պատորի: 2)

— 1 —

պանեանի Յանապարհութեացակի Իրաւացք Առաջը և Եղանակը ։ Հոն միայն Խրատական եւ Այլաբանական Երգերու շարքին թիւն ։ Հոն միայն թէ Յոհանապի տեղ գուհաք գրւած է ։ Այս քառեակին սկզբի երկու տող գերը, նաեւ վերի Ա. քառեակին վերջին երկու տողերը հրատարակւած են հին Յայսմաւուրքի մը մէջ :

2) Այս քառեակին սկզբի երկու տողերը մաս կը կազմեն Ն. Ք. Դ. թիւ ԾԲ. ին իրը վերջի երկու տողեր : Ն. Ք. Դ. այս թիւ ԾԲ. առնած է Հայերգէն ուր հրատարակւած են իրը Թրիկի տաղաշարք : Կը դանւի նաեւ Պլուզի տաղաշարքին մէջ : Ինքս միայն քուչակեան տաղերուս հրատարակիչն ըլլալով չեմ կրնար ըսել, թէ արդեօք իմ վերի հրատարակած կերպովս թէ Ն. Ք. Դ. թիւ ԾԲ. ի ձեւով ուղիղ է հրատարակել այս քառեակը որ իրը երկոտող աւելի յարմար է : Տաղին տողերուն վերջաւորութիւնը է յանդերգով եթէ նկատի առնենք, այն ատեն Ն. Ք. Դ. ին թիւ ԾԲ. ը ճիշտ է, այլ սակայն իմաստի տեսակետով վերի հրատարակութիւնն՝ վերի տողաշարքն՝ Բ. եւ Գ. քառ

Դ. Աշխարհս ի տոլապ նըման, որ ի վեր և ի վայր քաւալի.
Վերինն այլ ի վայր դառնայ, եւ վարինն ի վեր քաւալի:
Գըրօղն այլ բազայ եղեք, կու կրէ մէկ ի մէկ դար ի վեր: 1)
Աշխարհս է կանանց մարգեր, մեֆ ի մէջն եմֆ կափու ձագեր.

Մանկակի երբ ի հաց նստիք, ձենեցէք աղքատ ձեզ ընկեր։
Մեռնիք և ի անդէնն երբայք կու նստիք ժանց մէկ այլ ի վեր։
Ապրոն ոս յօսար սեղ երբայ շատ մի խել նորա պիտենայ։

Ամերիկայի գաղաքանությունը կած կենայ, ապա իւր բանն լինենայ: 2)

Ասկէներուն միջեւ բաժնւած աւելի ճիշտ կերեւայ ինծի : Այս Գ. քառ-
եակներուն միջեւ բաժնւած աւելի ճիշտ կերեւայ ինծի : Այս Գ. քառ-
եակներուն միջեւ բաժնւած աւելի ճիշտ կերեւայ ինծի :

1) Այս քառեակը հրատարակւած է նաև Յամառուրքի հինգամակիր օրինակին մէջ: Խակ վերջին երկու տողերը կը կազմեն սկիզբան երկու տողերը Ն.Ք.Դ.ին թիւ ԽԴ. քառեակին: Միայն թէ իմ Դ. բի երկու տողերը Ն.Ք.Դ.ի Բ. տողը կը կազմէ Ն.Ք.Դ.ի Բ. տողը կը տարբերին: Քառեակին Դ. տողը որ կը կազմէ Ն.Ք.Դ.ի Բ. տողը կը տարբերին: Ն.Ք.Դ.ինը է

Գրանց այլ բաժան ընկերու ու կրտ սբկ սբկ գովար վար։
Հաս իս ասիկա անիմաստ է, մինչ վերի հրատարակութեանս բա-
զայ եղերը՝ բաժան ընկերի տեղ՝ իմաստալից ըլլալով նախընտրելի է :

2) Այս քառեակին սկիզբի երկու տողերը կը կազմու օ. Ի. Ի. Ի.
վերջին երկու տողերը ի՞Դ. քառեակին սա ձեռով
Եղաքարք, եթի ի հաց նստիք, ձենեցէք մէկ մ'այլ ընկեր.
Մեռնիմք ի յանդէն երթամք նա նստինք քան գմէկ մ'այլ ի վեր:

- Զ.՝ Շատ քագաւորաց մեծաց, և իմաստուն արանց լրսեցի.
Թէ անչափ չկշտանայ մարդն, յաստընտրէս՝ մինչ ոք մեռնի:
Տանին գերեզման դընեն, եւ հողով իւր աչքն լեցւի.
Ապա փոշիմանի և ասէ, թէ հերի՛ք է՛ և այլ չի պիտի: 1)
- Է.՝ Այս ոք հետ ինձ արի, չէ՛ արեր ադամայ որդի.
Ոք շուշա մը ոսկի ունէի, ի գետինն ի վայր վաքեցի:
Հազար ձի վազան բերի, վազցուցի և այլ ոչ հասուցի.
Ի՞նչ շահ խմ յետին խելացն, երբ առջի անունն աւրեցի: 2)
- Ը.՝ Մրէկ մարդ մի նոհար ունէր, ի խելաց պահել չկարաց.
Զինչ խելքն ի վերայ եկաւ, նա գընաց նոհարն ի ձեռաց:
Գընաց ինքն ի վայր նստաւ, և ողորմուկ ու խիստ շատ ելաց.
Նորա լացն այլ ինչ շահ է, երբ գընաց նոհարն ի ձեռաց:
- Բ.՝ Աւա՛դ ու ո (1,000) բերան, թինչ խելօֆ անխելացայ.
Քան զկաքն յիստակ էի, քան զգարնան զուր պղտորեցայ:
Շարած մարգարիտ էի, յանարժան տեղիք վաքեցայ,
Քան զասպապ ի ծալն էի, նա տրկուկ տրկուկ քակեցայ: 3)

*Դիտել տամ որ հոս առաջին տողը երրորդ դէմքով գրւած է, որով
սխալ է երկրորդ տողը առաջին դէմքով գրել, ատոր համար իսկ ստո-
րագծումներ ըրի: Հայերգի մէջ՝ որ ծանօթ էր Պ. Զօպանեանին, իմ
վերհրատարակութեանս թիւ Ե. ի սկիզբի երկու տողերը յար եւ
նման հրատարակւած են: (Տես Ն. Ք. Դ. ի թիւ 251 ծանօթութիւն):*

1) Այս քառեակը հրատարակեցի Քուչակեան նոր Տաղաշարք
Մըխ մէջ («Բազմավէպ», 1932, թիւ 10-11) թիւ ԽԵ.: Սակայն վեր-
ջին տողը կը տարբերի քիչ մը
Ապա իւր լեզովն ասէ թէ հերիք է այլ չի պիտի:

2) Այս ալ հրատարակած եմ Ք. Ն. Տ. Մըխ մէջ թիւ ԽԴ.: Կը
տարբերին իրարմէ:

Զինչ ոք ես հետ ինձ արի չէ արել այլ ադամորդի,
Ոք շիշ մի հալած ոսկի ի գետինն (վրիպակով Տետինն եղած)
ի վայր քափեցի:

Հազար ձի վազան բերի վազցուցի մէկ չի հասցուցի,
Ի՞նչ շահ է յետին խելացն երբ առաջին անունն աւերի
Ն. Ք. Դ. ի թիւ Լէ.ն ալ նոյն քառեակն է որ իմ վերհրատարակու-
թեանս թիւ էէն քիչ մը կը տարբերի: Ն. Ք. Դ. ի մէջ ծանօթ թ. 243ին
մէջ կան նաեւ երեք ուրիշ փոփոխակներ ասոնց, որոնցմէ Պլուզի տա-
ղաշարքին փոփոխակը մօտաւորագոյնն է վերի հրատարակածիս:

3) Այս քառեակին առաջին տողը կը դտնւի Ն. Ք. ին Ժ. քառ-

- Ժ.՝ Լաւ մարդ ես նորա ասեմ, ոք բանայ զբերամբն համով.
Հանց գոյն լեզուն գին չունի, թէ լընուն տուն մի նոհարով:
Աստուած երբ զաշխարհ արար, ըզիողն ու զուրն ու զօդն հըրով.
Մըրխալ մի աւել չարար, այլ կշուց զամենն չափով: 1)

*Խակին սկիզբը, միայն թէ հոն կը սի …… թէ ինչ խելօֆ էի անխե-
լացայ:*

*Այս քառեակին մնացեալ երեք տողերը Ն. Ք. Դ. ին թիւ Ժ. ին մէջ
բոլորվին կը տարբերին իմինէս: Ն. Ք. Դ. ինը կը սի*

Ասի թէ վախառ ամեմ, ի շահուն տեղն գենեցայ,

Ասի թէ բարեւ մի տամ այն կողցն ոք մարդ չիմանայ.

Նա գրագու ի գիշոյս առին հանց շուտով ոք ես չիմացայ:

Թէեւ այս երկու տաղերը բառակազմութեամբ եւ պատկերներով
իրարմէ կը տարբերին բացի Ա. տողէն, այսու հանդերձ տաղին ամ-
բողջական իմաստոր նոյնը կը մնայ, որով էին մասին ըստածն թէ վե-
րագրի հրատարակութիւնս եւ թէ Ն. Ք. Դ. թիւ Ժ. ին համար հաւասա-
րակութիւնս ի գօրու է:

*Այս քառեակին մէկ օրինակը, նման իմ վերի հրատարակութեանս
հրատարակեց վերջերս Պ. Ա. Զօպանեան «Անահիտ»ի մէջ Քուչակեան
Անտիպ Տաղերու շարքին 1932 թիւ 1-2 էջ 32.*

Աւա՛դ ու հազար բերան, խելօֆ էի անխելացայ,

Քան ըզկաքն յստակ էի, քան զգարնան զուր պղտորեցայ,

Քան զառպապ ի ծալն էի, նայ տրկուկ տրկուկ քակեցայ,

Քան գմարգարիտ ի շարն էի, չըմածան՝ փողոց քափեցայ:

Իսկ Պ. Զ. ի տողին զառպապին գալով իմս ատոր տեղ ունի
ասպապ որ իմաստով կը համաձայնի: Պ. Զ. գառպապը կը թարգմա-
նէ Ռոկենուր դիպակի, ո՞ւրկէ եւ ի՞նչ լեզէ առնելով յայտնի չէ:

Գալով Պ. Զ. ի չըմածան փողոց քափեցայ (անարժէք բանի մը
ուէս փողոց թափեցայ) իմ ներկայացուցած օրինակս ունի յանարժան
տեղիք վաքեցայ (անարժան տեղեր նետեցայ կամ քափեցայ):

1) Այս քառեակս հրատարակած եմ Ք. Ն. Տ. Մ. ին մէջ թիւ Խէ.:
Այս երկութը շատ ոչինչ տարբերութեամբ նոյնն են: Ն. Ք. Դ. ին թիւ
Լ. Ա. տողն Ա. եւ Պ. տողերը իմ վերնոյս հետ նոյնն են (Պ. տողին
վերի եւ Ն. Ք. Դ. ին կշուցը ճիշտ եւ նախրնարելի է Պ. Ն. Տ. Մ. իս հրա-
տարակութեան կշնեալէն):

Ահա Ն. Ք. Դ. ին Բ. եւ Գ. տողերը

Հանցգուն զեղեցիկ լեզու ոք լնու տուն մի նուհարով:

ԺԱ. - Լեզուն է գործիք բանի, արդարոյն զինչ խալիս ուկի.

Մարդոյն է մէկ փերք արել, եւ օձինն է թ (2) նըդի:

Հանց մարդ որ թ (2) խօսի, զմէկն քաղցր ու զմէկն լեղի.

Եղրայր է օձին եղեալ, եւ զնորա անէժքն ընդունի: 1)

ԺԲ. - Ծառին նիւդն երբ չոր լինի, ո՞վ մընայ թէ իսկի ծաղկի ձերմակ մազն որ սեւ ներկեն, ո՞վ ասէ թէ իսկի թափի: Բայց մարդ մեղաւոր եւ սեւ, ես գիտեմ որ կու սպիտակի. Աստուած մէկ բանիկ կուզէ, որ ասէ մեղայ ու քալի: 2)

Այս վերջրատարակած քառեակները ունին ցարդ մեղի անծանօթ մնացած քառեակներ ալ, օրինակ Ա. քառեակն սկիզբի երկու տողերը, ե. ի վերջին երկու տողերը եւ թիւ թ. քառեակը որոնք այլուստ

Աստուած երբ զաշխարհս արար, զիողն, զզուրն, զքամին հրով

Իսկ Ն. Ք. Դ. ին թիւ 237 ծանօթութեան մէջ հրատարակւած տարրերակէն (Պլուզի կոչւած տաղաշարքէն առնելով) թ. եւ Գ. տողը Հանցեղ լեզուն զին չունի, զինչ լրնու տուն մի գոհարով, Աստուած երբ զաշխարհս արար, զօղն ու հուրն ու զիողն զըրով,

1) **Այս քառեակն վերջի երկու տողերը հրատարակւած են հին Յայսմաւուրքին մէջ:**

Նաեւ իմ Ք. Ն. Տ. Թիւ իլ. իր տարրերող Ա. տողը

Լեզուն է գործիք բանիւ արդարոյն զերք խալաս ուկի,

Դ. տողին սկիզբի մասր օձին է եղրայր եղել . . . : Նոր օրինակունախորքելի է:

2) **Հրատարակւած Ք. Ն. Տ. Մ. ի թիւ իթ. (Հրատարակութեան մէջ Ա. տող երկու տաղադրական սխայներ կային Տուղն եւ Զար որ պէտք է սրբագրել ձուղն եւ Զոր:) Այս հրատարակածս եւ Ք. Ն. Տ. ի հրատարակածս նոյնն են բացի անդ Բ. տող Սպիտակ մազ: Ն. Ք. Դ. ի մէջ ալ հրատարակւած է թիւ լլ. : Որ սակայն կը տարրերի:**

Ծառին նիւդքն որ չոր լինի, ո՞վ ասէ թէ ինքն ծաղկի,

Սպիտակ մազն որ թուն ներկի, ո՞վ ասէ թէ սպիտակ ի,

Բայց մարդ մեղաւոր ու սեւ վկայ եմ որ կու սպիտակի.

Աստուած մէկ բանիկ կուզէ, որ մեղայ ասէ ու քալի:

Անտարակոյս, իմաստով վերինը եւ Ք. Ն. Տ. Մ. օրինակը նախընտրելի է քան Ն. Ք. Դ. օրինակը: (Տես Գ. տողը)

բոլորովին անծանօթ կը մնան: Իսկ Ա. քառեակին վերջին երկու տողիրը, Բ. ի վերջին երկու տողիրը, Դ. ի սկիզբի երկու տողերը, միայն հին Յայսմաւուրքի մէջ հրատարակւած են, որով նոյնպէս անծանօթ մնացած էին ցարդ:

**

Այսպէս Քուչակեան կոչւած այս տաղերը շատ վաղուց արդէն զնահատւած էին հրատարակիչներէ, որոնք աճապարած են անոնցմէ քանի մը հաս հրատարակել, անտարակոյս ընտրանքով եւ առանց իրենց ձեռագրական շարքին: Ասիկա ուրիշ ապացոյց մըն է այս քառեակներուն ունեցած մեծ ժողովրդականութեան:

Այս առթիւ պիտի անդրադառնամ քուչակեան քառեակի մը վրա՞ն Ք. Դ. ի թիւ և. քառեակը որ կըսէ

Մահալուս ի վար կուզի նա տեսայ չոր գանիկ մի պառկած. Ուտքովս ալ թապալ տուի նա երեսս ի վար ծիծաղաց, Դարձաւ ու պատասխանեց՝ Յես զնա՛, կտրի՛ն, շփացած, երեկ ֆեզի պէս էի, այսօր զիս այս հալն է ձգած:

Այս քառեակին տարրերակները կը գտնաին Հայերգի եւ Կոստանդնացի հրատարակած օրինակներուն մէջ: Ինքս միայն Հայերգի հրատարակութիւնը կարտագրեմ, իր նշանակալից տարրերութիւն ունեցող:

Մահալուս ի վար կուզի, լոկ տեսի չոր գանիկ մի ձըգած, Ուտքս ալ թապալ տուի, լոկ երեսս ի վեր ծիծաղաց, — Ես ալ գէմ մանուկ էի, ի մանկանց մէջըն կանգնած, Կղպանիքն ի վերայ զարկած ու գրալնիքն աշխարհ վտարած:

Այս քառեակը զարմանալի նմանութիւն մը ունի հետեւեալ ու իրարմէ ուհազին հետաւորութեամբ գտնասզ տապանաքարերուն արձանագրութեանց հետ: 1917ին Ֆիլիպէի Հայոց գերեզմանատան մէջ հանդիպեցայ քարէ, անշուք, զրեթէ գեանաթաղ տապանաքարի մը, հետեւեալ արձանագրութեամբ: «Աստ հանդչի էվերէկցի եղիս Սարդիսիան ծննալ 1845 Մայիս 15 եւ մեռած 1902 Յունուար 7ին :

Ես ալ էի ձեզի պէս,

Հիմայ եղայ հողի պէս,

Դուք ալ պիտի ըլլաք ինձի պէս:»

ԺԲ. զարուն Մաղրասի մէջ մեռած մէծահարուստ Հայ՝ Պետրոս Ոսկան իր տապանին վրա զրել կուտայ:

Ես կ'ասէի՝ ես ես եմ, դու ալ կ'ասես՝ ես եմ.

Արա՛ ընդոր ես եմ, դու ալ կ'ընաս զոր ես եմ:

երւանդ Շահազիղ իր Նոր-Նախիջեւանը եւ Նոր-Նախիջեւանցիք սպատմական տեսութեան ետեւը (Հրատ. «Ազգագրական Հանդէս»ի 1901թ. № 7-8ի մէջ, էջ 5-102), իր հուսկ բանք կուտայ հետեւեալ տապանագիրը, ճիշտ նման ֆիլիպէի տապանագրին,

Երեմն մարդ էի ես ձեզի պէս,
Այժմըս եղայ ես հողի պէս,
Ես չի պիտի ըլլամ ձեզի պէս,
Դուք պիտի ըլլաք ինձի պէս:

Այս տապանագրին համար Ե. Շահազիղ կաւելցնէ: «Զուրկ չէ հետաքրքրութիւնից հետեւեալ աշխարհաբար տապանագիրը, որ մենք արտագրում ենք Ս. Նիկողայոսի հանդսուարանի գերեզմաններից մէկի վրայից»: Այս Ս. Նիկողայոս եկեղեցին կը գտնէի Նոր-Նախիջեւանի մէջ:

Վերջերս պղտիկ անդլիերէն պարբերականի մը մէջ հանդիպեցայ սա տապանագրին, առնւած տապանագրէ մը որուն մասին հրատարակիքը կը սէ: «Թիչմրնտ քաղաքի Վիրճինիա նահանդ, Ս. Ճօն եկեղեցւոյ բակը կայ շատ հին եւ զարմանալի տապանագար մը: Անոր վրա կրնան կարդալ.

Stop my friend, as you pass by,
As you are now so once was I,
As I am now you soon shall be,
Prepare yourself to follow me.

Ասոր թարգմանութիւնը —

Մինչ դուն կանցնիս, կանցնիր բարեկամ,
Ինչպէս ես դուն այժմ, էի եւ ես,
Ինչպէս որ եմ այժմ, պիտի ըլլաս եւ դու,
Ինքնինք պատրաստէ ինձ հետեւելու:

Անհեթեթ թող չնկատէի երր յիշեցնեմ որ Վիրճինիայի մէջ շատ կանուխէն, նոյն իսկ 1656ին մետաքսի գործով պարապող Հայեր կային: Ես միտք չունիմ ըսելու որ Վիրճինիայի այդ տապանագիրը Հայու կողմէ բերւած եւ ներկայացւած է հոս: Բայց սա որոշ է որ շատ զարմանալի նմանութիւն մը կայ այս տապանագիրերուն եւ քուչակեան քառեակներուն միջեւ: *)

*) Քուչակի քառեակի եւ Թիշմոնի տապանագրի նմանութիւնը, մեր կարծիքով, պէտք է բացարել նրանով, որ բանաստեղծական այդ համեմատութիւնը գուտ քուչակեան, կամ գուտ հայկական չէ, այլ կայ եւ ուրիշ ազգերի մօտ: Այսպէս, օրինակի համար, ուսւաց

Քուչակեան այս քառեակները ենթադրութեամբ նւիրւած են Քուչակի որ Վանեցի, այսինքն բնիկ Խառակնիսցի աշուղ մը եղած է ժջ. գարուն: Իրմէ ծանօթ են տաղեր ալ որոնք սակայն Քուչակեան կոչւած այս քառեակներուն թէ ոճէն եւ թէ իմաստներու խորունկութենէն շատ ու շատ հեռու են: Վանեցի Քուչակի ինչ որ ծանօթ է «Գովասանք Սուրբ Աստւածածնին ի Վանեցի Քօչակէ ասացեալ»ն է: («Անահիտ», 1909թ. էջ 130), որ յիշողութիւնները թարմացնելու նպատակաւ կը հրատարակեմ՝ առնելով ցարդ անձանօթ օրինակէ մը, որուն հանդիպեցայ 1931ին Զմմառի մատենադարանին թիւ 99 ձեռագիր տաղարանին մէջ: «Անահիտ»ի օրինակը աչքիս առջեւ չունենալով՝ չեմ գիտեր թէ անկէ որքան կը տարբերի: Ահա այդ տաղը, որուն խորագիրը կը պակսի.

Աղբիւր կենդանի, բըխում զանազան,
Մեղայ ֆեզ, մեղայ կոյս անապական,
Գըլուխ կուսանաց, Դասուցն պարծանի,
Մեղա ֆեզ, մեղա, կոյս անապական:

Երեսիտ փափաք, զօրքըն վերնական,
Երանեալ ընտիր, թագուհի աննըման,
Ժառանգող դրախտին եւ արքայութեան,
Մեղա ֆեզ, մեղա, կոյս անապական:

Ի փառը լուսոյ, խորհուրդ կիացման,
Ծընող կենդանի, Յիսուսի յիշման,
Հոգեւոր բաժակ, ձեղութ փրկութեան,
Մեղա ֆեզ, մեղա, կոյս անապական:

Ղամպար նըշմարիտ, մեծ ուրախութեան,
Յիսուս նորոգեաց ֆեզնով զամենայն,
Ծընորհիւ քո լըցան, որք ի ֆեզ դիման,
Մեղա ֆեզ, մեղա, կոյս անապական:

Զարին հալածիչ, պըտուղ բարութեան,
Զահ մաքուր ոսկի, լոյս անանցական,
Ռատ պաղ աղբիւր, զուր անմահական,
Մեղա ֆեզ, մեղա, կոյս անապական:

Նոր Ա.Փոնի վանքում, Սեւ Ծովի եգերքին, կայ մի արձան-մարդկային գանգ, որի տակ գրւած է.

Ես եղել եմ ֆեզ պէս,
Դու պիտի լինիս ինձ պէս:

Նոյն համեմատութիւնը պատահում է եւ զանազան ազգերի ժողովրդական հեքեաքների մէջ: ԽՄԲ.

Սերովիք գուտ սրբութեան, վերին պիտութեան,
Տուն Յիսուսի որդույն եւ բըմակարան,
Ռարութն ի կուսէն ցաւոց ժաւարան,
Մեղա քեզ, մեղա, կոյս անապական :

Հիւսեալ ի լուսոյ մայր արարչութեան,
Փըտեալս մեղօֆ եւ առողջանան,
Քեզ փառք եւ որդույդ, այժմ եւ յաւիտեան,
Մեղա քեզ, մեղա, կոյս անապական :

Դու լալ մեծագին որ ի բադաշխան,
Եաղութ եւ զըմրութ եւ այլ պատվական,
Ակըն լուսառու գանձ արքայական,
Մեղա քեզ, մեղա, կոյս անապական :

Դու մուշկ որ գովին խըքա ու խութան,
Զըմուռ եւ սըտաշխ եւ ըզկասեան,
Եւ այլ ծըխանելիք ի պէտս սըբրութեան,
Մեղա քեզ, մեղա, կոյս անապական :

Դու ես համասիփիւռ ծաղկանց ամիրան,
Քափուր վարդ պայծառ հոտովը քարման,
Դու լուսին աշնան, դու արեւ գարնան,
Մեղա քեզ, մեղա, կոյս անապական :

Դըրախտն Աղամա չէր ի քեզ նըման,
Բընակողք դրախտին օճիւ խարեցան,
Խարողքն եւայի քեզ ոչ մերձեցան,
Մեղա քեզ, մեղա, կոյս անապական :

Թէ զերկինք ասեմ չէ ի քեզ նըման,
Հրեշտակը ի յերկնից յերկիր քափեցան,
Եւ քեւ հողածինք յերկինս վերացան,
Մեղա քեզ, մեղա, կոյս անապական :

Ըզեղ պարըսպեաց բանըն հայրական,
ԶԳարբիէլ հրեշտակըն եղիր պահապան,
Հեռացան ի քէն որդիքն կորբստեան,
Մեղա քեզ, մեղա, կոյս անապական :

Դու դըրախտ լուսեղէն, պըտուդդ մաքրական,
Պողուդդ ապրեցան որք որ մահացան,
Դըրախտ առ ի քէն զիր պատութեան,
Մեղա քեզ, մեղա, կոյս անապական :

Յարգանդ բաւեցիր գուէրն անբաւական,
Աչերդ է սովոր աստուած տեսութեան,
Կարամբ սընուցիր զորդիդ աննըման,
Մեղա քեզ, մեղա, կոյս անապական :

Մոցդ է անմասոյց խորանին նըման,
Գիրկըդ սերովիք կայ ի տարածման,
Միտք ոչ հասանէ քեզ անհասական,
Մեղա քեզ, մեղա, կոյս անապական :

Ընտրեաց ի կուսէդ ինք ընտրողական,
Որ կաս եւ մընաս անունդ յաւիտեան,
Պըտուդ Աննայի եւ Յովակիմեան,
Մեղա քեզ, մեղա, կոյս անապական :

Որք աստի կենան՝ քեզմով կու կենան,
Անդէնն զքեզ յիշեն՝ ապա քէ զընան,
Զքեզ փառաւորեն աշխարհ ամենայն,
Մեղա քեզ, մեղա, կոյս անապական :

Դու ես արեւելք լուսառու մարդկան,
Յաներդ արեւմուտք մեծ խորիրդական,
Հիւսուս եւ հարաւ սընարդդ ի նման,
Մեղա քեզ, մեղա, կոյս անապական :

Ազըդ քո Փիսոն յորդոր վայրաջան,
Յահեակդ Գիհոն ի Հապաշխատան,
Նայիլիքդ Տիգրիս, Եփրատ զընացման,
Մեղա քեզ, մեղա, կոյս անապական :

Ազըդ Յոհաննէն է վըկայութեան,
Յահեակդ Մարդոս ի նըշմարտութեան,
Ղուկաս եւ Մարկոս դիմաց ւ ի քիանցդ,
Մեղա քեզ, մեղա, կոյս անապական :

Ազըդ կերպ առիւծու, յահեակդ ի եզան,
Դէմքըդ մարդոյ է լուսոյ կազմութեան,
Գըրկելիքդ արծիւ վեր ջորս ի լըման,
Մեղա քեզ, մեղա, կոյս անապական :

Ես ԱՇԾԻ ՔՕԶԱԿՍ որ կասեն ի Վան,
Զար վիրօֆ ի լի եւ դատարկարան,
Ներգեւեալ փոշի հող եւ անպիտան,
Մեղա քեզ, մեղա, կոյս անապական :

Երբ քո միածինն զայ ի դատաստան,
Անդը ժողովին աշխարհս ամենայն,
Լեր մեզ բարեխօս վասըն փըրկութեան,
Մեղա քեզ, մեղա, կոյս անապական:

Անտարակոյս, խնդիր է թէ այս տաղը իրապէ՞ս Աշըր Քոչակի
հեղինակութիւնն է, թէ՞ միայն անկէ երգւած եւ իր անունը յաւելւած
տաղ մը: Այս աշուղը երգած է նոյն կերպով ուրիշ տաղեր ալ, որոնց-
մէ մին է «Գոզալ մ'ես երէկ տեսայ ի քաղաքն ի յԱնկուրիայ», ուր կը
յիշւի Քուչակ, տաղին վերջը: Սակայն այս տաղը ստորագրած են
նաև Սարկաւագ Բերդակցի («Անահիտ», 1907) եւ Կիրակոս Երէց
(«Բազմավէպ», 1930, էջ 518):

Ինչպէս ուրիշ առթիւ բասծ եմ, Քուչակեան քառեակներուն Քու-
չակեան վերագրումը պարզապէս այդ քառեակներուն անուն մը տւած
ըլլալու համար է, ուրիշներէն ալ այդպէս ընդունւած: Ծանօթ է Վա-
նեցի Քուչակ մը, աշուղ, որմէ սակայն ինքնագիր ոչինչ հասած է
մեղի եւ միակ տաղը՝ «Գովասանի Սուրբ Աստվածածնի», կրնայ իրե-
նը եղած ըլլալ, կրնայ եւ չըլլալ: Քառեակները ոչ մէկ առթիւ ստո-
րագրւած են Քուչակէ մը: Անոնք այդպէս կոչւելուն գաղտնիքը կը
պատկանի Տեղանցին, որ սակայն իրեն հետ գերեզման տարած է
այդ գաղտնիքը: Արդեօ՞ք ունէր լուրջ պատճառ մը ասոր համար:
Բայ իս, չեմ կարծեր թէ ունենար:

Ուրեմն Վանեցի աշուղ Քուչակին հեղինակութիւնները կը մնան
այնքան անծանօթ, որքան որ քառեակներուն հեղինակը, որոնք Քու-
չակի ժամանակէն շատ հին ժամանակի մը գրոշմը ունին: Քուչակի
մը գոյութիւնը ժամանակէն առաջ չէ կարելի տանիլ:

Սակայն մէկ բան մը որոշ է. Քուչակ անունով Վանեցի աշուղ մը
կամ աշուղներ եղած են, որոնցմէ մին՝ Նահապետ Քուչակ՝ 1583ին
կապրէր, եւ կը դանուէր Սերաստիա: 1637ի աւետարանի մը յիշատա-
կարանը կը յիշէ Քուչակ «Եւ զմեծ պապն իւր Նահապետ վարպետն,
որ մականուն Աշըր Քուչակ ասի»: («Ն. Քուչակի Դիւանը», էջ 13):

Իսկ հու ուշադրութեան կը յանձնեմ աշուղական երգ մը, որուն
ստորագրողը սակայն Վանի Քիւչար մը կը նկատւի, որ ով գիտէ,
դուցէ սրբագրւի Վանի Քուչակի: Ե. Լալայեան իր Բորչալուի Գա-
ւառ աշխատութեան մէջ («Ազգ. Հանդէս», ԺԱ. էջ 78) կուտայ աշու-
ղական երգեր, որոնց առաջինն է ՍԱՆԱՄԻՔ-ՔԱՀՈՐ Երգը որ հոս
կարտագրեմ:

ՍԱՆԱՄԻՔ - ՔԱՀՈՐ

Ով սիրելիք անգան արէք,
Գովեմ սանամէրն ու քաւոր,
Մեր տէրն նստաւ օխոն աթոռին,
Օրինեց սանամէրն ու քաւոր:

Հաւատամք Յիսուս միածին,
Մեր ուխտատեղ էջմիածին,
Սանամէր մայր Աստւածածիթ,
Մաքուր սանամէրն ու քաւոր:

Մեր տէրն իշաւ Յորդանան գետ,
Գարբիկ, Միքայէլ իրան հետ,
Քաւոր կաւ աւրք Կարապետ,
Ազիզ սանամէրն ու քաւոր:

Քաւորութիւն պազ աղքիւր է,
Մեռոնն անմահական ջուր է,
Սանամէր քաւորի ոտ համբուրէ,
Մաքուր սանամէրն ու քաւոր:

Քաւորութիւն շատ անշափ է,
Զլինի քշնամին ձեզ խարէ,
Կանանչ մեռոնը կը քափէ,
Խային սանամէրն ու քաւոր:

Քաւորութիւն ծանր թեռ ա,
Մեռոնն առանց կրակ կեռայ,
Սանամէր որ կայ քաղցր մէր ա,
Օրինեց սանամէրն ու քաւոր:

Քաւորութիւն ոսկի սին ա,
Ով որ պահէ եւ ընդունայ,
Ով որ չպահէ չընդունայ,
Դատաստանի սեւ շուն ա:

Ով որ քառասունիք չպահէ,
Աստծու օրէնքը կու փոխէ,
Եւ թէ ի զուր քաւոր փոխէ,
Սեւերես ա դատաստանին:

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ՀՅՅԿՈՒԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԸ

(1912 — 1914)

XII

«ՄԱՆՏԵԼՇԱՄԻ ՆԱԽԱԳԻԾԸ»

Պատրիարքարանի կողմէ ոռւս գեսպանին ներկայացւած ծրագիրը (1913 ապրիլ) միեւնոյն ատեն զրկւեցաւ նաև Ազգ։ Պատրիարքութեան եւ կաթուղիկոսին, որոնք իրենց հերթին յանձնած էին տուածինը՝ Փարիզի ոռւս գեսպանին եւ էջմիածինը՝ Կովկասեան Փոխարքայի միջոցով՝ ոռւս Արտ։ գործոց նախարարին։

Պոլսոյ ոռւս գեսպանը յաճախ շփումներ կունենար Պատրիարքարանի ներկայացուցիչներուն հետ, ծրագրին այս կամ այն կէտին շուրջ, բացատրութիւններու, լուսաբանութիւններու կամ սըրբագրութիւններու պատճառուաւ։

Պատրիարքարանի նախագիծը վերջ ի վերջոյ գրեթէ ամբողջութեամբ (իմբազրական սրբագրութիւններով՝ եւ դատական վերակազմութեան վերաբերող տրամադրութիւններու յաւելումով) իրացուց ոռւս գեսպանը։ Ինչ որ կարեւոր էր, գեսպանը իր Ա. Խորհրդականին (Ա. Մանտէլշամ) յանձնած էր պատրաստելու ծրագրի իրաւական հիմքը։ Եւ Պ. Ա. Մանտէլշամ մասնագիտական մեծ հեղինակութեամբ ու հայկական հարցի նկատմամբ իր ունեցած խոր ու բազմակողմանի ծանօթութեամբը, հիմնալիօրէն հիմնառած էր մեր պահանջները՝ միջազգային իրաւունքի եւ Հայկ։ Հարցի իրաւական անհերքելի տեսալներու եւ փաստաթղթերու վրա։ Այդ տեսալներն էին։

1. — 1895 մարտ-ապրիլին Փրանսական, անդիմական եւ ոռւսական գեսպաններու կողմէ Բ. Դրան ներկայացւած յիշատակագիրը։

2. — Նոյն գեսպաններու կողմէ ներկայացւած բարենորոգումներու նախագիծը (Մայիսեան ծրագիր)։

3. — 1895 Հոկտ. 20ին Սուլթանի կողմէ Հրատարակւած իրադին Մայիսեան ծրագրի գործադրութեան առթիւ։

4. — 1880 11-13 օգոստոս Եւրոպական Թիւրքիոյ վիլայէթներու օրէնքներու նախագիծը։

5. — 1913ի վիլայէթներու օրէնքը։

6. — Լիբանանի ինքնավարութեան վերաբերող կանոնները եւ արձանագրութիւնները։

Կը յիշատակէր նաև Բերլինի դաշնագիրը և 1896-ի «Քրիստոն-Լաներու վերաբերող կանոնները»։

Պ. Մանտէլշամ վերի փաստաթղթերու այս կամ այն յօդւածով հիմնաւորած էր բարենորոգումներու ամէն մէկ կէտը։

Բարենորոգումներու նախագիծի հիմնական պահանջները հետեւեալներն էին (կուտամ ամփոփումը միայն)։

1. — Հայաբնակ վեց նահանգներէն պիտի կազմւի մէկ վարչական միութիւն — մէկ ընդհանուր քննիչութեան երկրամաս։ Այս նահանգներէն գուրս կը ձգւին ոչ հայաբնակ մասերը եւ ամբողջական երկրամասը կը բաժնւի վարչական փոքր միաւորներու, հիմնենալով ժողովուրդի ավագագրական միաստարութիւնը։

2. — Ընդհանուր նահանգպատետի պաշտօնին պիտի կոչւի օսմանեան հպատակ քրիստոնեայ մը*), «կամ գերադասելի է, որ նա լինի երոպացի՝ անւանւած Սուլթանի կողմէ երոպական պետութեանց համաձայնութեամբ եւ 5 տարի պայմանաժամով»։

3. — Ընդհ. նահանգպատետը Հայկ։ Երկրամասի Գործադիր իշխանութեան գլուխն է։ Անոր կը վերապահւի անխտիր բոլոր պաշտօնեաներու նշանակումը եւ հրաժարեցումը։ Անոր կենթարկվին երկրի ոստիկանական եւ ի հարկին զինուրական ուժերը։ Բոլոր տեսակի պաշտօնէութիւնը եւ ոստիկանական ուժերը կէս առ կէս պիտի առնւին քրիստոնեաներէ եւ մահմետականներէ։

4. — Հայկ. այդ երկրամասը կունենայ բարձրագոյն ժողով մը՝ ընտրւած քրիստոնեաներէ եւ մահմետականներէ հաւասար թւով, եւ կը տեւէ հինգ տարի։ Կը գումարէ տարին անգամ մը երկու ամսւան տեւողութեամբ։

Ընդհանուր այդ ժողովը երկրի օրէնսդիր մարմինն է (օրէնքներու եւ պիտօնէի)։ օրէնքները ոյժ կըստանան Սուլթանի վաւերացմամբ։ Սուլթանը ոկտագիծ է երկու ամսւան մէջ իր տեսակէտը յայտնէ, հակառակ պարագային օրէնքը գործադրելի է։

5. — Համիտիկ գունդերը պիտի ցրւին։ Խաղաղութեան ատեն նորակոչ զինուրները իրենց վայրերու մէջ պիտի մնան։

*). Այս առաջարկը ինքը ոռւս դեսպանատումը մտցուցած էր, ինչպէս ըստ մեզի, տակտիկական նկատումներով։

6.— Միայն նստակեաց տարբերը ընտրելու և ընտրւելու իրաւունքը կը վայելեն:

7.— Դատարաններու մէջ կը գործածւին տեղական բոլոր լեզուները. բոլոր օրէնքները, կանոնները, եւայլն պիտի հրատարակին երեք լեզուներով (հայերէն, թիւրքերէն եւ քրդերէն): Բազմաթիւ յօդւածներ նւիրւած են դատական վերակազմութեան:

8.— Ընդհ. Նահանգապետէն նշանակւած յանձնաժողով մը պիտի զբաղի հայերէ բոնադրաւած հողային վիճելի հարցերով. գրաւած հողերը պիտի վերադարձւին կամ փոխարինւին:

9.— Ազգ. Սահմանադրութիւնը անխախտ պիտի մնայ:

10.— Մուհամբերներ չպէտք է տեղաւորւթին Հայկական երկրամասին մէջ:

11.— Յատուկ տրամադրութիւններ պիտի մշակւին (այս նախագծի սկզբունքներուն հիման վրա) բարելաւելու համար յիշեալ երկրամասէն դուրս գտնող եւ մասնաւորապէս Կիլիկիոյ հայութեան կացութիւնը:

12.— Պետութիւններու և Օսմ. կառավարութեան ներկայացուցիչներէ բաղկացած յանձնաժողով մը, հիմ ունենալով սոյն նախագծէ, պիտի պատրաստէ հիմնական վարչութեան կանոններ հայկ. երկրամասի համար (Սթաթիւ օրկանիք):

13.— Պետութիւնները պէտք է ապահովէն վերոյիշեալ բոլոր տրամադրութիւններու գործադրութիւնը:^{*)}

XIII

ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ռուս Արտաքին նախարարութիւնը Պատրիարքարանէն, կաթոլիկոսէն եւ Ազգ. Պատուիրակութենէն ստանալով եւ իւրացնելով այսպէս հայերու քաղաքական բաղմանքները, անմիջապէս ձեռնարկեց չօչափելու նախ իրեն դաշնակից Անդիլիայի եւ ֆրանսայի տեսակէտները ներկայացւած առաջարկներու մասին: (Ռուս դեսպանի համաձայնութեամբ քիչ մը աւելի ուշ, մեր բաղմանքները յայտնեցինք նաեւ վերի երկու պետութեանց դեսպաններուն): Անոնք ոչ միայն կը համաձայնին, այլ եւ կը թերագրեն գործի նախաձեռնութիւնը ստանձնել...

Մայիս 22ին (1913) ռուս Արտ. Գործ. նախարարը Գերմանիոյ իր դեսպանին կը հրահանգէր պէտք եղած աշխատանքը կատարել Գերմանիան եւս համոզելու Բարենորոգումներու անհրաժեշտութեան

^{*)} Օրանժեան գիրք, стр. 52.

մասին (առանց սակայն էութեան մասին ոեւէ բան յայտնելու) 1895 Մայիսեան ծրագրի հիմերու վրա: Նախարարը կը շեշտէր միայն թէ՝ «գործի նախաձեռնութիւնը կը ցանկային իրենց ձեռքը պահել ինչպէս եւ կառաջարկէ լոնտոնի կառավարութիւնը...»: Ասկէ յետոյ նախարարը իր հեռագիր-հրահանքը կը վերջացնէ հետեւեալ անուղղակի սպառնալիքով— «Հասկցնել գերման կառավարութեան, որ Հայաբնակ նահանգներու վիճակը չի կրնար անդրագիտում չունենալ կովկասեան հայութեան վրա: Կանխելու համար այդ բարգութիւնները, ոուս կառավարութիւնը մտազիր է շատ մօտ ատենէն դիմելու մեծ պետութիւններուն, միատեղ քննելու համար ստեղծած կացութիւնը»:^{*)} Եւ երկու օր յետոյ տեղի կունենայ այդ դիմումը ուղղւած հինգ պետութիւններուն (Անդլիա, Ֆըրանսա, Գերմանիա, Աւստրիա եւ Իտալիա), որով Ռուսաստանը կառաջարկէ անմիջապէս քննել հայկական բարենորոգումներու ձեւակերպման հարցը, իբր ելակէտ ընդունելով 1895ի Մայիսեան Ծրագիրը:

Այս առաջարկին առաջին արձագանդ տւողները անշուշտ եղան Անդլիա եւ Ֆրանսա: Գերման կառավարութիւնը ուղղակի չի մերժեր, բայց կը համարէ ապարդիւն նման աշխատանք, քանի որ հընարաւոր էր Օսմ. կառավարութեան միջոցով կատարել պէտք եղած քայլերը. յամենայն դէպս կը խոստանայ հրահանգել Պոլսոյ իր դեսպանին, մասնակցելու Դեսպաններու խորհրդակցութեան: Աւստրիան աւելի անվերապահօրէն կը յայտնէ թէ՝ կուտայ իր համաձայնութիւնը, պայմանով սակայն, որ չխաթարւի Օսմ. կայսրութեան անձեռնմխելիութիւնը: Քանի մը օր վերջը, Բերլինը լրացուցիչ առաջարկ մը կընէ Պետերբուրգին, որով, յայտարարելէ ետք թէ ինքն անյետածգելի կը զտնէ հայերու կացութեան թեթեւացումը, կը յայտնէ, թէ հայերը կը չափազանցին իրենց վիճակին ծանրութիւնը և թէ՝ «պետութիւնները պէտք չէ անտեսեն նաեւ քիւրտերու հարցը»...: Ի հարկէ, սա վարպետ խաղ մըն էր — հաւանաբար ներշնչւած թիւրքերու կողմէ — նորէն խնդիրը ընդհանրացնելու եւ հայկական հարցը ջուրը նետելու: Այս փորձնական գնդակը արձակելով՝ գերմանական մամուլը յարձակումներ սկսեց Ռուսիոյ քաղաքական միտումներու վրա՝ գրելով թէ ոուսները կը ձգտին գրաւել Թիւրքահայաստանը:

Միեւնոյն ատեն Բ. Դուռը փութով Օսմանեան կայսրութեան բարեկարգման մասին բերանացի եւ գրաւոր խոստումներ, յիշա-

^{*)} Օրանժեան գիրք.

տակագիրներ եւ օրէնքներ կը ներկայացնէր պետութիւններուն, ձեւացնելով թէ նոյնիսկ գործադրութեան ձեռնարկած է արդէն - ինչպէս եւրոպացի խորհրդականներուն հրաւիրումը, դատական եւ ստիկանական վերակազմութեան նախապատրաստութիւններ, եւյն .:

Պատրիարքարանը եւ Ազգ. Պատւիրակութիւնը, իրենց բովանդակ ոյժով եւ միջոցներով, կը մերկացնէին թիւրքերու խաղերը: Ապահովութեան Խորհրդի հրահանգով Պոլսոյ, Բերլինի, Վիեննայի եւ Հռովմի մէջ հայ հասարակական դործիչները եւ հայասէր ժարմինները աւելի եռանդուն պրոպագանդ սկսան եւ շփումներ ունեցան պետական շրջանակներու հետ լուսաբանելով զանոնք եւ բողոքելով թիւրքերու մեքենայութիւններուն դէմ: Հայկական հարցի ամենէն սուր եւ վտանգաւոր շրջանն էր այդ եւ միեւնոյն ժամանակ պառակտման առիթ մը պետութիւններու յարաբերութիւններու մէջ:

Իուս կառավարութիւնը, մէկ կողմէ Կաթուղիկոսի «յատուկ խորհրդակցութեան» եռանդուն ջանքերով և միւս կողմէ Պետերբուրգի մարմիններու յամառ դիմումներու չնորհիւ, աւելի ու աւելի զօրեղ կանգնած իր տեսակէտի վրա, կտրուկ հըրահանգներ կը տեղացնէր Պոլսոյ իր գեսպանին՝ միեւնոյն ատեն դրդելով լոնդոնի եւ Փարիզի կառավարութիւններուն նոյնը ընելու:

Դիւանագիտական յամառ եւ բուռն պայքարը մանաւանդ շեշտւած էր Պոլսոյ մէջ, ուր Ապահովութեան Յանձնաժողովը ոդի ի բոխն կաշխատէր՝ առաջ մղելով մանաւանդ Զօհրապին, որ ոչինչ խնայելով՝ ատամ-ատամի եկած էր իթթիհատի հետ . . .:

Եւ Պոլսոյ ոռւս գեսպանատունը, յաղթահարելով լոլոր խոչընդուները՝ յաջողեցաւ զլուխ բերել Պոլսոյ գեսպանական ժողովը, ուր եւ ներկայացուց (1913 մայիսի վերջին) Մանտէլշտամի նախադիմը:

Այդ առթիւ եւս կը գլորւին նոր քարեր: Սատրազամ Սայիտ Համբ փաշան, տեղեկանալով գումարեւելիք դեսպանական խորհրդի մասին, նախ՝ կը փորձէ խախտել ոռւս դեսպանի կորովը, հասկըցնելով թէ թիւրք հանրային կարծիքը խիստ պիտի լարւի ոռւսներուն դէմ և թէ աւելի լաւ է որ իրենց թողւի բարենորոգումներու խնդիրը որուն արդէն ձեռնարկած են: Դեսպանը կը մնայ անդրդւելի: Ապա գերմանական, աւստրիական եւ իտալական դեսպանները առանձին առանձին պայման կը դնեն Դեսպաններու խորհրդին հրաւիրել նաեւ թիւրք կառավարութեան ներկայացուցիչը: Ոռւս դեսպանը զօրեղ ընդդիմութիւն կը ցուցնէ ասոնց ալ, որմէ

վերջը նոյն գեսպանները իրենց գրութիւնը փրկելու համար, վերջին առաջարկ մը կընեն: Առաջին իսկ խորհրդակցութեան, երբ ուսւ գեսպանը կը դնէ սեղանին վրա Մանտէլշտամի նախադիմը, անոնք կը պահանջէն, որ քննութեան իրը հիմ ընդունւի բարենորոգումներու թիւրքական ծրագիրը - որ կտրուկ ընդդիմութեան կը հանդիպի նոյնագէս ուսւաներու կողմէ, որոնք կառարկեն, թէ այդ շեղում մըն է իրենց ընդունած սկզբունքէն, որու համաձայն 1895ի Մայիսեան ծրագիրը հիմը պիտի կազմէ Հայկ. Բարենորոգումներուն: Միեւնոյն ատեն Բերլինի, Վիեննայի եւ Հռովմի վրա, Պետերբուրգի կողմէ գործ դրւեցաւ պէտք եղած ճնշումը, որով անոնք հարկադրւած եղան Մանտէլշտամի նախադիմը իրը հիմ ընդունել:

Դեսպաններու կողմէ հետեւեալ օրը կը նշանակւին ներկայացուցիչներ, որոնք աւստրեւհունգարական դեսպանատան ամարանոց ենի Քէօյի մէջ կըսկսին իրենց աշխատանքին, 1913 թ. յուլիս 3ին:

XIV

ԵՒՆԻ - ՔԷՕՅԻ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Դեսպաններու ներկայացուցչական այդ մարմինը կոչւեցաւ «Հայկական Բարենորոգումներու Յանձնախումբ», որ ունեցաւ ընդպամէնը ութը նիստ:

Առաջին իսկ նիստին մէջ, գերմանական, աւստրեւհունգար եւ իտալական ներկայացուցիչները նորէն կը փորձեն դժւարութիւններ յարուցանել, առաջարկելով իրր քննութեան հիմ ընդունի թիւրք կազմած ծրագիրը. ոռւսական ներկայուցչի զօրեղ ընդդիմութիւնը կը պաշտպանւի անդիմական եւ ֆրանսական ներկայացուցիչներու կողմէ եւ առաջինները իրենց դեսպաններէն նոր հանրապէն ստանալէ յետոյ միայն կը համակերպին՝ ընդունելով թէ թրքական ծրագիրը ի նկատի պիտի առնըւի քննութեան ընթացքին:

Ենի Քէօյի ժողովը խորհրդակցական բնոյթ ունէր, անշուշտ. փորձագէտներու խորհրդակցութիւն մը, որուն նպատակն էր ըստ կարելոյն երկու խմբակցութիւններու տեսակէտները մօտիկցնել. աւելի շուտ հաշտեցնել կամ ձուլել ոռւս-թրքական ծրագիրները, ինչ որ կարելի չէր արդէն, որովհետեւ Գերմանիան եւ իր զինակիցները ամէն գինով կը ջանային թրքական ծրագրին քէչ թէ շատ կարեւոր կէտերը ամէն միջոցով լեցնել Մանտէլշտամի ծրագրին մէջ, այդպիսով անձանաչելի դարձնելով զայն:

Մասամբ յաջողեցան ալ: Առաջին իսկ նիստին, խախտեցաւ հայկական նահանգներէն մէկ երկրամաս կազմելու ոռւսական առաջարկը, հակառակ Մանտէլտամի կողմէ եղած շատ հիմնաւորւած եւ զօրաւոր պաշտպանութեան:

Պէտք կը տեսնեմ այժմէն փակադին մէջ ըսել, թէ ոռւսներու դաշնակիցները (Անդլիա եւ Ֆրանս) շատ թոյլ եւ բռնազրոսիկ կերպով կը պաշտպանէին Ռուսաստանի կողմէ հրապարակ դրւած ծրագրը: Բարոյական պարտք մը կը կատարէին հանդէպ Ռուսաստանի, առանց կարծես ուեւէ շահագրգուռութիւն ունենալու այդ հարցի հանդէպ եւ անոր ձգելով ամբողջ հոգը ու պատասխանատութիւնը — բարեացակամ չէզոքութեան պէս դիրք մը, որ, անշուշտ, չէր վրիպէր Երրեակ Զինակցութեան թափանցող հայեացքներէն:

Անդլիան կը վախնար ոռւսներու թափանցումէն դէպի Փոքր Ասիոյ խորքերը, չուզելով նաեւ Գերմանիոյ թողուլ Թիւրքիոյ քաղաքական հրապարակը:

Բաւական անճարակ հակածառութիւններ ըրին իտալական (Շապէս), ապա Գերմանիոյ (Շէօնպէրկ) եւ Աւստրիոյ (Բանֆիլի) ներկայացուցիչները հայկական մէկ վարչական միութիւն կազմելու դէմ: Անոնք կը պնդէին թիւրքական տեսակէտին վրա (ինչպէս բոլոր կէտերուն մէջ գրեթէ), որուն համաձայն վեց նահանգները իրենց ամբողջութեամբ պիտի բաժնեէին երկու ընդհանուր նահանգապետութիւններու (Տրավիզոնն ալ յետոյ աւելցւեցաւ թիւրքերու կողմէ, որ առանձին առարկութեան չհանդիպեցաւ ոռւսներու կողմէ, թերեւս ի նկատի ունենալով հոյն յոյն զանգւածի գոյութիւնը եւ սահմանամերձ ըլլալլ...): Որուս Արտաքին Գործոց նախարար Սալոնովը, դեսպանին զեկուցումը ստանալով, կը հրահանգէ՝ զիջիլ մէկ վարչական միաւորի խնդրին մէջ, պայմանով սակայն, որ երկու նահանգապետութեան կամ քննիչներէն շըրջանը կազմւի այն սահմաններուն մէջ, որ գծւած է Մանտէլտամի ծրագրով եւ ոչ մէկ ուրիշ նահանգ կամ հողամաս չաւելցւի առողի:

Ի հարկէ, այս դիւրին ձեռք բերւած դիջումէն վերջ դժւար չէր համաձայնիւ նաեւ վեց եւ հետազային նոյնիսկ եօթ, անփոփոխ սահմաններով, նահանգներուն հետ:

*) Խնչպէս յայտնի է, Մանտէլտամի ծրագրի համաձայն Հայկական Երկրամասը պիտի բաղկանար վեց նահանգներէ: առանց Հեթեարիի Վասպուրական, Սղերդի մասը Բաղէշն, Մալաքիա Խարբերդին եւ Սվագի ամբողջ հիւսիս-արեւմբտեամ մասը:

Վէճ վերցնող երկրորդ հիմնական հարցը ընդհանուր քննիչի (կամ քննիչներու) նշանակման ձեւին կը վերաբերէր գլխաւորապէս:

Երրեակ Զինակցութեան կողմէ Աւստրեւունգարիոյ ներկայացուցիչը բացէ ի բաց կը յայտարարէ, թէ իրենք չեն կրնար թիւրքներուն պարտադրել ծրագիր մը, որ հակառակ է Մուլթանի գերիշտանութեան եւ կըսպանայ երկրի հողային ամբողջութիւնը խարարելու:

Ըստ Բանֆիլիի, պէտք է թողուլ որ Թիւրքիան ինքնաբերաբար ուործաղրէ բարենորոգումներ, որոնց մէջ համարաւոր է մտցնել որոշ բարեփոխութիւններ: Բնդէ. քննիչներու նշանակման ոռւսական առաջարկին չեն կրնար համաձայնի, որովհետեւ այդ ձեւը կը խախտէ Մուլթանի իրաւունքները: Իրենք կողմնակից են որ նա լինի օտար, բայց թիւրքական պաշտօնեայի հանգամանքով:

Սաղնովը ոչ մէկ կերպ կը համաձայնի այս առաջարկին, եւ բարենորոգումներու իրական եւ գործնական երաշխիքը կը գտնէ միայն քննիչներու նշանակման իրենց ասացարկած ձեւին եւ մանաւանդ, այդ վարչութեան տակ գտնելով երկրամասին նկատմամբ անոնց ունեցած բացարձակ իշխանութեան մէջ:

Խորհրդակցութեան ատեն զօրեղ հակառակութեան կը հանդիպի նաեւ-վարչական բոլոր խորհուրդներու եւ պաշտօններու մէջ-քրիստոնեաներու եւ մահմետականներու բացարձակ հաւասարութեան սկզբունքը: Գերման ներկայացուցիչը արգար չի համարեր այդ սկզբունքը կիրառել, երբ յայտնի է թէ՝ քրիստոնեաները, մասնաւրապէս որոշ մասերուն մէջ, փոքրամասնութիւն կը կադմէն: Նա կառաջարկէ համեմատականի սկզբունքը կիրառել խուսափելու համար այս կամ այն տարրին արտօնեալ դիրք ստեղծելէ և մանաւանդ արդար դժողոհութիւններ յարուցաներէ բացարձակ մեծամասնութիւն կազմող տարրերու մէջ: Կաւելցնէ նաեւ, որ հայերու տոկոսային յարաբերութիւնը 30-35%է ոչ տուիլի է: Միակ հարցն է այս, որուն մէջ Աւստրեւունգարիոյ ներկայացուցիչը, ապա իտալականը կը բաժնուին գերման ներկայացուցիչ կարծիքէն: Անոնք եւս կրնուն հին հաւասարութեան սկզբունքը երկրի վարչական բոլոր ասպարէզներուն մէջ:

Գերման եւ Համախոհ ներկայացուցիչները իրենց ձեւական կամ էական առարկութիւնները կրնեն միշտ ղեկավարւելով թրքական ծրագրով, պնդելով ոչ խիստ շեշտած տարրերութիւններու վրա կամ համակերպելով երբեմն: (Մեծէն մինչեւ փոքր պաշտօն-

եաներու հրաժարեցման իրաւունքի, վարչական ընդհ. խորհուրդներու իրաւասութիւններու, մուհանիրներու տեղաւորման եւ յառկապէս Համիտիյէներու լուծման եւ նորակոչներու իրենց վայրերուն մէջ զինւորական ծառայութիւն կատարելու խնդրին նկատմամբ գերման ներկայացուցիչը չի ծածկեր թէ կը տեսնէ ոռւսներու ցուցած ջանքերուն մէջ ինքնավար Հայաստան մը կազմելու միտումներ...) :

Զգալի տարակարձութիւն կը նկատուի նաեւ Մանտէլտամի ծրագրի վերջին կէտի նկատմամբ — «Պետութիւնները պէտք է ապահովեն վերոյիշեալ բոլոր տրամադրութիւններու գործադրութիւնը» :

Գերման եւ իր բարեկամ ներկայացուցիչները այս կէտը կուղեն հասկնալ հետեւեալ ձեւով. Հայաստանի կամ նախընտրելի է Պոլսոյ մէջ (դեսպանատուններու կից) կազմել պետութիւններու եւ թիւրքիոյ ներկայացուցիչներէ մշտատել վերահսկիչ մարմին մը, որ պարբերաբար քննիչներ կը դրէ Հայաստան, գեկուցումներ կըստանայ ընդհ. քննիչներէն, ուղղութիւն կուտայ զեկալարութեան եւ կը Հարթէ Բ. Դրան եւ քննիչներու մէջ ծագելիք դժւարութիւնները (ինչպէս տեսանք, Պօղոս Փաշան եւս այս ձեւը նկատակայարմար կը դրնէր) :

Եւ իրր երեք շարաթիւներու միտքերու փոխանակութեան արդիւնք, նախավերջին նիստին, աւստրեւհունգար ներկայացուցիչը կը կարդայ յայտարարութիւն մը իր եւ իր համախոհներու կողմէ, որուն մէջ կը յայտարարէ թէ ինքը և իր ընկերները բոլոր կէտերը քննելէ վերջ, հարկ կը համարեն Բ. Դրան ընել կարդ մը առաջարկութիւններ գործադրելիք բարենորոգումներու մասին։ Առաջարկութիւններէն կարեւորն էին՝ ա) Հակակոի անհրաժեշտութիւնը (վերը լիշտած ձեւով). բ) Համեմատական ներկայացուցչութեան սկզբունքը վարչական խորհուրդներուն մէջ. դ) Ոչ մահմետականներուն իրենց թիւ համեմատութեամբ տեղ տալ երկրի վարչական գործերուն մէջ. դ) Արձակել Համբուիչներու գունդերը։ Ասոնց հետ անփոփոխ կրնունէին ոռւսական ծրագրի 14րդ կէտը («Նռատակեաց տարրերը միայն կը մայելին բնորեյու եւ բնորւեյու իրաւունքը»), վարչութեան եւ դատարաններու մէջ տեղական յեզուներու գործածութիւնը, կրնունէին ազգային դպրոցներու պահպանութեան եւ պետական միջոցներէ անոնց նիւթական ապահովութեան իրաւունքը, Ազգ. Սահմանադրութեան պահպանումը։ Ասկէ զատ անոնք այլ պահանջ դնելու կողմը չէին։ Հայերու հողայն

պահանջներու առթիւ միայն, անոնց յայտարարութիւնը «կը յանձնարարէ Բ. Դրան ստիպողական կարգով լուծել հողային հարցը Արևմտիան վիլայէքներու մէջ...»։

Մանտէլտամը յաջորդ եւ վերջին նիստին կընէ հետեւեալ յայտարարութիւնը — «Ի պատասխան Պ. Բանֆիլիի, Շէօնպէրգի եւ Շապէրի յայտարարութեան, պատիւ ունիմ նոյնպէս յայտարարիու, թէ՝ ոչինչ ունիմ փոփոխելիք այն բոլոր նկատումներուն, որ ես պարզեցի սուսական նախադիքի քնութեան ընթացքին»։

Այսպիսով ահա (յուլիս 3-24) վերջ գտաւ Եէնի Քէօյի ամուլխորդակցութիւնը եւ Հայկ. Հարցը, իրերու բերմամբ, նետւցաւ սուսական դեսպանատան սեղանի վրա...։

XXV

Ո.ՈՒ.ՍՍ.ՍՏԱՆԼ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱՆ

Այժմ, իրերու բերմամբ Ռուսաստանը իր ձեռքը ամփոփելով բարենորոգումներու իրավորածման «իրաւունքը», (որուն ակամայից կը համակերպէին իր դաշնակիցները եւ ի վիճակի չէին ժիտելու իր հակառակորդները), դէմ առ դէմ կանգնեցաւ թուրքերուն հետ, որոնք հնարաւոր բոլոր միջոցները գործ դրին գառն բաժակը իրենցմէ հեռացնելու համար։ Յանձին Գերմանիոյ, թիւրքերը գտան խելացի եւ աղդեցիկ խորհրդատու եւ անուղղակի աջակից մը։

Ռուսաստանի կողմէ Հայկ. Հարցի այսպէս անակնկալ հրապարակ դրւիլ, ու անոր յամա հետապնդումը, կըսպառնար բոլորովին չէզոքացնել Գերմանիան թիւրքիոյ եւ մասնաւորապէս Փոքը Ասիրոյ նկատմամբ սնուցած ձգտումներէն։ Այդ ձգտումները կը ջանային գործանականացնել խիստ քօղարկւած ու զգոյշ ձեւերով, բայց գաղտնի չէին Ռուսաստանէն։

1913 ամբան գեռ, գերման Արտաքին նախարարութեան կողմէ, յատուկ առաքելութեամբ հայարնակ նահանգները կը մեկնէր Տօքթ. Լէպսիուսը։ Նախ Պոլիս եկաւ եւ օր մը Պատրիարքին այցելութիւն տալէ վերջ, այցելեց նաեւ Ապահովութեան Յանձնաժողովի գրասնեակը, ուր անոր հետ ունեցայ հետեւեալ խօսակցութիւնը։ Ես չծածկեցի հայերու դժողովութիւնը, բարենորոգումներու շուրջը Գերմանիոյ կողմէ հանած խոչընդոտներու առթիւ. ըսի թէ՝ Գերմանիան թիւրքիոյ խորհրդականը եւ աջակիցն է զարձած։ Լէպսիուսը պատասխանէց. «Գերմանիոյ հանրային կարծիքը նպաստաւոր է հայերուն, բայց այլ են դիւնադիտական ըրջանակներու տըրամադրութիւնները։ Ռուսաստանի նախաձեռնութիւնը եւ մահա-

ւանդ անոր ցոյց տւած փութկոտութիւնն ու յամառ պայքարը «Հայկական ինքնավար շրջան» մը ստեղծելու իր հարաւային սահմաններուն վրա, արդարացի մտահոգութիւն կը պատճառէ մեզի. ոռուսական նւաճում մըն է երկրի մը, որ կը տիրէ ամբողջ Փոքր Ասերոյ ճամբաններու եւ հեռաւոր ծովերու վրա»: Եւ դրանքն լուց կիֆ տուփը հանելով՝ տրցակ մը լուցկիներ զանազան ուղղութեամբ շարեց տուփին վրա եւ ցոյց տալով աւելցուց. «Ճուփը Հայստանն է, որոն որ պատկանի այս երկիրը, անոր թնդանօթի հարւածներուն տակ պիտի գտնւի ամբողջ Փոքր Ասիան: Գերմանիան չի կրնար թոյլ տալ նման սպանալիք իր շահերուն դէմ...»:

Իսկ Գերմանիան, Բաղդադի ուազմա-տնտեսական երկաթուղարին գիծը շինելէ վերջ, երկրորդ քայլն իսկ արդէն կը նախապատրաստէր – գերմանական գաղութներու հիմնումը, մենաշնորհները եւ տնտեսական խոշոր ձևնարկներու արտօնութիւնները, որոնք նպատակ ունէին Թիւրքիան դնելու նոյն դիրքի մէջ, ինչ որ Անդրիան դրաւ եղիպուսը... Տօքթ. Լէպսիուսը չէր ծածկեր մեզմէ Գերմանիոյ ունեցած այս միտումները:

Գերման Արտ. Գործոց նախարար Յիմմերմանը Տօքթ. Լէպսիուսին անվերապահօրէն արտայայտած էր եւ վերջինս մտերմօրէն խօսած Տօքթ. Զաւրեանին: Միւս կողմէ մեզ յայտնի էր նաեւ գերման բարձր զինուրականութեան տեսակէտները: Զաւրեանը տեսակցութիւն ունեցած էր սպայակոյտի կարեւոր սպաներէն (որոնք Հայաստան այցելած եւ երկրի պայմաններուն լաւ ծանօթ էին) Վէսդարպի եւ լանկէի հետ^{*)}: «Գերմանիան հնարաւորութիւն եւ շահ ունի, ըսած էին անոնք, ընդարձակւելու կիլիկիա – Միջագետք տարածութեան մէջ, բայց քանի որ Ռուսաստանը «կըսպառնայ նւաճել Հայաստանը», այդ ծրագիրը կրնանք իրագործել, Թիւրքիան առնելով մեր հովանաւորութեան տակ եւ դնելով անոր վարչութեան գլուխ լորտ Քրօմէր մը, որ լինէր փաստական տէրը երկրի...»: Գերմանիան լուրջ վախ ունէր միայն Անդրիայէն. «Ռուսաստանը անշուշտ չի հանդուրժեր այս ձգտումներուն, բայց նա անզօր կը դատնայ, եթէ Անդրիան յարի մեզի», կաւելցնէին անոնք:

*) Այս եւ հետագայ մէջիրումները առնեած են Խորիրդ. Միութեան Արտ. գործոց գործալարութեան երատարակած ուստիրէն «Միջազգային Յարաքերութիւնները իմպերիալիստական Շրջանում» գաղտնի վաւերագրերու հաւաքածոյի և հատորէն:

Международные отношения в эпоху Империализма. Серия III,
Москва-Ленинград. 1931.

Իսկ Յիմմերմանը, ըսելով թէ բաւարար կերպով ուսումնասիրած չէ Հայկ. Հարցը (1913 գեկտ.), հետեւեալ խորհրդածութիւնները կը նէք. «Իրապէս հայերը պէտք չեն մեզի. հայերով բնակւած Հայաստանը վնասակար է Գերմանիոյ, որովհետեւ հայերն են Թիւրքիոյ անզօրութեան աղբերը... մենք գիտենք թէ հայերը որքա՞ն մեծ յոյսեր դրած են Ռուսիոյ վրա... հաշտեցնել հայերը թիւրքերու հետ անկարելի է. Թիւրքիոյ բաժանման վասնդը ի նկատի առնելով՝ մենք պէտք է որ ձգէինք հայերը թիւրքերու հայեցողութեան: Դժբախտարար, ուսւաները բոլորովին անսպասելի կերպով հայերու պաշտպանի գերը ստանձնեցին. կարելի է երկիւղ կրել նաեւ հայերու ապստամբութենէն, որ առիթ պիտի տար ուսւաներու միջամտութեան... այս պայմաններու մէջ հարկադրւած ենք պաշտպանել բարենորոգումներու ծրագիրը: Իսկ եթէ պէտք է որ այդ գիծը բռնենք, ուրեմն անհրաժեշտ է վաստկիլ հայերու համակրութիւնը՝ օգտակար աջակցութիւններ ընծայելով անոնց...»: Գերմանիոյ՝ բարենորոգումներու նկատմամբ բացասական դիրք չըրնելու կարեւոր պահճառներէն մէկն էր անշուշտ նաեւ այն երկիւղը, որ Ռուսաստանը եւ իր դաշնակիցները ճակատելով Թիւրքիոյ հետ՝ կրնան շատ լայն առանձնաշնորհումներ խւել եւ Թիւրքիան առնել իրենց աղղեցութեան տակ:

Եւ Պոլսոյ գերման գեսպանը հրահանգ ստացաւ գործակցիլ ուսւական զեսպանին... իրեւ զսպող ոյժ: Այդ պատճառով Վանենէնհայմը իր պատրաստակամութիւնը յայտնեց Գիրսի կողմէ եղած տուաջարկին՝ գտնել հիմեր ուսւագերմանական համաձայնութեան: Գերման եւ ուսւ գեսպանները այս նպատակով 1913 սեպտ. 3ին համաձայնութեան գալով՝ իմբագրեցին վեց կէտերէ բաղկացած բարենորոգման պահճառի հետեւեալ էական առաջարկները —

1. — Հայկական նահանգները կը բաժնւին երկու վարչական միութեան:

2. — Երկու Ընդհ. քննիչները կը նշանակին պետութիւններու համաձայնութեամբ եւ Սուլթանի իրադեով:

3. — Վարչական երկու հողամասերը կունենան առանձին ընդհ. ժողովներ՝ կազմւած կէս առ կէս քրիստոնեաներէ եւ մասնետականներէ:

4. — Բոլոր պաշտօնեաներու նշանակման եւ հրաժարեցման իրաւոնքը կը վերապահւի քննիչներուն, բացի վարչական եւ դատական բարձր պաշտօնեաներէ, որոնք պէտք է ստանան Սուլթանի վաւերացումը:

5.— Վարչական, դատական եւ ոստիկանական բոլոր պաշտօնական ընդունիլ կէս առ կէս:

6.— Պետութիւններուն կը վերապահւի բարենորոգումներու կիրառման հակակուի իրաւունքը՝ Պոլսոյ իրենց գեսապաններու եւ երկրի հիւպատոսներու միջոցով:

Այս կէտերը ընդունւեցան բոլոր գեսապաններէն եւ հոկտեմբերը 25ին Բ. Դրան ներկայացւեցան կիսապահտօն ձեւով սուս ղեսպանին կողմէ՝ յանուն իր եւ գերման ղեսպաններու, որով բացւեցան պետութիւններու բանակցութիւնները Բ. Դրան հետ, Հայկ բարենորոգումներու մասին:

Առկէ առաջ ոռւսները արդէն իսկ իրենց ծրագիրը ներկայացուցած էին թիւրքերուն եւ օգոստոսէն ի վեր ամենօրեայ բանակցութիւնները տեղի կունենային երկուստեք. լուս յամառ պայքար մը անհաւատար ուժերու միջեւ. թիւրքերը ոգի ի բուխն կը դիմադրէին՝ կիրառելով իրենց հին եւ փորձւած գործեւակերպը – ձգձգել ամէն մէկ չնչին հարց՝ ապաւինելով ժամանակին եւ ամէն միջոց ի դործ կը դնէին ո՛չ միայն պետութիւններու երկու խմբակցութիւններու մէջ անջրպետը լայնցնելու, այլեւ կը փորձէին որոմ ցանել ոռւսներու եւ անոր դաշնակիցներու միջեւ....

XVI

ԹԻՒՐՔԵՐՈՒ ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս քանից չեշտած եմ, թիւրքերը բնականօրէն, ոգի ի բուխն կաշխատէին առաջ քշել վերջին վայրկեանին իրենց մշակած «քարենորոգումներու» նախագիծը եւ առանձին մասերով ընդունել առաջ: Արդէն Հայկական մէկ հողամաս կազմելու ամենէն էական կէտը, սկիզբէն իսկ ձախողեցւուցին, վերածել տալով երկու հատածներու – այն առ հին վիլայէթներու ամրող սահմանները մէջն առած – այսինքն՝ հոծ քիւրդ-թրքական դանդածներով. առով խանգարելու քրիստոնեաներու մեծամասնութիւնը: Այս ընդունել տալէ վերջ, տրամարանական էր արդէն, որ թիւրքերը յամառօրէն դէմ լինէին քրիստոնեաներու քանակի հաւասարութեան երկրամասի ընդհանուր ժողովներու, վարչական ժողովներու կամ պաշտօնեաներու եւ ոստիկանութեան մէջ: Անոնք սկիզբէն նոյնիսկ մերժեցին ընդունիլ, որ Վան, Բաղէշ եւ երզրում նահանգներու քրիստոնեաները մեծամասնութեան մօտ տարր են. վերջ ի վերջոյ, երբ զիջում ընդունելով առաջին երկու շրջանակներու մէջ Հաւասարութեան սկզբունքը, մինչեւ վերջը հակառակեցան երզր-

ըումի (նահանգի) վերաբերմամբ. հետագային միայն խիստ ճնշումներու տակ, Բ. Դուռը համաձայնեցաւ հետեւեալ բանաձեւին. «Մինչեւ մէկ տարի, ընդհանուր քննիչի հսկողութեան տակ մարդահամար պիտի կատարւի, եթէ մինչ այդ չյաջողի կատարել, երզրումի քրիստոնեայ տարրն եւս կը շարունակէ հաւասար թւով մասնակցիլ երկրի վարչութեան մէջ»: Իսկ միւս երեք նահանգներու նկատմամբ (Տրապիզոնը բանակցութիւններու վերջաւորութեանը միայն կցւեցաւ Քնդհ. քննիչական շրջանին)՝ Սերասիա, Խարբերդ եւ Տիգրանակերտ — ընդհ. քննիչը, առաջնորդւելով նոր մարդահամարէն, մէկ երրորդի կամ համեմատական սկզբունքը պիտի կիրառէր:

Թիւրքերը ամէն ճիզ ի զործ զրին նաեւ սահմանափակելու նահանգային (եւ երկու երկրամասերու) ժողովներու օրէնսդրական եւ ելեւմտական իրաւունքները, որ տրած էին Մանտէլլուտամի ծրագրով: Այս ծրագրի համաձայն Հայկ. երկրամասի ընդհանուր երկու ժողովները ունէին իրաւունք բարեփոխելու եւ երկրի պայմաններուն յարմարեցնելու Օսմ. կայարութեան այս կամ այն օրէնքը, պայմանով, որ ստացւի Սուլթանի վաւերացումը. եթէ վերջինս երկու ամսւան բնթացքին իր դրական կամ բացասական վերաբերմունք ցոյց չի տար, օրէնքը կը համարէր վաւերացւած: Գայով պիտոնէներու անկախութեան, նոյն ծրագիրը կընդունէր իր սկզբունք, որ տեղական հասոյթները պիտի ծախսէին վայրին մէջ, կը տրէկը նաեւ փոխառութեան իրաւունք: Բ. Դուռը յաջողեցաւ սեղմել նաեւ նահանգային ժողովներու իրաւասութիւնները եւ համաձայնեցնել, մեծ չափով՝ 1913 մարտ 13ի իր մշակած նահանգային օրէնքին, ինչ որ պետութիւններու կողմէ զգալի նահանջ մըն էր 1880ին միջազգային յանձնաժողովի կողմէ մշակած օրէնքէն:

Հայերու համար խիստ կենսական երկու կէտեր, որոնք էին՝ րունագրաւած հողերու վերապարձը եւ Բալկաններէն բերւած մուհամբէրներու հայկական հողամասերու մէջ տեղաւորման արգելքը՝ երկար բանակցութիւններու առիթ դարձաւ եւ յանդեցաւ միջին լուծման մը: Հողային խնդրի քննութիւնը եւ լուծումը ձգւեցաւ ընդհ. քննիչներուն, որոնք անձամբ պիտի հսկէին յատուկ կազմըւելիք խառն յանձնախումբերու գործունէութեան: Գալով մուհամբէրներու խնդրին – որ այդ ատենները խիստ մտահոգութիւն կը պատճառէր Պատրիարքարանին, – մեր եւ ոռւսներու կողմէ թիւրքերու այդ մտահոգութիւնը կը նկատէր քայլ մը բոնազքօսիկ մի-

ջոցներով մահմետական մեծամասնութեան ստեղծման։ Այդ պատճառով, երբ մեր ճնշմամբ, ոռուս Արտաքին գործոց նախարարը կը յանձնարարէր Պոլսոյ իր գործակատարին չզիջէլ յիշեալ ինդրոյն մէջ, վերջինս կը պատասխանէր թէ երկիւղ պէտք չէ կրել ատէկ, եթէ պահւի ծրագրի մէջ այս հաստածը, որով ընտրելու եւ ընտրելու իրաւունքէ կը զրկւին թափառաշրջիկ տարրերը…… ի հարկէ, միամիտ եւ թոյլ տեսակէտ էր այս, ինչ որ ժամանակին ըուեցաւ իրեն՝ ինդրելով, որ խստօրէն պահանջ դնէ Բ. Դրան։

Ռուս գործակատար Պ. Գուլկէվիչը այս առթիւ կը տեսնալ Սայիտ Հալիմ փաշայի հետ եւ տեղեկագրելով թէ «դժւար է ներկայ աղդայնամոլ դահլիճէն զիջում սպասել», կրյայնէ թէ Սատրազամը հաւաստիք տւած է, թէ՝ իրենք միտք չունին մուհամիրները հայկական նահանգներու մէջ տեղաւորելու, այլ անոնք պիտի բնակեցւին ծովեկերեայ հողամասերու մէջ, սակայն այս մասին Սատրազամը «չուզեր ունէ յանձնառութիւն ստանձնել պետութիւններու հանդէպ»։ Գուլկէվիչը կատաջարէկ այս կէտը մտցնել քըննիջներուն տալիք հրահանգներուն մէջ։

Կը չարափիսաւ նաեւ Մանտէլշտամի ծրագրի պահանջը Համիտէք գունդերու լուծման վերաբերմամբ։ Համիտիէները «Թեթևագէն գունդեր» կանւանւին, որոնց զէնքերը, խաղաղ ատեն, պիտի գոցին պահեստներու մէջ……

Ռուսները բոլոր կէտերու մէջ համեմատարար միջին ճամբաներով երթալու եւ պայքարը ծայրայեղութեան չտանելու քաղաքականութիւն կը վարէին թէեւ, բայց անոնց համար Հայկ. բարենորոգումներու առանցքը կը կազմէին Ընդհանուր ֆնիչներու տրըւելիք լայն իրաւունքները. անոնք համոզւած էին թէ բոլոր միւս կէտերը, որքան ալ հակառակ լինեն թիւրքերը, աստիճանաբար եւ աննկատելի պիտի կրնային կիրառւիլ հայերու բաղձանքին համաձայն, եթէ միայն քննիչները անկաշկանդ եւ միակ վերին իշխանութիւնը դառնան երկրին։ Այս հարցին մէջ անոնք աներեր մնացին մինչեւ վերջ եւ յաջողեցան փոքր զիջումներով հասնիլ իրենց նողատակին։ Սկիզբէն թիւրքերը չէին ուզեր լսել անդամ պետութիւններէն յանձնարարւելիք եւրոպացի ընդհանուր քննիչներու մասին։ Մերժելով մերժեցին, և իրը հակառաջարէկ, ներկայացուցին թիւրքական հպատակ ընդհ. քննիչներուն տալու եւրոպացի խորհրդականներ (իրը պաշտօնեայ)։ Ռուս դեսպանը չմերժեց այդ, այլ ճարպիկ խաղով մը, այդ խորհրդականներուն տւաւ այնպիսի լայն իրաւունքներ, որ թիւրք ընդհ. քննիչները խրտիլակի կը վերած-

էին։ Եւ Սայիտ Հալիմը յայտնեց, որ Նախարարական Խորհուրդը կը գերադասէ ունենալ եւրոպացի ընդհանուր քննիչներ իրը պաշտօնեայ…… Կը համաձայնէր անպաշտօն եւ բերանացի թելադրութիւններ ասանակման վերաբերմամբ։ Սակայն ոռու դեսպանը այս կէտին մէջ խիստ յամառ գտնեցաւ եւ պնդեց այնքան, որ յաջողեցաւ ոչ միայն պետութիւններու «սիրայօժար աշակցութիւնը» պարտադիր դարձնել քննիչներու նշանակման պարագային, այլ եւ այդ յանձնառութիւնը թիւրքիան ստանձնեց միայն ոռուսներու հետ կնքելով պայմանագրութիւն մը այդ մասին։ Այսպիսով քիւրքերը Հայկ. Բարենորոգումներու իրազարծման համար, յանձնառութիւն կրստանմնէին եւ պատասխանատու կը մնային միայն Ռուսիայ հանդէպ։ Այսինքն նոր Սան-Ստեփանոյի դաշնագիր մը աւելի որոշ յանձնառութիւններով……

Աւելի ձգձգել բանակցութիւնները, ըստ Պատրիարքարանի, Ազգ. Պատւիրակութեան եւ Պոլսոյ ու Փարիզի ոռու դեսպաններուն կը համարւէր վնասակար։ Հարկաւոր էր վերջացնել, որովհետեւ իշխանութեան գլուխը հաւանաբար չուտով գային թալէաթեւ էնվէր, որոնք կրնային ուոքի տակ տալ նախորդներու յանձնառութիւնները։

Թիւրքիւր զիջման մզողը, քաղաքականէն աւելի տնտեսական եւ նիւթական իրենց ծանր կացութիւնն էր։ Ելեւմտական նախարար Զալիխը ատենէ մը ի վեր նախ Բերլին գնաց փոխառութիւն կնքելու, բայց թոյլ յաջողութիւն գտաւ, ապա երկար ատեն բախեց Փարիզի դրամատիրական - գիւտանագիտական շրջանակներու դոււնները։ Պատրիարքարանը, Ազգ. Պատւիրակութեան եռանդուն աշակցութեամբ, Պետերսուրուրգի միջոցով յաջողած էր պայմանաւորել թիւրքական փոխառութիւնը……

Ռուսաստանը պահանջած էր իր դաշնակից Ֆրանսայէն փոխառութիւնը մերժել, եթէ թիւրքիւր չամաձայնին երկու խնդիրներու դրական լուծման, որ «մեծապէս կը շահագրգուէ Ռուսաստանը»։ Ֆոն Սանտէրսին յետ կանչել եւ թ. Հայկ. Բարենորոգումները ընդունիլ եւ իրազուծել։ Ասոր փոխարէն, Գերմանիոյ թելադրութեամբ, Ռուսաստանը եւ իր դաշնակիցները համաձայնած էին, իրը զիջում, աւելցնել 4% թիւրքիա ներմուծած իրենց ապրանքներուն վրա։

Երբ Փարիզի ոռու դեսպան իզվուսկին, 1914 յունվ. 29ին կը ներկայանար Ֆրանսայի Հանրապետութեան նախագահ Պ. Փուանքարէին, վերջինս հետեւեալ հարցը կուտար անոր. «Արդեօք ե՞րբ

պիտի վերացնէք դուք ձեր արգելքը թիւրքական փոխառութեան վրայէն» : իզլուսկին կը պատասխանէ թէ՝ «Երբ թիւրքերը ֆոն Սանտէրսի մասին ընդունին իրենց պահանջը եւ իրագործեն Հայկ . բարենորոգումները . . .» : Պ. Փուանքարէն բոլորովին կը համաձայնի այս պայմաններուն հետ, աւելացնելով, թէ իրենք եւս նոյն պատասխանը տւած են Զավիտին եւ թիւրք գեսպանին :*)

Զավիտը անշուշտ «ձեռք-ոտք ինկած» էր փոխառութիւնը յաջողցնելու համար : Փոխառութենէն մաս մը յաջողեցաւ (300 միլիոն ֆր.) ստանալ միայն այն ատեն, երբ Բարենորոգումները ստորագրւած էին եւ քննիչները ընտրւած : Ուստի գեսպանատունը, Պատրիարքարանի թելագրութեամբ, ստացւած փոխառութենէն մաս մը քննիչներու եւ բարենորոգումներու պիւտճէյին յատկացւելու համար՝ պաշտօնական խոստումը ստացաւ Սատրազամէն :

XVII

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՒ ՀԱՅԿ. ՀԱՐՑԸ

1914 յունարի սկիզբը, Տօքթ. Զաւրեանը՝ Պետերբուրգի մէջ տեսակցութիւն կունենայ Արտ. գործոց նախարարութեան Մերձաւոր Արեւելքի Դիւանի պետ իշխան Տրուպեցկոյի հետ :**) Դուրս գալով անոր քովէն՝ Զաւրեանը հետեւեալ նամակը կուղղէ ուսւեշխանին . . .

«Երեկւան մեր տեսակցութեան առթիւ իմ խորին չնորհակալութիւնները : Առով դուք փարատեցիք իմ ունեցած կասկածները Հայկ . բարենորոգումներու խախուտ վիճակի նկատմամբ : Ես պիտի կրկնեմ հոս Ձեր արտայայտութիւնները, որովհետեւ մեզ համար անոնք պատմական արժէք ունին եւ հաստատուն որոշիչը պիտի դառնան Հայերու տրմադրութիւններուն ապագային : Դուք ևս թիւրքէ ըստիք . . .

1.— Հայկական հարցը, մեր կառավարութեան կողմէ, կը համարէ պետական շահագրգութիւն և կարեւորութիւն ունեցող հարց : Բոլոր այն հարցերու մէջ, որ գոյութիւն ունին Ռուսաստանի եւ թիւրքիոյ միջեւ, այդ հարցը կը համարէ կարեւորագոյններէն :

2.— Աշխատելով Հայկ . բարենորոգումներու իրականացման՝ կառավարութիւնը կը գործէ բացարձակ գիտակցութեամբ, ունենալով իր առջեւ բոլորովին որոշ եւ պարզ նպատակ :

*) Օրայեան գիրք, стр. 141.

**) Международные отношения в эпоху Империализма, стр. 171.

3.— Եթէ կառավարութիւնը այս վայրկեանիս հարկագրւած է դիջումներ ընել բարենորոգումներու ծաւալէն, հայերը ասկէ պէտք չէ որ վրդովլին . կարեւոր է դնել Հիմերը, որպէսզի յետոյ աստիճանաբար լայնցւին :

4.— Ապագայի Հիմերը նախապատրաստելու խնդրով շահագրգութեամբ՝ այսուհետեւ նա չպիտի գաղըրի հետեւելու բարենորոգումներու զարկացման եւ իր ձեռքէն չպիտի թողու գործը :

5.— Հայ տարրը պէտք է Ռուսաստանի հաեւ իր տնտեսական նւաճումներուն համար ոչ միայն Հայաստանի սահմաններուն մէջ, այլ եւ անկէ դուրս :

Ես երջանիկ կը լինէի Ձեր վերի յայտարարութիւնները հազորդելու Թիւրքիա գտնւող իմ մօտ բարեկամներուս, բայց անպարկեցած չգտնւելու մտահոգութիւնը կըստիպէ ինձի դիմել Ձեզ, խնդրելով յայտնել թէ ի՞նչ չափով կրնամ Ձեր խօսքերը հազորդել անոնց . . .» :

Իշխան Տրուպեցկոյը կարտօնէ, ճիշդ արտայայտւած վերոյիշեալ իր միտքերը, յայտնել Զաւրեանի բարեկամ «Թիւրքիա գտնւող նեղ շրջանակին» :

Ճիշդ այդ ատենները Պետերբուրգի մէջ տեղի կունենային «Յատուկ խորհրդակցութեան» նիստերը : Յատուկ խորհրդակցութիւնը պետական ամենէն կարեւոր հարցերու մասին խորհրդակցող մարմին մըն էր, որ իր զեկուցումը ուղղակի կը ներկայացնէր թագաւոր կայսրին :

«Յատուկ խորհրդակցութեան» նիստը ամբողջապէս նվիրւած էր Մերձաւոր Արեւելքի խնդրոյն : Անոր կը մասնակցէին (21—Տ վետր. 1914) Ծովային և Արտաքին գործոց նախարարները, վերջինիս օգնականը, Արեւելեան գործերու վարիչը, Պոլսոյ գեսպան Գիլրու, սպայակոյտի բանակապետը եւ իր օգնականը, Տովային սպայակոյտի պետը եւ նման քանի մը բարձրաստիճան անձեր : Նիստը տեղի կունենար Արտ. գործոց նախարար Սազոնովի նախահանութեան տակ :

Նախ քան Պոլսէն մեկնիլը, Գիլրու այդ խորհրդակցութեան քննութեան կը յանձնէր Թիւրքիոյ վիճակը, ըսելով թէ՝ «Քաղաքական մթնոլորար այնքան ելեքտրականացած է, որ անկասկած ոլարտաւոր ենք պատրաստ գտնւիլ ամէն պատահականութեան, որպէսզի անվճական չըլլանք տաղնապի վայրկեանին, որ պիտի զօրացնէր մեր հակառակորդները եւ վարկարեկէր յաչս մեր դաշնակիցներու : Ֆոն Սանտերսի նշանակման հարցը չի կրնար պատրւակ

ծառայել մեր գործօն քայլերուն . պէտք է ջանալ հապճեալ քայլեր չընել , որովհետեւ միայն Տրապիզոնի եւ Բայազիտի գրաւումը մեղ կը մէջը պատերազմի յայտարարութեան :*) Այսպէս թէ այնպէս , պէտք է փութով ձեռնարկել ուզմական պատրաստութեան , որովհետեւ Մերձաւոր Արեւելքի մէջ դէպէրը կրնան մէկ օրէն միւսը մեղի մղել դէպի պատերազմ : Հարցերէն մէկը որ մեղ կրնայ հարկադրել վճռական ելոյթի՝ հայկականն է՝ զանդածային կոտորածի պարագային : Այս առիթով , մէնք արագ և վճռական գործողութիւններ պէտք է կատարենք : Զպէտք է մոռնալ , որ թիւրքերու ոյժը Երթալով կածի , ինչպէս նաեւ Սեւ ծովեան իրենց նաւատորմը » :

Գիրսի այս զեկուցման վրա է , ըստ երեւոյթին , որ կը նշանակի «Յատուկ խորհրդակցութեան» ժողով եւ նա կը հրաւիրէի հոն զեկուցման համար :

Սազոնովը կը մատնանշէ թէ՝ «Մերձաւոր Արեւելքի մէջ կարելի չէ խաղաղութիւն պայել նոյնիսկ ոչ հեռաւոր ապագային կը կանխահաս վտանգ մը կը նշմարէ կախւած Պոլոյ եւ նեղուցներու վրա : Այն պարագային որ նեղուցները թիւրքերու ձեռքէն ելլէ , Ռուսաստանը չի կրնար հանդուրժէլ , որ անոնց ափերուն վրա ամրանան այլ ուժեր . Ռուսաստանը հարկադրւած է՝ զբաւել անոնք ...» :

Խորհրդակցութիւնը նմիրւած է այդ ուզմական գրաւման հաւասականութիւններուն եւ մանաւանդ նախապատրաստութիւններուն : Մէկ առ մէկ կը քննւին պատերազմի ընթացքը եւ հետեւանքները , ինչպէս նաեւ ցամաք հանելիք ոյժերու , փոխադրական միջոցներու , Սեւ ծովեան նաւատորմի գործողութեանց կարելութիւնները , կովկասեան երկաթուղիներու հարցը , (կովկասեան լեռնաշղթային անցնելիք նոր գծի կառուցումը) :

Իշխան Տրուպեցկոյ հաւասական կը գտնէ , որ ռուս-թրքական սահմանին վրա բարդութիւններ ծագին հայկական շարժումներու հետեւանքով եւ հոն զօրք կեղրոնացնելու մասին կը խօսի . . . :

Մինչդեռ այդ ատենները , Թիւրքիոյ ներքին գաւառները , բաղդատար հանգիստ էին եւ չէին սպասէր լուրջ շարժումներ , մանաւանդ հայերու կողմէ , որոնք սպասողական վիճակի մէջ կը յուսային իրենց դրութեան բարւոքման :

Ռուսներու իրարանցումին պատճառները անշուշտ աւելի լուրջ էին եւ իրական : Իթթիհատի ներսը Թալէաթ-էնվէրեան պայքարը սուր հանգամանք կը ստանար . Իթթիհատի իշխանութիւնն ալ սւին-

*) Դժբախտաբար , ձեռքիս տակ չունիմ այդ Յիսոտի արծանագրութիւնը , ուր ըստ երեւոյթին , առաջարկ եղած է , իբր ցոյց , գրաւելու Տրապիզոնն ու Բայազիտը :

ներով կը պահւէր . միւս կողմէ , գերմանները մոն Սանտերսի եւ իր բազմաթիւ համհարզներու միջոցով թիւրք բանակը իրենց ձեռքը կառնէին : Ապագայ պատերազմը անխուսափելի կը թւէր , եւ Ռուսաստանը կը փութար նախարէս ուզմական կէտերը իր ձեռքը ամփոփել՝ զգուշանալով սակայն ընդհանուր պատերազմի աղղանչան տւողը դառնալ . . . :

Երբ գեռ այնքան չեցաւած չէր գերմանական վտանգը , Ռուսաստանը հայկական բարենորոգումներու չնորհիւ , կը խորհէր խաղաղ թափանցումով իր ազգեցութիւնը տարածել Հայկական Բարձրաւանդակէն դէպի Միջերկրականը , սակայն դէպէրը արագ կընթանային , որուն հետ զուգընթաց Ռուսաստանը կը խորհէր հաստատւիլ Հայկական Նահանգներուն մէջ եւ գրաւել նեղուցները :

XVIII

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

1913 օգոստոսի սկիզբը հրաժարեցաւ Արշարունի Պատրիարքը . տեղապահ ընտրւեցաւ ձէվահիրձեան արքեպիսկոպոսը :

Խորհրդակցութիւններ կը կատարւէին Ազգ . Ժողովի խմբակցութիւններուն մէջ՝ ընտրելու Պատրիարք մը , որ ժամանակին և պայմաններուն յարմարէր :

Ընդհանուր տրամադրութիւն մը կար պատրիարքական աթոռ բարձրացնելու հայաբնակ նահանգներու երիտասարդ առաջնորդներէն մէկը , որը երկար ատեն զաւառը լինելով՝ բուն ժողովուրդը մօտէն մանչնար եւ անոր պահանջներուն եւ հոգեբանութեան տեղեակ ըլլար : Նման մէկը մեծապէս անհրաժեշտ էր բացառիկ այդ շրջանին համար : Այս տեսակէտը ունէին բոլորը . այդ պատճառով սովորական էնտրիպներ , սուր պայքարներ տեղի չունեցան : Օգոստ . 30ին ընտրւեցաւ Տիգրանակերտի առաջնորդ (որ պաշտօնավարած էր նաեւ Կարին եւ Վան) Զաւէն Եպ . , որ հոկտեմբերի երկրորդ կէսին հասաւ Պոլիս , արժանանալով հանդիսաւոր ընդունելութեան :

Նոյեմբ . 8ին , Զաւէն Պատրիարքը իր «Ուխտը» կատարեց (երդումը) եւ այդ առթիւ Ազգային ժողովին առջեւ արտասանած իր առաջին մէջ , ի միջի այլոց նրբութեամբ կը շօշափէր նաեւ օրւան հրատապ հարցը . « . . . Բնական է , որ ժողովրդին առաջին պահանջն է իր պատիւին , կեանքին եւ ինչքին ապահովութիւնը եւ ևս կը կարծեմ թէ անոնք , որ այս ուղղութեամբ կառնեն իրենց

քայլերը, ո՞չ միայն իրենց ազգին ծառայած կը լան, այլև տէրութեան»:

Պետութիւներու եւ թիւրքիոյ մէջ, բարենորոգումներու առթիւ կատարող բանակցութիւններու ամենէն լարւած եւ տեսդու օրերն էին. պէտք կար հայկական շըլաններու խիստ ուշադիր եւ աչալուրջ հսկողութեան, որպէսզի թիւրքերը կամ զայն քաջալերող ուժերը չյաջողին իրենց նպատակէն շեղեցնել մեր քաղաքական պահանջները։ Կենսական էր մանաւանդ ներքին համերաշխութեան ամրապնդումը հայ հասարակա-քաղաքական ուժերու մէջ։ այսպիսով հնարաւորութիւն կըստեղծէր նաեւ բոլոր կարող ուժերու օգտագործման։

Զաւէն Պատրիարքը, որ դեռ անձանօթ էր միջավայրին, անկեղծ բաղձանք մը ունէր մօտիկէն եւ հիմէն ծանօթանալու իրմէ առաջ տարւած աշխատանքներուն ու անոնց արդիւնքին։ Եւ չնորհիւ իր արագ ըմբռնման կարողութեան եւ կորովին, կրցաւ չուտով լծէիլ աշխատանքի՝ ներդաշնակելով զայն Քաղաք. Ժողովի ձեռնարկներուն։

Ոգեւորութիւնը Ազգ. Ժողովի շըլանակներու մէջ խիստ մէծ էր։ Կը խորհիւ վերակազմել Պատրիարքարանը եւ գաւառի առաջնորդութիւնները, նոր հիմերու վրա՝ համաձայնեցնելով բարենորոգումներու ծրագրի պահանջներուն։

Նախաքայլը կատարեց Զօհրապը (1914 փետր. 4ին) Ազգ. Ժողով մտցնելով հետեւեալ առաջարկը։ «Հաստատել իրաւագէտ խորհրդականներու պաշտօններ՝ կից գաւառական առաջնորդարաններուն, որոնք պաշտօն պիտի ունենային։

ա) Տալ իրաւագիտական աջակցութիւն գաւառի ժողովրդին (կառավարութեան հետ ունեցած դատերու, հողային հարցերու, եւայլն)։ բ) Աջակցիլ առաջնորդարաններուն օրէնքներու մեկնութիւններու պարագաններու եւ կիրառումներու միջոցին։ գ) Պատրաստել հայերու վիճակագրութիւն (մարդահամարը, տուրքերու, հողային-կալածական, առեւտրական, արհեստներու, եւայլն)։ դ) Ծչդել եւ տեղեկադրել հայոց տնտեսական վիճակը եւ պէտքերը։ է) Դիտել եւ տեղեկագրել պետական օրէնքներու կիրառման ընթացքին նկատող թերութիւնները։ Իրաւագէտ խորհրդականներու պաշտօնին համար կը սահմանէր 2600 հնչուն ոսկիի տարեկան պիտումէ մը։

Այս «օրինագիծը» զրկւեցաւ ելեւմտական, յարաբերական եւ ապահովութեան յանձնաժողովներուն՝ նախաքննութեան համար։ Կարծեմ անոնց մէկն ու մէկին զարակին մէջ ալ մնաց։

Բարենորոգման բանակցութիւնները կը մօտենային իրենց ելքին։ Ապահով Յանձնաժողովի կողմէ Ազգ. Պատրիարքութեան հետ միտքերու փոխանակութիւն սկսւած էր մանաւանդ Մարզպաններու լնարութեան մասին։ Ո՞ր ազգէն առնել. ի՞նչպէս զատել, որ չարեք չուպունան երկրի եւ մեր գլխուն։ Պէտք էր գտնել այսպիսիններ, որոնց հիմէն ծանօթ լինէր Ազգ. Պատրիարքութիւնը, այսինքն Ամեր տեղեկութիւն ունենար անոնց վարչական կարողութեան, պարկեցառութեան եւ մանաւանդ հայերու հանդէպ ունեցած տրամադրութիւններուն եւ զգացումներուն, պէտք էր որ օժտւած լինէին բնաւորութեան անկախութեամբ ու կորովով՝ գիմադրելու համար թիւրքերու կողմէ յարուցւելիք խոչընդունելուն եւ չսայթաքելու՝ արեւելիան միջավայրի մթնոլորտին ազդեցութեան տակ։

Այս տագնապալի եւ ճակատագրական օրերուն, ահա Ազգ. Ժողովի մէջ նորէն – ու այս անգամ խիստ վճռական ու դաժան կերպով – հրապարակ հանւեցաւ «Երուսաղէմի խնդիրը» – բանաման, ինչպէս կանւանէր Շահրիկեանը։

Մինչեւ հիմա ալ, կը խոստովանիմ թէ՝ չեմ ըմբռնած դրդապատճառները այդ ողբերգա-կատակերգական գէպքի։ Մէկ բան պարզ է ինձ սակայն, որ արևեստական կերպով յարուցւեցաւ այդ չարաբաստիկ հարցը։ Հին կիրքերը եւ հաշիւնները նոր թափով մը բորբոքւցան եւ կուսակցական պայքարի կերպարանք առին, պահ մը մոռնալ տալով թէ՝ այդ վայրկեանին հայ ժողովրդի ճակատագիրն էր խաղի դրւած։ Հարւածը ուղղւած էր Վարչութեան եւ անուղղակի՝ Պատրիարքին գէմ, այն ենթադրութեամբ, որ անոնք կը գտնւին Դաշնակցութեան ազդեցութեան տակ։ «Կեդրոնի խմբակցութիւնը», որուն միացած էր պահպանողական երեսին քանի մը հոգի, խստօրէն յարձակման կենթարկէր Վարչութիւնը, որ, որպէս թէ կորովի չէր գտնւած Երուսաղէմի խնդրոյն մէջ։ «Մաքսուտեան (Դեւոնդ վարդապետ) եւ հակամաքսուտեան» խումբերու էր բաժնւած Ազգ. Ժողովը։ Արթնցած էր հայկական կիրքը, որ անզուսպ է եւ անսահման։

Չեմ ուզեր հաւատալ թէ այդ օրերուն երուսաղէմեան ինդիրը իրապէս այդքան հրատապ եւ կարեւոր կը համարէին կեդրոնի խմբակցութիւնը եւ պահպանողականներէն ոմանք։ Թող ներւի ինծի կասկածելու այդ մասին եւ համարելու պատրւակ մը տապալու Վարչութիւնը, որով, իրը թէ, պիտի յաջողէին չէզգքացնել Դաշնակցութեան ազդեցութիւնը Հայկական Հարցին մէջ։

Բարենորոգումներու ծրագիրը ստորագրւած էր. կը յաջորդէր

գործադրութեան հարցը։ Պիտի ձեռնարկեէր հայկական երկու երկրամասերու վարչական կազմակերպութեան, որուն մէջ հայ մասնագէտներու եւ վարչական-քաղաքական անձերու կարեւոր քանակի մը պէտքը պիտի զգացէր։ Այդ ձեռնարկին եւ անձերու ընտրութեան մէջ վարչութեան վերապահւած էր մեծ դեր։ պէտք էր, որ բեմն, գործի բերել նոր վարչութիւն մը, որ ազատ ըլլար «Դաշնակցութեան ազգեցութենէն»……

Կը կրկնեմ։ Հաւանական կը թէի ինծի, թէ այդ նպատակով, բայց ձախող պատեհութեամբ մը, հրապարակ բերւեցան երուսաղէմական, աղթամարական եւ նման «խնդիրներ», որոնց յաջորդեցին Քաղաքական ժողովի անդամներու ոմանց դէմ վարկարեկումները—առիթներ, ջլատելու վարչութեան կորովը եւ հարկադրելու, որ հրաժարի։

Այդ բաւական չէր։ Մեծ հարւած մը պատրաստեցաւ. ուղղւած անմիջականօրէն ապահովութեան յանձնաժողովի դէմ։ «կառավարութիւնը լրտես ունի պատւիրակութեան մէջ. անոր քաղաքական գաղտնիքները կը հազորդէին կառավարութեան»։ Լրտեսի (խաֆիէ) համարը իսկ յայտարարեցին (17 թիւը կը կրէ……) Ռումբը պայթեցաւ։ Սկսեցաւ «նէոհայրենասիրական» գոռում-գոռումներ, «ի խա՛չ հանի զգա»-ներ։ Ապահովութեան Յանձնաժողովը ձեռնարկեց քըննութեան եւ հաստատեց, որ կառավարութիւնն ձեռքը իրաւ ինկած է թուղթ մը – համառօտ յիշատակագիր մը ուղղւած դեսպաններու հաջոտահարութիւններու մասին*）

Այս մթնոլորտին մէջ այլ եւս անկարելի էր աշխատել. պէտք էր քաշւել, տեղի չտալու համար քայքայիչ պայքարին։

Յունար 31-ին (1914) վարչութիւնը իր հրաժարականը ներկայացուց Ազգ. ժողովին։

Գործի գլուխը անցաւ տոքտ. Դաւթեանի վարչութիւնը, երբ արդէն (մարտ 14-ին) քննիչները կը նշանակւէին։ Ապահովութեան Յանձնաժողովը լուծւեցաւ։ Վարչութիւնը ինքը ձեռք առաւ Ապահով։ Յանձնաժողովին գործերը։

XIX ՄԱՐԶՊԱՆՆԵՐԸ

1914թ. յուն. 26 – փետր. 6-ին

Բուս գեսպանատան, գործակատար Գուլելիչը Սատրազա ՚ին

*) Քանի մը օրէն կատկած ունեցամ լրտեսական տրամադրութիւններ ունեցող մէկու մը մասին, որ սակայն հնարաւորութիւն չունէք ունէ քան հասկալու։

Հետ ստորագրեցին համաձայնագիրը։

Գուլելիչը այս առթիւ հետեւեալը հեռագրեց ուսւա արտ. գործոց համարարին**։

«Այս վարկեանիս մեծ Վէզիրին հետ վաւերացուցինք համաձայնագիրը։ Յանկալի համարելով որ այդ պարտադրութիւնը թուրքեան ստանձնէ միայն Ռուսիոյ հանդէս, կանխելով Գերմանիային, ինչը Սայիս Հալիմէն, գաղտնի պահել վաւերագրի երկուստէք ստորագրութիւնը. վերջինս խոսացաւ։ Պաշտօնակիցներուս (միւս չինք պետութիւններու գեսպաններու) պիտի լսեմ, որ այսօր լիակատար համաձայնութեան եկանք Բ. Դրան հետ պետութիւններուն ներկայացւելիք յիշատակագրի նկատմամբ»։

Բ. Դրուը պիտի հաջորդէր պետութիւններուն ուսւ-թուրքական համաձայնագիրը անմիջապէս, երբ պետութիւնները ծանուցանէին թիւրքերուն իրենց ընտրած երկու ընդհանուր քննիչներու անունները։

Դեռ Յունարին պետութիւնները սկսած էին պրատումներ կատարել եւրոպական երկիրներու մէջ՝ գտնելու «յարմար» երկու քըննիչներ (ի հարկէ իւրաքանչիւրը իր հասկացած որակի մարդիկ……)։

Մուս զեսպանատան թելագրութեամբ Պատրիարքարանը եւ պլիատուրապէս Պոլոս Փաշան, իր բովանդակ եռանդովը նւիրւեցան քննիչներու որոնման։ Փաշան անձամբ ճամբորդեց. օգտագործեց նաեւ իր ունեցած լայն քաղաքական կապերը։

Նախ քան այդ, Պատրիարքարանը խոր եւ բաղմակողմանի քըննութեան ենթարկած էր Մարզպաններու ազգութեան հարցը. ի վերջոյ եկաւ այն եղբակացութեան, որ անոնք պէտք չէ, որ պատկանին խոչոր շահերով (տնտեսական կամ քաղաքական) թիւրքիոյ կապւած կամ անկէ ակնկալութիւն ունեցող ազգի մը։ Այս մասին իր եղբակացութիւնները յունւ. 20-ին (Հ. տ.) հազորդեց Խուս կետր. կառավարութեան՝ ինդիքելով, որ ընդհան. քննիչները չփնտուին Բելֆիոյ կամ Զւիցերիոյ մէջ, տրւած ըլլարով, որ այդ երկիրները տնտեսա-

**) Բարենորոգումներու ուսւերէն մէկ թարգմանութիւնը ուսւա արտ. գործնախարարութիւնը կը դրիէ կարուղիկոսին։ Սատրազան առքիւ Պատրիարքարանը Պոլսոյ դեսպանատան, եւ կաթողիկոսը՝ կովկասեան փոխարքայի միջոցաւ շընարեակալութեան ուներձներ դրկեցին ցարին, արտ. գործ. նախարարին եւ Գիրսին։ Տարին ուղղած գրին մէջ պատրիարքը կըսէր... «այս առողջ Խուսաստանը կը կատարաւ արեւելքի մէջ։ Եթի պատմական հակառագիրը Խուսաստանը բերէ Պոլս, նա կրնայ յենի ինն գումար 200 հազար հայերու վրա...»։

կան եւ առեւտրական մեծ կապեր ու շահեր ունին թիւրքիոյ մէջ։ Պատրիարքարանը կը նախընտրէր քննիչները ընտրել Սկանտինաւերէն, կամ Հօլմնդայէն։ իսկ թիւրքական թերթերը հետեւեալ օրը զովասանքներ կը շռայլէն Բելժիկայի եւ Զւիցերիոյ պետութիւննու հասցէին

Բ. Դուռը ապրիլի մէջ պաշտօնապէս գիմեց վեց պետութեանց դեսպաններուն ինդրելով, «ի թ ե ն ց բարեհաճ աջակցութիւնը ընծայելու Հայկական երկու երկրամասի համար երկու քննիչներու ընտրութեան մէջ»^{*)} կըսկսէին պաշտօնական բանակցութիւնները դեսպաններու եւ կեղլուններու մէջ այդ ինդրին շուրջը։

Մայիսին արդէն ընտրւած էին Հոլանտացի Վէստէննկը և դանիացի՝ Հոֆը (առաջինը՝ նախկին ընդհ. նահանդապետ եղած Հոլանտական Կօնդոյի, իսկ երկրորդը գնդապետ մըն էր՝ անփորձ վարչական պաշտօնի մէջ)։

Յունիսի սկիզբը անոնք հասան Պոլիս, որոնց մասնակցութեամբ գեսպանները եւ թրքական ներկայացուցիչը պատրաստեցին քննիչներու տրեելիք հրահանդները (որուն միջոցին նոյնպէս բարդ եւ վրանդաւոր վէճեր ծագեցան, երկիւղ պատճառելով՝ մեղի)։

Մահմանւեցաւ հարկ եղած պիւտճէն։ որոշեցան պաշտօնները եւ անոնց քանակը։

Եւ ահա մեծ եռուզեռ սկսաւ Պատրիարքարանի եւ Դաշնակցութեան մէջ։ Պէտք էր մեծ ինամքով եւ շրջահայեցողութեամբ ընտրել հայ բարձր պաշտօնեաները։ Հայ որոշ շրջաններու եւ մասնաւորապէս Դաշնակցութեան ցանկութիւնն էր Գարօ Փաստրմանեանին, իրը խորհրդական, ընկերացնելու Հոփին, որի շրջանը առաջնակարդ կարեւորութիւն ունէր հայերուս համար։ Ոգեւորութիւնը այնքան մեծ եւ վարակիչ էր, որ Զոհրապն իսկ ցանկութիւն յայտնեց ընկերանալ քննիչներուն։ Ի նկատի առնւեցան եւ թեկնածուներ վարչական, երեւմտական եւ դատական հայ բարձր պաշտօններու համար։ Շրջաբերական-հրահանդ զրկւեցան ամէն կողմ, պատրաստելու ցանկեր ամէն կողմ գտնւող եւ բոլոր տեսակի հայ մասնադէտներու եւ պաշտօնեաներու։ Բարենորոգումներու գործադրութիւնը սկսած էր

^{*)} Առաջին երկրամասը կամ Քննիչական շրջանը կը բաղկանար վան, Բաղէց, Խարբերդ եւ Տիգրանակերտ նահանգներէ։ իսկ երկրորդ շրջանը՝ Մերաստիա, Տրապիզոն եւ Կարին նահանգներէ։


Եւ այդ ընդհանուր ցնծութեան մէջ յանկարծ, հասաւ համաշխարհային պատերազմին լուրը։ Վէստէննենկը դեռ Պոլիս կտնըւէր։ իսկ Հոփը ճանապարհին էր դէպի իր պաշտօնատեղին։

Թալէաթը օգտւեցաւ այդ առիթէն։ Եւ երբ Հոփը եւ անոր հետ Վասպուրականի ժողովուրդը, Հայաստանի սիրտին վրայ, զանգերու զօղանջներով կը ողջադուրէին լոյս ապագայի լեցուն յոյսերով, մէկ անգամէն խորտակւեցաւ ամէն ինչ

Աւա՛ղ, քաղցր երադ մըն էր, որ ցնդեցաւ, տեղի տալով դատն եւ զարհութելի իրականութեան

Փարիզ

(Վ. Ի. Ֆ.)



ՊՐՈՖ. Զ. ԱԽԱԼՈՎ.

ԲԱԹՈՒՄԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Վրացի յայտնի ժաղաքական գործիչ, Տրապիզոնի եւ Բարումի խորհրդադոլովների, ապա Վրաստաճի Եւրոպայի պատմիրակութեան իրաւագէտ-խորհրդական պրոֆէսոր Զ. Աւալովը, 1923թ. Փարիզում հրատարակեց «Վրաստաճի Անկախութիւնը 1918-21թ.թ. Միջազգային Քաղաքականութեան մէջ» անոնուվ ոռուսերէն մի հատոր:

Անդրկովկասի կեաներին վերաբերող հայուստ փաստերով ու լուսաբութիւններով յագեցած մի աշխատութիւն, որ դժբախտաբար, հայ հասարակութեան կողմից անցաւ գրեթէ անմկան, չնայած որ շատ ուսանելի նիւթ էր պարունակում հայերի համար:

Պրոֆ. Աւալովը հանգամանօրէն պատկերացրել ու վերլուծութեան է ենթարկել Անդրկովկասի երեք ժողովուրդների՝ հայերի, վրացիների եւ ազրբէջանցիների փոխյարարերութիւններն ու իրավանչիւրի ժաղաքական գասումները առանձին-առանձին, Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից եւ բայցայումը, խորհրդային իշխանութեան ժաղաքանութիւնը կողկասեան նորակալմ հանրապետութիւնների հանդէպ, հայ-վրացական, ապա հայ-բաքական բախումները. կողկասեան ժողովուրդների ներկայացուցիչների դեղերումները Եւրոպայում, միջազգային դիւանագիտութեան խաղերը, Ազգերի կիցայի անգորութիւնը կովկասում զարգացող դէպքերի նըկատմամբ, բոլշեվիկեան յառաջնադաշումը, անկախ հանրապետութիւնների անկումը եւ այլ բազմաքի երեւոյքներ: Բնականաբար, այդ երեւոյքները Աւալովը ըմբռնում եւ ներկայացնում է վրաց հայրենասէրի տեսակետով, բայց ի պատիւ իրեն՝ պէտք է ասել, որ նակարողացել է ընդհ. առմամբ մնալ առարկայականութեան սահմաններում եւ տալ մերկապարանց հշմարտութիւնը՝ հրապարակ հանելով երբեմն այնպիսի փաստեր, որոնք մինչեւ այդ խնամքով ծածկում էին վրաց գործիչների կողմից: Մերկացնումների, հեգնութեան եւ դատապարտութիւնների բնիքացին նա հաւասարապէս չի խնայումք է իր ազգակցին, թէ հային եւ թէ ազրբէջանցուն: Գիրքը գրւած է հայրենասէրի անկեղծ ու լայն շնչով, շօշափում է մինչեւ այսօր էլ կովկասի կեանքը յուզող հրատապ խնդիրներ, մատը դնում է շատ ցաւոտ վերքերի վրայ, անում է ծանրակշիռ մերկացնումներ, եւ հաս-

կանալի է նրա առաջ բերած յուզումը վրաց ազգային - ժաղաքական շրջաններում:

Աւալովի գիրքը պէտք է որ քարգմանւէր նաև հայերէն: Այդ պարտականութիւնը տարիներ առաջ կատարել է մեր աշխատակից Ա. Արշակունին, բայց նիւթական միջոցների բացակայութեան հետեւանով կարելի չի եղել տպագրել: «ՎԵՄ»-ը ուրախ կը լինէր հայ ընթերցողներին ներկայացնել Աւալովի ամբողջ գործը. դժբախտաբար տեղի պակասութիւնը գրկում է մեզ այդ հնարաւորութիւնից: Ուստի Ա. Արշակունու քարգմանութիւնից մենք կը հրատարակենք միայն այն գլուխները, որոնք անմիջական առնչութիւն ունին հայոց նորագոյն պատմութեան հետ:

Զուտ գործնական նկատումներով, հաշվի առնելով «ՎԵՄ»ի սահմանափակ էջերը, ստիպած ենք նիւթը տալ աննշան յապատումներով եւ մաս-մաս, նայած տեղի յարմարութեան: Առաջին առքի տալիս ենք Բարումի խորհրդադոլովներին վերաբերող գլուխները: Ընթերցման դիւրութեան համար այդ գլուխները քազրում ենք մէկից սկըսած. տակը, ծանօթութեան մէջ, դնելով հեղինակի քւահամարները:

ԳԼՈՒԽ Ա.**)

ԴԷՊԻ ԲԱԹՈՒՄ՝ ՏԱՃԻԿՆԵՐԻ ՄՕՏ

1. ԻՆՉՊՈՅՍ ՊԱՏԱՀԵՑ.

1918-ի Բաթումի խորհրդաժողովի ականատեսի տպաւորութիւններից առաջ օգտակար է մի քանի խօսք ասել այն դէպքերի եւ պարագաների մասին, որոնք առաջ բերին կովկասեան ժողովրդների դիւանագիտական առաջին շփումը եւրոպական պետութիւնների հետ - պատմականօրէն եւ քաղաքականապէս ամբողջ խնդիրը վերջինների մէջ էր, թէեւ խօսակցութիւնը տարւէլ է գլուխարապէս Տաճկառանի հետ **):

Երբ 1917-ի Նոյեմբերին կազմւեց Անդրկովկասեան կոմիսարիատը, ոռուս-տաճկական ճակատի պատերազմը շարունակելու անկարեւիութիւնը այլեւս կասկած չէր յարուցանում, ուստի որոշւեց Տաճ-

*) Բնագրում Վ գլուխ, 13-րդ պրակ:

**) Հետագայ դէպքերի համար տե՛ս վրացական կառավարութեան հրատարակած «Անդրկովկասի եւ Վրաստաճի արտաքին ժաղաքականութեան վաւերագրեր» ու նիւթերը, Թիֆլիզ, 1919 թ. (ռուսերէն):

կաստանի հետ կնքել զինադադար : Սրա սլայմանները մշակեց սագ-մաճակատի ոռու զինաորական իշխանութիւնը , որ գեռ պահել էր իր գոյութիւնը (դժբախտարար , միայն անունով) , եւ զինադադարը ստորագրւեց 1917թ . դեկտ . 5 (18)-ին՝ Երզնկայում : Միաժամանակ պատերազմով կողմերի միջն հաստատւեց սահմանորոշ մի դիմ , Սեւ Ծովից սկսած մինչեւ Վանայ լիճը :

Քիչ յետոյ , տաճիկ կառավարութեան նախաձեռնութեամբ հարց յարուցւեց՝ Հաշտութեան բանակցութիւններ սկսելու մասին Անդր-կովկասի հետ (1918թ . յունարի սկիզբը , հին տոմարով) :

Կոմիսարիատը ճիշդ տեղեկութիւն չունենալով Սահմանադիր ժողովի վեճակի մասին եւ սպասելով Ռուսաստանի հարաւում այդ ժամանակ գոյութիւն ունեցող նորակազմ (ոչխորհրդային) պետութիւնների կարծիքին բռնելիք դիրքի մասին , ի վիճակի չէր տաճիկ-ների առաջարկին որոշ պատասխան տալու :

Այդ տատանումներով , որոնք հետեւանք էին ոչ միայն սուեդ-ւած ծանր կացութեան , այլ եւ «կայսերական» օրինապահութեան զգացումի եւ ոռոսական յեղափոխութեան ու դեմոկրատիալի միութեան կենդանի մտքի , կորչում էր թանկազին ժամանակը . ուազմաճակատը վերջնականապէս քայլայւեց . «սահմանորոշ դիմը» , որ այս կողմից չէր պաշտպանում , տաճիկներին այլեւս չէր նեղում , եւ պատրւակ բռնելով հայ զօրամասերի գործած բռնութիւնները մահմետական ազգաբնակութեան վերաբերմամբ , 1918թ . յունարի վերջերը (հին տոմար) նրանք դիմեցին յարձակման ոռու-տաճկական սահմանի ուղղութեամբ :

Միայն Անդրկովկասեան Սէյմի գումարումով (1918թ . փետր . 10) նոր ձգձգումներից յետոյ , որոշեց վերջապէս Հաշտութեան ինքնուրոյն բանակցութիւններ սկսել տաճիկների հետ՝ բանակցութիւնների վայր ընտրելով Տրապիզոնը , որ այն ժամանակ դեռ բրունած էր կովկասեան զօրքերով , եւ Տաճկաստանի հետ վարւելիք բանակցութիւնների ընթացքին ջանալ ապահովել 1914թւի պետական սահմանն եւ Հայաստանի ինքնալարութիւնը «Տաճկաստանի պետականութեան շրջանակում» . (Փետր . 16 , հ . տ .) : Եւ այդ այնպիսի ժամանակ , երբ կովկասեան ճակատն ամէն տեղ աւերել էր խարխուր չէնքի պէս :

Թիֆլիսում , դեռ նոր էին հանել այս որոշումը , երբ Փետր . 17-ին ստացւեց կարախանի հեռագրական մի հաղորդագրութիւնը , խորհուրդների որոշման մասին՝ ստորագրել Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը եւ այդ դաշնագրով կարսի , Բաթումի եւ Արտաշատի համար ամրան ծանր , բայց ներկայ վայրկեանին անհուսափելի պայմաններով :

զիջել տաճիկներին , այսինքն , արմատական կոտորխութեան ենթարկել կովկասի 1914թ . սահմանները յօդուտ Տաճկաստանի : Սէյմի մը շակած հաշտութեան պայմանները ստանում էին պարզաբէս ցնորական բնոյթ :

Տաճկաստանը , իհարկէ , չյապաղեց , պահանջեու՝ բոլորովին մաքրել իրեն տրամադրւած հողերը , որոնց մօտ էին հասել արդէն վաստօրէն նրա զօրքերը (Փետ . 25 , հ . տ .) . իսկ կովկասեան կառավարութիւնը , դեռ մինչեւ այդ , (Փետ . 17) բողոք էր ներկայացուել անդրկովկասեան զաւաները զիջելու դէմ , մի դաշնագրով , «որը կնքւած է առանց Անդրկովկասի զիտութեան եւ հաւանութեան» :*)

Որքան տարօրինակ թւայ , հակառակ դրան , Տրապիզոնի խորհրդաժողովը գումարւեց :

Տաճիկները , Ռուսաստանի ձեռքից երեք սանջակ ստանալով եւ այդ սանջակների գրաւումը վիութացնելով , ինչպէս երեւում է , ոչմէ չէին , որ այդ գրաւումը Անդրկովկասն էլ հաստատէ իր կնիքով :

Իսկ ինչ վերաբերում է Անդրկովկասի պատւիրակութեան , նա , ըստ երեւոյթին , յոյս ունէր հասնել իր դրած խնդիրների լուծմանը , չընայած որ Բրեստ-Լիտովսկից յետոյ քաղաքական կացութիւնը արմատապէս փոխւել էր եւ ուազմաճակատը վաստօրէն քայլայւել էր . այժմ արդէն Տրապիզոնն էլ տաճկական էր :

Տրապիզոնի խորհրդաժողովը , որ սկսեց Փետ . 27-ին (հ . տ .) եւ Ապրիլ 1-ին (հ . տ .) , վերջացաւ անդրկովկասեան պատւիրակութեան յետուզումով Թիֆլիս , յանդեց հետեւեալ դիւնագիտական եղբակացութեանց . Անդրկովկասը , համաձայն տաճիկների վերջնագրի , պարտաւորւեց ճանաչել Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը , իր գրաստանի եւ Հայաստանի համար ամրան ծանր , բայց ներկայ վայրկեանին անհուսափելի պայմաններով :

Վերջնական հաշտութիւն Անդրկովկասը պիտի կնքէր , իհարկէ , ոչ միայն Տաճկաստանի , այլ եւ իր զինակիցների (Գերմանիայի , Աւստր եւ Հունգարիայի եւ Բուլղարիայի) հետ : Իսկ դրա համար ան-

*) Իր ժամանակին զգալի յապաւումով Անդրկովկասի կառավարութեան յանձննելուց Բրեստ-Լիտովսկի բանակցութիւններին մասնակցելու իրաւերը : Այդ առաջարկութիւնը գործնական բննութեան չենթարկւեց երեւի այն պատճառով , որ յետոյ ստացւեց Բրեստ-Լիտովսկի բանակցութիւնների խզման լուրը : Այդ ժամանակ արդէն պատրաստակամութիւն կար հաշտութեան անջատ բանակցութիւններ սկսելու Տաճկաստանի եւ բանեակ զինակցութեան պետութիւնների հետ :

հրաժեշտ էր նախօրօք յայտարարել Անդրկովկասեան Հանրապետութեան անկախութիւնը: Նոյնիսկ պայմանաւորւած էին, և ճիշտ է, մասնաւոր ձեռով, որ հակառակ Անդրկովկասի պատգամաւորութեան յետ կանչելուն, խորհրդաժողովի աշխատանքները ընդհատում են:

Այն էլ պէտք է ասել, որ այդպէս Տրապիզոնում էին գատում, իսկ Թիֆլիսում Սէյմը, խանդավառ յուղումով, անհրաժեշտ համարեց պատերազմը շարունակել, իրեւ հետեւանք Շերեթելիի հաւաստիացումներին թէ՝ «հաշտւել Բրեստ-Լիտովսկի դաշնադրի պայմանների հետ մենք չենք կարող ժողովրդական զանգւածները չեն ընդունի», եւ Գեղեջորիի յայտարարութեան, թէ՝ «ներկայ վայրկեանին կառավարութիւնն այլ որոշում չի կարող ունենալ, քան պատերազմը Տաճկաստանի հետ»*: Եւ հէնց այդ հիման վրայ պատգամաւորութիւնը յետ կանչեց Տրապիզոնից (Մարտ 31-ին, հ. տ.): Մի խօսքով, որոշեցին փորձել պատերազմի բախտով՝ չունենալով վստահելի գորքեր եւ հակառակ Սէյմի մահմետական պատգամաւորների բացորշ յայտարարութեան, թէ՝ «Այդ պատերազմի մէջ գործոն մասնակցութիւն ունենալ մենք կարող, ուստի եւ պատասխանառութիւնը չի ընկնում մեր վրա»:

Այսպիսի պայմաններում յեղափոխական ճարտասանութիւնը, խորհրդարանական ճառերը, գիմումները ժողովուրդներին, կոչերը զանազան կազմակերպութիւններին, «ամենքը դէպի ճակատ» եւ այլն փոխարինում էին այն, ինչ որ հին ժամանակ կատարում էր չինական պատերազմներում վիշտազների եւ ուրիշ ճիւազների պատկերների օժանդակութեամբ:

Թիւրիմացութիւնը երկար չտեւեց:

Հէնց նոյն օրը, երբ Սէյմի ողեւորութեամբ եւ խանդավառութեամբ յագեցած նիստի վերջում, Ն. Ժորդանիան յայտարարեց, թէ՝ «մենք պաշտօնապէս ոտք ենք կոխում պատերազմի ասպարէզ», տաճկները բոլորովին «պաշտօնապէս» մտան Բաթում: Միաժամանակ նրանք մօտենում էին Կարսին, որ դրաւեց ապրիլ 12-ին (հ. տ.):

* Հետաքրքիր է համեմատել այս ամենը, որ աւեց Անդրկովկասեան Սէյմում ի պաշտօնաւրիւն յեղափոխական պատերազմի (մարտ 30, հ. տ.) Լենինի կարծիքի հետ՝ արտայայտած բաւական նման պայմաններում ընդդեմ պատերազմի (փետր. 28-ին, կենտրոնական կոմիտեում). «Պատերազմի համար հարկաւոր է գորք, և իսկ գորք չկայ: Հետեւարաք, անհրաժեշտ է ընդունել պայմանները» եւն:

Պարզ էր, որ «պատերազմական» գծից ոչ մի լաւ բան չէր բըսում, ուստի որոշեց նորից զօր տալ դիւանագիտական գծին:

Ապրիլ 9-ին յայտարարեց Անդրկովկասեան Դաշնակցական Հանրապետութեան անկախութիւնը, եւ նոյն ժամանակ որոշեց միջոցներ ձեռք առնել հաշտութեան շուտափոյթ կնքման համար: Եւ միանգամայն անխուսափելի եւ հետեւողական կերպով ե. Գեղեջորիի կառավարութիւնը հրաժարական տւեց եւ փոխարինեց Անդրկովկասեան Դաշնակցական Հանրապետութեան առաջին (միակ) դահլիճով՝ որ կազմեց Ա. Ի. Զիենկելին:

Ապրիլ 10-ին անդրկովկասեան հրամանատարութիւնը կարգադրեց դադարեցնել պատերազմական գործողութիւնները. տաճիկները պատասխանեցին նման կարգադրութեամբ, բայց շտապեցին, առանց սպասելու Կարսի կանոնաւոր ու լիակատար գաղարկման, պետական գոյքերի փոխադրութեան եւ պաշտօնական յանձման, անմիջապէս գրաւել բերդը, ապրիլ 12-ին:

Դրանից յետոյ, տաճիկ հրամանատարութեան ոչինչ չէր մնում, բայց եթէ հաղորդել Թիֆլիս, թէ ... Օսմանեան Կառավարութիւնը ճանաչել է Անդրկովկասի անկախութիւնը եւ, համաձայն է Թիֆլիսի ցանկութեան, յաջորդ բանակցութիւնների վայրը նշանակել Բաթումը (15-28ապր. 1918թ.):

Տաճիկները արդէն գրաւել էին Բրեստ-Լիտովսկում իրենց բաժէին հասած գաւառները, եւ միաժամանակ ապացուցւած էր, որ գեռ չկազմակերպւած, ցնցւած Անդրկովկասը զուրկ է ամենասովորական պատերազմական գործողութիւններ կատարելու կարողութենից:

Ահա այսպիսի պայմաններում էր գումարելու Բաթումի Խորհրդաժողովը:

2. (14) · «ՊԱՏԻՒՐԱԿՈՒԹԵԱՆ ԳՆԱՅՔՈՒՄ»

Պատմում են, որ երբ Տրապիզոն ուղարկւած անդրկովկասեան պատուիրակութիւնը առի է իջև «Կարլ Թագաւոր» մարտանալից, 1918 թ.-ի փետ. 27, (հ. տ.), տաճիկներից մէկը ասել է, թէ՝ եթէ «զաշնաղիր կողմի» ամբողջ աղդաբնակութիւնն է եկողը՝ շատ քիչ է, իսկ եթէ միայն պատւիրակութիւնն է՝ շատ շատ է»*:

* Տակաւին Հայաստանի քաղաքանի Տիգրանին եր վերագրւում այս խօսքը կուլուսի սակաւարի բանակը տեսնելով՝ նա ասել է. «Երէ սա դեսպաններ են, շատ շատ են. երէ սա քնարակն է՝ շատ քիչ է»:

Բաթում ուղարկելիք պատւիրակութիւնը բաղկացած էր 45 հոգուց - չափից աւելի մեծ թիւ, բայց հասկանալի է, եթէ, բացի այլ պատճառներից ի նկատի ունենանք Անդրկովկասի քաղաքական առանձնայատուկ պայմանները - նրա իշխանութեան հաւաքականութիւնը, զանազան իրար չլստահացող քաղաքական ուժերի գոյութիւնը:

Կային վեց պատւիրակներ. Զիւնկելի եւ Նիկոլաձէ Վրաստանի կողմից, Հաջինսկի եւ Ռասուլ Զաղէ՛ Աղրբէջանի, Քաջաղունի եւ Խատիսեան՝ Հայքատանի: Բայց այդ, կային խորհրդականներ, զանազան վարչութիւնների ներկայացուցիչներ, «ազգային քարտուղարներ», այսինքն ազգային խորհուրդների քարտուղարներ՝ վրաց, հայկական եւ մահմետական: Կար զինւրական մի առաջելութիւն՝ բաղկացած երկու զօրավարներից եւ երեք զնդապետներից, եւ այլն:

Հապճեպութիւնն ակներեւ էր. ոչ ժամանակ կար եւ ոչ էլ հանգըստութիւն, որ գործի կանոնաւոր պատրաստութիւն տեսնէր:

Մեկնումը նշանակւած էր մայիս 5-ին՝ յատուկ զնացքով, որի մէջ տեղաւորւցին նաև իրենց անհատական գործով տաճիկների զրաւած Բաթումը մեկնել կամեցող շատ մասնաւոր մարզիկ: Դժւար էր ընկնել կայարան, առանց տրամադրութեան տակ ինքնաշրջ ունենալու, բայց աւելի դժւարութեամբ շարժեց գնացքը, ուշ գիշերին:

Յաջորդ երեկոյ պատւիրակութիւնը հասաւ Բաթում եւ տեղաւորւց Հօթէլ Օրիանտալում, ծովափին, մաքսատան կողքին:

3 (15). ԶԳԱՅՈՒՄՆԵՐ ԵՒ ԱՆՁԵՐ

Դեռ մի ամիս չի անցել այն օրից, երբ Սէյմում տաք ճառեր էին արտասանում. «Բաթում կամ մահ», «առանց Բաթումի կեա՞նքը անարժէք է», եւ ահա անկախ Անդրկովկասի պատւիրակները Բաթումում են, բայց ոչ սեփական տանը, այլ հիւր տաճիկների մօտ (1918 թ. մայիս 6):

Պատգամաւորները Սէյմում բնաւ չէին գերազնահատում Բաթումի արժէքը կովկասի եւ առանձնապէս Վրաստանի համար. այդ արժէքը իսկապէս շատ մեծ է եւ հանրածանօթ: Բայց Բաթումն էլ, կարսն էլ, որպէս Ռուսական կայսրութեան սահմանային ահազին ամրութիւններ, յարմարեցւած էին մեծ ուժերի պաշտպանութեան: Իրոշ պայմաններում կարսն ու Բաթումը կարող էին դառնալ (եւ կարող է պատահել, որ երբեւիցէ դառնան էլ) յատկապէս կովկասի կամ Անդրկովկասի զինւրական համաչափ կազմակերպութեան տարբեր,

բայց այդ չէր կարող տեղի ունենալ մէկէն ի մէկ, 1917 եւ 1918 թւերի սեմերին, երբ ամէն ինչ աւերտում, քար ու քանդ էր վնում:

Մի խօսքով, անկարելի եղաւ սահմանների պաշտպանութիւնը տաճկական ներխուժումից: Հեշտ էր սակայն հասկանալ, որ, օրինակ, Բաթումի զրաւումը տաճիկների կողմից չէր կարելի համարել վերջնական. այդ բանը կախւած էր պատերազմի ընդհանուր ելքից: Հետեւարար, Տաճկաստանի հետ անհրաժեշտ էր համաձայնութեան գալ որոշ գոյավիճակի, գլխաւորապէս Բաթումի տնտեսական կապը Անդրկովկասի հետ ապահովելու համար: Բայց Վրաստանի հասարակական կարծիքը չափազանց զային վերաբերում էր ցոյց տալիս գէտի այդ հարցը, մանաւանդ սոցիալ-դեմոկրատները, որոնց գլխաւոր ծուխերից մէկը գտնուում էր Բաթումում, մեծ գիւղարութեամբ էին հաշտում այն բանի հետ, որը հաշւում էին նրանք - վաղաժամ ու չափազանց ածեւով - մահացու հարւած Վրաստանի համար: Կասկածում էին նաև, որ Բաթումի կորստով յեղափոխութեան եւ գեմոկրատիայի գործը կը տուժի:

Հայերը միանդամայն հասկանալի սարսափի մէջ էին: Տաճկաստանի կարս վերադասալով՝ սպաննալիք էր ստեղծում Հայաստանի բովանդակ ապագայի համար, եւ արտաքնապէս այնպէս լաւ պաշտպանուած թւացող Ռուսական Հայաստանի գաւառներն էլ ենթարկըւում էին անմիջական եւ մահացու վտանգի: Պարզ է, որ հայերը Բաթում պիտի զային էլ աւելի ծանր զգացումով, քան վրացիները:

Տարբեր վիճակի մէջ էին ազրբէջանցիք: Նրանք, յանձին տաճիկների, սկսել էին տեսնել ազգակիցներ, որոնք կարող էին շատ բաներում օգնել իրենց. ոչինչ չէր ստիպում նրանց մոայլ աչքով նայել Բաթումի բանակցութիւնների վրա:

Այս այնքան տարբեր զրդապատճառներից, զնահատութիւններից, երկիւղներից, զգտումներից այժմ հարկ էր ստեղծել մի ընդհանուր անդրկովկասեան քաղաքականութիւն:

Պատկերացնենք մեղ նաև տաճիկների զգացումները Բաթումը գրաւելիս: Նրանք կարծես թէ վերաբանում էին այս տեղ 40 տարւայ բացակայութիւնից յետոյ: Եւ թէեւ այն, որ գտան այս տեղ 1918 թւին, քիչ էր նմանում այն Բաթումին, որ թողել էին 1878-ին, նրանք Բրեստ-Լիտովսկում իրենց թողնած այդ գաւառին (սանջակ) նայում էին մի տեսակ տաճկական կլազմ-կոտարինդիքայի պէս, որ վերադարձւել էր ըստ պատկանելուոյն: Այդ ուրոյն զգացումին միացել էր ինչ որ մի աւելի ընդհանուր բան. վաղուց ի վեր Տաճկաստանը սովորել էր գաւառներ կորցնել եւ քաղաքներ յանձնել: Առաջին ան-

գամն էր այս ժամանակին, որ սուլթանների զօրութիւնը սկսել էր նւազել, տաճիկ զօրքերը գրաւել էին այնքան յայտնի եւ կարեւոր միքաղաք, որ այս յաջողութիւնը կարողանար շոյել Ստամբուլի սնապարծութիւնը: Թէկուզ փոքր մխիթարանք էր Բաղդադի (1917թ. մարտ) եւ Երուսաղէմի (1917թ. դեկտեմբեր) կորուստից յետոյ:

Ահա թէ ինչու այնքա՞ն փայլում էին տաճիկ սպանների եւ պաշտօնեաների դէմքերը՝ 1918 թւի գարնանը, Բաթումում, եւ այնպէ՛ս նոր եւ պայծառ էին երեւում տաճկական կարմիր դրօշակները ամէն տեղ – հասարակական եւ պետական շչնքերի գլխին:

Տաճկների գլխաւոր պատրիարքին էր այս խորհրդաժողովում արդարադատութեան եւ ժամանակաւորապէս արտաքին գործերի նախարար Խալիլ Բէյը, «Միութեան եւ Յառաջդիմութեան» նշանաւոր գործիչ (քիչ յետոյ՝ Կ. Պոլսի Խորհրդարանի նախագահ), ծանրաշարժ եւ տաճիկների համար սովորական՝ կեղծ-Փրանսական փայլի տէր մի մարդ: Բաթում էր գտնուում այդ ժամանակ եւ կովկասեան սաղմաճակատի տաճկական գլխաւոր հրամանատարը՝ Վէհիր փաշան, լայն թիկունքով, արիւնուուշտ աչքերով մի մարդ, առանց կուի նահանջող զօրքերի դէմ այնպէ՛ս հեշտութեամբ յաջողութիւններ ձեռք-բերած մի հերոս: Մեր Բաթում եղած-ժամանակը իր զրօսանաւով Պոլսից եկաւ եւ ծովային նախարար Զեմալ փաշան, հոչակաւոյ նոապետութեան (Թալէքաթ-Էնվէր-Ջեմալ) մէկ անդամը, ներկայանալի եւ կարեւոր մի դէմք:*) Էնվէր փաշան էլ եղել էր Բաթում, դեռ մինչեւ մէր գալը. Նրան ընդունել էին մեծ շքով, եւ վերադարձել էր, ինչպէս ասում են, բնաւ ոչ դատարկաձեռն:

Սակայն ամենից շատ հետաքրքրութիւն շարժողը գերմանական պատրիարքակութիւնն էր: Ժողովուրդը թշնամական զգացումներ չէր տածում Գերմանիայի հանդէպ եւ չէր էլ կարող տածել: Յանձին գերմանացիների մարդիկ տեսնում էին եւրոպական մշակոյթի, եւ բոպական գիտութեան եւ հմտութեան լաւագոյն ներկայացուցիչներին, տեսնում էին փայլուն մարտիկներ, որ նւաճել էին Բալտիան երկիրները, Լեհաստանը, Ռումանիան, Ռումանիան: Գերմանիան Բաթումում՝ այդ նշանակում էր մի սանձ Տաճկաստանի բերնին, իսկ այդ գլխաւորն էր: Գէթ այդպէս էր Անդրկովկասի քրիստոնեայ աղքարնակութեան բնազդը: Իսկ սլաւոնասիրական կամ այլ գրդումից առաջացած սրբազն ատելութիւն դէպի գերմանացիները – որ թըւում է թէ իոր չէր եւ ուս ժողովուրդի մէջ – չէին կարող ունենալ:

*) Զեմալ փաշան սպամեց Թիֆլիզում 1922թ. Աւղանիստանից վերադառնալիս:

ոչ վրացիները, ոչ հայերը եւ ոչ էլ մահմեղականները:

Գերմանական կայսրութեան լիազօր ներկայացուցիչն էր բաւարական ծառայութեան զօրավար Ֆոն Լոսովը, որ այդ ժամանակ գերմանական հրամանատարութեան ներկայացուցիչն էր տաճիկ կառավարութեան մօտ: Նա իր պարզութեամբ եւ ասպետական ոգով շատ շուտով զրաւեց ամենքի յարգանքը: Պատրիարքութեան կողմից յիշեմ այսուեղ եւ կոմս Շուլէնբուրգին, որ պատերազմից առաջ գերմանական ընդհանուր հիւպատոս էր Թիֆլիսում, եւ 0. Ֆոն-Վեզենդոնկին՝ բարձր կրթութեան տէր եւ դեռ երիտասարդ մի գիւտանգէտ՝ մասնագէտ Մերձաւոր Արեւելքի գործերի: Ֆ. Վեզենդոնկը Ոիսարդ Վազների յայտնի բարեկամուհի-մեկենաս Մատիլդա Վեզենդոնկի թոռն էր եւ սանը հոչակաւոր Հելմուցի:

Անդրկովկասը, այսինքն աւելի ճիշտ, Անդրկովկասի երեք աղքերն ունենին խիստ այլազան ներկայացուցիչներ: Պատրիարքութեան նախագահը՝ Ա. Ի. Զիենկելին, Անդրկովկասեան կառավարութեան նախագահը, գեռ Դումայի անդամ եղած ժամանակ, իրեն ցոյց տևց մեծ սիրահար քաղաքականութեան վերաբերող հարցերի. Նա սովորաբար այդ հարցերի մասին էր խօսում սոցիալ-դեմոկրատական հատուածի կողմից: Իր կուսակցութեան մէջ նա միւսներից աւելի շատ էր մտածում ազգային հարցի եւ Վրաստանի ազգային շահերի մասին. պաշտպանում էր նրա ինքնավարութիւնը, երբ դեռ այդ բանը վատ նշան էր համարում վրացական սոցիալ-դեմոկրատների մէջ: Նրա հայրենասիրութեան արմատները աճում էին վրաց հոգևորականութեան լաւ մասի խորունկ ազգային աւանդութիւններից – մի միջավայր, որից դուրս էր եկել Զիենկելին: Միաժամանակ նրա ջանասիրութիւնն, օրինապահութիւնը ողջ Անդրկովկասին վերաբերող շահերի նկատմամբ կասկած չէր յարուցանում եւ ոչ մէկի մէջ:

Վրացական միւս պատւիրակը՝ Ն. Ե. Նիկոլաձէն խիստ թեթեւութեամբ կրում էր ուսերին իր 75 տարիների ծանր բեռը: Որքա՞ն չուր էր հոսել այն ժամանակներից, երբ նա պատանեկան յափշտակութեամբ խորհրդակցում էր Գերցէնի հետ այն մասին, թէ ինչպէս ապտակէ այն ժամանակաւայ ժանդարմների պետին. կամ նոյնիսկ այն օրից, երբ իբրեւ խմբագիր Թիֆլիսի «Օքզօր» թերթի, այնքան աղմուկ հանեց ամբողջ Ռուսաստանում իր գրական գատավարութեամբ, որի մասին մահրամատ պատմում է նոյնիսկ Անատոլ Լերուա-Բոլիէն, իր «Եմպիր դէ Ցար»-ի մէջ (այդ ամենը, սակայն, «անդրջնեղեան» բաներ են):

Նրա անսպառ յիշողութիւնը, տաճկա-կովկասեան յարաբերու-

թիւնների ծանօթութիւնը, խօսքի փայլուն չնորհքը, աչքերի կրակը, սպիտակ մօրուքն ու պարթեւ հասակը՝ նրա ներկայութիւնը գարձը-նում էին շատ օգտակար Բաթումում:

Հայկական գլամարո պատւիրակը Ա. Ի. Խատիսեանն էր, կրթութեամբ բժիշկ, Վրաստանի բնիկ հայերից, որ մի քանի տարի քաղաքավլում էր եղել Թիֆլիզում, այերսօնա գրաքիսիմա փոխարքայի պալատում, Վորոնցովների օրով, տիզար ու գործօն ներկայացուցիչը հայկական այն հոսանքի, որ պահելով եւ ընդարձակելով հայերի գրաւած դիրքերը ամբողջ կովկասում՝ յոյս ունէր Ռուսաստանի օգնութեամբ կառուցանել եւ տաճկական Հայաստանը: Նա փորձւած, շատ բան տեսած, կենսուրախ, կարմրաթուշ մի գործիչ էր:

Մնացեալ երեքը մինչեւ այդ անդրկովկասեան քաղաքական գործերում համեմատաբար աւելի քիչ յայտնի մարդիկ էին, թէ եւ բոլորն էլ կոչւած էին կարեւոր գեր խաղալու իրենց ժողովուրդների ճակատագրի նկատմամբ: Ա. Քաջազնունին շուտով դարձաւ Հայաստանի վարչապետը: Մինչեւ այդ, Անդրկովկասեան Կառավարութեան մէջ, նա համարւում էր «պետական խնամատարութեան» նախարար: Խատիսեանը, Քաջազնունին եւ Մ. Հաջինսկին (այս վերջին երկուսը ձարտարապետներ էին) անդամ էին Զիննկէլիի կազմած կառավարութեան: Մ. Հաջինսկին մտել էր կառավարութեան մէջ առեւտրի եւ արդիւնաբերութեան նախարարի պաշտօնով:*)

Ազրբէջանցի երկրորդ պատւիրակը Ռազուլ-Զադէն էր, որ շատ աչքի ընկաւ Սէյմում: Նա անուն էր հանել եւ Պարսկաստանում, աշխատելով թէ հրանի մամուլի մէջ, պարսկական վերանորոգութեան նւիրւած գործիչների հետ միասին: Հիանալի զիտենալով պարսկերէն եւ տաճկերէն լեզուները՝ նա հէնց իր անձի օրինակով ցոյց էր տալիս, թէ ինչքան կարող են լինել կարեւոր եւ ընդարձակ Արեւելեան Անդրկովկասի քաղաքական կապերը, եթէ նա քաղաքականապէս զարգանայ:

ԳԼՈՒԽ Բ.

ԲՈՒՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

4 (16) ՄԱՅԻՍ 11-Ի ՆԻՍՏԸ

Այժմ անցնեմ բուն Խորհրդաժողովին, որի արտաքին նկարագը-րութիւնը շատ կարծ է լինելու. տեղի ունեցաւ ընդամենը մէկ նիստ, մայիս 11-ին, Բաթումի ակումբի շէնքում:

*) Բայց նախարարութիւնների բաժանումը լուրջ նշանակութիւն չունէր. այդ բաժանումները վերացան Անդրկովկասեան Կառավարութեան շուտ չբանալու հետևանքով:

Խալիլ բէյը արտասանեց տաճկերէն ողջոյնի խօսք՝ յիշելով Կովկասի գլամին ծագած «աղաստութեան չքնաղ աստղը», Տաճկաստանի փափաքը, բարի հարեւանութիւն հաստատելու մասին եւ այլն: Օրիսն բէյը (որ Բրեստ-Լիտովսկում էլ քարտուղար էր) կարդաց ճամփի Փրանսերէն թարգմանութիւնը:

Այսուհետեւ քննուեց Հիւսիսային Կովկասի լեռնականների հանրապետութեան ներկայացուցիչ Հայդար բէյ Բամմատի խորհրդաժողովին մասնակցելու թոյլտուութեան ինուիլը: Տաճկաստանում շատ կարեւոր կապեր ունենալով՝ լեռնական գործիչները, իրենց անկախութիւնը յայտաբարելուց յետոյ, շտապել էին Պոլիս, դիւանադիմական կապեր եւ ամէն տեսակի նեցուկներ որոնելու համար: Այն տեղ էր գտնւում եւ նրանց կառավարութեան նախագահ Արդուլ-Մէջիտ-բէյ Զերմուելը, ծագումով չեցն, կովկասեան հռչակաւոր «վայրի գիւղիկայի» նախկին սպայ, որ միեւնոյն ժամանակ գործի մարդ էր եւ Գրոզնու նաւթի հետ կապւած մէծ շահեր ունէր: Լեռնական պատւիրակների Պոլսից տաճիկների հետ միասին Բաթում խորհրդաժողովին զալու մասին հաղորդւած էր արդէն Վեհիբ-իաշայի այն հեռագրով, որով յայտնում էր, թէ Տաճկաստանը ճանաչել է անկախ Անդրկովկասի կառավարութիւնը (ապրիլ 15, հ. տ.): Լեռնականների հանրապետութեան համակովկասեան Դաշնակցութեան մէջ մտնելու կարելիութեանը ամենքը համակրանքով էին վերաբերում, եւ Հ. Բամմատի խորհրդաժողովին մասնակցելը, իւհարկէ, առարկութիւն չէր վերցնում:*)

Դեռ գործի շէինք ձեռնարկած, երբ պարզեց հիմնական տարակարծութիւն Անդրկովկասի եւ Տաճկաստանի պատւիրակութիւնների միջեւ՝ Բրեստ-Լիտովսկի գաշնագիրը բանակցութիւնների հիմք ընդունելու մասին: Զիննկելին՝ կրկնելով գեր Տրավիզոնում արած յայտարարութիւնը, թէ Անդրկովկասը լիովին ընդունում է այդ գաշնագիրը եւ կամենում է, որ նրա բնագիրը լինի բանակցութիւնների միակ հիմունքը, որպէսզի Անդրկովկասը ստիպւած չլինի հոգացին ողջումներ անել Տաճկաստանին, բացի Բրեստ-Լիտովսկի գաշնագրով նախատեսածից: Հնդհակառակը, Խալիլ բէյը, ընդունելով այդ յայտարարութիւնը ի տեղեկութիւն՝ մատնանշում էր գիւանադիմի վերսկսման վրա Տաճկաստանի եւ Անդրկովկասի միջեւ,

*) Լիազօրութիւնները ստուգող յանձնախումբը կազմւած էր՝ կոմս Շուլեմ բարդից, տանիկի իրաւագէտ Խուսեիտ-բէյից, Բամմատի եւ ինձանից (Անդրկովկասեան պատւիրակութեան կողմից):

այսինքն՝ նոր փաստեր, որոնց հետեւանքով Տաճկաստանն այլեւս համաձայն չէ, որ այդ գաշնազիբը համարւի միակ հիմք տեղի ունենալիք բանակցութիւնների եւ իրաւունք է վերապահում իրեն նոր պահանջներ առաջադրելու։ Ուստի, Խալիլ բէյ առաջարկեց որպէս բանակցութիւնների հիմք ընդունել տաճիկների պատրաստած հաշտութեան պայմանագրի բնագիրը, որ հէնց այդտեղ էլ ներկայացւեց։

Գերմանիայի ներկայացուցիչը սահմանափակւեց լոկ ի տեղեկութիւն ընդունելով Տաճկաստանի եւ Անդրկովկասի միջեւ ծագած այդ տարակարծութիւնը։

Ի վերջոյ, մեր պատւիրակութիւնը յայտնեց իր համաձայնութիւնը . . . ծանօթանալ տաճկական նախազծին եւ դրանով փակւեց խորհրդաժողովի նիստը։ Ի դէպ այս նիստին էր, որ անդրկովկասեան պատւիրակութիւնը առաջին անգամ ստացաւ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի պաշտօնական բնագիրը։

5 (17) ՏԱՃԿԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

«Օսմանեան կայսերական կառավարութեան եւ Անդրկովկասի Դաշնակցական Հանրապետութեան հաշտութեան բարեկամական դաշնագրի» տաճկական նախազիծը բաղկացած էր 12 յգւածից։ Դաշնագրին կցւած էր երեք յաւելած (ժամանակաւոր կանոններ առեւտուրի եւ ծովալին հաղորդակցութեան մասին. սահմանակցից վայրերի հաղորդակցութեան առանձին արտօնութիւնների մասին. դաշնագրի մեկնութեան առթիւ ծագելիք թիւրիմացութիւնները հարթելու կարգի մասին։

Վերջապէս հիմնական Դաշնագրիը լրացնող մի մաս, որ վերաբերում էր Տաճկաստանի այդ վայրկեանին ունեցած ուղմական շահերին։

Անկասկած, ամենից մեծ տպաւրութիւնը թողին Տաճկաստանի հոդային նոր պահանջները։ Նախազի մէջ մատնանշւած սահմանը վրաստանի համար նշանակում էր անջատումը նրա այն հին շրջանակի (հետագային ենթարկւած իսլամացման), որոնք Ռուսաստանին էին անցել 1828թ. Աղրիանապոլսի դաշնագրով եւ ամենասերա կերպով կապւած էին Թիֆլիսի նախկին նահանգի հետ։ Խոսքը Ախալցիայի եւ Սխալքալակի գաւառների մասին է. Վերջին գաւառի վրա, որ 19-րդ դարում բնակեցւած էր հայ գաղթականներով, աչք ունէր և Հայաստանը։

Հայաստանի համար նոր սահմանը համազօր էր համարեա կատարեալ ոչնչացման. Ալէքսանդրապոլը եւ Ալէքսանդրապոլի ու էջմիածնի գաւառների մեծ մասը – այսինքն, Հայաստանի, այսպէս ա-


սած, ամենից հայկական մասը – անցնում էր Տաճկաստանին, Կարս-Ալէքսանդրապոլ եւ Ալէքսանդրապոլ-պարսկական սահման հասնող երկաթուղազծով միասին։

Այսպիսի պայմաններում Տաճկաստանն իսկապէս ապահովում էր իրեն ոչ միայն քաղաքական հակակշխառ ամբողջ Անդրկովկասի վրա, այլեւ սահմանակից էր դառնում Աղրբէջանին ու Պարսկաստանին (այսինքն՝ պարսկական Աղրբէջանին) – այլ խօսքով, Տաճկաստանի մօտենում էր այն երկրներին, որոնց ազգաբնակութիւնը ծագումով ու լեզուվ թուրք էր։

Այսուհետեւ, տաճկական նախազծի կարեւոր մաս էին կազմում այն պահանջները, որոնք նպատակ ունէին դիւրացնել ուղմական դործողութիւնները Հիւսիսային Պարսկաստանում՝ անդլիացիների դէմ։ Գլխաւորապէս նկատի էր առնեած Անդրկովկասի երկաթուղազծերի շահագործումը այդ նպատակով, ինչպէս եւ Բագուի նաւահագստի (Հնարաւոր դործողութիւնների համար կասպից ծովի վրա)։

Յամենայն դէպս, հարցերը դրւած էին միանդամայն պարզ ու որոշ։ Ամենքի համար հասկանալի էր, որ տաճիկների պահանջները չպիտի մեղմացւին էական չափով, որ նրանց ուժով ընդդիմանալ մենք չենք կարող եւ որ այդ պայմանները ընդունելը հիմքից հարւածում է Անդրկովկասը, որպէս երեք ժողովուրդների միութեան, որովհետեւ նոր «սահմանագծումից» յետոյ Հայաստանից շատ բան չէր մնում։

(Շարունակելի)



ՄՈՒՐԱՏԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

(1915 թ. ՅՈՒՆԻ. — ՆՈՅԵՄԲ. 29)

1 Օգոստոս. — Սեւ Սար դ. Դիմաց : Երէկւայ Խոռզարկութիւնն եւս ապարդիւն անցաւ : Թնդանօթի մէկ մասը քաղաք տարին . հետն էր եւ զօրքը : Ժողովուրդը եւ ոստիկանութիւնը կը հետապնդեն հայերը : Անցուղարձի տեսակէտով շատ նեղ ենք : Անտանելի է դարձած . հաց չի կայ, ջուր չի կայ :

2 Օգ. — Ծակ քարի դէմ, Ագարակի վերեւ : Գիշերւան հաց պատրաստել զնացողները շատ տարօրինակ բաներ են . . . : Մեր ընկերներէն երեքը՝ Վարդան, Արմենակ, Նշան Փլեան եկան պարապ : Մելիքը ուրիշ տղայի մը հետ բերաւ 20ի չափ հաց, քչուկ մըն ալ ջուր : 48 ժամ ծարաւութենէ վերջը այդ ջուրը ոչինչ էր . մնացինք ծարաւ : Երկուական հաց ունինք, կերանք : Երկաթէ թիու թաթին վրան պատրաստած էր : Սեւ Բլուրից եկած մէկը կուզէ յետ երթալ . «Անտանելի է», կըսէ եւ ճիշտ է :

3 օգ. — Ս. Տանիար : Երեկոյեան ճամբայ ելանք դէպի արեւելք : Երեք ժամ վերջը տեսանք որ եկեր ենք արեւմուտք : Բարին այս է : Երեկոյին Ղարասար եկած զօրքը որ կողմը գնալը չենք տեսներ :

Սեւ Բլուրէն եկողը այս դիշեր փախաւ դնաց չդիմանալու արդիւնքն :

4 օգ. — Ս. Տանիար : Երկու օր առաջ մեզի հետապնդող զօրքը գնաց Ռւելաշ : Մնաց երէկի գնացածը :

Այս դիշեր եկան Սագաճոր դնացած ընկերները : Սագաճորէն որեւէ ձերբակալւած մարդ չի կայ : Ոստիկանները եւ զինուրները առատիկ կը խոռզարկեն լեռները : Ընկերները մէկ-մէկ քիչ ալիւր-ջուկ շաղւած արեւը ձգած են որ չորսայ ու ուտեն : Ջուր չունեցողն ալ զուտ ալիւր կ'ուտէ : Իսկ երէկ ոչ ալիւր կար, ոչ ջուր եւ ոչ հաց :

5 օգ. — Հարաւային կողմը, Մեծ Ակին վերեւ : Մինչեւ այժմ բան չի կայ : Հաց կ'եփենք Ս. Տաճարի կողմի գիւղանը : Կառավարութիւնը ոստիկաններ դրած է : Այսօր ամենէն հարուստ օրերնիս է : 424 հաց ունինք 24 չողով :

6 օգ. — Ս. Տանիար : Կարմիրակ գիւղին վերեւ, անտառին մէջ : Քոչերը կը շարունակեն զրկել : Խօսք կայ որ իբր թէ թուրքացող հայերն եւս պիտի զրկւին : Երեկոյեան ժամը 10ի մօտ մեղ մօտ զանւող մաղարայի ներսէն ջրի մարդ են զրկած . 3 ոստիկաններ նը-կատաւած են . հեռուէն հրացան արձակեցին . վախէն չի մօտեցան :

7 օգ. — Այդ փոքրիկ կասկածին վրան գիրքերնիս փոխեցինք : Հաց, ջուր ունինք : Տեղեկութիւնները չունինք : Սուրհանդակները գեռ չեկան : Այսօր անցաւ խաղաղ : Թուրքերը իրենց հունձքը կընեն իրենց փախստականներուն հետ : Կառավարութիւնը բան չըսէր : Հայ գիւ-ղերը աւերակ են . . .

8 օգ. — Ս. Տանիար, Ղարասարի դիմացը : Սուրհանդակները չե-կան : Որոշած տեղը մարդ զրկեցինք, չի կային : Գիշերւնէ անձրեւ-սկսեց մինչեւ ժամը 2: Անձրեւի ջրով տղերքը իրենց աղտոտ լաթեր-նին կը լւանան : Մաղարայինները իրենց անդրուշութեան պատճառով կերեւան գիւղացիններին, անոնք ալ հրացան կարձակեն . վազէ վաղ եկան մեղիղինք կամ օգնութիւն ինդրելու : Այն ինչ այսօր եկող չի կայ :

9 օգ. — Երէկի նկատւելուն պատճառով . . . անցանք . բոլորովին անտանելի էին ճամբանները, սողալով կանցնէինք :

10 օգ. — Կիւլավուկին արեւմտեան կողմը, Աղբիւրին վերեւ : 3 օր է անձանօթ ճանապարհներով կուգանք : Այսօր եւս նոյն վիճա-կին ենթարկւած ենք եւ ստիպւած ենք այդպէս ընելու : Ճար չունինք . ցամաք հաց ուտելով եւ շատ ժամանակ ալ հաց չի գտնելով բոլորս ալ տկարացած ենք : Վաղւան ալ հաց չունինք : Հայու Աստւածն ալ մնացած չէ :

11 օգ. — Լեռան գլխէն հեռագիտակով դիտածնուս չափով ճամ-բայ եկանք . 6 ժամէն աւելի դնալիք տեղերնիս քալեր, դեռ 5 ժամ ալ կայ մեր ճանապարհը : Ոչխարի հովիւր եկաւ մօտերնիս : Շունը եկաւ բովերնիս : Առանց մեղ տեսնելու գնաց :

12 օգ. — Ք. Ն. — Հայերի ցանքերը հասեր են ու շատերը պառ-կած են : Թուրք կառավարութիւնը քաղել կուտայ, կարծես իր սեփա-կանը լինի : Հարեւան գիւղերը աղըների փայտերը գողցեր-տարեր են . սայլերի հետքից յայտնի է : Այս դիշեր դէղերին քով կէս ժամ հստանք, ցորեն թափ տւինք . ցորեկով չենք կարող աղանձ ընելու :

13 օգ. — Ք. Ն. Ակերի վերեւ : Երէկ ժամը 4-ին քիչ մը աղանձ ըրինք : Ատով անցաւ դիշերը : Ընկերները գնացեր արտերը որանտ

ծեծեր-բերեր էին : Գիշերը ժամը 7-ին խոս խաչեցինք : Այսօրւան կերպակունիս ալ ատ է : Եթէ կարողանանք, ցորեկը աղանձ պիտի ընենք :

14 օգ.— Ք. Ն.— 4 օր է հաց չունինք : 3 օր է աղանձով կը բաւականանք : Այն ալ առանց վտանգի ձեռք չանցնիր : Բոլորովին ուժասպառ եղած ենք : Կազմուրելու համար սնունդի պէտք աւնինք : Աչքերնիս դաշտին վրա է, թէ անտէր մալ մը չի՞ մնացեր՝ երթանք ու բերենք :

Երեկոյ եղաւ : Ամենքը քաշւեցան տուները : Մենք մնացինք անտէր : Մեզմէ աւելի անտէրը չի կայ : Նշանը, Մելիքը եւ ուրիշ մը դրկեցինք միս բերելու : Կը պատահին երկու ձիաւորի : Զիաւորները կրակ կընեն հայհոյանքով : Պատասխան ստանալով կը կլորւին զետին : Նորից մնացինք առանց սնունդի : Մայիս 25-էն սկսեալ առանց աղի հաց ուտելնուս ուղեղնիս ալ, շունչերնիս ալ հոտած է : Աս ալ կանցնի : Ամէն ինչ կը տանինք, միայն թէ մենք մեր վրէժը լուծենք..

16 օգ.— Աստածածին Կիրակի : — Առաւոտեան հասանք եարասարի^(*) դիմացը : Աղանձը լեզուներուս վրա վէրք է բացած : Քայլ առնելու կարողութիւն չի կայ : Ժամը 10-ին ճամբայ ելանք : Բնկերներս աղատութիւն կամ մահ կը խնդրեն : Եռ մահ չեմ ուզեր . աղատութիւնը կուղեմ տեսնել...

17 օգ.— Հասանք զոլանիների վերեւի անտառը : Պատմել անկարելի է մեր գրութիւնը : Ջուր կայ՝ յամել չենք ուզեր : Աղանձ ալ չենք կարսող ուտել : Դէմէն հովիւ մը փրթաւ : Թէեւ հեռու էր, 4 ընկերներ վագեցին : 4 ժամ վերջը բերին 2 դառ : Կրակը վառեցինք . անմիջապէս քէպապ ըրինք :

18 օգ.— Գիշերը դրկեցինք Մելիքին, Նշանին, Ոսկեանին, Յովնանին : Քիչ գարի ալուր, 2 կոտ ցորեն, 15 հաւ, գլում, բանջար եկաւ : Տնտեսագէտ եղօն անմիջապէս կերակուր եփեց : Զայն տռաւ, տաք-տաք կերանք քալեցինք : Վերեւ օճախը վառեց, ջուրը տաքաւ . հաւերը մէջը կոխեց, կոխեց ու հանեց : Տղաների մէկ մասը հաւերը կը փետաէր, մէկ մասը ալիւր կը մաքրէր, միւսը խմոր կը շաղւէր : Նշան Փանոսեանը քարերով եարժալը կընէր, Մուրատեանը եւ Վարդանը՝ պահապանութիւն կընէին . Եղօն հաւերուն փորերը կը մաքրէր : Ժամը 6-ին ճանապարհ ընկանք : Մուրատեանը, Վարդանը եւ ես իջանք ջրի ափը լոգանք, որ բնաւ ալած բանիրս չէր եւ սխալ էր կէս օրին յոզնալ : Թուրքերը տեսեր եւ պոտացեր են մեղի, որ յանձնւենք, իսկ մենք երբեք լսած չենք : Բնկերները լսեր եւ անմիջապէս լուր տրւին մեղի :

19 օգ.— Զանախնի լեռները : Անտառին վերեւ : Այսօր ամենէն բարձր դիրքերէն մէկին զլուխը բարձրացանք. դիտեցինք ամէն կողմ : Շատ տեղ կերեւար : Ուտելիքնիս նորէն աղանձ է : Երեկոյեան ժամը 11-ին Ա. Միքայէլեանը, Նշան Փանոսեանը դրկեցինք հացի յոյներուն քով : Տեսնենք ի՞նչ լուր պիտի գայ :

20 օգ.— Զանախնի անտառն ենք, հիւսիսային կողմը : Երեկոյեան փոխագրւեցինք անտառը, որ բաւական խիտ է : Կուղենք անցնիլ ուռւական սահմանը : Հաց չունինք : Առաջնորդ չունինք : Սահմանը կը քաշէ 90 ժամ, այն ալ պատերազմի թատերաբեմ : Վերջը բարին թող լինի :

21 օգ.— Անտառին մէջ վարի սաքուն փոխագրւեցինք . գիշերը անձրեւ էր : Առաւոտուն պահպանը հեռաղիտակով տեսած էր . տեսանք՝ փախստական զօրքեր : Կուղենք անշուշտ բռնել : Հեռուէն շեղեցան անտառները : Մեր լրաբերները չեկան : Սովորական հացերնիս աղանձ է :

22 օգ.— Զանախնի անտառն ենք, հիւսիսային կողմը : Զորսընկեր դրկեցինք հացի դէմերնիս գտնւող ջրաղացը : Երեք յոյներ սիրով կընդունին, հաց կուտան : Խօսք կուտան՝ որչափ որ ուզենք, այնչափ բերեն : Ի հարկէ, դրամով : Յանկարծ ներս կը մտնեն վեցթուրք փախստականներ : Բնկերները թուրք կը ձեւանան ու 2 կոտ ալիւր կառնեն ու կը հեռանան : Սուրհանդակները եկան :

23 օգ.— Սուրհանդակների խօսքին նայելով՝ հայ փախստականներ շատ կան եւ խօսք տւած են այսօր անպատճառ կանչելու : Անտառին վարի ծայրը կը մնանք : Ժամը 6-ին 9 թուրքեր մէկ-մէկ քովերնիս եկան : Նախ՝ Եղօն հիւսնդ էր . կանուխ կրակ վառելնէս եկած են : Պահպաններու անդուչութենէն քովերնիս եկան՝ նոր իմացանք : Մէկ-մէկ փախստական . . . :

24 օգ.— Գորտէփին դիմացը : Հիւսիսը : Բարձր դիրքին : Տակը խանը եւ ճանապարհը կերեւին : 9 թուրքը անպատճառ բոլորին չէինք կարող բռնել : Իսկ այսօր 60-է աւելի զօրք մէկ-մէկ ելաւ . 15-ի չափ ալ սստիկան, եւ գնացին Զառա : Մեր կարծիքով խուզարկութեան եկած էին այս կողմերը եւ յետ կերթային : Սուրհանդակները դրկեցինք երեկոյեան : Պատասխան չի կայ : Տեսնենք այս երեկոյ :

25 օգ.— Նոյն ատառին արեւելքը : Որոշւած տեղը գնացողները չի գտան : Գիւղն ալ չեն գտեր ու յետ եկան : Սուրհանդակները չեկան : Որոշւեց 3 ընկեր եւս զրկել : Կը դրկենք : Հաց չի կայ : Ա-

դանձն ալ չի կայ: Նորից յոյս ունինք թէ յաջողութիւն մը կըլլայ: Փափազեանի ծունկերէն կարկտան չի դանելու պատճառով Փի- լիկ այծին մորթին կարկտան ըրաւ, իսկ յետեւի կողմը պարկով կար- կըտան է ըրած, տարօրինակ բան մըն է դարձած: Զգեստները բո- լորն ալ համարեա նոյնն են:

26 օգ.— Ղզըլթէփէի գլուխն ենք: Յոյները շատ լաւ վերաբե- րում ունին: Մեր այս կողմերը ըլլալը իմացեր է թուրք կառավա- րութիւնը: Մէկ-երկու տեղեր ալ խուզարկած է: Սուրհանդակները եկան յաջողակ: Թուրքերը քաշւեր են կարին: ... Դաշնակիցները Պոլիս մտած են, կըսեն, Քոսաղաղ ալ դիրք կը շինեն եղեր:

27 օգ.— Այս գիշերաւան ճամբաներէն դարձանք՝ լսելով, որ ա- ռաւտօտ խուզարկող կայ: Գիշերը Սովորւի Փուարին տակը եկանք: Թիկերին տակէն ձայն կուգար: Մօտեցանք, լսեցինք. միայն հիւանդի տքոց մը կար: Վերջապէս չի մօտեցանք: Անցանք վերը սպասեցինք: Լոյսը բացւաւ: Դեմերնիս դինւած մարդիկ կային, ոչխար կար: Լաւ մը լուսցաւ. տեսանք, որ հայ են: Գնացինք քովերնին, քաջալերւե- ցինք էն վարի հիւանդներէն: Եւ ուրախութիւն եւ կակիծ էր:

28 օգ.— Ղզըլթէփէի հարաւային կնդմը, Սարուն: Այսօր շատ- ուր ենք: Յ ոչխար մորթեցին, լաւ կերակուր կար: Ովսաննա անունով օրիորդ մը կայ, հաց կեփէ: Համեստ է: Թուրքերը փախուցած էին. այնտեղից փախած է: Շատ ազնիւ է, քայլերուն մէջ ճարպիկ: Ի- դական սեռի տղամարդկանց մէջ գտնւելը որոշ նշանակութիւն ունի. մարդիկ կը զգուշանան անկարգ խօսք խօսելէ: Շատ եւ շատ տեսակ- ների համար իր օգուտները ունի:

29 օգ.— Նոյն դիրքերն ենք: Բաւական կազդուրւած ենք: Սուր- հանդակներ զրկած ենք երկու կողմ: Մէկ կողմէն եկան, միւսէն զեռ չեկան: Գուցէ մատներ են... Անոնք ալ եկան: Լուրերը լաւ են: Յ հոգի եւս եկան: Պատահեցին եօթը փախստականներ, 4ը բոնեցինք, 3-ը փախան: Թուրք ճեւացանք. պատմեցին, թէ որչափ ոճիրներ եւ բռնարարութիւններ կատարած են: Պէտքը կարգադրւած է...

30 օգ.— Ղզըլթէփէին հարաւը, անուառը: Նոյն դիրքին մէջ Բնարեցինք Յ տասնապետ, մէկ խմբապետ: Տասնապետների թիւը եղաւ 4: Տղաների թիւը 40-ի մօտ է: Այս երեկոյ պիտի զրկենք ընկերներին մսացուի, որ իրենց ման է. ուրիշները, այսինքն քրտե- րը թալանած տարած են: Եկած լուրերը լաւ են: Կը խօսի կարնոյ անկումի մասին: Խոտիւ զօրքեր կը դրկեն:

31 օգ.— Նոյն դիրքերն ենք: Լուրերը միեւնոյն տեսակի են. Կարնոյ անկումը կը ճշտեն: 40-50-ի չափ գերմանացի զապիթներ յետ են եկեր. ինչո՞ւ համար է - անհասկնալի է: Զօրքի սրաքումը նոյն խստութեամբ կը շարունակւի: Ամէն երեկոյ սուրհանդակներ կեր- թան-կուգան: Հայը անմիաբան է, կըսեն. սուտ չէ: 2 օր է իրարու քով ենք. սկսեցին խոռվիլ իրարու:

1 Մեպտեմբեր.— Ղզըլթէփէի հարաւային կողմը: Նոյն լուրե- րը. իբր թէ սուսները հասած են Մամախաթուն. 80 հազար գերի են վերուցած, 800 եղան սայլ, 3000 ուղտ, եթէ ճիշտ է: Մեր աղերքը հանդստութիւն տեսան, իրար կոտորել սկսեցին: Մոլոչսը կուղէ, որ հեռանանք ուստական սահմանը, առանց վելատի, առանց առաջ- նորդի: Աստւած չանի:

2 սեպտ.- Գիշերը անդգուցութեան պատճառով սուրհանդակնե- րը կրակեցին մէր վրա: Որչափ որ ձայն տւինք, օգուտ ըլլաւ: Վե- րատորւեցին Ս. Բ. Պ.: Պայլուշութիւն. իրենց յիմարութիւնն էր: Այսօր իբր թէ խուզարկութիւն պիտի ըլլայ մէր դիրքը:

3 Մեպտ.— Քարին տակը: Պատահեցինք պառաւ կնոջ մը: Հար- ցուց' ի՞նչ էք: Պատասխանեցինք՝ հայ ենք: Սկսեց միսիթարել եւ պատուիրեց, որ չի վախենանք: Լաւ վերաբերում ունին. հաց բերին, ջուր բերին:

4 Մեպտ.— Այս առաւտօտ Սեւ լեռը ելանք: Եկան Յ հոգի: Տես- նըսեցինք, խօսեցինք շատ լաւ կերպով:

5 Մեպտ.— Սեւ անտառը. Արեգին: Առաւտեան դէմ երազ տեսայ, որ ինձ կը կարգեն: Առաջս հեղեղ մը ելաւ: Ալիւր կաղային, եւ տեսայ Աստղիկ ձիս ուժեղցած, իմ ձեռքս բռնած էի: Անիշապէս տղերքին իմաց տւի. ելան, չորս կողմ պաշարեցին. բերին 6 գօրք: պատմեցին իրենց գաղանութիւնները - զրկեցինք: Մէկն եւս եկաւ, նոյն դրութիւնը - զրկեցինք: Գնացին:

6 Մեպտ.— Նոյն դիրքը: Քաղէքի գիւղացիք այնչափ անգոյլ են, որ հովիւներ գիւղացին չէրչի ալ եկաւ եւ գեռ չեն ուղեր վոխա- դըրւիլ: Զարմանալի մարդիկ ի զուր չէ, որ կըսեն՝ գլխաւոր պատ- ճառը անգոյլութիւնն է: Գիշերը բռներ են 8 մարդ, 2-ը յոյն լինելու պատճառով ուղեր են ճամբու գնել. միւսները յարձակեր են, մեր հրացանը առեր ու փախեր են: Խուզարկութեան պատճառ է...

7 սեպտ.— Սեւ անտառին Արեգին ֆարէն վեր: Այսօր եւս Յ փա- խըստականներ եկան - զրկեցինք: Եռնունի յոյներ այստեղ հայ

կայ կըսեն : Գնացող-եկողը թուրքեր են : Երեկոյեան զրկեցինք . գնացինք բերին 7 հատ ոչխար : Բաւական կազդուրեւեցինք այս քանի օրս : Փախստական թուրքերը հայի կը պատահին , կուզեն սպանել : Խնայել ալէտք չէ եւ ոչ մէկին . հայերի գլխին բերած չարիքներէն քարերն անգամ կը դողան :

8 Սեպտ .— Այսօր աւելի խորը քաշւեցինք : Թաղիքի Արտէնը փառասիրութիւնից եւ շահամոլութիւնից դրդած սկսաւ մեր վրէժինդրութեան արգելքներ ըլլալ : Ստիպած հեռացանք : Առաւոտեան կողմը ձայն եկաւ : Խմաց տուին , գնացին-բերին մէկ հատ զօրք : Ղրկեցինք գնաց : Այսօր բոլորովին լուռ ենք : Կրակ , ճրագ չունինք : Գրկերը երիտասարդներէն մէկը Խաչիկ անունով կուլար եւ կաղաչէր , որ յետ տանինք , բայց ուր - ոչ ինքը գիտէ , ոչ ալ մենք :

9 Սեպտ .— Սեւ լերան հարաւը : Այսօր եկան քովերնիս աղջիկան զիւղէն 4 յոյներ . 3-ը զինւած են տաճկական հինգնոցներով : Սպաներ են մէկ հատ փախստական զօրք . կուզեն մշտնջենապէս միասին լինել : 2 հատ եւս բոնեցինք եւ ճամբու գրինք-գնացին : Անզէնը գնաց :

10 Սեպտ .— Քոսէ Տաղին հիւսիսը : Գոմերը վառեցինք ու նըստանք : Սառախուղը պատած է . աչքը աչքէն չի տեսներ : Ոտքերնիս թաց էր . չորցուցինք , հացերնիս կերանք ու հանդիստ ենք : Երեկոյեան զրկեցինք սուրհանդակները լուր եւ հաց բերելու :

11 Սեպտ .— Քոսէ Տաղին հիւսիսի գոմերը : Գրկերը եկան 3 ընկերներ , բերին 2 ... Սուրհանդակներ ալ եկան : Պահապանները լուր տուին 15էն աւելի մարդոց դալը : Անմիջապէս քարը բարձրացանք : Հեռաղիտակով որոշեց , որ փախստական հայեր են . եկան : Ժամը 5-ին եկաւ Եռուոփ պէյ . զարկինք-ընկաւ :

12 Սեպտ .— Ղայլասարին դիմացը , անտառին մէջ : Մնացինք հանդիստ : 3 տեղ հայ փախստականներին ջարդէ ազատեցինք . 3 տեղ ալ մեր դէմ խարերայութիւն բրին ... Քէչիւրդցիք ամէնքը անցան : Այսափ խայտառակ ... Գրկերը կերթան մեղի համար պաշար պատրաստող ընկերներին քով , խարերայութեամբ կառնեն դէնքը :

13 Սեպտ .— ... Արեւմուտքը անտառին մէջ : Քէչիւրդցիք իրենց պահւած տեղերնին լաթ կը փոեն . թուրքերը կը տեսնեն . ոստիկաններ կը հասնին : Բոլորն ալ կը թողուն Արսէնն ու կը փախին : Եկան մեղի մօտ . թուրքերն ալ ետեւէն : Կոիւ սկսաւ : Սպանած քիւրտին հրացանները տուինք իրենց . խարելով մեր զէնքերն ալ կառնեն , հացերնիս , աղն ալ ու կը փախին : Այսափ Արբութիւն պատմելը շատ ծանր է :

14 Սեպտ .— Զերմուկին դէմը : Գրկերը եկած տեղերնիս պատահեցինք 23 անտէր ոչխար . վերուցինք 6 հատ : Հասանք Զերմուկին գիմացը , բոլորն ալ մորթեցինք ու պատրաստեցինք : Առատ կերանք ու պաշար առինք : Բեռներնիս ծանր էր . յայտնի էր , որ ճամբան չէինք կարող կտրել :

15 Սեպտ .— Քրտաց զիւղին արեւմուտքը , բլուրին վրա կը ակլառեցինք ու նստանք :

16 Սեպտ .— Տաւանդարիսին վերեւի քարին վրան , ամենէն բարձր տեղը , հիւսիսային կողմը :

17 Սեպտ .— Ղարու Արգին վերեւը : Մեզի յայտնի չէ , թէ այս տեղի հայերը ինչ եղան . միմիայն լսած ենք հանելնին : Հաց չունինք : Ճամբորդ մը պատահած էր . պլղուր , ոսպ , հաց , տոմաթէս , սոխ եւ տանձ առեր են . այս ալ անցաւ :

20 Սեպտ .— Տէքէէն վերեւ , անտառը , հիւսիսի կողմը : Վարդանէն վերջ Արմենակը բոնւած է հիւանդութեամբ . Հէրէգէն Քոռ գալուստն է ասում ... 40 ընկերներ կը պտտինք : Թուրք կառավարութիւնը հարիւրներ կը ծախսէ . ժողովուրդին գլխագին դրած է՝ 8 համը 5 զրուշ :

21 Սեպտ .— Հացի գնացողները պարապ եկան : Մսի գնացողներն ալ պարապ եկան : Այսօր պաշար չունինք : Առաջնորդ ալ չունինք : Յոյները սարսափած են , շատ գիւղեր տղամարդ չկայ :

Տրանտափիլը այծ մը բերաւ , կերանք կէս օրէն վերջ :

22 Սեպտ .— Հենտիկ Փուարիի վերեւ : Անտառին մէջ , առուէն վերեւ : Հացի գնացողները յաջողակ են , սակայն մէկը եկաւ 2 ... քուզէն : Կէսօրէն վերջ հացն ալ եկաւ : Պասկացի Տղոմն (°) ալ եկաւ . մորթած տեղէն փախերէ :

23 Սեպտ .— Դրամով շատ գործ կը տեսներ : Յոյն ժողովուրդը զրամով տարւած է . մէկին տեղ տասը կառնէ , բայց գործ կը տեսնէ : Մեզի մօտ ալ այդ չի կայ : Ինչ որ կապսլը չէ կըսէն : Այսօր գիւղը մնացինք :

24 Սեպտ .— Հենտիկ Փուարի զիւղին վերեւ : Ճիհանեան . . . աղջըկան մէկը , Սրբուկ անունով , կուպէ յոյն վաճառական տղին մէկը տանել . թուրքերը չեն տար . աղջիկը կուսակալին առած 20 աղջիկներուն հետ էր : Աղջիկը փախած եւ մտած է յոյնի մը տուն ընկերութիւն հանդիսաւ :

հիներու հետ : Թուրքերը կուզեն առնել - չեն համաձայնւիր : Զամլլ-պին մօտ կը սպանեն բոլոր աղջիկները :

25 Սեպտ .— Գիւղին մէջ : Հիւանդ ընկերները բացարձակ արգելք կը լլան ձամբորդութեան : Յոյները 5 ժամ ձամբայ տանելու համար կուզեն 3 լիրա : Մեղ մօտ 20 լիրա հաղիւ մնաց : Սախուած ասպասութեան պիտի սկսինք, որը մէր ձամբորդութեան կարող է արգելք ըլլալ : Վերջերնիս բարին : Յոյներին խօսքին նայելով՝ բաւական փակըստականներ կուզան հաց ուզելու . իրենք ալ երես կը դարձնեն : Մէկ քանիսը նստեր լացեր են իրենց մօտ՝ հաց խնդրելով :

26 սեպտ . . . փոսը : Այստեղ խօսք տւին գտնել Ք . Գ . : Այսորւան մնացած գիւղերնիս թուրքերը ամենէն շատ ճնշած են : Միեւնոյն ժամանակ ամենէն լաւ վերաբերումը ունին դէպի մեզ :

27 Սեպտ .— Հ . Ճ . Խ . Ն . առաջնորդ են : Սոսկալի գիշեր : Այն-չափ չարչարեց, որ բոլորս ալ յոդնեցինք : Տղերքին թուլամորթութեան պատճառով 2 հատ վերարկու ջուրը տարաւ :

28 Սեպտ .— Զ . Թ . Փ . Բ . : Առաջնորդնիս բոլորովին անդիտակ . լուսանալէն վերջ 4-5 տեղ փոխել տաւաւ :

29 Սեպտ .— Դիմացը . անմարդաբնակ գոմերը : Տեղը չի գիտենք : Հացերնիս ալ հատաւ :

30 Սեպտ .— Ղզընանի : Անձրեւ լինելու պատճառով չի կարո-ղացանք ձամբայ ենել : Պառաւը պարկած էր . մեռնելէն շատ կը վա-խենար : 70 անց է : Աղքատ : Ուսելիք չունի : Իր ամուսինը աւազակ է եղեր : Ուրիշ կին մը առեր է, որ իրեն զարկեր է, ինքն ալ՝ ընկե-րոջ : Ծերը նորից ամուսնացեր է : Մարդը մեռեր է : Դեռ այս աշ-խարհը ապրել կուզէ :

1 Հոկտեմբեր .— Ֆնտրքի պիտի ըլլայ այս գիւղին անունը : Առ-հասարակ գիւղացոց ժամին չպէտք է հաւատաւ . 2 ժամ է ըսին՝ 6 ժամէն եկանք : Ոտքերէս մինչեւ գլուխնիս թաց էր : Մտանք գիւ-ղը : Չորցած ենք :

2 Հոկտ .— Ղելէշլեր գիւղը : Այսօր ժամը 4-ը հաղիւ կը ցանք տեղ մը գտնել ու հանգստանալ Սուրմալի Ղզի Մարիայի մօտ : Տարի-քը չի գիտեր : 70 անց է : Խրճիթ մը նստած է՝ հաւնոցի մը չափ, ան-տառին մէջ . գոմ չի կայ, բացի ակունքէն . ամբողջ տունը 25-30 դը-րուշ արժէ :

3 Հոկտ .— Պէքալան գիւղ : Անձրեւի պատճառով չի կը ցանք գը-նալ : Ընկերները թողուցինք հոս : Վերաբերումը լաւ է : Այսօր բաներ են 2 հայ կին 2 ծծկեր երեխայով :

4 Հոկտ .— Սարջ Քիլիսա գիւղը : Կառավարութիւնը սաստկա-ցուցած է թէ հայերի և թէ յոյների վնտուումը, ի հարկէ, հայերը սպանելու, յոյները իրը զորք դրկելու համար : Հայերի դրութիւնը բոլորովին անտանելի է :

5 Հոկտ .— Ֆնդինուք գիւղը : Կաղին : Լաւ վերաբերում ունեցան : Դրամը ամէն գործ կը տեսնէ . կուզես աղդել՝ դրամ ցոյց տուր : Այս տեղ լաւ կը պահեն :

6 Հոկտ .— Կանաչ գիւղ : Հասուն մարդ կայ : Համակրող կերե-ւին մէր ձեռնարկելիք գործին համար :

7 Հոկտ .— Գործերնիս շատ-շատ հանգիստ է . լաւ կը նային, պէտքէն աւելի : Խստիլ ըսւած . . . չափազանց լաւ կը պահէ :

10 Հոկտ .— 3 օր է հիւանդ եմ :

17 Հոկտ .— Այսօր գիշերս եկաւ կանաչ գիւղի Պէտլիան : Ըրած բարիքը երբեք մոռնալիք բան չէ : Անկեղծ վերաբերում :

18 Հոկտ .— Տարօրինակ մարդկութիւն է . իրենք ճնշւած են, կուզեն նորից ուրիշին խարեւ : Նախանձ, չար, ատելութիւն :

19 Հոկտ .— Տղերքը այս գիշեր եկան . բերին 2 հրացան յունա-կան, մէկ որսորդական, 4 ատրճանակ . արծաթեղէն զարդեր կանանց վերաբերեալ . բոլորը հայերի տներէն թալանած ըլլալը պարզ է : 40 սոկի ալ դրամ :

23 Հոկտ .— Զամալ գիւղ . Կոստանդինի Գալանեանի տունը : Կը-սիւր սկսեց առաւօտ 12 ժամին : Մենք նպատակ չունէինք կուի . Նախ՝ ես հիւանդ էի . երկրորդ՝ գիւղը պիտի քանդէլը . երրորդ՝ հայ փա-խստականների դրութիւնը անտանելի պիտի դառնար : Կոստանդինը սինդեց, որ առանց կուի քաշել չի լինիր, իսդիլ համաձայնեց . մենք ակամայօրէն համաձայնեցինք : Սպանւեց 6 ժամդարմա : Գլա-ւորը Աղիդ օնտաշին, ամբողջ շրջանին ծանօթ աղւէս, քրիստոնէու-թիւնը փացնող : 2-ին զէնքերը առնւած են :

25 Հոկտ .— Պտուկեղինի եւ ամանեղինի գիւղը : Լաւ հանգիստ տուին :

26 հոկտ.— Նոյն գիւղը մնացինք անձրեւի պատճառով։ Տահտէրը շատ լաւ է։

27 հոկտ.— Ղոնայ Տաղին տակը։ Աղքատ եւ շատ սկեպտիկ ժողովուրդ։ Կառավարութեան սարսափը շատ։

28 հոկտ.— Նոյն լերան արեւմտեան կողմը։ Լուր եկաւ, թէ սստիկանները բանաբարեր են յոյն կիները։ Կիների մէկ մասը փախած եկած է։ Երեկոյեան լուր եկաւ, որ Ղարասունկու գիւղին ժողովուրդը մեզ մատներ է այս կողմը անցնելիս։

29 հոկտ.— Քաշւեցինք լեռը, հիւսիսային կողմը։ Ծովը կերեայ։ Որոշեցինք գիշերը մնալ հոս բացօղեայ։

30 հոկտ.— Գիշերը ցուրտ էր։ Ես ծանր հիւանդ՝ սաստիկ կը մրսէի։ Պ. Փափաղեանէն այծին մորթին ուզեցի տակս ձգելու համար։ Հիւսկ ինք իմ 2 եղբայրներս եւ եղբօրս տղան ինձնից բաժանեց հազար ու մի պնդումով։ Սալանւեցին երեքն ալ։ Է՛յ, աշխարհ, ապերախտ մարդիկ։ Երեք հոգի զոհեմ ընկերի համար՝ մէկ մորթին չի տայ…

31 հոկտ.— Շինեցինք խրճիթ մը կը կաթէ։ Մինչեւ լոյս ջրին մէջ մնացինք։ Առաւօտը լուսացաւ. լաւ մը շինեցինք խրճիթը։ Սուր-հանդակներ եկան. Վարդանին չի բերին։ Նաւակին լուրը եկաւ։ Վերջը տեսնենք։

1 Նոյեմբեր.— Նոյն խրճիթը մնացինք։ Լաւ ալ ջուր մը ելաւ մէջէն։ Կառավարութիւնը խստացած է ամէն կողմը։ Յոյները կը սարսին։ Կը սպասենք վերջնական լուրին ճամբորդութեան մասին։

2 նոյ.— Ծիր լերան արեւմտա-հիւսիսը։ Շինած խրճիթն ենք։ 20 սստիկան եկեր են մօտակայ գիւղը։ Կըսեն՝ խօսւածները իրականութենէն շատ հեռու են։

3 նոյ.— Երեկոյին եկած էր՝ ... կուզէր դրամ զարնել ճամբաները։ Կապեցինք եւ ճամբայ դրինք-զնաց։

4 նոյ.— Կոստանդինը բոլորովին տղէտ ըլլալը յայտնեց եւ այնշափ զոհողութիւններս չի ուզեր գիտնալ։ Շատ դժւարութեամբ դըրամով եւ այլն ճամբու դրինք։

5 նոյ.— Այսօր լոյսը չի բացած դիրքերնիս փոխեցինք։ Անձրեւի սստիկութեան պատճառով ժամը 12-ին դարձնանք խրճիթը։ Ն. Մուրատեան կորած էր։ Գիշերւայ կէսին եկաւ առաջնորդով։

6 նոյ.— Ծիր լերան հիւսիսը, խրճիթը։ Այսօր լցւեցան խրճիթը։ Լուր եկաւ. բոլորը ճամբու դրինք. մէնք ալ ճանապարհ ելանք։ Ժամը 12-ին երեկոյեան հասանք Աղբիւրը։

7 նոյ.— Յունական Փ. Գ.։ Մինչեւ երեկոյ հանգիստ ըրինք։ Երեկոյեան մեկնեցանք ծովափ։ Ալիքները մեզ արգիւցին մեկնիւ։ Վերապարձանք. գուռ մը շատ ծեծեցինք, անհնար եղաւ բանալ։ Յետոյ մտանք մարագ մը։

8 նոյ.— Առաւօտեան Գ. Վասիլին հետ աշխատութեան համար մտանք տուն մը. կը սպասէինք։ 8 ժամին մէկ սստիկան եկաւ. բոլորը իրար անցան։ Մինչեւ երեկոյ մեզ հանգիստ չի թողուցին։ Իստիւր յուսահատած է, չի ուզեր երթալ, կուզէ յետ դառնալ։

9 նոյ.— Այս գիշեր բոնի կերպով նստանք առագաստանաւ մը։ Կրկու ժամէն հաղիւ ջուրը ինցուցինք։ Բանեցինք 4 նաւակար թուրքէր։ Ժամը 9-ին բացւեցանք հովիւրին։ Օղը բաւական լաւ էր։ Ընկերներէ իստիւր կասկածելով՝ չեկաւ։

10 նոյ.— Այս գիշեր շատ մը պնդումէս վերջը, որ ցամաքէն հեռու մնանք եւ չի լսելուն պատճառով ցամաքին շատ մօտենալուն հետեւանքով թուրք նաւակարներէն մէկը փախաւ. յոյն նաւաստիներէն մէկն ալ բաւական յիմար է։

11 նոյ.— Բաւական մտանք ծովին խորքերը։ Հով չի լինելու պատճառով ամբողջ օրը կորուցինք։ Պատճառը ես եմ։ Երեկոյեան կողմերը ինչանք ափի մօտ եւ սկսեցինք առաջանալ մինչեւ Օրդուին դէմ։

12 նոյ.— Այս գիշերւայ ժամը 10-ին հասանք Կիրասոնի դէմ։ Մինչեւ երեկոյեան կաշխատինք հասնիլ Տրապիզոն, եթէ Աստւած կամենայ։

13 նոյ.— Բիզայի առաջ։ Ժամը 7-ին չոգեմակոյկը զօրք լցած հասաւ մեզ, յարձակւեցաւ մեր վրա։ Մենք պատրաստ ենք բուռն կըրակ. իրենք վրան են։ Մինչեւ այդ ժամանակ Եղօն եւ Փէթրէն պարկած են^{*)} մէկ գնդակ։ Մեր խիստ կրակէն ստիպւած փախան։ 10-ի չափ թուրքեր սպանւած կային։

14 նոյ.— Վիցայէն 2 չոգեմակոյկ մեր յետեւէն ինկան 4 ժամու չափ, չի կրցան հասնիլ. ժամը 7-ին յետ դարձան։ Իրականութիւն

*) Եպոյի վերքը ծանր էր. գիշերը ժամը 7-ին մեռաւ։

է, որ թուրք նաւապետնիս՝ Ալի Ռիզէ՝ միշտ մեղ թակարդը ձգել կուզէ. ևս կուզէի գնալ ծովը, իսկ ինքը միշտ ցամաք կը քաշէր:

15 նոյ.— Արեւելքի քամին չի թողուց մեզի առաջանալու: Բաթումի լեռները կերեւային, բայց անհարին եղաւ հասնիլ: Գիշերը բէկ Ալի Ռիզան մեզի յետ դարձուցած էր: Պահապան տղաքը մեզի իմացուցին: Ելանք, նեղացանք խիստ կերպով: Այս անգամիս ստիլ-ած ճամբայ ինկաւ եւ սկսեց առաջանալ: Այդ օրն ալ այդպէս անցաւ:

16 նոյ.— Երկուշաբքի: Այս գիշեր նաւապետնիս նորից յետ դարձած էր: Պահապան տղաքը մեզի իմացուցին: Նորից սպառնացինք, տարաւ առաջ: Առաւօտեան ժամը 8-ին հասանք Բաթումի նաւահանգիստը: Բերդի պահապանները մեզի կանչեցին: Դուրս ելանք: Անմիջապէս մեղ զինաթափ ըրին: Բոլոր գինքերնիս յանձնեցինք*): Շատ յարգանքով վարւեցին մեղ հետ: Մեղ տարին գերիների եւ աշխատող զինորների մէջ: Թուրք գերիները վարի յարկն են, իսկ մենք՝ վերի:

17 նոյ.— Այսօր առաւօտ մեղ տարին բաղնիք եւ յետոյ՝ քննութեան: Նաւապետ թուրքը վրանիս զանգատած է եւ ըսած է, թէ 2 տղոց ես սպանեցի եւ ծովը ձգեցի եւ-այլն: Յոյներին յոյն քննիչը քննեց, հայերին՝ վրացի: Մեր բերած գերի թուրքերին զատ քննեցին: Հեռադիտակնիս խստիւ կուզեն. ստիլւած զրկեցինք:

18 նոյ.— Ընդհանուր հրամանատարը կանչել տալով՝ ինձ կառաջարկէ մնալ իրեն քով: Ես մտադիր չեմ համաձայնելու: Նախ յոդնած եմ, կուզեմ մի քիչ հանգստանալ, միեւնոյն ժամանակ՝ ազատ ապրիլ:

19 նոյ.— Նորէն ինձ կանչեցին շտար: Առաջարկեցին՝ լաւ ոռ-ձիկով մնամ ընդհանուր հրամանատար Լեախովի հրամանատարութեան տակ: Ես միջոց խնդրեցի. 2 օր ինձ միջոց տւին մտածելու:

20 նոյ.— Նորէն կանչեցին: Ես պատասխանեցի թէ առ այժմ

). Ցանկը Մուրատը կազմած է առանձին քերքի վրա: Ցանձնած գեներալ էլեմ.՝ 5 հատ տաթիկան 5 հարտածանի հրացան. 7 հատ մանլիխէր 5 հարտածանի հրացան. 2 մատուցէր ատրիսնակ, տասը հարտածանի. 2 ամերիկեան ատրիսնակ, մէկը Կուտ, միւսը՝ Ըսմիտ Վիսոն. 2 հասարակ ատրիսնակ. 2 ծալովի դաշոյն. 3 դամա. 2 հեռադիտակ, մէկը՝ Ցէյս 7-8. 2000 տաթիկան փամփուշտ. 500 մանլիխէրի փամփուշտ. 330 տաթուցի, 100* Կոլտի, 60* Ըսմիտ Վիսոնի, 100* յառակներ. 14 կաշիէ մոսկուր փամփուշտակալներ. 15 հասարակ փամփուշտակալներ. 4 զրի աման. 2 տասը կրականցի պատեան:

չեմ կարող այդպիսի պաշտօնի մը մտնել: Թոյլ տւին: Թուրքիոյ մասին իմ տւած տեղեկութիւններս ազդած էին: Լաւ նայիլ սկսեցին: Ես հիւանդ էի դրկեցին հիւանդանոց:

21 նոյ.— Հեռագիր եկաւ Խատիսեանէն մեղ բաց թողնելու: Այսօր մեզ արձակեցին: Հայ ժողովրդի ուրախութիւնը շատ էր: Կանանց Միութիւնը ճաշ տւաւ: Մեր հայրենակից Վարդանը շատ լաւ հոգ տարաւ մեզ: Բայրութացի Միսակը մեզի գետին կոխել չէր տար: Մեպուհին ուրախութեան սահման չի կայ. Նոյնպէս իմ: Գիշեր-ցորեկ իրարու հետ ենք: Նոյնպէս եւ Մարտիրոսը եւ շատ-շատեր:

22 նոյ.— Ընկերներին գործի զրինք Բաթում, որպէսզի իրենց աշխատանքով ապրին, բեռ չըլլան ուեւէ մէկին վրան եւ մի քիչ ալ կազդուրելուն, խիստ յոդնած են:

23 նոյ.— Չառագիր եկաւ Խատիսեանէն մեղ բաց թողնելու: Այսօր մեզ արձակեցին: Հայ ժողովրդի ուրախութիւնը շատ էր: Կանանց Միութիւնը ճաշ տւաւ: Մեր հայրենակից Վարդանը մեզի գետին կոխել չէր տար: Մեպուհին ուրախութեան սահման չի կայ. Նոյնպէս իմ: Գիշեր-ցորեկ իրարու հետ ենք: Նոյնպէս եւ Մարտիրոսը եւ շատ-շատեր:

24 նոյ.— Ընկերներին գործի զրինք Բաթում, որպէսզի իրենց աշխատանքով ապրին, բեռ չըլլան ուեւէ մէկին վրան եւ մի քիչ ալ կազդուրելուն, խիստ յոդնած են:

25 նոյ.— Չառագիր եկաւ Խատիսեանէն մեղ բաց թողնելու: Այսօր մեզ արձակետ կանչել էր նաեւ իմ սիրած Աւետիսը*), որի հետ 20 տարի է ընկեր ենք: Երեկոյեան ժողով գործարեցինք: Խօսեցինք լեռները գտնւած ժողովրդին ազատելու համար միջոցներ ձեռք առնելու մասին: Ազատելու փափաք շատ կայ, միջոց չկայ:

**

Ու այնուհետեւ Մուրատը նետում է կովկասահայ այն ժամանակաւայ կեանքի եռ ու զեռի մէջ: Մի շարք ժողովներից եւ տեսակցութիւններից յետոյ, նա արձանագրում է յուշատեարում.

«Մեր ժողովուրդը գլուխ չունի, դիւանագէտ չէ: Անցեալում նոյն պատճառով կորցրած է գահը... Անբախտ ժողովուրդ, այսպէս պատճառած է սկիզբէն. այժմս ալ նոյնը եղաւ»:

Ի՞նչ էր սպասում նա գտնել կովկասում, յուշերից չի երեւում: Յատկապէս ի՞նչը նրան հիասթափութիւն պատճառեց, նոյնպէս որեւէ տեղ արձանագրուած չէ: Մուրատի այն օրերի ազրումներին ծանօթ մարդիկ գիտեն, որ Թիֆլիս հասնելու առաջն օրերը նա չափազանց սուր կերպով զգաց տարբերութիւնը կովկասում եւ Թուրքիայում


*) Աւետիս Բիզեան: ԽՄԲ.

տիրող պայմանների : Արդէն կովկասում էլ ծայր էր տւել հիասթափութիւնը ոռուսական ու դաշնակիցների քաղաքականութիւնից, կամաւրական գնդերը նախկին գուրգուրանքը չէին վայելում . ոռուս կառավարութիւնը տարւած էր հայկական նւաճւած հողամասերը ոռուսացնելու ծրագիրներով : Հակառակ բուռն բաղձանքի, կովկասահայութիւնն անզօր էր օգնելու թիւրքահայերին, որոնց տեղահանութեան եւ կոտորածի լուրերը շշմեցրել էին ամենքին :

Այսպիսի պայմաններում էր, որ Մուրատն ընկաւ կովկաս : Հոգեկան ցնցումն անխուսափելի էր : Նա սաստիկ ազգւեց, հիւանդանաւու աստիճան : Բայց չնորհիւ իր երկաթէ կամքի՝ շուտով վերգտաւ իրեն եւ կարճատեւ աշխատանքից յետոյ կամաւրական խմբերում՝ նետւեց Երզնկայի ճակատը՝ ինքնապաշտպանութեան եւ թիւրքերի ձեռքին մնացած հայերի ազատազրական գործին մէջ, Սեպուհի, կայծակ Առաքելի եւ ուրիշների հետ : Բարերախտարար այս շրջանի նրա կեանքի ու դործունէութեան վկաներ գեռ կան – Սեպուհը, օրինակ : Նրանց բարոյական պարտականութիւնն է գրի առնել Մուրատի կենսազրութեան այս մասը :

(Հ. Բ. Ը. Մ. Նուպարեան Մատենադարանի դիւանին) :

(ՎԵՐՁ)



I

ՄԻ ԽԶՈՒՄԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ – Այս վերնագրի տակ կովկասի լեռնական ծանօթ գործիչ Հայտար քէզ Բամեատը իր խմբագրած ոռուսերէն «կաւկազ» թէրթի № 3-ում (մարտ) հրատարակել է մի վաւերագիր՝ Հիւսիսային կովկասի Հանրապետութեան Պատկրակութեան նամակը՝ ուղղած Վրաստանի Փարիզի նախկին դեսպան Ա. Ջիննակելիին, որով բացատրում են Վրաստանի եւ Լեռնականների Պատկրակութիւնների միջեւ առաջ եկած խզումի պատճառները :

Այդ նամակը հետաքրքրական է եւ հայ ընթերցողների համար եւ, որպէս պատմական փաստարուղթ, մենք օգտակար ենք համարում ամբողջութեամբ հրատարակել «Ա.Է.մ»-ի մէջ : Որպէսզի, սակայն, արտասահմանի, ընդհանուր առևամբ, կովկասեան գործերին անտեղեակ ընթերցողների համար մուր կէտեր չմնան, անհրաժեշտ ենք համարում տալ հետեւեալ տեղեկութիւնները :-

1921 թ. Փարիզում, կովկասեան 4 հանրապետութեանց միջեւ կնքիւլ էր մի համաձայնութիւն, որով պարտաւորւմ էին ապրել համերաշխ եւ վարել ներդաշնակ արտօնին բաղաքանութիւն : Չորս հանրապետութեանց ներկայացուցիչները պարբերական ժողովներ էին գումարում եւ աշխատում էին գործել միացեալ նակատով : Լոգամի Դաշնագրից յետոյ, այդ նակատը խանգարւեց. հայերը դուրս մնացին : Երեք հանրապետութեանց ներկայացուցիչները շարունակեցին իրենց ժողովները, որոնք կոչւում էին «Երեք Հանրապետութիւնների Խորհուրդ» :

Բացի այս միուրիւնից, Պոլսում կազմւեց, այսպէս կոչւոած, կովկասի Անկախութեան կոմիտէն, որ յետոյ, բոլշեվիկների նընշման հետեւանքով, փոխադրւեց արտասահման : Այս կոմիտէն մինչեւ այսօր էլ հրատարակում է «Պրոմեթէ» ամսագիրը : Այս կոմիտէի մէջ էլ հայերը չեն մտնում, իսկ լեռնականներից մտնում են

այն տարրերը, որոնք հակառակ են «Երեք Հանրապետութիւնների հորիզոնի» ամդամ լեռնականներին՝ Հայտար Բամմատին, Զերմոյեսին: Կովկասի Անկախութեան Կոմիտէին գլխաւոր ոյժ տւողը վրացի տցիալ – դեմոկրատներն են եւ ազրբէջանցի մուսաւարականները:

Այս նախագիտելիքներից յետոյ, Հիւս. Կովկասի Պատուիրակութեան նամակի բովանդակութիւնը կը լինի հասկանալիք: Ահա այդ նամակը, որ գրւած է 1930 թ. յուլիս 8-ին եւ որի տակ ստորագրել են ի դիմաց Հիւս. Կովկասի Հանրապետութեան Պատուիրակութեան՝ Ա. Մ. Զերմոյեւը եւ Հայտար Բամմատը:

Պարոն Նախարար,

Յեղափոխութեան հէնց սկզբին, տակաւին Վրաստանի եւ կովկասեան միւս հանրապետութիւնների անկախութեան հռչակումից առաջ, Հիւսիսային Կովկասի լիազօր ներկայացուցիչները նպատակ էին դրել իրենց երկրի միացումը Անդրկովկասի հետ: 1918 թ. մարտին Թիֆլիս հասաւ մի յատուկ Պատուիրակութիւն, որի կազմի մէջ մտնում էին եւ սոյն նամակը ստորագրող անձերը՝ իրենց հետ բերելով կովկասեան միութեան ծրագրի նախադիմը: Այդ Պատուիրակութիւնը, Ազրբէջանի, Հայաստանի, Վրաստանի Ազգային Խորհուրդների հետ բանակցելուց յետոյ, մեկնեց Տրավիզոն, ուր այդ միջոցին գումարւած էր Թիւրք – Անդրկովկասեան խաղաղութեան Խորհրդաժողովը:

Հասնելով Խորհրդաժողովի աշխատանքների վերջին՝ Պատուիրակութիւնը նրա մէջ դրաւեց առանձին մի դիրք, որ արտայայտւած է Օսմաննեան եւ Անդրկովկասեան Պատուիրակութիւններին ուղղւած իր 1918 թ. ապր. 1 յայտագրի մէջ: Հետազային հրատարակւած այդ յայտագրով Հիւսիսային – Կովկասեան Պատուիրակութիւնը, ամէն կերպ ընդգծելով Կովկասի միութիւնը աշխարհագրական, տնտեսական եւ ուղղմաղիտական տեսակէտից, պնդում էր Կովկասեան Համագնակցութեան ստեղծման անհրաժեշտութեան վրա:

Նոյն 1918 թ. յունիս ամսին, անդրկովկասեան պետութեան կազմալուծումից եւ Ազրբէջանի, Հայաստանի եւ Վրաստանի անկախ հանրապետութիւնների ստեղծումից անմիջապէս յետոյ, Հիւսիսային – Կովկասեան Պատուիրակութիւնը Բաթումի Խորհրդաժողովում նոյն առաջարկութիւնն արաւ նորակազմ երեք հանրապետութիւնների կառավարութիւններին: 1919 թւի սկզբին, Պոլսում, Փարիզի ճանապարհութեան վրա, մենք նորից կրկնեցինք այդ փորձը, որպէսզի

հարաւոր լինի Խաղաղութեան վեհաժողովի առջեւ ցուցադրել կովկասեան ճակատի միութիւնը:

Քիչ յետոյ, մարտ ամսին, միշտ միեւնոյն նպատակը հետապնդելով, Հիւս. Կովկասի կառավարութիւնը առաջարկեց Անդրկովկասի կառավարութիւններին գումարել մի խորհրդաժողով, որ եւ հաւաքւեց Թիֆլիսում: Այդ խորհրդաժողովի աշխատանքները զուգաղեցին զօր: Դէնիկինի սպիտակ բանակների յարձակման Հիւսիսային – Կովկասի Հանրապետութեան վրա: Անդրկովկասի կառավարութիւններն աւելի խոհեմ համարեցին սպասողական դիրք բռնել, եւ խորհրդաժողովը յետաձգւեց, sine die.

Մեր երկրի գրաւման ընթացքին զօր: Դէնիկինի գորքերի կողմից, Ազգային Պաշտպանութեան Խորհրդի կառավարութիւնը, որ պայքարում էր սպիտակ բանագրաւիչների դէմ, մէկից աւելի անգամներ նոյն փորձերն արաւ:

Բոլոր այս գիմուժները բաւարար բարենպաստ արձագանդ չդըտան անդրկովկասեան քաղաքականութեան զեկալարների կողմից, եւ կովկասեան մէկ ճակատը, որ միակ միջոցն էր կովկասեան բոլոր հանրապետութիւնների պաշտպանութեան, չիրականացաւ: Իրեւ հետեւանք, կովկասեան չորս հանրապետութիւնները ջախջախւեցին մէկը միւսի յետեւից:

Մենք յոյս ունէինք, որ այդ ծանր փորձից խրատւած՝ անդրկովկասեան ներկայացուցիչները կը հրաժարւին մոլորութիւններից եւ բոլութիւնների դէմ մղած իրենց հետապայլ պայքարում աղնիւ եւ պարկէշտ կերպով մեղ հետ կը ստեղծեն այնքան անհրաժեշտ միացիւթեան ճակատը: Եղաւ մի պահ, երբ թւում էր թէ մեր բաղանքները իրականանում են: 1921 թ. Կովկասի Ազգային կառավարութիւնները, հաւաքւելով Փարիզում, ընդունեցին կովկասեան միութեան սկզբանը եւ դրին ապագայ համազանակցութեան հիմքը: Տարբեր ժամանակներում ստորագրւեցին այդ վճռին վերաբերուղ զանազան վաւերագրեր: Դժբախտաբար, շատ չուտով պարզւեց, որ կովկասեան սպառագալին կազմակերպութիւնները միեւնոյն չափով անկեղծ բոլոր ազգային կազմակերպութիւնների մէջ եւ միեւնոյն ջերմութեամբ չեն աշխատում իրականացնել գծւած նպատակները: Տրւած վճիռները մնում էին մեռած տառ: Վրաստանի լէզարիոնը եւ Ազրբէջանի ու Հայաստանի պատուիրակութիւնները դործում էին ջոկ-ջոկ, հետեւելով այն ուղիներին, որոնք թւում էին նրանց ամենից աւելի համապատասխան իրենց ժողովրդի շահերին:

Հիւսիսային կովկասի Պատւիրակութիւնը մէկից աւելի անդամ-ներ ցոյց է տւել նման գործելակերպի անյարմարութիւնը եւ եռանդով պահանջել, որ կովկասեան հանրապետութիւնների ամենաորակեալ ներկայացուցիչներից կազմւի մի կենդրոնական մարմին, որպէսզի սա կենդրոնացնի տարրեր ազգային կազմակերպութիւնների գործունէութիւնը եւ իր ձեռքն առնի կովկասեան քաղաքականութեան բարձրագոյն դեկալավրութիւնը։ Հիւս։ Կովկասեան Պատւիրակութեան գաղափարով այդ կազմակերպութիւնը, մնալով կուլիսների յետեւ, դուրսը ոչնչով չափած կաշկանդէր գործունէութիւնը պաշտօնապէս ճանաչցւած ներկայացուցչութիւնների՝ Վրաստանի լէգասիոնի եւ կովկասեան միւս հանրապետութիւնների պատւիրակութիւնների։

Այս միանգամայն տրամարանական եւ օրինական պահանջները հանդիպում էին խուլ, բայց յամառ դիմադրութեան անպատճախանատու մարմինների կողմէից, որոնք, զժբախտաբար, որոշում էին Զեր սեփական վարչակիծը, պ. Նախարար :

Մէկից աւելի անդամներ ոչ միայն մասնակի զբոյցների ժամանակ, այլ եւ երեք Հանրապետութիւնների Խորհրդի պաշտօնական նխատերում, որոնք Զեր որդեգրած դիրքի չորհիւ վեր էին ածւել որեւէ Հեղինակութիւնից զուրկ փոխադարձ տեղեկատութեամբ զբաղւող մի յանձնախմբի, Դուք լոյեալ կերպով ընդունում էիք մեր գանգատաների իրաւացի լինելը։ Դժբախտաբար, Դուք Զեր մէջ բաւարար ոյժ ու տոկունութիւն չգտաք, որ հակաղղէիք որոշ շրջանների կորստաբեր ազդեցութեան։

Ստեղծւած անբնականոն վիճակը վատթարանում էր նաեւ չնոր-
հիւ այն փաստի, որ Զեղ իր կամքը թելաղրող քաղաքական խմբակ-
ցութեան միտումները մեր կողմից դիտում էին անհամապատաս-
խան կովկասեան աղատ եւ անկախ Համադաշնակցութեան մեր դա-
ւանած գաղափարին :

Շատ անդամներ մենք առիթ ենք ունեցել հրաւիրելու Զեր ուշադրութիւնը վրաց սոցիալ - դէմոկրատական կուսակցութեան եւ նըրա «Պայքարի Զայնը» պաշտօնաթերթի բոնած դիրքի վրա Փաշխտական հտալիսայի եւ նոր Թիւրքիոյ հանդեպ, մի դիրք, որ մենք եւս մեզ համար համարում էինք բացարձակապէս անընդունելի եւ որին Դուք եւս, հակառակ կուսակցութեան հետ ունեցած Զեր ջերմ կապին, որպէս Վրաստանի ներկայացուցիչ, չէիք կարող, բնականաբար, հաւանութիւն տալ:

Վերջին երեք տարիների ընթացքին մենք անընդհատ մատնանը-
շել ենք Ձեզ, որ կովկասի քաղաքական ապագային իրական վտանգ
է սպառնում այսպէս կոչւած Կովկասի Անկախութեան Կոմիտէն, որ
զեկավարում է Ձեր կառավարութեան անդամներից մէկի կողմէից,
որը, ինչպէս եւ Վրաստանի կառավարութեան բոլոր անդամները,
պատկանում է սոցիալ - դէմոկրատական կուսակցութեան: Ե. Պ.
Գեղեցիորիի հետ միասին Դուք եւս ընդունեցիք այդ կազմակերպու-
թեան կեղծ ու վնասակար լինելը:

Դուք շատ լաւ գիտէիք, որ այդ կազմակերպութեան Հիւս-Կով-
կասեան հաստածը, մեծ մասով կազմւած է մեր թշնամի բանակում
գտնուող մարդկանցից, որոնք նոյն իսկ զէնն ի ձեռին կուել են Հիւս-
Կովկասի հանրապետութեան դէմ, կամ բաղկացած է այնպիսի տա-
րագիրներից, որոնք ոչ մի մասնակցութիւն չեն ունեցել մեր աղջա-
յին շարժման մէջ թէ՛ Կովկասում եղած ժամանակ եւ թէ տարագրու-
թեան երկար տարիների ընթացքին, մինչեւ որ չի պարզեւ, որ Կով-
կասի Անկախութեան կոմիտէին մասնակցելը կարող է լինել շահա-
ւէտ գործ . . .

Մենք գիտէինք, ու . Նախարար, որ մեր զդացումները օտար չեն նաև Ձեզ: Դուք այդ ինքներդ ընդունել էք յիշեալ նիւթիւ մասին ունեցած մեր բազմաթիւ խօսակցութիւնների ժամանակ: Զեր կողմից այդ փաստի ընդունելը մեզ համար անհրաժեշտ նախապայման էր վերականդնելու համար մեր յարաբերութիւնները, որոնք փաստորէն աւելի քան մէկ տարի է որ խզւած էին (ՏԵ՛Ս Երեք Հանրապետութիւնների Խորհրդի 1929թ. գեկո. 3 նիստը): Այդ պատճառով մենք հիմք ունէինք հաւատալու, որ Դուք վերջ ի վերջոյ կը վճռէք եռանդով գուրս դալ իրերի այն կացութեան դէմ, որ Դուք ինքներդ համարում էիք ոչ բնականոն: Մակայն, պատահեց հակառակը: Երեք Հանրապետութիւնների Խորհրդի 19 – 24 մարտ նիստերին Դուք մեզ յայտարարեցիք, թէ գործելով Անկախութեան Կոմիտէի ներկայացը-րած վերջնադրի սպառնալիքի տակ՝ «Վրացական Կոլեգիան»* վճռել րած վերջնադրի սպառնալիքի համար: Կովկասի Պատւիրակութիւնների բանակ մերժել Ազգրեզանի և Հիւս. Կովկասի Պատւիրակութիւնների բանակը մերժել Ազգրեզանի պահանջները: Զեղ անմիջապէս իմաց տրւեցաւ, թէ մենք չենք ընդունում, որ «Կոլեգիան» իրաւունք ունի Կովկասեան Հանրապետութիւնների փոխարարերութիւններին վերաբերող հարցերը որոշուելու: Մենք ցոյց տւինք Ձեզ, թէ անձնապէս Ձեզ վրայ, իբրեւ Վրաստանի օրինական լիազօրութեամբ օժտւած ներկայացուցչի, կընկնի

^{*)} Վրաց կառավարութիւնը՝ լրացած կուսակցութեամց Աերկայացուցիչներով:

Հետեւանքների ողջ պատասխանատւութիւնը, եթէ յիշեալ վճիռը հաշւի առնւի Զեր կողմից :

Հակառակ այս նախազդուշացման, որ գրի է առնւած Երեք Հանրապ. Խորհրդի արձանագրութիւնների մէջ, 26 մարտ մասնաւոր նամակի վրա էլ Դուք չարունակում էք պահել յամառ բութիւն : Դրանից մենք Նորակացնում ենք, որ Դուք համերաշխ էք Զեր «Կոլեգիայի» հետ, եւ հարկադրւած ենք հաստատելու, որ Զեր վարած քաղաքականութիւնը ոչ թէ Վրաստանի ազգային քաղաքականութիւնն է, այլ Սոցիալ - Դեմոկրատական կուսակցութեան, որի չարքերից է Շուրս եկած Զեր կառավարութիւնը : Իսկ Վրաց Սոցիալ - Դեմոկրատական կուսակցութեան քաղաքականութիւնը մենք ոչ մի ձեւով չենք կարող ընդունել, թէ անկեղծօրէն ձգտում է Կովկասեան Համադաշնակցութեան ստեղծման :

1929թ. յունիսին, Երկրորդ Միջազգայինի Գործադիր Կոմիտէին տւած յուշագրի մէջ, Վրաց Սոցիալ - Դեմոկրատական կուսակցութեան Արտասահմանի Պատւիրակութիւնը արտայայտւել է հետեւեալ ձեւով . «Վրաստանի Սոցիալ - Դեմոկրատական կուսակցութեան մշակած քաղաքական գծի վրա և աշխատում է իրականացնել իր ունեցած բոլոր միջոցներով ... Վրացիները չունին այնպիսի հարեւան մի պետութիւն, որի բարեկամական միջամտութեան վրա կարելի լինի յոյս գնել : Նրա միակ հարեւանն Թիւրքիան է, որ եթէ միջամտել է մեր գործերին, այդ եղել է միշտ մեր դէմ . . . Մեր նպատակն է պաշտպանել նման միջամտութիւնից : Ի հարկէ, կուսակցութիւնն այդ բանի համար չունի եւ ոչ մի միջոց : Այդ Ազգային կառավարութեան կատարելիք գործն է : Այդ նպատակով նա պահում է սերտ կապ կովկասեան մահմետական հանրապետութիւնների ազգային սամհակար կազմակերպութիւնների հետ և նրանց մէջ աշխատում է ամրապնդել Կովկասեան օրինտացիան : Առհասարակ, բոլշևիկեան հաշւեյարդարի ստեղծելիք մթնոլորտում ազգային բախումներից կարելի կը լինի իուսափել մօտիկութեամբ եւ կապակցութեամբ նրանց հետ եւ առաջուց նրանց մէջ հաստատելով մեր քաղաքական ուղեգիծը : Ուստի եւ մեր կուսակցութիւնը կանգնած է Խորհրդայիկն Միութեան բոլոր ընկերվարական կուսակցութիւնների միութեան տեսակետի վրա : Իսկ ազգային կառավարութիւնը աշխատում է մօտենալ կովկասեան ազգային կազմակերպութիւններին, որպէսզի ազգեցութիւն ձեւով բերի նրանց վրա . . . կառավարութիւնը իր նպատակն է դրել պահպանել Վրաստանի միջազգային իրաւական վիճակն եւ դրանով

դիւրացնել Ազգերի Լիգայի գործը, որ յարմար վայրկեանին միջամտէ մեր գործերին» :

Այս խօսքերը տեղ չեն թողնում եւ ոչ մի երկմտութեան եւ փայլուն կերպով ցուցադրում են այն երկերսանին զերը որ խաղում է վրաց Սոցիալ - Դեմոկրատական կուսակցութիւնը Վրաստանի կովկասեան հարեւանների նկատմամբ : Ազգբեջանի եւ Հիւս - Կովկասի գլխի վերեւից ձեւով մեկնելով ուսւ ընկերվարական կուսակցութիւններին՝ վրաց սոցիալ - դէմոկրատները առանց քաշւելու ընդունում են, որ իրենց կառավարութեան բարեկամական յարաբերութիւնները կովկասեան մահմետական հանրապետութիւնների ազգային կազմակերպութիւնների հետ իրապէս այլ նպատակ չունին, բայց եթէ Վրաստանի միջազգային իրաւական գիրքի ապահովումը :

Այստեղ մենք շատ հեռու ենք Կովկասեան Համադաշնակցութիւնից, որը, ակներեւ է, գիտում է սոսկ որպէս գատարկ, գործնական իմաստից գուրկ մի բանաձեւ, որ սակայն պէտքական է Կովկասեան Համադաշնակցութեան անկեղծօրէն նւիրւած կովկասեան մահմետական հանրապետութիւնների ներկայացուցիչների համակըրանքը շահերու համար : Որպէսզի պատկերը լինի կատարեալ, անձը բաժեշտ է առաջ բերւած հաւատոյ հանդանակը համեմատել նորերսի լինում գումարւած Երկրորդ Միջազգայինի Գործադիր Կոմիտէի հանած բանաձեւերի հետ :

Այդ բանաձեւերից մէկով, որ ընդունած է միաձայնութեամբ, հիտեւաբար եւ վրաց Սոցիալ - Դեմոկրատական կուսակցութեան չերկայացուցչի մասնակցութեամբ, Երկրորդ Միջազգայինին յարող սոզգային ընկերվարական կուսակցութիւնների վրա պարտականութիւն է դրւում՝ տեղական ազգային շահերը ստորագասել բանւոր դասակարգի բարձրագոյն շահերին, որպէսզի Եւրոպան պահպանեի, իր թէ, յետաշրջութեան եւ ֆաշիզմի կողմից իրեն սպառնացող վըաւանդի դէմ : Այդ նպատակով նրանք պէտք է հարժարւեն խորհրդային իշխանութեան գէմ ուղղւած բռնի գործերից եւ խորհրդային անտեսութեանը վնասող միջոցներից : Նրանց արգիլուում են որոշապէս բոլոր այն գործերը, որոնք կարող են նկատել որպէս ուղղակի կամ անուղղակի գանձակցութիւն ներքին եւ արտաքին բոլոր այն ուժերի հետ, որոնք յեղափոխական դիրք են բռնում եւ կամ ձգուում են դրսի ուժերի միջամտութիւն առաջ բերել Խորհրդային Կառավարութեան գործերի մէջ :

Հակայեղափոխութեան առաջն առնելու նպատակով Երկրորդ Միջազգայինի կազմի մէջ մտնող ազգային ընկերվարական կուսակ-

յութիւնները հրաւիրւում են սահմանափակել իրենց գործունէութիւնը՝ որոնելով խաղաղ, ռամկավար միջոցներ խորհրդային տաղանապի լուծման համար։ Այս բանաձեւին թեր քւէ տւող վրաց Սոցիալ-Դեմոկրատական կուսակցութեան ներկայացուցիչների գործելակերպը տարօրինակ հակասութեան մէջ է նոյն կուսակցութեան ներկայացուցչի գործելակերպի հետ «Անկախութեան Կոմիտէում», որ թւում է թէ, հետապնդում է ճիշտ այն խնդիրները, որոնք այնպիսի՝ հանդիսաւորութեամբ զատապարտւած են Երկրորդ Միջազգայինի կողմից։

Առաջ բերւած այս օրինակը ապացոյց չէ՞ քաղաքական երկերեսութեան մի կուսակցութեան, որը, համաձայն վերեւ առաջ բերւած յուշագրի, ուղղութիւն է տալիս վրաց կառավարութեան քաղաքականութեան :

Երբեք եւ ո՞չ մի պայմանով մենք չենք կարող այս կարգի գործեալիք ընդունել որպէս ասպետական-ազնիւ եւ օրինապահ Վրաստանի քաղաքականութիւն։ Մենք կամ ենում ենք մնալ հաւատարիմ Աղդային Վրաստանին, որի հետ մեր Հայրենիքի ճակատագիրը կապւած է անխզելի կապերով, եւ պիտի շարունակենք պայքարը ազտութեան եւ անկախութեան ընդհանուր իդէալի համար, սերտ համագործակցութեամբ վրաց այն կազմակերպութիւնների եւ կուսակցութիւնների հետ, որոնք աղդային իդէալը դրել են աւելի բարձրը, քան կուսակցական եւ զասակարգային նկատումները, եւ մեկ պէս համոզւած են, որ կովկասեան Համագաշնակցութեան իրականացումը անհրաժեշտ պայմաններից մէկն է Վրաստանի վերածնութեան։

Ահա թէ ինչու, սկ. Նախարար, Զ տարւայ աշխատակցութիւնից յետոյ, կորցնելով մեր վերջին յոյսը, թէ Դուք պիտի ազատւեք ոչ միայն Վըրաստանի, այլև բոյանդակ Կովկասի Համար վտանգաւոր ազգեցութիւններից, մենք, խորունկ ցաւով, Հարկադրւած ենք վերջ դնել Հիւսիսային Կովկասի Հանրապետութեան Պատւիրակութեան համագործակցութեան Զեր Լէզասիոնի հետ եւ վերապարձնել մեզ գործեյու ազատութիւննն»

Հրատարակութեան տարով այս նամակը՝ պ. Հ. Բամբատը եղաւ-
փակում է հետեւեալ խօսքերով. «Ինձ թւում է, թէ առաջ բերւած
այս վաւերագիրը առանձին մեկնութիւնների պէտք չունի: Նրա ստո-
րագրութեան օրից անցել է մօտ չորս տարի: Ժամանակն ու դէպ-
քերը ամբողջապէս հաստատեցին ճշտութիւնը այն գնահատութեան,
որ Հիւս. - Կովկասի Պատուիրակութիւնը տւել էր Վրաց Սոցիալ-
Դեմոկրատական Կուսակցութեան եւ վրաց պաշտօնական հիմնար-

կութիւնների գործունէութեան մասին։ - Նրանք արին ամէն ինչ, որ Հիւսիսային Կովկասը յետ մղեն Վրաստանից եւ Կովկասեան ժողովրդների մէջ ցանեն վատանդաւոր պառակտումն ու փոխադարձ անդունքներ։ Բարեբախտաբար, նրանք հասան միայն այն բարեկամութիւնը։ Բարեբախտաբար, նրանք հասան միայն այն ամէն, որ աւելի եւս ամրապնդեցին կապերն ու մտքի միութիւնը այն մին, որ աւելի եւս ամրապնդեցին կապերն ու մտքի միութիւնը այն վրացիների եւ լեռնականների, որոնք այլ կերպ չեն երեւակայում աղասազութիւնը, քան եթէ համերաշխ գործունէութեամբ»։

II

ԱՐԵՎԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

«Կաւկազ» ամսագրի ապրիլեան համարում հրատարակւած է Ա-
ղըրբէջանի «Մուսաւաք»կուսակցութեան հետեւեալ պաշտօնական
յայտարարութիւնը .-

Մեծարգոյ Պ. Խմբագիլք ,
Շատ ենք խնդրում Ձեզ՝ չմերժել Հրատարակել Ձեր յարգելի
ամսագրի մօտակայ համարում «Մուսաւաթ» կուսակցութեան 1933
թ. դեկտ. 18ին տեղի ունեցած համագումարի բանաձեւը , որ կցւած
է սրան :

Ընդհանուր ժողովի դիւան՝ Խալիլ Խաս Մամետլի, Առաքածուաց
քէյլի Շէփի, Սէլիմ Աղասիբէյլի: 25 մարտ, 1934թ.:

Հանւեցին մի շարք կարեւոր որոշումներ :


Ի միջի այսոց, Համագումարը հաստատեց՝ նախ՝ յարաբերութիւնների սրումը կուսակցութեան անդամների հոծ մեծամասնութեան եւ նրա նախագահ Մամէտ Էմին Ռասուլ Զաղէէ միջեւ, իբրև թեան եւ նրա նախագահ Մամէտ Էմին Ռասուլ Զաղէէ միջեւ, իբրև հետեւանք տարակարծութեան սկզբունքային, գործելակերպի վերաբերող եւ կազմակերպական բնոյթ կրող Հարցերի նկատմամբ. երկրագործութեան մասին անձնական ու եռական գործերը. Երրորդ՝ անկերպորդ՝ նախագահի անձնական ու եռական գործերը. Երրորդ՝ անկերպորդ՝ նախագահի կուսակցութեան, որի կենտրոնական մարմինը երկու պարան վիճակը կուսակցութեան, որի կենտրոնական մարմինը երկու պարան վիճակը կուսակցութեան, որի գայքայւել է եւ մատնանշւած պատճառների հետ կէս տարի է որ քայլքայւել է եւ մատնանշւած պատճառների հետեւանքով չէ վերակազմուում, եւ չորրորդ՝ կուսակցութեան մեկուտեւանքով չէ վերակազմուում, եւ չորրորդ՝ կուսակցական գաղտնի գործելակերպի սացումը, իբրեւ արդիւնք կուսակցական գաղտնի գործելակերպի :

Սրա հիման վրա համագումարը որոշեց այլեւս Մ. է. Ռասուլ-Զաղէին կուսակցութեան նախագահ չհամարել, զատւել նրանից եւ փոխարինելով նրան ուրիշ անձով՝ վերականդնել Կենտրոնական Մարմինը:

Համաձայն այս որոշման տեղի ունեցաւ թէ նոր նախագահի եւ թէ կուսակցութեան կենտրոնական մարմնի ընտրութիւնը:

Միժամանակ Համագումարը՝ նկատելով, որ հայրենիքի ապրած վայրկեանի ներկայ պայմաններում նեղ-կուսակցական աշխատանքի համար տեղ չկայ, ջերմ բաղձանք յայտնեց ամենասերտ յարաբերութեան մէջ մտնել երկրի ու բովանդակ կովկասի ուրիշ քաղաքական հոսանքների եւ առողջ ուժերի հետ եւ նրանց հետ միասին կազմել ազատագրական պայքարի ընդհանուր գործօն ճակատ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ — Մեր ստացած մասնաւոր տեղեկութիւններից պարզում է, որ Մուսաւաթի մէջ բաւական երկար ժամանակ տիրող սուր տարակարծութիւնն ու պայքարը արդիւնք են անսակէտների տարբերութեան թիւրքիայի վերաբերմամբ: Յաղթող են դուրս եկել «թիւրքասէրների» հոսանքը, որին պատկանում են գլխաւորապէս թիւրքիայում ապրող ազրբէջանցիները. սրանք կողմէնակից են ամենասերտ կապակցութեան թիւրքիայի հետ եւ Աղրբէջանի ճակատագիրը ամրողապէս կապում են թիւրքիային: Մինչդեռ Եւրոպա գտնուող գործիչներն ընդհանրապէս (եւ սրանց մէջ Մ. Ռասուլ-Զաղէն) կուսակից են Աղրբէջանին անկախութեան, կովկասեան համագնակցութեան ստեղծումին եւ գործունէութեան ապառութեան Աղրբէջանի վերաբերող քաղաքականութեան ստուրէզում:



ԱՆՑԵԱԼՔ

I

ՄԻՔԱՅԵԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ

Ապրիլ 26-ին, Մարսէլլում, կաթուածի հետեւանքով, վախճանւեց շ. Յ. Դաշնակցութեան եւ, ընդհանրապէս, հայ մտաւորականութեան ներկայացուցիչներից մէկը՝ Մ. Վարանդեան, որ մօտ 40 տարի բացառիկ ջանասիրութեամբ ու փայլով ծառայեց հայ մշակոյթին ու հայկական դատին։ Վարանդեանի մահը մեծ վիշտ պատճառեց, մանաւանդ, երիտասարդութեան, որի սիրելի գէմքերից էր նա, որի մտաւոր դաստիարակութեան այնքան շատ էր ծառայել նրա բեղմնաւոր գրիչը։

Զկարողանալով «Վէմ»-ի ներկայ համարում տալ Մ. Վարանդեանի կեանքի ու գործի նկարագրութիւնը՝ կը բաւականանանք միայն նրա նկարի հրատարակութեամբ։ Յաջորդ անդամ նրան կը նւիրենք առանձին յօդւած։

II

ԹՈՐՈՍ ԹՈՐՈՄԱՆԵԱՆ

Մարտ մէկին, Երեւանում, սրտի երկարատեւ հիւանդութիւնից յևոյ, մեռել է Հայաստանի ականաւոր գիտնականներից մէկը՝ ճարտարապետ թ. Թորոմանեան, որի կորուստը մեծ հարւած է հայ մշակոյթի համար։ Թորոմանեանը հայ հին ճարտարապետութեան ամենահեղինակաւոր մասնագէտն էր մեր օրերում։ Նրա ուսումնասիրութիւնների արժէքը, ինչպէս եւ իր գիտնականի համբաւը շատ աւելի լայն են, քան Հայաստանի սահմանները։ «Վէմ»-ի յաջորդ համարում մենք կը տանք առանձին յօդւած Թորոմանեանի կեանքի եւ գործի մասին։



Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ ԴԱՏԻ
(Նկարւած Փարիզ) Photo -- Braun, Paris

III

ՍՏԵՓԱՆ ԴԵՄՈՒՐԵԱՆ

Յունար 13ին, Երեւանում, 62 տարեկան հասակում, վախճան-
ւեց կովկասահայ համեստ, բայց արժէքաւոր երաժշտագէտներից
մէկը՝ Ստ. Դէմուրեանը։ Նա ծնւել էր Թիֆլիսում, 1872 թ., մի
չքաւոր ընտանիքում։ 1883 թ. յաջողում է մտնել Ներսիսեան Դպր-
ուց իրեւ գլխերօթիկ եւ 1892 թ. աւարտում է լրիւ դասընթացքը։
Աւ նոյն տարւանից էլ նւիրում է դպրոցական-երաժշտական գոր-
ծունէութեան։ 1892-94 թ. պաշտօնավարում է Շուշու թեմական եւ
Մարիամեան դպրոցներում։ 1895-98 թ. ուսուցչութիւն է անում
Գորիսի ծխական ուսումնարանում։ Այստեղ կազմում է եւ երգեցիկ
խումբ, որի գլուխն անցած՝ համերգներ է տալիս Սուրամում, Ա-
խալքալաքում եւ շրջակայ ուրիշ վայրերում։ Նա հետեւում է Կարա-
Մուրզայի օրինակին՝ տարածելով ժողովրդական եւ ազգային բազ-
մաձայն երգը հասարակութեան մէջ։

1898թ. Դէմուլեանին յաջողւում է մանել Պետերբուրգի երաժշտանոցը, բայց նիւթական պայմանները նրան հնարաւորութիւն չեն տալիս երկար շարունակել երաժշտական ուսումը։ Նա վերադառնում է Կովկաս եւ նորից նիւրում մանկավարժութեան, քառաձայն խմբեր է կազմում, ժողովրդական եւ ազգային երգեր է հաւաքում ու ձայնագրում։ Հրապարակային համերգներ է կազմակերպում։ Իրեւ ուսուցիչ պաշտօնավարում է գաւառական մի շարք դպրոցներում։ Իր կազմած քառաձայն խմբով շրջում է հայաբնակ վայրերը եւ համերգներ տալիս՝ Թիֆլիս, Բագու, Երևան, Շուշի, Գորիս, Դիլիջան, Ալեքսանդրապոլ, Վլադիկավլիա, Հանքային Ձրեր եւարին։

Հայաստանի անկախութեան շրջանին Դէմուրեանը գտնուում էր Հիւսիսային Կովկասում, իբրեւ ուսուցիչ եւ համերգներ կազմակերպող։ Հայաստան եկաւ միայն 1926 թ. եւ մինչեւ մահ մնաց Երեւանում, իբրեւ ուսուցիչ, խմբավար, համերգներ կազմակերպող ու երգահան։ 1930 թ. տօնեց նրա մանկավարժական-երաժշտական գործունելութեան 40ամեաւ տօնելամբ։

Դէմուրեանը, իբրեւ երաժիշտ, պատկանում էր Հին, նախախորհը ըրդային սերունդին, ինչպէս եւ նրանից առաջ վախճանւած երաժշտագէտ Սպ. Մելիքեանը։ Նա իր ուսուցչական գործունէու-

թեամբ մեծ չափով նպաստեց երաժշտասէր ու երաժշտագէտ հասարակութեան պատրաստուելուն։ Նրա ջանքերով շատ դպրոցներում երգեցողութիւնն ու ձայնագրութիւնը դարձաւ զասաւանդան պարտադիր առարկայ։

Իբրեւ բազմաձայն երաժշտութեան սիրահար, իր քառաձայն խմբերով եւ բազմաթիւ համերգներով՝ Դէմուրեանը ահագին զարկ տւեց հայ երգի ժողովրդականացման։ Նա մտնում էր ամենախուլ պաւառները, երգը առնելով ժողովրդից՝ վերամշակւած ու կատարելագործւած՝ վերագարձնում էր նոյն ժողովրդին։ Այս տեսակէտից նա յաջող շարունակողն էր Կարա-Մուրզայի գործի, որի երաժշտական գերրո շատ մէծ է արեւելահայոց մէջ։

Վերջապէս, Դէմուբեանը ունի եւ երաժշտական ստեղծագործութիւններ, տեսական ուսումնասիրութիւններ, որոնց մեծ մասը մնացել է անտիպ, եւ հաւաքել ու ձայնագրել է ժողովրդական երգեր: Այս վերջինների մի մասը - 94 երգ - հրատարակւեց 1907 թ. Պետերուրպում - «Քնար», ձայնագրեալ երգարան եւրոպական ձայնանիշներով:

Ստ. Դէմուրեանը իր տաղանդով, ի հարկէ, ոչ կարա-Մուրզա
էր, ոչ էլ կոմիտաս, բայց իր մոլուանդ սիրով դէպի հայ երգը, իր
անդուլ աշխատանքով, իր բազմամեայ հետեւողական գործոնէու-
թեամբ մեծ ծառայութիւն է մատուցել հայ երաժշտական մշակոյ-
թին :

IV

ԱՆՈՓԵԱՆ


Հիւծախտի ճիբաններում, երկարատեւ եւ տանջալից հիւանդութիւնից յետոյ, Խրիմի ՍիմՓերոպոլ քաղաքում, վախճանւել է բանաստեղծ Անոփրիոս Անոփեանը։ Հանգուցեալը ծնւել էր 1873 թ. Նոր-Նախիջևանում։ 1892 թ. աւարտել էր Նոր-Նախիջևանի թեմական դպրոցը եւ այսուհետեւ զբաղւում էր հաշւապահութեամբ բանկային հիմնարկութիւնների մէջ։

Անոփեանը պատահնի հասակից սկսել էր գրել բանաստեղծութիւններ : Նրա առաջին ոտանաւորը «Զմեռ» անունով տպւել է 1891

թ. Վիէննայի «Հանդէս Ամսօրեայ»ում : Ապա աշխատակցել է «Աղ-
րիւր-Ճարազ»ին , «Բանբեր»ին , «Գեղարւեստ»ին , «Նոր Կեանք» շա-
րաթաթերթին , Թիֆլիսի «Յառաջ» , «Հորիզոն» եւ այլ դաշնակցա-
կան թերթերին : Մեծ մասամբ գրում էր քնարական եւ հայրենասի-
րական բանաստեղծութիւններ : Առանձին ուշադրութիւն էր դար-
ձնում գրւածքի արտաքին ձեւին՝ չափին , յանդին , լեզվի եւ ոճի գե-
ղեցկութեան :

Բացի լինքնուրոյն գրւածքներից , Անոփեանը ունի բազմաթիւ
թարգմանութիւններ՝ ոռու , լեհ , Փրանսացի բանաստեղծներից :
Նրա գրչի տակից գուրս են եկել յաջող թարգմանութիւններ Պուշ-
կինից , Լերմոնտովից , Բրիւսովից , Բլոկից , Միշկեւչից , Կրասին-
սկուց , Վերլէնից , եւայլն : Նրա ինքնուրոյն եւ թարգմանական եր-
կերի մեծ մասը մնացել է անտիպ , բայց զանազան պարբերականնե-
րում եւ թերթերում հրատարակւածներն էլ , եթէ հաւաքւին , մի
սուար հատոր կը կազմէն : Երեւանի Պետհրատը լաւ գործ արած կը
լինէր , եթէ հրատարակէր Անոփեանի երկերի ժողովածուն :

Վերջին տարիները Անոփեանը ապրում էր խիստ նեղ պայման-
ներում : Զրկանքների , նիւթական ու բարոյական տանջանքների մէջ
էլ մեռաւ :



ԱԲՈՎԵՍՆԻ ՄԱՀԻԱՆ ՇՈՒՐՋ

Մեր մէջ բանասիրութիւնը դարձել
է շատախօսութիւն : Երկար ու բարակ
քննել դատել որեւէ նիւթի մասին ա-
ռանց շօշափելի տուելուրի՝ ոսկորա-
կան երեւոյթ է : Այդափսի մի ինդիք է
եւ Խ. Աբովեանի մահւան շուրջը ստեղ-
ծըլած բանալէճը :

Աբովեանի մահւանից զեռ հարիւր
տարի չի անցել , նրա անհետացման ժա-
մանակւանից բարգաթիւ անձինք երկար
ապրել , պատմել են մահւան պարագա-
ները եւ խօսակցութեան նիւթերը շա-
րունակում էին մինչեւ 1886-90 թւա-
կանները : Ես էլ մէկը լսողներից ,
պատմեմ նրա ժամանակակցի խօսքերը :
Կարծեմ որ պիտի դադարեն երեւակա-
յական ենթադրութիւնները , որոնք հաս-
նում են անհեթեթութեան :

Ոմանք նրան համարելով թունդ աղ-
դասէր եւ ոռուսատեաց , հակառու քա-
ղաքանութիւն վարող իրբեւ թէ ,
նստեցնում են «Սեւ գառէթ» եւ քշում
Սիրիր : Ոմանք էլ Աբովեանին դարձնե-
լով թունդ յեղափոխական , որի համար
նեղ էր Երեւան , փափացնում են Տաճ-
կասանով Եւրոպա խառնւելու 1848-ի
յեղափոխական կուողներին

Շատ նման ենթադրութիւն եւ անում
էին Եւ անում են այժմ էլ Նիրսէս Աշ-
տարակեցու մասին , իրբեւ թէ հայոց
թագաւորութիւն կազմակե ու պ ե լ ու
խոստմաթուղթը ծոցում կը պահէր եւ
դրա համար քւեց Բեսարաբիա , որ այդ
պահանջից ձեռք քաշի . վերջն էլ թու-
նաւորեցին , որ ծոցից թուղթը կորդեն
եւ ոչնչացնեն . եւայլն եւայլն : Ոմանք
էլ Աբովեանին , իրբեւ «Վէրք Հայա-

տանի» վէպի հեղինակի՝ այնպիսի բա-
րոյական բարձրութեան են հասցնում ,
մինչեւ իսկ աստածային պանծացման ,
որին մերձնալ չեն կարող ոչ մի աշ-
խարհային ցանկութիւն , ոչ մի կանացի
անպարկեշտ գայթակղութիւն , մինչեւ
իսկ «սիրոյ մարմանջ անդ չէր կարող
ունենալ նրա յուզումնալից հոգու մէջ» :
Մինչեւ իսկ «Երեւանի լոթիների վայել
ևնթարդութիւն է . . . » Աբովեանի մահը
համարել սիրոյ զոհ : (տես «Վէմ» Ա.
Երես 12):

Ահա այս են այն անհեթեթ ենթադր-
ութիւնները , որոնք իրական տւեալ-
ներից զուրկ , սաւառնում են օդային
բաւիղներում :

Այս , Աբովեանը գրել է իր փառա-
ւոր «Վէրք Հայաստանիծն , որի ամէն
մի երեսից , ամէն մի տողից փչում է
հայրենաէրի , ջերմ աղբասէրի շունչը ,
որը ողեւորում էր եւ այժմ էլ ողեւո-
րում է ամէն մի ընթեցողի , նրան
ներչնչում է տոչորուզ հայրենիքին ըս-
պաս զնելու իր կարղութիւնը , իր ու-
ժերը : Տեսչական պաշտօնը մզում է
նրան դէպի նոյն ուղին - դպրոցներ
բանալ , աշակերտաներ պատրաստել ու
զարկ տալ հայացի կրթութեան :

Դժբախտաբար , այս փառաւոր գոր-
ծունէութիւնը ընդհատում է տարա-
բախտ մահով :

Այս սիրով որ տոչորւած էր ազգա-
յին սիրով , դժբախտաբար , տեղի է
տալիս եւ այլ սիրոյ : Սէրերի խորքը
զգացմունքների աշխարհն - է , սաւը
խելքին չի հնագանդում : Եւ ահա մեր
տեսուչը իր ընտանեկան պարկեշտու-

թիւնը զոհում է սրտի զեղմունքին և մահմետական մեծատան կնոջից խար- ում է: Կնոջ ամուսին ազգեցիկ խանը զրկում է նրան կեանքից, մարմինը ամ- փոփում իր պարտէզի ծառի տակը և զիշերանց անհետացնում:

Փնտուտոքի են ենում դպրոցը, իր տնեցիք, բարեկամները, ոստիկանու- թիւնը. Խուզարկւում են կասկածելն տներ, պարտէզներ, եւ ապարդիւն է անցում, ոչ մի հետք չեն կարողա- նում գտնել:

Խաները այն ժամանակ դեռ ուժեղ

էին, երկիւղ ազլող, ոստիկանութիւնը եւ գաւառական վարչութիւնները՝ ևն- թակայ գրամի եւ վախի: Արովեանի մերձաւորները ամօթլոց, վախից, թէ՞ մեղադրելու փաստացի տւեալներ ներ- կայացնելու հարաւորութիւնից զուրի՝ հետապնդումները գաղաքեցնում են եւ տեղի տալիս առեղծւածներին:

Արովեանի մահւան պարագաները շատերը զիտէին եւ երկար ժամանակ ծածուկ բերնէ բերան պատմում: Ահա այս է ճշմարտութիւնը:

X.

«ԱՆՅՈՒՆ» Թէ՞ «ԱՆՈՒՆ»

Յայտնի է, որ մեր Արշակ թագաւորը խարկանքով ընկաւ Շապուհի ճանկը եւ ի տրիտուր իր թեթեւամիտ հաւաքին գատապարտւեց Խուժիստանի մի բերգի մէջ բանտարկութեան, ուր եւ գտաւ իր մահը 369 թւին:

Մեր հին զրիչները, պատմաբանները մէծ մասամբ բերգը յիշում են «Անյուն» անւամբ, իբրեւ անյիշնելի, անյիշտակի, չիթէ ապահով վայր. շատ քէրը զը- րում են «Անյուն»: Այս ձեւը շարունակում է այժմ. մէծ մասը այժմ զըրում է «Անյուն բերգ»:

Այսօր այդ բերգը կայ, գտնուում է Խուժիստանում, թէհրան-բաղդատ մէծ բանուկ ճանապարհի վրա, կոչում է կար Շիրինի կամ Ղասր Շիրինի: Մեր հայ ինքնաշարժները նրա

մօտով անցնելիս, բացականչում են՝ «Ահա մեր Արշակ թագաւորի բերդ- բանուը»:

Կասր կամ Ղասր նշանակում է պա- լատ, բերդ. չիրին՝ քաղցր, անուշ: Կա- ուր Շիրինի անունը ըստ պարսից ա- ւանդավիշպերի ծագում է հայ օրիորդ Շիրինի անունից, որ եղել է զրաւիչ գեղեցկուհի, կերել է պարսից թագու- րի սիրու, եւ թագաւորը բլրի վրա պարսպապատ մէծ փարթամ ասպարանք է կառուցել իր սիրելի Շիրինի համար ու անունը կոչել - Շիրինի ապարանք, Շիրինի բերդ, Սնուշ բերդ:

Այս պարզաբանութիւնից յետոյ պարզ է թէ պէտք է գրել «Անյուն» եւ ոչ թէ «Անյուն»:

X.

Ս. ԽԾԱՑՐԵԱՆԻ ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԻՍԻ

Նկարիչ Ս. Խաչատրեանի երկրորդ պատկերահանդէսը Փարփղի ժորժ Պըտի սրահում մարտ-ապարիլին (առաջինը տեղի էր ունեցել երկու տարի առաջ գիրք թանգարանում), ինչպէս եւ առաջին նուիրած էր պարակական նկար-

չութեան: Նկարների այս շարքով Խա- չատրեանը սպառել է Սպահանում յայտ- նապոթած նիւթը:

Միայն տեղւոյն վրա ուսումնասիրու- թիւն կատարած մարդիկ ի վիճակի կը լինեն ասելու, թէ Խաչատրեանի նկար-

ները որքա՞ն հարազատ են, ի՞նչ չափով համապատասխան են բնադրին, հետեւաբար, ի՞նչ է նրանց հնագիտական-պատմական արժէքը: Կան մասնագէտներ, ինչպէս, օրինակ, ուրա յայտնի նկարիչ-քննադատ Ալ. Բէնուան, որ կասկածու են վերաբերուում: «Ճիշտ զնահատելու համար Խաչատրեանի ա- չագին աշխատանքի վաւերագրային ար- ժէքը, ասում է Բէնուան, հարկաւոր են յատուկ մասնագիտական ծանօթու- թիւններ: Պէտք է աշխով տեսնել վերաբերուում համար կամ մասնական արժէքին, որ նա կորսուի վրկել է մէր հին մշակոյթի այդ թան- կարին նշխարները: Պէտք է ուրախա- նալ նաեւ, որ ամենալաւը նրանցից՝ «Շահ Արքա Մեծը Հայերի Մօռ» մէծ նկարը մասնաւոր ձեռքեր չի անցել, այլ զնւած է Տրոկադերօի թանգարանի համար: Մնացեաներից մի քանիսը ան- ցել են պատահական ձեռքեր, միւսներն կատարած զորքը:

Անկասկած, Խաչատրեանի ցուցադբ- րած նկարների պատմա - զիտական արժէքի տեսակիտից խիստ կարեւոր նը- շանակութիւն ունի Բէնուայի յարու- ցած հարցը. ինչպէս պէտք է վերա- բերել նրանց՝ իբրեւ պատմական վա- ւերագրելի, թէ գեղարեւստական ըս- տեղագործութեան: Բէնուան ուզում է հաւատալ Խաչատրեանի դիտութեան, նկարչի եւ զիտականի յստակատեսու- թեան, բայց - ասում է - անդամ եթէ նրա նկարները երեւակայութիւն ու զառանցանք էլ լինէին, էլի նրանց ար- ժէքը խոչը է, որովհետեւ զառանցողը նիւթին շատ լաւ ծանօթ մանագէտ է:

Զուու արևեստի չափանիշով մօտենա- լով Խաչատրեանի զործին՝ անկարելի է չընդունիլ նրա գեղեցկութիւնը: Ար- ևստական ինքը խորապէս ապրել է նիւթը, մտածել ու թափանցել է նրա մէջ եւ ճշմարիտ ներշնչումով մէր առ- ջեւ պարզել Արեւելքը Սիրոյ ու հեշ- տանքի պատմական աշխարհը: Արեւ, կին ու զինի, ծաղիկ ու պտուզ, որս ու վայելք, ծոյլ ինքնամոռացում եւ վացի Առաքել Դաւթիքեցու տեղեկու-

թիւններից, իսկ այնուղ հիմք չկայ հնչպէս, օրինակ, բանտի այցելութիւն պատկերացնող մի նկարի վրա կայ «Այցել զբանան» մակագրութիւնը. մի ուրիշի անունն է՝ «Տեսանել զյիւանդի», մի երրորդի՝ «Արբուցանել զծարաւիս» պարզ ասլացոյց, որ նկարողը հայ է եղել:

Ս. Խաչատրեանի կատարածը թէ հայ և թէ Համամարդկային մշակոյթի համար դնահատելի, արժէքաւոր գործ է:

ՀԱՅ ԳՐՈՂ. ՌՆԿ. ՄԻՑԱՆԱԿԻ

Փարփակի Հայ Գրողների Ընկերակցութեան վարչութիւնը սահմանել է դրական մըցանակ, որի նիւթն է լինելու անտիպ կամ տպագրաւած մի վէլ: Տպագրաւած լինելու պարագային պէտք է լոյս տեսած լինի 1 ապրիլ 1934-ից մինչեւ 1934թ. նոյեմբերի վերջը: Մըցումին կարող են մասնակցել միայն Ընկերակցութեան անդամները: Մըցանակի գումարն է 1000 ֆր.: Նիւթը ներկայացնելու պայմանաժամը՝ 30 նոյ., 1934թ.: Ընկերակցութեան հասցէն՝ 261 Fbg. St.- Martin, Paris, 10e.

Մեզ թւում է, որ այս մըցանակը, իր ներկայ ձեռով, եւ անժամանակ է եւ աննպատակայարմար: Անժամանակ է, որովհետեւ Ընկերակցութեան գրամական միջոցները խիստ սահմանափակ են եւ հազիր թէ թոյլ տան նման ծախսեր անելու: Ընկերակցութեան անդամների մի մասի նիւթական վիճակը այնքա՞ն ծանր է, որ Ընկերակցութիւնը եթէ դրամ ունի, ամենից առաջ պարտաւոր է նրանց օգնութեան հասնել տնտեսական տաղանապալից այս շըջանը անփրձաք անցնելու համար: Մըցանակը այսօրւայ պայմաններում պերճանք է:

Երկրորդ մըցանակի կազմակերպութեան ձեւն էլ քննադատելի է: Բայց յայտարարութեան, միայն Հ. Գր. Բնկերակցութեան անդամները իրաւունք ունին մասնակցելու մըցումին: Ընկերակցութիւնը ունի չուրջ 60 անդամ (Տե՛ս Հենանք եւ Արւեստ), 1934թ. է չ 48): Այդ թւի մօմ երկու երրորդը երկարողութեամբ կամ վիճակով անընդունակ է վէկ զրելու ուրեմն, Հ. Գր. Բնկերութեան յայտարարած մըցանակը փաստուն 20-25 հոգու համար է: Աւելի լաւ չէ՞ր, այդ դէպքում, ուղղակի Ընկերակցութեան անդամներին դեմել եւ հրապարակային հարց չդարձընել:

Մըցումի նշանակութիւնը այն է, առաջամարակ, որ ըստ կարելոյն լայն խաւեր շարժման դրւին եւ նոր ուժեր առաջ քաշւին: Հ. Գր. Բնկ.-ութեան մըցանակն էլ հանրային որոշ նշանակութիւն կարող էր ունենալ, եթէ ուղղած լինէր ամենքին, առանց խորութեան, իսկ գուտան կամ անդամների համար սահմանափակութեան միջուկը անդամների մի մասի նիւթական վիճակը այս շըջանը անժամարժ ունեցող մի գործ է՝ անյարմար Հ. Գր. Բնկ.-ութեան անունը կը լուրջ կազմակերպութեան վարկին:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ


Մայիս թիւն Մոսկայում հրատարակած է «Խորհրդ» Միութեան Խորհրդային Գրողների Միութեան Կանոնագիրը, կազմած Համամիութենական կոմունիստական կուսակցութեան կողմից: Այդ կանոնագիրը լինելու Խորհրդը Միութեան մէջ մտնող բոլոր երկների, հետեւարար եւ Հայաստանի համար: Հայաստանի Գրողները իրաւունք չունին իրենց ուղած ձեռով, տեղական պայմաններին համապատասխանող կանոնագիր կազմելու: Նրանք պարտաւոր են ապրել եւ գործել Մոսկայի որոշումներով:

Վերջին երկու տարին խորհրդային գրողները առաջնորդում էին Համակոմիտեն: Կում. Կենտ. Կոմիտէի 1932թ. ապր. 23 որոշումով, որով, ինչպէս յայտնի է, լուծած էին մինչեւ այդ գոյութիւն ունեցող բոլոր կազմակերպութիւնները եւ կազմած էին Համամիութենական եւ տեղական-հանրապետական միութիւնները: Այդ միութիւնները զեկավարում էին, այսպէս կուտած, կազմ. Կոմիտէններով, որոնց պատճնն էր վարել Գրողը. Միութեան դորժերը եւ հրամակայի համարական էին անդունքութեան մասնակի համար: Վերջին մի քանի անդամ նշանակւեց եւ յետաձեւց, որովհետեւ մի հոգից խորհրդային գրանութիւնը չէր դանում գրողների եւ գրականութեան զեկավարութեան վերջնական ձեւը, միւս կողմից գրողների շարքերում էին վերջնութիւնը բնական է, միութիւնից գուրս մնացող չի լինի, որով «Կամաւորութիւն» կը մնայ լոկ անբովանդակի խօսք՝ յատկացւած արտաքին աշխարհի միամիտների համար:

Ինչի է ձգտելու Խորհրդ. Գրողների Միութիւնը: «Խորհրդ. Գրողների Միութիւնը ընդհանուր նպատակ է զնում ստեղծել բարձր զեղարւեստական արժէք ունեցող երկեր, որոնք լինեն յագեցած միջազգային բանուրութեան հերոսական պայտարով, սոցիալիզմի յաղթանակի պաթոսով, որոնք արտացոլեն կոմունիստական կուսակցութեան մեծ իմաստութիւնն ու հերոսութիւնը»:

Գրոծնականում այս ընդհանուր ուղեկիծը արտայալու է նրանով, որ

«Գրական շարժումը սերտ եւ անմիջական կազ պիտի պահէ կուսակցութեան եւ խորհրդային իշխանութեան քաղաքականութեան օրւայ գործօն խնդիրների հետ, գրողները պէտք է մացւին սոցիալիստական շնարարութեան գործնական աշխատանքների մէջ»։ Ուրիշ խօսքով, գրական ազատ ստեղծագործութիւնը ենթարկւելու է կոմունիստ կուսակցութեան խխոտ հակակշռի ու զեկավարութեան եւ գրողը դառնալու է կուսակցական եւ կառավարական պաշտօնեայ: Նրանից պահանջելու է լինել համակատար իշխանութեան եւ անտրասունչ կատարել վերից եկող բոլոր



Դ. ԱՂԱՅԻՆԻ ԱՆՑԱՅՑ ՈՏԱՆԱԿՈՐԾ

Երեւանի «Գրական թերթ»-ը (20 փետր.), Թիֆլիսի 1911 թ. «Մամուլ» օրաթերթի № 6-ից առնելով, հրատարակել է Հաղարոս Աղայինի մինչեւ այժմ անյատ մնացած հետեւեալ ոտանաւորը-

ԳԼՈՒԽԻ ԹԻ ԳԼՈՒԽԻ

(Նիկո ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ
ՊԱՏԳԱՄԱԻՈՒՆԵՐԻՆ)

Երբ որ ընտրութեան լինելք ձեռնամուխ, Դուք զիխարկ կը նորք եւ ոչ քէ զիւլի, Ի՞նչ է վեղարք, երէ ոչ զիխարկ, Որ պարփակում է մի զիւլի դատարկ: Կուզելք ընտրեցք մինչ աղաղակ: Կաթուղիկոս ընտրելուց յետոյ, Խրիմեանը ծանր յուսախարութիւն պատճառեց իր պաշտոներին: Ամենէն չուտ եւ հիմնովին հիսութափողներից մէկը եղաւ Աղայինը, որ անձնական կաշու վրա էր ձաշակեց կաթուղիկոսի բացասական վերաբերումի հետեւանքները: Անչուշա, այս ոտանաւորը՝ գրած նոր կաթուղիկոսի ընտրութեան առթիւ արտայատում էր տալաւորութիւնները այդ հիմնական շարժութեան:



Հրամանները: Զենթարկւողների համար սահմանաւում է յատուկ պատիք՝ արտաքսում միութիւնից. «Խորհրդ՝ Գրողների Միութեան անդամակցութիւնից հեռացնելը կատարում է վարչութեան քարտուղարութեան վճռով»: Միութիւնից կարտարաւի եւ նա, ով մի տարւայ ընթացքում գրական «աղբուղուկցիս» չտայ, այսինքն՝ որեւէ երկ չարտադրէ:

Ինչպէս ասացինք, այս օրէնքը պարտաւորեցուցիչ է եւ Հայաստանի համար: Հայ մշակոյթը եւ, ի մասնաւորի գրականութիւնը, սրանով ենթարկում են մի նոր եւ չատ ծանր փորձութեան:

ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ

ՄԵԼՔՈՆԵԱՆ ՖՈՆԴԻ

րաց աղբիւներ Հայերի եւ Հայաստանի մասին», Ա. Հատոր:

Գ. ԼԵՒՈՆԵԱՆ՝ «Հայ մամուլը սկզբից մինչեւ մեր օրերը»:

ՊՐՈՅ. Հ. ԱՃԱՌԵԱՆ՝ «Արմատական Բառարանի յաւելած»:

ՍՊ. ՄԵԼՔԻՑԵԱՆ՝ «Հայ երաժշտութեան Պատմութիւն Ուրագիծ»:

Մելքոնեան Ֆոնդը հետզետէ լուրջ Հասարակական նշանակութիւն ունեցող գործ է դառնում Հայաստանում: Մինչեւ 1933 թ. 13 հայադիտական արժէքաւոր աշխատութիւններ են հրատարակել այս Փոնդի միջնուրով, որոնց թւում՝ Հ. ԱՃԱՌԵԱՆի «Արմատական բառարան»-ի վերջին Յ հատորը, Ա. ԱԲԵՂԵԱՆի «Հայոց լեզուի տեսութիւն»-ը եւ «Հայոց Տաղաչափութիւնը», Յ. ՅԱԿՈԲԵԱՆի «Ուղեղորութիւններ»-ի Ա. Հատորը, Յ. ՄԵԼԱՆՆԵՅԱՆի «Կշիռներն ու Զափիրը» եւ մանր հետազոտութիւնները, Ե. ՇԱՀԱԶԻՋԻ «Հին երեւանը», «Միք. Նալբանդեանի Դիւնը», Թ. ԹՈՒՐՈՒՄԵԱՆԵԱՆի «Ծինանիթերի գործածութիւնը հին Հայաստանում եւ ՍՊ. ՄԵԼՔԻՑԵԱՆի «Կոմիտասի սուեղծագործութեան» վերլուծութիւնը»:

1934-ի ընթացքին սպազրաւած են եւ մի մասը արդէն իրավարակ համաձայնը. ԲՈՒԽԱԼՄԵԱՆ՝ «Գառնիի հեթանոսական տաճարը», 150 լուսանկարներով եւ չափագրութիւններով:

ՊՐՈՅ. Ա. ԱՃԱՌԵԱՆ՝ «Հայ Սկազագրական ըրջանի քննական պատմութիւնը», մօտ 30 մամուլ:

Պ. ՅԱՅԱՀԵԱՆ՝ «Ուղեղորութիւններ», Բ. Հատոր, 40 մամուլ, կը ցանք Անդրկովկասի 19-րդ դարի սկզբի դունաւոր քարտէզը:

Զ. ԿՈՐԿՈՏԵԱՆ՝ «Հայաստանի պարանակչութեան շարժումը 1828թ. մինչեւ մեր օրերը»:

Մամուլի տակ են.՝ ՊՐՈՅ. ԼԵՒՈՆԵԱՆ ՄԵԼՔԻՑԵԱՆ՝ «Վարի

ՍՊ. ՕՐԲԵԿԻՆ՝ «Հայ Արևեստի պատմութիւն», 20 մամուլ նիւթ եւ 10 մամուլ նկար:

Բացի Հրատարակական աշխատանքներից, Մելքոնեան ֆոնդի պատրաստում է նաև գիտական նոր ուժեր եւ կազմակերպում է դասախոսութիւններ: Այս տարի երեւանի Համալսարանի հա-

յաղիտական ամբիոններին նպաստելու
համար պահևում են Յթոշակաւոր սա-
ներ եւ մի աշխատակից՝ գրադարա-
նում։ Վերջին կիսամետակում ողբափ.
Օրբելին հրաւիրւած է համալսարանում
դասաւանդելու հայ արեւստի պատմու-
թիւնը։

Բացի այդ, Մելքոնեան Յանձնաժողովը ձեռնարկել է Հանրային մատենագործականի կառուցման Համալսարանական թաղամասում։ Շէնքի յատակագիծը կազմել է Ակադ. Ա. Թամանեանը։ Շէնքի առաջին մասը աւարտւելու է այս տարի եւ պարունակելու է մօտ 800, 000 դիրք։ Այսուեղ պէտք է կենտրոնացւին ձեռագիրը եւ գիտական ու գեղարվեստական հրատարակութիւնները։ Շէնքն ունենալու է մի մեծ ընթերցարան եւ առանձին սենեկակիներ՝ գիտահետազոտական աշխատանքների համար։

Մելքոնեան Յանձնագովովը արտա-
սահմանից հաւաքում է Հայոստանին և
կովկասին վերաբերող զիսական հրա-
տարակութիւններ : Արդէն հաւաքած է
մաս 600 Հատոր :

Մելքոնեան Յանձնափողովը Մարդսիդ-
մի-Լենինիզմի Խնատիտուտի և Խորհրդա-
յին Հանրապետարանի հետ միասին կաղ-
մել է գիտական-հրատարակչական բաժ-
նետիրական մի ընկերութիւն «Գիտհրատ»
անունով եւ պատրաստում է հիմնել
սեփական տպարան՝ պլատորամէս գի-
տական հրատարակութիւնների համար։
Տպարանը գետեղեւու է կառուցւող
Հանրապետութիւնների հետում։

(«**h**: **llf**:»; **mum**):

ՃԱՐՏՅՈՒԹՅՈՒՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Երեւանում Մելքոնեան Գոնդի հրա-
սարակութեամբ, լոյս է տեսել ձարտ-
բունիթեանի «Գառնի» մենագրութիւ-
նը՝ Գառնիի աւերաբների մասին։ Գառ-

Քը լոյս է տեսել չփեղ հրատարակութեամբ, բազմաթիւ նկարներով և Հայերէն ու ուսւերէն ծանօթութիւններով։ Գրքին կցւած է Փրանսերէն լեզով ու հվերջաբան։ Այս գործը ձարաւ. Բունիաթեանի բարդամեայ աշխատանքի արդիւնքն է, որի մէջ մանրամասն ուսումնակիւրած են Գառնիի ամրոցի և տաճարի տերբակները։ ձարաւ. Բունիաթեանն գտնում է, որ աւերակների շրջանի յուշարձանների և մակաղրութիւնների հետագայ ուսումնակիւրութիւնը խոչչոյնիւթ կը բարձագրէ հայ ճարտարապետական փուլերի վերլուծութեան եւ, առհասարակ, հայ ճարտարապետաթեան զարգացման աստիճանների բնուրոցման համար։ ((Ա. Ա.Բ.», մարտ) :

ՊՐՈՖ. Լ. ՄԵԼԻՔՍԵՒԹՅԵԿԻ ԱՇԽԱ-
ՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ամբագլութիւնս ստացել է մասնաւոր
աշղիկութիւններ, թիֆլիսի պետական
Համալսարանի ուսուցչապետ Լեւոն
Մշելիքսիթրէկի հետեւեալ դիտական
աշխատանքների մասին:

1.- Ծուտավ լոյս է տեսնելու Մելքոն-
եան ֆոնդի հրատարակութեամբ չորս
հատորնոց մի մենագրութիւն՝ «Վրաց
Աղքարի ըները Հայաստանի եւ Հայերի
մասին», որի առաջին հատորը արդէն
մամուլի տակ է, իսկ երկրորդը՝ յանձ-
նուած է ապագրութեան:

Հետին Փոնդի միջջոցով պիտի հը-
րատարակի «Ենթեր Հայ Գաղրակա-
նուրեան համար Վրաստանում» արդէն
զրած-պատրաստ աշխատութիւնը։ Հա-
տորին իրբեւ յաւելած պիտի կցւի՝
«Հաւաքածոյ Հայկական Արձանագրու-
թիւնների ԺԲ - ԺԲ դարերի»։

3.- Պատրաստում է Սայեաթ Նովայի
60 հայերէն երգերի վրացերէն չափա-
ծոյ թարգմանութիւնը, որ լոյս է տե-
նիու առանձին հատորով եւ պիտի ու-

նենայ յառաջարան, բառարան եւ մատենապրական նիւթերի ցանկ:

4 - Տպում է վրացերէն մի ուսում-
նասիրութիւն իոնա Խելաշվիլի ուղե-
ւորութիւնից Սոմիկեթի և Սայեաթ
Նովայի մասին; Խելաշվիլի հազորքած
տեղեկութիւնները Սայեաթ Նովայի մա-
սին գրեւելու են մեր աշխատակից Յ.
Զաւրեանի յօդւածաշրքի մէջ «Քէմ»-ի
մօռակայ համարում:

5.- Բացի այդ, և Մշելիքսէթրէկը զանագան պարբերականներում տպել է վրացերէն, ոռւսերէն եւ հայերէն լեզուներով գրւած յօդածներ հայագիտական եւ վրացագիտական նիթերի մասին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՐԵԱԹՆԵՐ

Անցեալ տարւայ վերջը, Ծուռաստատնում, “Academja” յայտնի հրատարակչականը լոյս է ընծայել «Հայկական Հեթեարքներ» գրքի երկրորդ տպագրութիւնը: Հասորը զարդարւած է Մարտի Արքանի նկարներով եւ պարունակում է 44 հեքեաթ, որոնց ընտրութիւնը կատարել է Յակովացարեանը: Հատորին կցւած է Մարդիքատ Շահինեանի ընդարձակ յառաջանը: Պրոֆ. Ն. Պ. Անդրէյեւը գլուխել է մի վերջանին, որ համեմատութիւն է անում Հայկական եւ արեւելեան և երսպական հեքեաթների միջև: Տպագրութիւնը մաքուր է եւ հաճելի տպագրութիւն է թղղում:

ԹԱԻՇԵ ԴԻԿՏԱՏՈՐ

1933թ. վերջը Մոսկայում լրիս է
տեսնել ուստի գրող Լյոնիդ Գրոսմանի



ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ԿԱՐԼՈ ՍՖՈՐՑԱ, «Եւրոպայի Բռնատիրութիւնները»

Աւստրիական վերջին դէպքերը բարձացրին շարքը եւրոպական բռնատիրութիւնների, որոնց ծագման, բնութագրման եւ քննութեան է նւիրած նախաֆաշիստ իտալիոյ արտաքին գործոց նախարար կոմս Սփորցայի այս գիրքը։ Ազատականութեան իտալացի այս ներկայացուցիչը շատ հետաքրքիր եւ հրաժար կերպով է պատասխանում իր իսկ դրած հարցումներին։

1) Ինչո՞ւ պատերազմը իր հետ բերեց բռնատիրութիւնների համաձարակ։

2) Երեւոյթը տեւական զարգացման բնոյթ ունի, թէ անցողական է։

3) Պատմութիւնը եւ ընկերային պատճառները զանազան բռնատիրութիւնների։

4) Ի՞նչ է ընդհանուրը եւրոպական բռնատիրութիւնների մէջ։

5) Ինչպէ՞ս է տրամադրութիւնները համը զարձած զանգվածների։

Այս հարցերին պատասխանելու համար, Սփորցան ներկայացնում է իտալական, ուսւական, հոգուական, լեհ, թիւրք եւ սպանական բռնատիրութիւնները, ինչպէս նաև դերման հիտլերականութիւնը։ Գրախօսականին սահմանելում մէնք առ բերենք էր միայն ինչին կամ նոյն իսկ Տրոցիկի նստաւ։ Ռուսիոյ այժմեան տէրերը միայն կարող են ամէն տեսակ սստիկական միջոցներով աքսորել կամ բանարկել իրենց հակառակորդներին։ Մտքի տեսակէտից սակայն նըրանք ամենափոքր հետաքրքրութեան իսկ արժանի չեն։

Այս Սփորցան համայնալար կուսակցութեան մասին տալիս է թիւրք ապացուցանելու համար, նրա անհան փոքրամասնութիւն լինելը, իսկ Մոսկայի և Պետրոգրադի բանուրների խորհրդային իշխանութեան կողմանկաց լինելը բացարում է ուսւական միստիցիզմով եւ կրօնական ձգտումով, «թէեւ այդ օտարութիւրք մի երկրի համար, ուր Մարքսի պատմական մատերիալիզմը պաշտօնական ճշմարտութիւն է»։ Սփորցան իր անձնական տպաւորութիւնների միա հիմնելով պնդում է, որ «ուսւականիքը բնաւորութիւնը ուսւականիքը բնաւորութիւնը ուսւականիքը բնաւորութիւնը»։ ուսւականիքը բնաւորութիւնը»։

ուսւական մաս, որ «իրենք իրենց վրա են վերցնում ցաւերի բեռը, որպէսզի իրենց որդիները բախտաւոր լինեն»։ նըրանց թւում է, թէ «իրենք ուղի են պատրաստում նոր բախտաւոր մարդկութեան համար»։ Նոյնպէս կրօնական միստիք երեւոյթ է հնդամեակը, որ ինքնին, ըստ Սփորցայի, «ամերիկան տընտեսական վերականգման ծրագրի ծուռ հայելին և անյաջող պատճէնն է»։ «Երբ որ ես, զրում է Սփորցան, թուսաստան այցելեցի, վկայ եղայ մի նոր կրօնի զարգացման՝ կէսը քարոզ, կէսը առեւտուր (բիզնէս), բայց եւ այնպէս կրօն։ Մեր կոյր լինելը արդիլում է հասկանալ որ նուսաստանի գէպքերը հիմնովին կրօնական բնոյթ ունեն, ուրիշ խնդիր է թէ որքան տեւական է լինելու»։ Եթէ մենք կարծում ենք, որ կոմունիզմը վերացրել է պատմութեան եւ կենսունակութեան չութիւնը, չպէտք է մսունանք, որ նոյնը տեղի է ունեցել եւ ուրիշ կրօնների ծագման ժամանակ։ Երբ որ առում է, թէ կոմունիզմը հիմնելու բնութեամբ մուռնադ փոքրամասնութեան կողմից, այդ նշանակում է, որ նա ոչ թէ քաղաքական կուսակցութիւն է, այլ ազանդ, եւ որ լինելը իր մէջ չափակորդութիւնը է ամենական կամ բանարկել իրենց հակառակորդներին։ Տիգի տեսակէտից սակայն նըրանք ամենափոքր հետաքրքրութեան իսկ արժանի չեն։

Ո՞ր հային իշխանութեան եւ զիւղացիների յարակերութիւններն են գիշը ուսւական գէպքերի։ Հայի խընդիրն է հիմնականը։ Գիւղացիները հոգի համար պայտքարեցին եւ ոչ թէ կենինի գաղափարների։ Գիւղացիները հոգերանութիւնն է, «մեղ պատկանում գերանութիւնը է»։ Տիգի պատկանական գողը, իսկ հունձքը ձեզ, մէնք ցանք, իսկ դուք հնձէք։ Եւ գաղարեցին ցանել, հետեւանքը եղայ 1921-ի ոսվը։ Նոյն վիճակն է եւ այժմ։

Հետաքրքիր է զիւղացիական համայնացման՝ «էուլիսողների» քաղաքականութեան բացարարութիւնը։ Կոլմողների թեսակը մէջ մասը երեք պատութիւնը նըրանք ոչ զգում են աղատութեան պակասը, ոչ էլ գնահատում են»։

«Պիտի յաջողւի՞ հնդամեակը թէ ոչ։ Սփորցան պատասխանում է՝ «Հաւանարար Խորհուրդները եւ նըրանցով հիանալու աղատութեան պակասը, ոչ էլ գնահատում

ყულნერը պիտի պնդեნ, թէ ծրագիրը
ჩემა կանաց լած է, եւ արտաքուստ, տա-
ռացիօրէն թերեւս, այքան էլ անձիշտ
չլինի: Բայց Հնդկամեեկից՝ յետոյ Ուռ-
սաստանը կը լինի աւելի ազքատ, ա-
ւելի սովոր եւ աւելի բնիած»:

ՍՊՈՐԳԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ Եղբակացու-
թիւնն է. «Եթէ ինձ հարցնեն, իբրև լուշեւիզի հակառակորդի, թէ օգտա-
կտ որեւէ բան պիտի ծնի՞ համայնս-
վար փոքրծց Թուսաստանում, ես կը
պատասխանեմ, թէ Հռոմի անկումը
առաւելութիւն էր եւ ինչ օգտւու ունե-
ցաւ: Կարելի է միայն այսքանը ասել, որ
Հռոմը անկումի մգեց ազատագրական
այն զգացումը, որը ոգիներին ներար-
կեց քրիստոնէութեան յեղափոխութիւ-
նը, եւ գժւար է նախատեսել, թէ ինչ-
պէս համայնական ստրկութիւնը, որ
հոգեբանօրէն եւ բարոյականօրէն սպառ-
նում է Թուսաստանին, պիտի տայ ոզի-
ներին այն ուղղութիւնը, ինչ որ յա-
ջողւեց քրիստոնեայ յեղափոխութեանը
Հռոմում: Եթէ այդ չեղաւ, մնացածը
իոշի է եւ մոխիրը»:

ՍՓորցայի արտայայտած տեսակէտ-
րը բացի գատողութիւններից հնգ-
մեակի մասին, ի հարկէ, վիճելի են:
Յայց նշանակալիցը այն է, որ եւրոպա-
ան ազատականութիւնը հետզդեռէ
կիսում է ճանաչել բոլշեվիզմը եւ նը-
ան այլեւս չի պանծացնում, իբրև
արական մտրակը վերացնողի, այլ նոր
ուժի սոսկալի մտրակի է տեսնում նրա
էջ: Յարական մտրակը նետողները
ուշեւիկների հետ չեն, այլ նըանց դէմ
ն:

ՍՓորցան յատուկ գլուխ է ներել
Խորհրդային իմպերիալիզմին»։ Նիւթը
սրտափին քաղաքականութեան է վերա-
երում, եւ ՍՓորցան աւելին է տես-
ում, քան թէ միւս առաջարկներում,
ևս գլուխը արժանի է, որ աճողջու-
թեամբ առաջ բերւի, բայց տեղը եւ
բախօսական նեղ սահմանները արգի-
ւում են այդ։ Հետաքրքրուղները, բացի

գերմաներէնից, Սփորցիայի հատորը կը դանին նաև անդեւերէն թարգմանութեամբ, "European Dictatorships". Խորհուրդների արտաքին քաղաքականութիւնը միացնում է «յեղափոխական ողին հին ցարական զիւանապիտութեան նպատակներին», ինչպէս և առաջ: «Եւաւ Խորհրդային Ռուսիան Ասիայում է յաջողութիւններ պնտարում, երբ որ Եւրոպայում անյաջողութեան է հանդիպում»:

Սփարցան ճամբրութել է Մոնկոլիխ,
Մանջուրիա, եւ նրա նկարագրութիւնը
ուստական թափանցման հին ուղիների
հասկանալիք է գարճնում ձապանի քայլե-
րը Մանջուրիայում: Մօսից զիտել է նաև
որոշեւիկեան ջանքերը Զինաստանում:
Նրա եղրակացութիւնն է. «Քուսաստանը,
լինի սպիտակ թէ կարմիր, նոյնազէս
տաւած է չինացիներից, ինչպէս եւ
րոլոր եւրոպացիները: Ստալինի կարմիր
գործավարները Զինաստանում, իրենք էլ
չդիտակցելով, թափառում են հին ցա-
րական զօրավարների եւ զեսպանների
հետքերով»: Այս գիտակցութիւնը մենք
ունենք բոլչեւիկեան յեղափոխութեան

三

Բոլորովին տարբեր է թիւքը բռնատիւթութեան գնահատութիւնը: «Յետպատերազմեան բռնապետութիւնների մէջ, զրում է Սփորցան, թւում է թէ միայն Մուսթաֆա Քէմալն է տմենայաջնղակը, տոնւազն դէմ մինչեւ այժմ: Թիւրքազգայնական շարժման հիմքը զրւել է 1909-ին Սելանիկում Զիա բէյ անունով սոփրանակերտցի մի թիւքը կողմէց»: Բոսնիան եւ բալկաննեան պատերազմը ուրածեցին այդ շարժումը, իսկ «Դաշնակիցների եւ Վիլսոնի մեծագոյն սիմբոլ՝ յոյներին տրւած թոյլտութիւնը Զմիւննա իջնելու, լրացրեց պակասը»: Անք, Սփորցան դէմ է եղել այդ գործողութեան: «1918-ին, իբրև Պոլսոյ

բարձր կոմիսար, Փարփղի Չորսի Խօսը-
հըրգին բազմաթիւ անդամներ բողոքե-
ցի, որովհետեւ այդ մի արիւնալի գոր-
ծողութիւն էր, որից Յունաստանը գուրս
եկաւ, մահացու վէրքով։ Նման բռնի
փոխութիւն կարող էին անել, նրանք,
ովքեր չէին տեսնում վարագոյրի ե-
տեւը։ Յունաստանի ճակատագիրը կըն-
քըւած էր այն օրը, երբ որ վայլով Ա-
թիչնը տեսնդի մէջ էր, թէ՝ չէլլէնա-
կան գրօններն արգէն պարզել են Զժիս-
նիայի պատերի վրա։ Ապա Սփորցան
անում է ծանօթ պատմութիւնը միլի
շարժման կազմակերպման։ «Ասն-Ռէմօի
խորհրդադողովի նախօքէին լրոր Քըր-

զընը ասաւ՝ «Քէմալի իրական ոյժը զերագնահատում է, նո կարեւոր գործօն չէ, ինչպէս ոմանք կարծում են»; «Ոմանքը»-ը վերաբերում էր ինձ. ես ձգտում էի խաղաղ քաղաքականութեան թիւրքիոյ հանդիպ: Աւելի վստահ էր կոյդ Զորջ Սան-Ռէմօից յետոյ, յունիսին, երբ իր կոնդոնի համեստաւոր ձառում յայտնեց, թէ միայն Յունաստանը մնանկ ընդունակ է թիւրք կառավարութիւնը: «Պուծելք»: Նոյնը Բուլոնի, Սպայի և Լոնդոնի խորչը բարեգուղւածում:

«1921-ի ամսուը յոյները զբաւեցին Ա-
ֆիօն-Գարահիսար և Քէօթահիսան: Նը-
րանց ճակատը մի տարի մնաց կանգ-
նած, աւելի ճիշտ տասօն, Քէմալը վես-
տահութիւն անցաւ սպասել, մի վըս-
տահութիւն, որը աւելի հաջողպիտ էր
քան թէ յարձակման վստահութիւնը:
Վերջապէս, երբ զգաց, որ զինւած ու
ովատրասոն է, անցաւ յարձակման: Մը-
նացածը հայ ընթերցողներին յայտնի
է: Բայց Սփորցան, չատ աւելի տեղ-
եակ է, չի սոսում, թէ Քէմալը ո՞րտե-
ղից ստացաւ զինքն ու վստահութիւնը:
Միայն մէկ զիպւածի առթիւ է մատ-
նահումը իր, այսինքն իտալիոյ վերը եւ
կապը Քէմալի հետ: Խտապահան զաղութի
ապստամք սենուսիների պետք փախել
էր բրուսա: Սփորցան ջանք է թափում

Մի ընդհանուր նկատողութիւն եւս. Սփորցիայի թիւրքիան տարածւում է ծովեղերթից մինչեւ ինկիւրի, աւելի գէպի արեւելք Սփորցան ոչինչ չի տեսել եւ կարծես թէ նրա համար ոչինչ չի պատահել. Քէմալի իշխանութիւնը ոչ հայկական խնդիր է ունեցել, ոչ բրդական ոչ էլ Մուսուլի հարց: Մի րան միայն Սփորցան չի հաւատում, այդ էլ, ըստ երեսոյթին, իտալական առեւտրի շահերի եւսակէտից: «Տնտեսական կեանքում, գրում է նա, անուղղելի սիալներ արաւ Քէմալը: Հայերի եւ յոյների գէմ անուցւած առելութիւնը ցոյց է տալիս, որ Քէմալի քաղաքականութիւնը տնտեսական մարդում կոյր է եղել: Մուսութափա Քէմալը հաւատում էր, թէ հէնց որ տարերը քշեն, բոլոր շահերը պիտի հոսեն թիւրքերի գրպանը: Նա չհասկացաւ, որ յոյների, հայերի եւ երպական ծագում ունեցող լեւանտիների առեւտրական ոգին հետեւանք է հարիւրաւոր տարիների զարգացման: Ինկիւրի տարատեսութիւնը թիւրքերին թանկ է նստում:

Սփորցան կարծում է, թէ Քէմալի բարենորդումները տեսական են եւ ժո-

ղոմրդի կողմից ընդունւած: Յատուկ համակրութիւն ունի նա հանդէս Քէմալի թիւրք ժողովրդի: «Թիւրքերը ուամկալար ժողովուրդ են», եւ իր այս պնդումը հիմնաւորում է բաւական անլուրծ ձեւով, մի անեղելուով, որ պատմել է նրան մեծ վեղիր մերիդ փաշան: Գոնիացի մի զիւղացի գալիս է Պոլիս եւ ուղղակի զնում է պալատ սուլթանից արտօնութիւն ինդրելու: Գիւղացին մանում է ներս, որտեղ նստած էր սուլթանը իր վեղիներով, եւ պարզորէն հարցում է, թէ՝ «Հանքինիս Խունդեկար» (ո՞րն է ձեղնից սուլթանը): Եթէ այս հեքիաթը կարող է աշխարհ տեսած Սփորցային համոզել թիւրք կամ ուրիշ զեմոկրատութեան մէջ, կարելի է ուղղակի արդահատել եւրոպական ամ բ ո դ իրազեկութիւնը Արեւելքի մասին: «Քէմալի միակ սխալը, ըստ Սփորցայի, այն է, ինչպէս եւ Պետրո Մեծինը, որ լաւատնորէն հաւատում է թէ երկրի պատմութեան ընթացք կարելի է բոնութեամբ փոխել: Բնատիրութիւններ խարազանող հատորը՝ Պոլսոյ առաջ կանգնելով բռնտիրութեան ջառագով է գարձել:

Ն. ԲԱԴԱԼՅԱՆ

Ա. Ա. ԲԱԼԵՏԻԿԵԱՆ, «Արարկիր եւ Շրջակայի Գիւղերը»

(Պատմական-պատմական համառօտ տեսութիւն) Պէյրուր, 1934

Հայաստանը, մասնաւորապէս արեւ-մըտեան Հայաստանը, աղջազրօրէն շատ քիչ է ուսումնասիրաւած: Մեր անցեալը իր բոլոր կողմերովը այսօր ալ կը մնայ կիսաստերի մէջ ու մանաւանդ այսօր շատ աւելի զժւար է, աւելի ճիշտը, անկարելի է - այս ուղղութեամբ ան-թերի կամ նոյն իսկ գոհացուցիչ աշ-խատանք կատարել:

Երէկ ժողովուրդն ու հայենիքը կենանի էին, հարուստ իրենց աւան-դութիւններով եւ յիշատակներով, այս-օր թրքահայութիւնը թաղւած է իր եր-

կըրին աւերակներուն տակ, եւ թիւրք րարրարուսութիւնը ժողովուրդը բնա-ջնջելէ յեսոյ յամառօրէն ու սիսթե-մաթիկօրէն կը ջանայ ջնջել այդ ժողո-վուրդը յիշեցնող պատմական, զեղար-ւեստական ու մշակութային ամէն հետք:

Այս աննպաստ պայմանները սակայն պէտք չէ պատճառ ըլլան, որպէսզի յենք ետ կենանք ի գլուխ հանելու այն՝ ինչ որ հնարաւոր է, փրկելու մեր հե-ռաւոր թէ մօտաւոր անցեալին այն բո-լոր՝ ինչ կարելի է փրկել մարդոց ու

ժամանակի քայլայիչ ազգեցութենէն: Այս տեսակէտէն դատելով՝ կատարւած ամէնէն համեստ աշխատանքներն իսկ արժանի են անվերտապահ գնահատու-թեան:

Ահա հայկական զարհուրանքի բովին անցած երիտասարդ մը, Ս. Բախտիկ-եան, որ Հաղի հինգ տարեկան, տա-րապրաւած է իր ծննդավայր Արարկիրէն, որուն ազօտ յիշատակը միայն կը պա-հէ իր յիշողութեան մէջ եւ սակայն այսօր մեր առջեւ կը զնէ գործուրանքի արժանի դիրք մը, որ կը ճափու մոռա-ցութեան փոշիներէն չափով մը գոնէ փրկել հայարանակ ըշան մը, Արարկիրն ու ըրջակայ հայ գիւղերը:

Հեղինակը, ինչքան որ իր պայման-ները ներած են, ջանացած է օգոստի հայ եւ օտար աղբիւրներէ, կարելի ե-ղածին չափ շատ բան ըսելու համար: Ան՝ եթէ չէ կրցած նիւթը սպառել, այնու ամենայնիւ տաւծ է իր նիւթին հասաւ ամփերէ առեւ աղբիւրներէ, աղբեկ-ներուն ու հեղինակաւորներուն թողով միսով ու արիւնով օժտելու աշխատան-քը:

Գաղափար մը տալու համար այս գըր-քի մասին ըսենք թէ հեղինակը իր նիւ-թը բաժնաւած է հօթը զլուխներու: Ա.- Պատմական, Բ.- Զրադմունիք, Գ.- Կը-րօնական, Դ.- Ասաւածքներ, Ե.- Ա-րարկիրանակ կիմը, Զ.- Արարկիրի բա-րարկիրանակ կիմը, Է.- Արարկիրի հայա-նահիւսութեան գանձերը: Կարելի՛ է եւ մին՝ եւ միւսը;

Մեր հայրենական միութիւնները, ամէն երկնքի տակ, բոլո՞րն ալ ունին նիւթական միջոցներ, հատորով մը տա-լու իրենց պատկանած զաւառին պատ-մական-պատմական պատկերը: Այդ միութիւնները ամէն տարի, բաղմաթիւ-տիւթերով, տեղի ու անսեղի ահազին ծախսեր կընեն, հետեւաբար երբեք չպե-տի գտարանան հոգալու նաեւ ծախքը ձեռնարկի մը, որ լոյս աշխարհ պիտի հանէր իրենց բնագաւառին կեանքը իր ըսլոր կողմերովը:

Վստահ եմ թէ ոչ մէկ հայրենակա-կան միութիւն պիտի խուսափէր զահո-ղութենէ՝ կը բաւէ որ ամէն միութիւն իր ծոցին մէջ ունենար մի քանի բանի-մաց անհատներ, զործին ընթացք տա-լու եւ անոր կարեւորութիւնը բացա-մըրելու համար:

Ա. ՍԵՒԱՆ

մը ըլլալու դատապարտւած է քաղաք-ներու բաղդատմամբ: Իսկ Պէյրութ նստած հեղինակին համար աւելի դիւ-րին էր նիւթ ճարել քաղքի մասին քոն թէ գիւղերուն, որոնք մեր երջանիկ ա-րերուն իսկ անկախ գիտիմներ էին:

Ս. Բախտիկեանի հատորը, բացի իր ազգագրական արժէքէն, ունի նաև կըւ-թիւ նշանակութիւն մը: Ան ընթերցո-ղին մէջ կարթնակ կարօտը, այրող ու մըրկո՞ղ կարօտը նահատակ հայ գիւ-րին, որ այլեւս չերգեր ու չի ծասր, որ յիշատակ մէկ միայն քաղցը ու կոկեցնող:

«Արարկիրն աշակական զարհուր բացի իր անդրադառնալ քա-նի մը ինդիւններու եւ հարցնելու... Ա.- Հնարաւոր չէ՞ր, որ ամէն հայ-րենական միութիւն նախածնենարկ ըլլար փրկելու իր գաւառէն այն բոլո-րը իր հատաւոր է:»

Բ.- Ատենը չէ արդեօք մտածել կո-րուսէ փրկելու եւ խոշոր հատորի մը մէջ ամփոփելու հին ու նոր մեր ժո-ղովրական բանահիւսութեան գանձերը: Կարելի՛ է եւ մին՝ եւ միւսը:

Մեր հայրենական միութիւնները, ամէն երկնքի տակ, բոլո՞րն ալ ունին նիւթական միջոցներ, հատորով մը տա-լու իրենց պատկանած զաւառին պատ-մական-պատմական պատկերը: Այդ միութիւնները ամէն տարի, բաղմաթիւ-տիւթերով, տեղի ու անսեղի ահազին ծախսեր կընեն, հետեւաբար երբեք չպե-տի գտարանան հոգալու նաեւ ծախքը ձեռնարկի մը, որ լոյս աշխարհ պիտի հանէր իրենց բնագաւառին կեանքը իր ըսլոր կողմերովը:

Վստահ եմ թէ ոչ մէկ հայրենակա-կան միութիւն պիտի խուսափէր զահո-ղութենէ՝ կը բաւէ որ ամէն միութիւն իր ծոցին մէջ ունենար մի քանի բանի-մաց անհատներ, զործին ընթացք տա-լու եւ անոր կարեւորութիւնը բացա-մըրելու համար:

Ա. ԳԻՒԼԵԱՆԴԱՆԵԱՆ, «Հայ - Թաքարական Ընդհարումները»

Հատոր Ա. Բագուի առաջին ընդհարումները, Փարիզ, 1933:

Այս գրքի մասին մեր մամուլը արտայայտեց ջերմ համակառանգով՝ ընդոգելով յատկապէս նրա դաստիարակութան արժքը նոր սերնդի համար։ Ամբողջապէս միանալով այդ արտայայտութիւններին՝ մենք անհրաժեշտ ենք համարում Ա. Գիւլմանդանեանի աշխատաթիեան մօտենալ նաեւ իրեւ պատմական աշխատութեան։ Այս տեսակէտեց

Սիամած չենք լինի, ևթէ Ա. Գիւրի-
խանդանեանի զործը դասենք պատմա-
կան յուշագրութեան շարքը. Իբրև դէպ-
քերի անմիջական ժամանակից, նոյն իսկ
դէկավար գեր կատարող՝ հեղինակը խօ-
սում է ոչ որպէս առարկայական պատ-
մաբան, այլ ականատեսի ու գերակատա-
րի հանգամանքով, յանախ, կիրառելով
նաեւ առաջին դէքով պատմողի ձեւը:
Եւ, մեր կարծեքով, զրքի ամենազնա-
հատելի մասը հէնց այս է. այստեղ հե-
ղինակը տալիս է նոր գծեր ու լուսա-
բանութիւններ, մինչդեռ պատմութեան
միւս մասերը ընդհանրապէս առնւած
են արդէն հրատարակւած աղբիւրներից
եւ առանձին նորութիւն չեն պարունա-
կում:

Ա. Գիւլիանդանեանի գիրքը բովանդակում է Բագուրի 4 օրւայ ընդհարումներին նկարագրութիւնը (1905 թ. գիտր. 6-9): Ապա տրւում են տեղեկութիւններ գիտրւարեան դէպքերի ժամանակ աչքի ընկած մարտիկների, գործիչների և կուսակցութիւնների մասին: Վեր են հանւում ընդհարումներից անմիջապէս յետոյ պատահած անցուղարձերը՝ քաղաքացիների կատարած աշխատանքները, նպաստի գործը, խաղաղաբար յանձնաժողովները, ականատեսների վկայութիւնները եւ, գերջապէս, ուսւ կառավարութեան խաղացած գերը:

Ի մի հուափելու ոչ միայն մամուլի մէջ երեւցածները, այլ եւ ականատեսների վկայութիւնները», պէտք է յայտնենք, որ այդ ուղղութեամբ բաւական դործ կատարւած է: Յիշենք, թէկուզ, Ա-Դօի ահսորը Հայ-Թքական ընդհարումների մասին, Մ. Յովհաննիսեանի (Վարանդիան), «Կովկասիան Վանդէա»-ն, Գ. Անանունի «Բուռահայերի հասարակական զարգացումը», Յ-րդ Հասարակական ոգութեան է եւ ինքը Ա. Գիւլիանդանեանը, Արամայիսի գիրքը «Յառանդանեանը», Արամայիսի գիրքը «Յառանդանեանը» մատենաշարում, Մ. Վարանդեանի «Հ. Յ. Պատմութիւն»-ը եւայլն,

այլեւ Վ. Մայեսկու եւ Ս. Զաւարեա-
նի սուսեբէն գրքերը: Ճիշտ է, Ա. Գիւլ-
խանդանեանի ծրադրած լայն սահման-
ներով աշխատանք չէ կատարւած բայց
տրւածը, յամենայն դէպս, անոնք առ-
նըսելիք բան չէ:

Գալով ներկայ գրաֆոսականի առարկայ էղող հատորին, կուզքինք անել մի քանի գիտողութիւններ՝ յատկապէս յաջորդ հատորները կազմելիս ի նկատի ունենալու համար: Ամենից առաջ աչքի է զարնում աշխատութեան փաստական-ժամանակադրական մասի թուլութիւնը, մանաւանդ գործիչների և մարտիկների կենսագրութիւնների մէջ: Սրանց մաս-սին հեղինակը տալիս է շատ կարճ տե-ղեկութիւններ՝ և աւելի՝ անձնական խորհրդադութիւններ: Պատմական տե-սակտից կարեւորը փաստն է. խորհր-դածութիւնը պէտք է բնի փաստից:

Զեն լուսարանուած ինքնապաշտպա-
նութեան կազմակերպութեան ձեւը, զե-
կավար մարմնի կազմն ու զործու-
նէութիւնը, նեկութ-Դումանի գերը, նա-
և զերը Հասարակուհան խաւերի: Նոյ-
նը՝ եւ Հակառակորդի մօտ:

Զեն քննուած Հայ-թաթարական ընդ-
հարսումների ծագման պատճառները,
մի բան որ թւում է թէ, պէտք է ար-
էր Հէնց առաջին Հաստրում։ Զեն օդ-
տագործւած սենատոր Կուզմինսկու կա-
տարած քննութեան նիւթերը, փոխար-
քայ Վորոնցով-Դաշկովի ցարին ուղ-
դարկած տեղեկագրերը եւայլն։

Զեն հիմնաւորւած եւ գ օրւայ կարի-
ների հասցրած մարդկային եւ նիւթա-
կան զույքերի թիւը: Ա. Գուլբանդանեա-
նը իր բեռած տեղեկութիւնները քաղեւ
է դ. Անանունի զբքից (Էջ 168-169):
Անանունը տալիս է սեն. Կուղբինսկու
և Բ. Գոլուխանեանի հաղորդած թիւե-
րը: Բայ առաջնի սպանւած է 234 հայ
և 41 թուրք. վիրաւորւած է 104 հայ,
87 թուրք: Բայ երկրորդի սպանւած է
205 հայ և 111 թուրք. վիրաւորւած է
121 հայ և 128 թուրք: Գուլբանդան-

եանը առել է Գոլուխանեանի թիւերը.
հնչո՞ւ ոչ կուզմինսկու մնում է մութ:

Նոյնը պէսք է ասել եւ նիւթական կորուստների մասին. Դ. Անանունը, յեն-ելով «Մշակ»-ի հրատարակած տւեալ-արի վրա, ըսդհանուր վնասը ցոյց է տալիս Յ մէլիոն բուրլի. Գիւլիսանդան-անը կրկնում է այդ թիւը. «ամբողջ նասը հաշում էր մօտ Յ մէլիոն ոսկի ուրլի, որի մէծագոյն մասը հայկա- ան էր»: Դ. Անանունը իր թէքը առաջ- բերում որոշ վերապահութեամբ եւ ոյց տալով աղբիւները. Գիւլիսան- անեանը ներկայացնում է որպէս հաս- տաւած փաստ եւ աղբիւները ցոյց- ալու փոխարէն՝ յայտնում է՝ «ինչ- էլս ցոյց տեսք վիճակագրութիւնը» (էջ 5). ո՞ւ վիճակագրութիւնը -մնում է նյայու:

Այս ընդհանուր դիտողութիւններից առաջ՝ նաև երկու մասնակի ճշտումները: Չորրորդ գլուխը սկսում է այս փոփոքի խօսքով. «Ճաշտութիւնից անձիւ պայմանը յետոյ, Բաղու քաղաքում սկըսացին աննախընթաց ժողովներ (էջ 117): Նկարագրուում են այդ ժողովները: առաջում է ապաւորութիւն, որ այդ ժողովները արգելնեք էին հայ-թաթառական ընդհարումների, այն ինչ նըստանք բխում էին ցարիքմի ճապոնական կաստում կրած չշմեցնող հարածներց. ուսւածածնական պատերազմը ըջանուում էր պարտութեամբ, եւ Ռուսուսնակի ժողովուրդների լեզուն սկըսում էր բացւել: Մկսուում էր յեղափոխութիւնը:

Ասամոն Յարութիւննեանի մասին խօսիս (էջ 169), Գիւլիանդանեանը գըտած է. «1913-14 թ. նա նորից փորձեց տեսնալ Դաշնակցութեան, բայց ոչ մի պիհնք չունեցաւ, որովհետեւ Դաշնակցութեան արդէն յայտնի էր նրա յնը: Այս վերջին փորձից յետոյ նա զմիշտ մնաց Դաշնակցութեան երդաւալ հակառակորդների շարքում»: Արարութիւնը պահանջում է ասել, որ

Ս. Յարութիւնեանը թէ 1913-14 թւականներին եւ թէ Նրանից յետոյ, մինչեւ 1917 թ. փետրարեան յեղափոխութիւնը, մօտ էր Դաշնակցութեան եւ գործում էր Համերաշխ դաշնակցականների հետ Ազգ՝ Բիբրոյում եւ Բարեգործական Ընկերութեան մէջ։ 1917 թ. մարտին էր, որ նա փորձեց մտնել Դաշնակցութեան շաքերը, բայց մերժւելով՝ գնաց կազմեց Հայ ժողովրդական կուսակցութիւնը։

ԳՐ. 3. ԱՂԱԲԱԲԵԱՆ, «Հայաստանի Լեռսիտենբը»

Երկրաբանական եւ արդիւնաբերական

ԱՐԱՐԱՏԻ ՎԻՃԱԿ, ԹԵՂԹԱՆԻ, 1932:

Այս գրքոյնկը վրիպեց հայ մամոււի
տեսազութիւնից, մինչդեռ թէ իր Հեղի-
նակը եւ թէ շօշափած հարցը արժանի
են ուշաբրութեան։ Հեղինակը՝ պ. Գ.
Աղաբարեան, Հին հասարակական գոր-
ծիչ է, իբրև Հանքերի քաղաքացիական
հարտարագիտ, Հմուտ մասնագիտ եւ
Հայաստանի բնական հարստութիւնների
լաւատեղեակ անձերից մէկը։ Նրա յօդ-
ւածները կովկասահայ մամուլում միջու-
էլ յափեցած էին բաղմակողմանի տըլ-
եալներով եւ ընթերցողին տալիս էին
Հիմնական տեղեկութիւններ։ Յիշենք,
թէկուզ, Հայաստանի անկախութեան օ-
րերին Արարատեան դաշտի բնական հա-
րստութիւններին ներիւած նրա երկա-
րաշունչ ուսումնասիրութիւնները։

Գրաբառութեան առարկայ կազմող
Ներկայ գրքոյիլը նոյնակէս նւիրւած է
Հայաստանի բնական հարստութիւննե-
րին. նա քննում է, զուտ մասնագիտա-
կան տեսակէտից, Հայաստանի լեռսի-
տի օգտագործման խնդիրը: Լեռսիտը
(leucite) տնտեսական բարձր ար-
ժէք ներկայացնող պոտաս և ալիւմին
պարունակող մի համար է, որ, իրեւ ար-
դիւնաբերական նիւթ, վերջէրս սկսւել է
օգտագործել ճարտարաբեռութեան հ-
դանակով:

Մանր դիտողութիւնների այս չարքը
արելի է շարունակել, բայց այլքանն
ըստ բաւական է մեր հիմնական մտքի
և ամառ՝ յաջորդ համորդները կազմելիս
հանուլ խուսափիլ նման թերութիւննե-
րից: Եթէ մենք այսքան երկար կանգ
ոռինք Ա. Գիւլմանդանեանի զրքի վրա,
զամանական այն է, որ համարում ենք
ենթական շատ զամանական եւ կը կամե-
այինք որ լինէր անթերի

U. S.

ւիրել մասնագէտների եւ Հայաստանի
տնտեսական իշխանութեանց ուշադրու-
թիւնը հայկական լեռսխների ուսում-
նասիրութեան եւ արդիւնաբերական շա-
հագործման անհրաժեշտութեան վրա:
Մինչեւ այժմ, սակայն, այս ուղղու-
թեամբ որեւէս արձագանք չլսեցինք:
Հայաստանի տնտեսական հիմնարկու-
թիւնները Ղափանի պղնձահանքերի յա-
փեանական «Ճեղքաւածք»-ներից աչք չեն
բանում եւ լեռսխներով զրագլելու գլ-
ուխի չունեն, իսկ արտասահմանում...
Արտասահմանում էլ ո՞վ է իրապէս հե-
տափրառում Հայաստանի տնտեսական
արժէքներով եւ ո՞վ է ծանօթ Հայա-
տանի բնական հարստութիւններին, որ
կարողանայ ըմբռնել պ. Աղարաբեանի
յարուցած խնդրի կարեւորութիւնը:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ, 13 ՓԵՄՊ. , Նոր-ԶՈՒՊԱ

թէհըտնի «Վերածնունդ» թէրթի յուն. 29-ի թւում պ. Արամ Երեմեանը ասորագրել է մի յօդած՝ «Ա՞րն է Հայերէն առաջին առաջիր պիէսը» խորագրով։ Ու գտնում է, որ Հայերէն առաջին առաջիր Թատերգութիւնը 1821 թ. Կալկաթայում Հայտարակութ «Խորագիմայ Դժբողոքութեան»-ն է։ այսինքն՝ առաջին կը կը ուրիշ պահի մասին մենք, զեռնցեալ յուրիշին, մէկ ուսումնասիրուանցեալ պարագաներու «Վկէմ»-ի Ա. Թիւթիւնը կինք ուղարկել «Վկէմ»-ի Բ. Համար եւ որ լոյս տեսաւ «Վկէմ»-ի Բ. Շունիքը. - Դեկտ. թւում։

1.- Պ. Երեմեանը, իրեն հաւատողների վկայութեամբ, այն մարդկանցից է,

որ թանաքը գեռ չչորցած, տպարան կը վազի՝ իր գրածն իսկոյն սպազրել տաւու համար։ Արդ, ի՞նչպէս պատահեց, որ նա 1933թ. սեպտեմբերից մինչեւ 1934 յունաւր, այսինքն՝ ամբողջ 5 տարի, համբերեց, այն էլ, մանաւանդ, երբ մի կարեւոր գիւտ – Հայ Թատերապւրութեան սկիզբը – պիտի աւետէր աշխարհէն։

2.- Իր իսկ յայտարարութեամբ՝ գիւրքը ստացել է պ. Մ. Արդարեանից։ Բայց... պ. Արդարեանը գիւրքը «աղնըւութեամբ» նրան չնորհել է այս տարւայ ծննդեան շաբթայ մէջ, այսինքն՝ 1934 թ. յունաւր ամսի սկիզբը։ Ուրեմն, ի՞նչ հրաշքով պ. Երեմեանը կարողացել է 1933 թ. սեպտեմբերին օգտագործել մի գիւրք, որ իր ճեռքն է ընկել 1934 թ. յունաւրին։

3.- Պ. Երեմեանը 1933 թ. սեպտեմբերին Զուղա գեռ հասած էլ չէր. նա էկել է Հոկտեմբերին (20 կամ 21-ին)։ Հապա ուրեմն, Հոկտեմբերին Զուղա ստք դրած պ. Երեմեանը ի՞նչ հրաշքով կարողացել է սեպտեմբերին – երբ ի՞ւրը երեւի գեռ Խորհրդային Դրախտում Պարսկաստան անցնելու մարդով էր տառապում – Զուղայում, պ. Մ. Արդար-

եանից գիւրք ստանալ եւ յօդւած գրել։ Հանելուկը մեղ համար պարզ է. պ. Երեմեանը փորձել է գրական մի վառ գործ կատարել, մեր կարծիքով, յատուկ նպատակով։ Նա պատրաստում է Հայ Թատրոնի պատմութիւնը. ուստի այդ ձևով ցանկացել է ցոյց տալ, որ իր յօդւածն իբր թէ աւելի տաղ է գրւած եղի, քան իրազեկինը, որպէսզի այդ ձմնապահով կարողանայ Հայ Թատրոգութեան սկիզբութեան գիւտը իրեն գիւրազաւել։

Բայց սակ պոչը կարճ է լինում։*)
3. ԻՐԱԶԵԿ

*) Պէտք է ասենք, որ Յ. Իրազեկի յօդւածը մենք ստացել ենք անցեալ յունիսի վերջերը, որով Խմբագրութեան մօս եր գտնում այն, երբ լոյս էինք ընծայում Ա. գիւրք (տես այդ մասին մեր յայտարարութիւնը նոյն գրքի 157 էջում)։ Տպագրութիւնը ուշացաւ, որովին ժամանակ պէտք եղաւ լուսակաբերը բերելու համար։ Հոկտեմբերին Իրազեկի յօդւածը կարդացւեցաւ. Փարիզի Հայ Գրական Ակումբի հաւաքում – Զուղայում, պ. Մ. Արդար-

ՎԵՐ ՆԻՒՐՈՂՆԵՐ

Ան. Մահմետեան, Կիպրոս – Կարապետ Պալեանին, Քրէթէւ։

Հ. Դ. Գաղանեան, Երովիթա – իր կղօր, Գ. Ն. Գաղաննեանին, Սիւրիս։

Հ. Դ. Գաղանեան, Երովիթա – իր քեռայլ՝ Ա. Թոսունեանին, Սիւրիս

ԱՍԱՑԻԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

- Գ. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՒ. – «Թօշնելէն Վերջ», վէպ, իրատ. Հր. Սամուել Գրատան, Փարիզ, 1934։
Ս. Ա. ԲԱԼՈՏԻԿԵԱՆ. – «Արարկիր եւ Շրջակայի Գիւղերը», պատմ.-ազգագր. համառու տեսուրիւմ, Պէյրու, 1934։
Հ. Ա. ԶԱՐԴԱՐԵԱՆ. – «Մեր Կեանքը», վէպ, Փարիզ, 1934։
Պ. ԱՌԱՔԵԼԵԱՆ. – «Ծփանքներ», ուստանուրներ, Ֆիլատէլիֆիա, 1934։
«Վերնելք», Օրգան Հ. Խ. Գ. Միուրիան, Երեման, 1933, նոյեմբեր։
Վ. ԶԱՐԴԱՐԵԱՆ. – «Յիշատակարան», Հատոր Ա. Բ. եւ Գ., № 24, Գահիք, 1934։
Գ. ԹՈՒԹԵԱՆ ԽԱՉԻ ՕՐ. – Բացախի թիւ, Սաֆիա, 1934։
«Հայրենիք» – № 5, 6.՝ «Սինն», ՀԱՅՐԵՆԻՔ» – № 5, 6.՝ «Սինն», թիւ, Սարի, Փարիզ, 1934։

ՀԱՅՐԵՆԻՔ ՕՐԱԹԵՐԹ

Տարեկան	6 դոլար
Վեցամսեայ	3 , ,
Եռամսեայ	2 , ,
Հասցէ	

Hairenik Press, 13-15 Shawmut st.
BOSTON-MASS (U.S.A.)

Ն Ո Ր Ո Ր
ՕՐԱԹԵՐԹ
Յունաստան, տարեկան, 420 ար.
, , վեցամսեայ 210 ,
Եւրոպ, տարեկան, 135 ֆր.
, , վեցամսեայ 80 ,
Ամերիկա, տարեկան, 8.00 դոլար
, , վեցամսեայ, 4.50 ,
Հասցէ
„NorOr”, 20-A, Rue Vouli, ATHÈNES (GRÈCE)

ՀԱՅՐԵՆԻՔ ԱՐՄԱԳԻՐ

Տարեկան	5 դոլար
Վեցամսեայ	3 , ,
Եռամսեայ	0 ՐԱԹԵՐԹ ՄԻԱՄԻՆ
Տարեկան	10 դոլար
Վեցամսեայ	5 , ,
Հասցէ	

13-15 Shawmut st.
BOSTON MASS (U.S.A.)

Յ Ո Ւ Ս Ա Բ Ե Ր

Յ Ո Ւ Ս Ա Բ Ե Ր
ՕՐԱԹԵՐԹ
Եգիպտոս, տարեկան, 150 եդ. դի.
, , վեցամսեայ, 80 ,
Արտասահման, տարեկան, 40 շիլին
, , վեցամսեայ 20 ,
Հասցէ
“Houssaper”, B. P. 868
Le CAIRE (EGYPTE)

“ՎԵՄ”
REVUE BIMESTRIELLE ARMÉNIENNE
 Directeur : S. VRATZIAN

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

• Յ. Ճ. ՍԻՐՈՒԻՆԻ — Ապրիլեան Եղեռնը	1
Յ. ԶԱՀԻՐԵՍՆ. — Սայեաթ Նովա	12
Հ. ԲԱԼՈՒԵՍՆ. — Միսաք Մեծարենց	21
հ. ՔԻՒՐՏԵՍՆ. — Քուչակեան տաղաշարքերու հնագոյն տպագրութիւններ	41
Վ. ՓԱՓԱԶԵՍՆ. — Հայկական Բարենորոգումները (Վեբ)	54
Զ. Ա. Ա. Ա. Ա. Վ. — Բարեւմի Խորհրդադողովը	80
ՄՈՒՐԱՏԻ ՅՈՒՆԱՏԵՏՐԸ (Վեբ)	94
ՄԵՐ ՀԱՐԵՒԱՆՆԵՐԻ ՄՕՏ. 1. Մի Խզումի Պատմութիւն.	
2. Մուսաւարի Հաղորդագրութիւնը	109
ԱՆՑԵԱԼՔ. — Մ. Վարանդեան. — Թ. Թորոմանեան. — Ս. Գէմուրեան. — Ռ. Անոփիեան	119
ԿԵՍՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅՑԹ. — Աքովեանի Մահեան Շուրջ, Խ. «Անյուշ» քէ՞ «Անուշ», Խ. — Ս. Խաչարեանի Պատկերախորհրդային Գրողների Միութեան Կանոնագիրը. — Խանդէսը. — Հայ Գրողների Ընկերակցութեան Մրցանակը. — Ղազարոս Աղայեանի Անյայտ Ռտանաւորը	123
ԳԻՒՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԻ. — Մելքոնեան Ֆոնդը. — Ճարտարապետ Բունիածնի «Գառնին». — Պրոֆ. Մելիքսէքբէկի Աշխատութիւնները. — Հայկական Հեթեաթներ. — Թաւշէ. Գիլտաստորոք. — Կարենյ Աշխարհ	129
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ. — Կարլօ Սփորցա, «Եւրոպայի Բոնատիրութիւնները», Ն. Բաղալեան. — Ս. Բախտիկեան, «Արարիք Եւ Շբակայի Գիւլերը», Ա. Սեւան. — Ա. Գիւլխանդանեան, «Հայ-Թարարական Ընդհարումները», Ա. Վ. — Գր. Յ. Աղաբարեան, «Հայաստանի Լեռսինները», Վ.	132
ՆԱՄԱԿ ԽՍԲԱԳՐՈՒԹԵՍՆ	141
ՅԱՀԵԼԻԱԾ. — Վահրամ Եպ. Մանկումի, «Գէորգ Դ. Եւ իր Ժամանակը»	49-64

Gérant: V. Hampartzoumian

Imp. ARTISTIQUE 42, Rue de la Jonquière, PARIS (17.)

Կաթողիկոսական իշխանութիւն, մանաւանդ ազդեցիկ Տ. Ներսիսի վայելէր անշուշտ զապահովութիւն յաղթանակի ցորչափ ոչ էր տղէտ ի վարչականութեան եւ ոչ տկար ըստ ամենայնի ի գիւանագիտութեան, ի վերայ այսր ամենայնի գժուարանայր յաղթել ջանից բաղմաթիւ կուսակցաց Կարապետ Եպ. —ի զոյգ ընդ կեղծ-պաշտպանութեան կառավարութեան:

Բաղումք ի գործակալաց եւ ի պաշտօնէից եւ առաւել կարեւոր անդամք քննիչ Մասնաժողովոյ էին ի կողմն Կարապետի՝ թէ եւ ոչ բացայայտ, զորոց ոչ տղիտանայր իսպատ Տ. Ներսէս Կաթողիկոս: Մանաւանդ զի յաճախ ստուարանայր քննութիւնն բծախնդրական ինդրովք, եւ հեռի յարդարութենէ եւ ի ճշմարտութենէ: Գիտէին մանաւանդ եւ զանցս եւ զարդիւնս Առաջնորդութեան Ներսիսի Կաթողիկոսի ի նմին իսկ վիճակի թիֆլիզու զոյգ ընդ արդեանց Կաթողիկոսութեան, զարաքար զեղծմունս, զյափշտակութիւնս, ըգաձարտարահնար կաշառակուլութիւնս, զվատնումն վիճակային եւ հեղեցական եկամտից ընդ էջմիածնականաց՝ եւ այն յաճախ յօդուտ ի պէտս ազգականաց, սիրելեաց եւ հաճոյակատար բարեկամաց իւրոց, ոչ տալով եւ զտեղեկութիւնս անհրաժեշտու եւ զհաշիւս Սինօդի էջմիածնի, թեմական Ատենի եւ ոչ այլ ումեք, եւ այսպէս կորչէին եւ կորեան մեծագումար զրամք եւ եկամուտք Ս. էջմիածնի, վիճակին եւ եկեղեցեաց, ոմանց կտակաց եւ այլոց՝ ոչ ցուցեալ զհաշիւս եթէ յո՞ր կամ որպիսի՝ պէտս ուղղեցան կամ շոայլեցան: Թողցուք չիշել զփոխանցումն եկեղեցական կալուածոց եւ զիւզօրէից յանուանը ազգականաց ընդ հնարովի պատրուակօք:

Գիտեր քաջ Կարապետ վարդապետ Շահնազարեան զայս ամենայն, եւ առանց ըմբռնելոյ զիսկական նպատակ եւ զեռատեսութիւն պատրուակեալ (ընդէմ ոռուական կառավարական պաշտպանութեան, զորպիսիս վայելէր երբեմն եւ ինքն Ներսէս մինչեւ էանց Ս. էջմիածնի ընդ նահանգին Արարատեան ընդ իշխանութեան ոռու ի պատասխանի Ներսիսի: Յորմէ խոժոռեալ Ներսիսի՝ տեսեալ զի ի պաշտպանութիւն Կարապետ Եպ. —ի գիմեն բանք վարդապետին Շահնազարեան, անմիջապէս յանդիմանէ զնա ասելով. «Կարապետ վարդապետ, բերնիցդ սոլի է հոտում» (հոտի սոլի ի բերանոյ քումէք), եւ Շահնազարեան անդէն յանդգնի յաւելու զպատասխանի, թէ «վեհափառ Տէր, Զեր բերնից էլ սխտոր է հոտում»: Եւ զիտացեալ զբարկութիւն եւ զլրէժինդրական բարս Ներսիսի, ի նմին գիշերի ի գաղտնի ել և փախեալ Կարապետ վարդապետ Շահնազարեան ի Տըփ-

խեաց անցեալ ընդ Բամբակաձոր եւ ընդ Աղեքսանդրապօլ (Գիւմրի) ի սահմանս թուրքիոյ, թէպէտ եւ Տ. Ներսէս Կաթուղիկոս փութացաւ գրել Պատրիարք-Եպիսկոպոսի կ. Պօլոսյ եւ պահանջեաց վերադրձուցանել առ ինքն զՇահնաղարեան, այլ ի նանիր: Խոյս ետ Շահնաղարեան եւ էանց յԵղիպտոս եւ անդի յԵւրոպա ըստ խորհրդոց բարեկամաց իւրոց: Թողումք այլում պատեհ առթի զանցս Կարապետի որ ի կ. Պօլիս:

Հարկ է յաւելու խոստովանել, զի ոչ սակաւ էին մեղապարտութիւնք Կարապետի, մանաւանդ ի գործս դաղթականութեան Հայոց ի Կարնոյ եւ ի շրջակայից, ի յափշտակութիւնս արծաթեղինաց, զգեստուց, դրամոց, ձեռագիր մատենիդ վանօրէից եւ եկեղեցեաց առթիւ դաղթականութեան, սակս կուրամիտ եւ անհեռատես ծառայութեանցն ի նպաստ ոռւսաց, յորպիսիս ոչ արդարանալր եւ Ներսէս մանաւանդ առաւել ծանրանային պատասխանատուութիւնք եւ դատապարտութիւնք, եթէ արեցուք ի քննութիւնն, ի բաղդատութիւնն եւ ի վճիռ, սակայն ոչ էին ծանրակշիռ եւ նշանաւոր ամբաստանութիւնն ըստ նորոգ քննութեանդ, եւ ոչ վայելէր Կաթողիկոսի հետեւել ամօթարեր վրէժինդրութեանց եւ ապարդիւն ժամավաճառութեանց՝ բարձի թողի արարեալ զկենսական ինդիրս եւ դպէտու եկեղեցւու ի. Աղդի: Ըստ այսմ ապա տարրե՞ր էին եւ օտարոտի առիթք վրէժինդրութեան Ներսիսի, որպէս տեսցի ի ստորեւ:

Յաւուրս Կաթողիկոսութեան Տ. Եփրեմայ եւ Առաջնորդութեան Կարապետ Եպ.-ի ի Կարին, յորժամ էր Ներսէս Եպիսկոպոս ի թեմակալութեան Վրաստանի եւ Իմէրէթի (Թիֆլիդ), պատճառեալ Ներսիսի զնորոգութիւնս Էջմիածնական կալուածոց որ ի Տփիսի, ինդրէ Հասուցանել ինքեան զիջմիածնական զարդիւնս եւ զդրամս որ ի Կարնոյ եւ ի շրջակայից: Որում պատասխանէ Կարապետ Եպիսկոպոս եւ ինդրէ զհրաման-կոնդակ կամ դդիր Վեհ. Հայրապետի առ ի Հասուցանել ինքեան Ներսիսի զպահանջեալ զրամս: Եւ այսպիս միայ ապարդին թուղթ Ներսիսի:

Դարձեալ, Ներսէս ի կաթողիկոսանալ իւրում, յորժամ Հաւաքեալ էին Եպիսկոպոսունք, թեմակալը, ընդ որս եւ Կարապետ Եպիսկոպոս, առթիւ կաթուղիկոսական օծման (Պ), Ներսէս յայտնէ դիղձ եւ զնպատակ իւր առ ի վերաբանալ զաւերակ առուս Տարմայի ի պէտոսութան մեծատարած Հողոցն ամայի մնացելոց ի Վաղարշապատ դեղի հարաւային կողմ եւ հանդէպ Ս. Հովիսիմեանց վանուց՝ չուրջ զարոտառեղեօք, մինչեւ ցահամանս Խանգարած եկեղեցի անուանեալ վանուց Ս. Լուսաւորիչի աւերակ մնացելոց ի դարուց հետէ: Տարածու-

թիւն ամայի հողոց հասանէ ց400 խալուարաչափ: Եթէ նորոգէր Տալմա առու առեալ զջուր ի Հրազդան գետոյ, ի սահմանս եւ մերձ Երեւանայ՝ ըստ հնոյն ոչ միայն ոռողանէր զհողսդ եւ արդիւնաւորէր յոյժ, այլեւ նպաստէր այդեաց եւ այլոց պիտոյից Ս. Էջմիածնի: Միանդամայն դիւրագոյն էր յանձտմ յաղթել կառավարական նենդամը-տութեանց և թելաղըրութեանց որոց ունկնդրէին մահմէտական-պարսիկ բնակիչք սակաւաթիւք եղեալքն ի շնս ճանապարհաւ Տալմայի եւ ի մերձաւորագոյն յեղերս Հրազդան գետոյ (Զանգի):

Կարապետ Եպ. ինդրէ ի Ներսիսէ յանձնել ինքեան զնորոգութիւն Տալմայի եւ զլերահաստատութիւն առուի ի շինել սեփական արդեամբ իւրով առանց պահանջելոյ զդանկ մի անդամ ի Մայր Աթոռոյ: Իսկ Ներսէս Կաթուղիկոս պահանջէ յանձնել ինքեան զդրամս համաձայն զնահատատութեան մասնագիտաց արուեստաւորաց եւ ինքն տացէ շինել: Եւ Կարապետ մերժէ քաղաքավարութեամբ իմն, գիտացեալ քաջ, զի Ներսէս ունէր վատնել յայլ պէտս, հնարեալ զայլ եւ այլ առիթս:

Յաւել ի վերայ այսպիսեաց անձից եւ զինդիրս կուսակցականս ըստ անցելոց եւ ըստ նորոց յընտրութիւնս եւ ի գործս Կաթուղիկոսաց, ընդ անձնական կրից, որք բաւական լիցին այլեւս մեկնել զառիթս եւ զոդի պատրուակեալ նախանձախնդրութեան եւ ուղղամը-տութեան Ներսիսի:

Ասացուք ի փակագծի: Ուր ուրեմն յաջողեցաւ Ներսիսի տապարի զկարապետ՝ արդարիւ զո՞րծ մեծ՝ բարձիթողի արարեալ զկենսական շահս Աղդի եւ Եկեղեցւոյ Հայաստանեայց, միանդամայն Մայր Աթոռոյ, զոդցես Համաձայն դիւնագիտական խարդաւանութեանց իշխան Վորոնցովի եւ կնոջ նորա: Սակայն կամիմք Համառօտել զրանը մեր, թէպէտ բազում են այսպիսի անցք եւ զործք Ներսիսի արժանիք հետազոտութեանց, քննութեանց եւ դատապարտութեան, եւ մեք ոչ կամիմք ընդհատել ընդ երկար զշար պատճութեանս:

Մինչ այս, մինչ այն ետես Վեհ. Տ. Ներսէս Կաթուղիկոս, զի երկարաձի զործ քննութեանդ, եւ սպասեալ մնացին երկոքին եպիսկոպոսացուք, Գէորգ ի Պրուսայէ եւ Դափիթ ի Ս. Երուսաղէմէ, որ յախուռն բանիւք պահանջէր զվառական պատասխանի, խոստացաւ սոցա փութալ երթալ ի Ս. Էջմիածին, եւ յետ եալիս կոպոսական ձեռնագրութեան վերաբառնալ ի նորոյ ի Թիֆլիդ, եւ շարունակել զմննութիւն եւ զդատ Կարապետ Եպիսկոպոսի:

Գէորգ Հաւասարապէս էր սիրելի Ներսիսի եւ Կարապետի, ընդ որս տեսակցէր յաճախ: Իսկ Ներսէս յաւելեալ օր աւուր զհամարում

իւր եւ զվատահութիւն, յաւուր միում ասէ պարզապէս, եթէ «Հակառակ գայթակղեցուցիչ թղթոց Մատթէոս Պատրիարք-Եպիսկոպոսի կ. Պօլոյ՝ Հաւանեալ եմ յոյժ ընդ վարս, ընդ բարս, ընդ խոհեմութիւն եւ ընդ փորձառութիւն քո»։ Մերժ Գէորգ անպատրուակ իմն բանիւք պարզէր զկարծիս իւր ըստ խնդրոց ոմանց առ Ներսէս, որ եւ հաւանէր։ Օրինակ իմն։

Գիտացեալ եւ հետազօտեալ Գէորգայ, զի Հայք ստիպեալ են գընոյ առնուլ ի ոռուս արտօնատէր-կապալառուէ զմոմս ի պէտս եկեղեցեաց, մինչ պարտ էր Հայոց ինքնին պատրաստել զմոմս ի շահս եկեղեցեաց իւրեանց, որպէս առնեն եւ աղատ են Հայք ի Թուրքիա, առաջարէկ Ներսիսի արդիւնաւորել զայս ինդիր յօդուտ եկեղեցեաց Հայոց։ Հաւանի Ներսէս, եւ պատուիրէ Գէորգայ ասել զայս բան ի ներկայութեան իշխան Վորոնցովի, որպէս եւ ասէ, յաւուր միում տարեալ ընդ իւր զԳէորգ առ Վորոնցով։ Եւ յետ ոչ բազում ժամանակաց յաջողի Ներսիսի կարգադրել զայս ինդիր՝ Հաստատեալ զհայկական մենակաճառ մոմի յատուկ վասն եկեղեցեաց Հայոց ի Կովկասեան սահմանս, որ շարունակէ մինչեւ ցայսօր եւ ապահովէ զոչ սակաւ շահս ի պէտս թեմօրէից եւ եկեղեցեաց Հայոց։

Միանդամ Ներսէս ի տեսակցել իւրում ընդ Գէորգայ առթիւ իւրք, պարծի, զի ինքն է՝ ալթը նէմաաթ փաթրիմի, կարծելով զի Ալթը Ճիմաաթ նշանակէր գլեց ազգ։ Գէորգ բացատրէ նմա, զի ոչ պատուաբեր է տիտղոսով, որ նշանակէ գլեց ժողովուրդ կամ զտնախումը (օտալար), եւ պատմութիւնն պարզէ զինդիրդ, զի Յովակիմ եպ։ Պրուսայու՝ յաւուրս թագաւորութեան Օսմ. Ֆէթիհ Սուլթան Մէհէմմէտի յառնուլ նորա զմայլաքաղաքն կ. Պօլիս եւ ի փոխադրբելն անդր զգացն կայսերական, ըստ հրամանի նորա տեղափոխի ի Պրուսայի ի կ. Պօլիս տարեալ ընդ իւր զիեց տունս Հայոց, որք ոչ էին իսկապէս տունք, այս օտալար անուամբ խանք իւրեւ զիանս բաղկացեալ ի բազում սենեկաց յաճուկ միայարկից, յորս բնակէին ըստ հնոյ սովորութեան բազում բնտանիք, որոց թիւ անցանէր յաճախ առաւել քան զիսուն, որպէս եւ վեց տունք ըստ անուանց այլաձեւ տանց իւրեանց որ ի կողմն Մուրատիկի Պրուսայու՝ հիմնեն բոնյնչափ տունս ՕՏԱԼԱՐ (սենեկը) անուամբ, եւ ի վերայ նոցա կարգէ Սուլթան Մէհէմմէտ ի բաթրիմ - Պատրիարք զՅովակիմ եպ։ Քսիրելին իւր ի հակակշո Յունական Պատրիարքին։

Մթափեալ Ներսիսի ի բանիցդ Գէորգայ, փութայ մերժել եւ ատել զտիտղոսով։

Արդ՝ Ներսէս Հաւանեալ յաւէտ ընդ խոհեմութիւն Գէորգայ ջա-

նար սիրաշահել եւ մխիթարել զսա, այցելէր երբեմն ի սենեակ սորա, յաճախ տանէր ընդ իւր կառօքն կաթուղիկոսական ի չընելն եւ յայցելելն այսր անդը, սակայն կամեցաւ այլեւս փութալ վերադարձուցանել զնա եւ զընկերն եպիսկոպոսացու։ Վասն որոյ սկսաւ տեսանել ըզպատրաստութիւնս կարեւորս առ ի լինել ուղւոյ։

Համաձայն հրամանի Նորին Վեհափառութեան եւ Հայրապետի ևկեալ հասեալ էին մեծադիր-ուղեւորական կառօքն կաթուղիկոսական հանդերձ վեցիւք կառաձիովք եւ այլովք երիվարօք եւ բեռնակրօք ի Ս. էջմիածնէ, ունելով եւ զյատուկ կառապանս եւ զձիապահս։ Ս. Հայրապետ առանց պահանջելոյ զձիս կառաց յարքունական սուրիանական կառուքեանց եւ ի պաշտօնական իջեւանաց (ստանցիա), էջմիածնական միջոցօք ել ի ճանապարհ ըստ պատշաճի ի 24ն Յունիսի (1848), առեալ ի կառս իւր զԳէորգ վարդապետ զսիրելին իւր նորածանօթ, զբաղելով ընդ նմա ի շահեկան խօսակցութիւնս եւ ի զրոյցս զճանապարհացն։ Զարկ է յաւելուլ, զի Հայք գլւորէից գտանելոց զճանապարհաւ ընդ որ անցանէր Վեհ։ Հայրապետ, սկսեալ ի Տփիսեաց, զանխեալ զձորն եւ զոժուարանց լեառն Տէլինանու, մինչեւ ցՍ. էջմիածնին, հանդերձ գործակալովք եւ եկեղեցականօք փութացին գիւմաւորել ըստ սովորութեանն կարգի Սրբութեան Նորին ըստ արժանայն, ուղեկցեալ ըստ իւրաքանչիւր սահմանս։

Եետ անցանելոյ զլեառն Տէլիմանու, որոյ յարեւելեան-Հարաւային կողմն է ճակն Գեղամայ և անապատն Սեւանայ, հասեալ Վեհ։ Հայրապետի հանդերձ իւրայովք ի 26ն ամսոյ, եմուտ հանդիսիւր յանապատն եւ գիշերեաց անդ։

Էին յայնժամ յանապատիդ հոչակառորի վեղաբակիրք առաւելքան զ15 ընդ վանահօր, եւ խառն Միաբանք եւ աշխատաւորք առաւելքան զ30, եւ ծառայէին եւ պաշտէին ըստ հնոյ կարգին զպարտս իւրեանց, այլ տկարանային քարոզել եւ հովուել զժողովուրդ շրջակայից իւրեանց (Գեղարքունույ), թէպէտ ոչ մոռանային պահանջել եւ մթերել զհողեւոր եկամուտս իւրեանց եւ զպտիս։ Թուի մեզ, զի էր յանժամ գժտութիւն ինչ յանապատի, որ առթէ զզայրոյիթ Նորին Սրբութեան, միանգամայն արտասանէ ի կարգի բանից իւրօց եւ զայս իբրեւ յանդիմանական, եթէ «բարւօք էր զի եթէ ուտէիք զմիս չորբուանւոյ քան զմիս մարդոյ»։ - Ունի անապատէ հանդէպ իւր յեղերս լճակի զհայաբնակ զիւղ մի սեփական Գոմանոց անուն։ Ի յաջորդ աւուր շարունակեաց Վեհ։ Հայրապետ զճանապարհ իւր եւ ի 28րդ աւուր ամսեան եմուտ հանդիսիւր մեծաւ ի քա-

ղաքն Երեւան, գիշերեաց ընդ Գէորգայ հիւրասիրեալ ի տան Սիմեոն Սուլքանի (Գեղամեան) :

Եր 1 Յուլիսի, Վեհ. Հայրապետ եհաս եւ եմուտ ի Ս. էջմիածին ըստ սովորական կարգի եւ թափօրով եկեղեցականաւ:

Եցն ամսոյն սկսաւ չերմել Գէորգ վարդապետ, որպէս չերմէին Պետրոս վարդապետ եւ սպասաւոր իւր: Զոր լուեալ Ս. Կաթուղիկոսի փութայ ի 11 Յուլիսի, ի Կիւրակէի ի բարիկենդանի պահուց վարդապետի, ձեռնադրել զԳէորգ եւ զԴաւիթ Կարնեցի՝ միաբան Ս. Երուսաղէմի՝ զվարդապետս յԵպիսկոպոս համաձայն կանոնի եւ արարողութեանց Հայաստանեաց Ս. Եկեղեցւոյ:

Միանդամայն յորդորէ զԳէորգ նորապասկ Եպիսկոպոս եւ զԴաւիթ Եպիսկոպոս, որ ազատ մնայր ի չերմախտէ, փութալ ելանել յուղի եւ օդափոխութեամբ ազատել ի հիւրանդութեանց, ըստ որում էր տակաւին օդ էջմիածնի տապագին եւ ծանր յոյժ յամառացի:

ԳԼՈՒԽ ԺԴ.

ՅԱՂԱՔՍ ՄԵԿՆԵԼՈՅ ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ Ի Ս. Էջմիածնէ
ԵՒ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՅ Ի ՊՐՈՒՍԱ.

Համաձայն յորդորանաց Տ. Ներսէս Կաթուղիկոսի, եւ առանց մատուցանելոյ զառաջին Ս. Պատրիարք Եպիսկոպոսական ի Ս. Սեղանուղ Իջման, գժուարութեամբ իմն նստաւ Գէորգ Եպ. յերիվար եւ մեկնեցաւ ի Ս. էջմիածնէ ի 14ն ամսոյ, եւ դանդաղ գնացիւք հասանէ եւ մնայ յՕշական գեղջ Հայրապետանցի, որ իբր 1-1½ ժամաւ հեռի գտանի ի Ս. էջմիածնէ ընդ հիւրիս-արեւելու:

Ի յաջորդ աւուրն գիշերէ յՄշտարակ գեղջ, որ հեռի է յՕշականէ իբր միով ժամաւ:

Այսպիսի գնացիւք տակաւ առ տակաւ հատեալ զուղին, անցեալ ընդ Ապարան գաւառակ օլասուն յարեւելան ստորոտս Արագածու, ի 18ն Յուլիսի հասանէ յԱղեքսանդրապօլ - Գիւմրի քաղաք ի ներքին Շիրակի: Կացեալ յԱռաջնորդարանի զաւուրս ինչ տայ դարմանել զանձն, որ տկարացեալ եւ թուլացեալ էր յոյժ: Սիրական Աղայն ոչ մոռանայ զԳէորգ Եպ.:

Ոգի առեալ դոյզն ինչ, ի 28ն Յուլիսի մեկնի եւ ուղւոյ լինի եւ անտի շարունակէ զճանապարհ իւր հանդարտ իմն ուղեղնացութեամբ ասկս տկարութեան անձին, որ տակաւ բարեփոխէր:

Անցեալ Գէորգ Եպ. -ի ընդ Ախուրեան գետ եւ գիշերեալ ի բաղրամ գիւղօրայս սկսեալ յարեւմտեան սահմանաց Կարուց, եհաս ի Կարին,

յորմէ ի Բարերդ, եւ անդի ի Տըապիզոն ի 22ն Օգոստոսի, եմուտ անդ ի Մաքրանոց (քարանթին):

Աւարտեալ զպայմանաժամ մաքրանոցական, եւ յետ վաճառելոյ զերիվար իւր եւ զաւելորդ կազմածս ուղեւորականս, ինչ Սեպտեմբերի նստաւ ի չողենաւ, եհաս ի կ. Պօլիս յՃն ամսոյ, եւ զնաց ի տուն իւր առ ի հանդիսատ առնուլ զաւուրս ինչ, ոչ մոռացեալ զպաշտօնական պարտաւորութիւնս հանդէպ Պատրիարքարանի եւ բարեկամացն:

Յաւուրս յայսոսիկ ծանրացեալ էին դժգոհութիւնք եւ ամբաստանութիւնք զՄատթէոս Եպ. -Պատրիարքէ, եւ Ամիրայք եւ երեւելի ազգայինք յորդորէին զնա առ ի հրաժարել ի պատրիարքութենէ, որպէս եւ ի 12ն սեպտեմբերի, զնացեալ յատկապէս առ Մատթէոս խնդրեցին զՀրաժարական նորա, որ մերժեաց, միանդամայն ջան կալաւ յուզել զաւովութիւնս եւ զերկպառակութիւնս, մինչեւ եկն պաշտօնական ոմն ի Բ. Դրանէ Օսմ. Կայսերական Կառավարութեան, պահանջեաց եւ ընկալաւ յետս զնշանն պատրիարքական, եւ այսպէս հրաժարեցուցին զնա ի պատրիարքութենէ ի 16ն սեպտեմբեր ամսոյ:

Ի նմին աւուր եկին պարագլուխ ամիրայք եւ գլխաւորք Ազգի առ Գէորգ Եպ.՝ կամեցեալ ընտրել եւ նստաւցանել զնա ի պատրիարքութիւն, որոց ետ սա զպատասխանի բացասական, մինչեւ շարժել ըդզարմանս նոցա եւ զայրոյթ: Իսկ յամսեան Հոկտեմբերի ընտրեցաւ ի նորոյ Յակոբոս Արքապիսկոպոս Առաջնորդ Ամասիու - Մարտունու ի Պատրիարք, յամսեանն նոյեմբերի եհաս ի կ. Պօլիս եւ ստանձեաց զպաշտօն պատրիարքութեան ըստ սովորական կարգի:

Կազզուրեալ ոչ սակաւ Գէորգ Եպ. կամեցաւ ոչ սակաւ մնալ ի կ. Պօլիս, ի 28ն Սեպտեմբերի մեկնի եւ աստի, ուղեկցութեամբ հրաւիրակացն եկելոց ի Պրուսայէ, գիշերէ ի Կէմլէյիկ յունական գիւղաքաղաքնաւահանզստի, եւ ի յաջորդ աւուրն ուղղէ զուղին ի Պրուսա:

Խնդրացեալ եւ ոգեւորեալ Հայոց Պրուսայու, ղիմէին ընդ առաջ նորապսակ թեմակալ Առաջնորդի իւրեանց, բազումք եկեալ էին ի Կէմլէյիկ, որք սատուրացեալ էին յԱթըճըլար, բազումք հետիոտս եկեալ: Անդ եղեալ էին զլրանս, և հանդիստ էառ Գէորգ Եպ., վայելեալ եւ զպատրաստութիւնս ինչ ըստ սովորութեան Պրուսացւոց:

Մեկնկալ եւ անդի ուղեկցութեամբ ոմանց քահանայից, իշխանապետաց եւ իշխանաց ազգայնոց ընդ բազմութեամբ համակիր եւ եռանդալիր ժողովրդեան Հայոց, եմուտ ի քաղաքն Պրուսա: Էին ընդ Հայոց եւ ոմանք նշանաւոր անձանց օտարազգեաց, որք սիրէին եւ պատուէին զԳէորգ: Ի մերձենալ ի սահմանս Եկեղեցւոյ ի Սէբ-Պաշը

թաղի՝ մտեալ ի տուն ուրումն իշխանապետի, զգեստաւորեցաւ Ս. Գէորգ, եւ այսպէս կանգնեալ ի գլուխ մեծահանդէս թափօրի եկեղեցականի՝ ընդ ամպիովանեալ՝ ի ձայն երգոց յառաջեաց եւ եմուտ ի Ս. Աստուածածին եկեղեցի, որ զարդարեալ պանծայր լուսավառ ընդ գալուստ փեսայի իւրոյ:

Անդ էր տեսանել զբազմութիւն Հայոց ի փողոցս, ի տունս, յանցս եւ ի մէջ եկեղեցւոյ, որք արտասուալից բարձեալ զաղաղակս հրճւալից գոչէին զկեցցէս և թնդացուցանէին զօդս: Եռայր ժողովուրդ մեծաւ իմն ոգեւորութեամբ, եւ գողցես իրը երկամեայ կարօտութիւնն մղէր զնոսա ի չափազանցութիւնս ի համակրական ցոյցս:

Եետ Ուրախ եղէ սաղմոսի ի մէջ եկեղեցւոյ, փոխադարձ արտասուօք լցեալ՝ զարձաւ Գէորգ Եպ. առ ժողովուրդ, օրհնեաց զամենեսին զեկեղեցականս եւ զաշխարհականս, զմեծն եւ զփոքրն, զարս եւ զկանայս, փոխանակեաց ամենեցուն զսէր եւ զշնորհակալութիւն: Եւ խոստացեալ ի յառաջակայ Կիւրակէի խօսել ընդ երկար, թէպէտ ունէր խօսել զարձեալ ոչ աւելի քան զքսան վայրկեան կամ զկէս ժամ՝ համաձայն սովորութեան իւրում, ասաց զպահպանիչն, զշայր մեր, եւ տալով զաջ իւր կարօտակէզ խուռներամ ժողովրդեան՝ որչափ լինէր հնարաւոր, եւ յԱռաջնորդարան հանդիմիւ: Եւ անդ տեսակցեալ սակաւ ինչ, օրհնեաց զներկայս եւ արձակեաց ի խաղաղութիւն:

ԳԼՈՒԽ ԺԵ.

ՅԱՂԱԳՍ ԶԵՌՆԱՐԿՈՒԹԵԱՆՑ ՈՄԱՆՑ ԵՒ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԵԱՆՑ
ԳԵՌՈՐԴ ԵՊԻՍԿՈՊՈՒՏԻ

Աւարտեալ սորա զքաղաքավարական եւ զպաշտօնական այցելութիւնս առ կուսակալ փաշայ, առ թեմակալ Յունաց, առ Քահանայապետ-Ազգապետ Հրէից, առ դլիսաւոր աւագանի Օսմանեան եւ առ Հիւպատոս Անդիական, Գաղղիական, Աւստրիական եւ Պարսկական (Սարգիս աղայ Պարոնեան) եւ այլն, փոխադարձաբար, ձեռն ի գործէարկ ոգեւորութեամբ մեծաւ, հետեւեցաւ ի նորոյ պայծառութեան եկեղեցաց, բարեկարգութեան զպրոցաց, հաւատարիմ եւ պարտաճանաչ պաշտօնակատարութեան քահանայից, ի պահպանութիւն օրինաց եւ կանոնից, ի բարձումն զեղմանց եւ շուայլութեանց, յարդար բաշխումն արքունական տրոց, ի կանոնաւորութիւն ազգային վարչական ժողովոց, հոգարաձութեանց եւ խորհրդոց, հիւանդանոցի, ի նորոք յաւելումն եւ ի հաստատութիւն ոմանց կանոնաց ըստ նշանատութեան եւ հարսանեաց, ըստ տօնախմբութեանց եւ ըստ շնորհաւորութեանց:

Յերկարամսեայ բացակայութեան սորա խանդարեալ էր բազում ինչ եւ յաւելեալ էին արդար դժգոհութիւնք ժողովրդեանն բարեպաշտի:

Նախ՝ լրացոյց զպակասեալ անդամս երկուց ժողովոց՝ իշխանապետաց եւ իշխանաց, հոգարաձութեանց դպրոցաց, աղքատաց եւ հիւանդանոցի, եւ հաստատեաց ըստ տեղական սովորութեան զնոր եկեղեցականս (նախ քան զհաստատութիւն թաղական խորհրդոց ըստ ներկայ Ազգ: Սահմանադրութեան):

Վերահաստատեաց զկանոնս եւ զկարգադրութիւնս որ զդպրոցաց յաւելեալ ընդ Գաղղիարէնի, զուսմունս ազգային պատմութեան եւ աշխարհազութեան՝ որչափ ներէին մէջոցք, յաւելեալ զնոր ձեռնհաս ուսուցիչս ի կ Պօլսոյ: Հետեւեցաւ արդիւնաւորութեան երաժշտութեան եւ ներդաշնակ երգեցողութեանց յեկեղեցւոչ: Յաճախեալ յայցելութիւնս դպրոցաց, հսկէր դասուց, բարեկարգութեան, պարկեշտութեան եւ բարի վարուց մանկանց, կրօնագիտաութեան, եւ հաւատարիմ եւ արդիւնաւոր պաշտօնավարութեան պաշտօնէից: Հետեւէր ուշադիր հայախօսութեան թուրքախօս մանկանց երկուց սեռից՝ հաստատեալ եւ ձոխացուցեալ զգուցատրական կրթութիւնս:

Համաձայն սովորութեան Միջագեղջ կ. Պօլսոյ շարունակելոյ ի Նեխտարինեան զպրոցէ Ապքատանցի հաստատեաց եւ ի Պրուսա, եւ ձանիկ Ամիրայէ Փափազեան յաւել եւ հաստատեաց եւ ի Պրուսա, եւ ըստ այսմ յերեկոյս ճրագալուցաց Ս. Ծննդեան եւ Զատկի՝ մանկունք դպրոցականք ընթեռնուն զգիրս մարգարէական՝ փոխի փոխ եւ կոյս առ կոյս՝ արականք կացեալ յաջակողմն բեմի, եւ իգականք ի ձախակողմն, ընդ որ ուրախ եղէ ժողովուրդ յոյժ եւ խուռներամ յաճախեաց ի Ս. Եկեղեցի, մինչ յառաջազոյն գային սակաւաթիւ անձինք յերեկոյեան ժամերգութեան եւ ի Ս. Պատարագ ի ճրագալոցաց յեկեղեցիս: Հաստատեաց զարձեալ, զի ի տօնի Սրբոց Հոփիսիմեանց եւ Գայեանեանց կատարեն զպրոցական օրիորդք եւ եթ զժամերգութիւնը ընդ Գահանայից եւ ընդ հասակաւոր զպրաց եթէ յերեկոյեան Նախատօնակը եւ եթէ յառաւօտու մինչեւ ցվերջ Ս. Պատարագի: Մոմակալք եւ փոխասացք լինէին յարականաց: Եւ այսու փառաւորէին և զտօնախմբութիւն Ս. Հոփիսիմեանց Դպրոցի օրիորդաց: Միանգամայն լնոյլ ժողովուրդ, մանաւանդ իգական սեռն զս. Եկեղեցի:

Կանոնագրեաց եւ ընդարձակեաց զհահանդս, զի երկսեռ մանկունք յետ ճաշու պարապեսցին ի զրոսանս իրը ժամ մի՛ արականք ի պարտիզի որ առաջի Պօլսուեան Դպրոցի եւ իգականք ի ներքին բացօթեայ բակի օրիորդաց զպրոցի որ ի յետսակողմն և կից Եկեղեցւոյ:

Յաւել հաստատել զնոր եւ զընդարձակ զմատենադարան ի վարժարանի:

Հաստատեաց, զի հասակաւորքն գպիրք ուսցին զշարականս ի դաստուէ (ի Պետրոս շարականագէտ եւ քաղցրածայն վարժապետէ Քեահեան Պրուսացւոյ), և այնպէս երգեցւոյ յեկեղեցւոջ կանոնաւորապէս եւ ներդաշնակաբար: Էին ի Պրուսա եւ այլ շարականագէտք ոմանք քաղցրածայնք եթէ յերեւելեաց եւ եթէ յարհեստաւորաց, հրաւիրեաց եւ զնոսա յերգեցութիւնս ի Կիւրակէս եւ ի հանդիսաւոր աւուրս:

Ետ գրգիռ եւ նախանձ բարի եկեղեցանաց, զի ջան կալցին ոչ եթէ ի հաւասարակշռել միայն զեկամուտս եկեղեցւոյ՝ յետ վճարելոց զպայմանեալ բաժինս ի պէտս եւ ի կառավարութիւն Դպրոցաց, այլեւ յաւելուլ գէթ զարդիւնաբեր զմի կալուած եւ զյիշատակ ի լըրման քառամեայ պաշտօնավարութեանցն: Յորում յաջողեցաւ յաճախ:

Յորդորեաց եւ ոգեւորեաց գծողովուրդ յաճախել ի կոտակարարութիւնս ի պէտս եւ ի պայծառութիւն եկեղեցւոյ, Դպրոցաց և Հիւանդանոցի:

Հետեւեցաւ հաստատել, զի ազգային բաղանիք լիցի նասըմ բաշա եամամը անուանեալ կալուածն եկեղեցւոյ, որ գտանէր ի համանուն թաղի յայնկոյս ի ձախակողմն ձորոյ Կէօֆ-տէլի, ի կողմն որոյ սակաւաթիւ էին բնակարանք եւ բնակիչք հայոց, եւ էին դժուարութիւնք երթեւեկութեանց հայոց յայսկուսէ ձորոյն եւ ի վերին թարզից՝ անցեալ ընդ չուկայն Սէքպաշի կամ Ըրտանդք-Քէօրիւսիւ, յուրօս էին կամուրջք քարուկրեայ, վերջինն կամարակապ ունէր միանգամայն զքարուկրեայ խանութս յերկուս յեզերս ի վերայ ձորոյն-ձորահայեաց՝ եւ ի ձախակողմեան ոտին մառան ընդարձակ ի պէտս շուբուր մէյլսանէ անուանեալ մեծի գինետան:

Սովորութիւն է ի Պրուսա, զի զառաջին շարս երկուս վերնատան կանանց՝ որոշեալ ի քառակուսի կանդունս՝ վաճառեն եկեղեցպանք, եւ որ զնոյ առնուն՝ թողուն ի ժառանգութիւն իւրացւոցն յետ մահուան իւրեանց առանց սահմանափակ պայմանի: Եւ աստի ծնանին յաճախ ի կանայս, նաեւ ի ժառանգակիցս վէճք, կոիւք, աղակակք նւ կոփահարութիւնք անգամ՝ մինչեւ առիթ լինել խանդարման յաճախ ժամերգութեանց: Լսէին բազմիցս Առաջնորդք եւ Ժողովք աղգային զդատս նոցա:

Եւ սոյն այս խնդիր յաւէտ էր քար գայթակդուրեան, միանգամայն առիթ գժտութեանց ընդ մէջ Առաջնորդաց եւ իշխանաց հանդերձ սարօքն:

Գէորգ Եպ. ջան կալաւ նախ բառնալ իսպառ զմենավաճառ սովորութեանդ եկեղեցւոյ՝ զարժառիթն յաճախապէսլ գժտութեանց եւ հակառակութեանց, եւ ազատ թողուլ զկանայս կանգնել խաղաղութեամբ ի վերնատան ուր եւ կամիցեն:

Հուսկ ուրեմն առաջարկեաց, զի սեփականութիւն տեղեաց լիցին ցկեանս որք գնոյ առնուն, եւ յետ վախճանի սոցա մնացեն տեղիք յազատ վայելումն հասարակաց, բաղիսեցաւ եւ այս հակառակութեան եւ խոչընդութից: Վասն որոյ եթող առժամմա զայս ձեռնարկ՝ արգելեալ այլեւս զվաճառումն տեղեաց կամ զփոխանցումն:

Վերհաստատեաց առաւել լնդարձակ զկանոնս նշանագրութեան եւ հարսանեաց, ի չորս կարգս վճարմանց որոշեալ, խստիւ պատուիրեալ եւ արգելեալ ի զեխութեանց եւ ի չույլութեանց գժողովուրդ, որք հեծէին յաճախ ընդ պարտուք յերեսաց հարսանեաց: Գոգցես Խօթնեակս ինչ տեւէին հարսանիք՝ միով Խօթնեակաւ յառաջ սկսեալ, հանդերձ նուագարանօք եւ կերակրովք եւ այլն: Մահմանեաց զերիս առուրս առնել զհարսանիս սկսեալ յերեկոյէ շաբաթու մինչեւ ցերեկոյ երկուշարթի առուր յորում միջոցի եւ յաւուր էր ըստ տեղույն սովորութեան առնելոյ զբագլերուստ, ոմանք առնէին ի միջօրէի, որպէսզի քահանայք ժամանեացեն եւ այլոց, եւ մի՛ լիցին գժգոհութիւնք:

Արգելեաց խստիւ եւ զարբեցութիւնս որ ի հարսանիս, ի տօնալուըմբութիւնս եւ ի չնորհաւորութիւնս Ս. Ծննդեան եւ Ս. Յարութեան, յորս յաճախէին գէպք անախորժելիք, խոտլութիւնք եւ գըժգութունք ի տունս եւ յընտանիս: Առաւել եղեւ նախանձախնդիր ի կըթութիւն քահանայից, որոց պատուիրէր յաճախ եւ խոհեմութեամբ հետեւել անթերի կատարման պարտուց իւրեանց, միանգամայն խօսել յանապազ, մանաւանդ յեկեղեցւոյ, ի հայմայրենի լեզու, յորում ոչ յաջողէր Գէորգ Եպ. եւ վշտանայր յոյժ, մինչեւ հարկադըրել պատժել զոմանս, որ եւ այս լինէր առիթ գրգումանց եւ գըժգութեանց, ցորչափ գժուարին էր հասակաւոր անձանց ողորմելեաց ուսանել զհայախօսութիւն:

Մի միայն էր եկեղեցի հայոց Պրուսայու եւ յայնժամ թիւ քահանայից տասն: Տունք հայոց էին մի հազար երկերիւր (բաղկացեալ իրը յ2500-3000 հոգւոյ), որք ոչ բաւականային հոգալ զնիթական պիտոյից քահանայից ըստ արժանուոյն, իսկ պէտք եկեղեցւոյ ոչ ներէին պակասեցուցանել զթիւ քահանայից: Վասն որոյ քահանայք ոմանք պարապէին յերկրագործութիւնս, ունէին եւ պահէին զայգիս, զթթենիս, արգեամբք որոց օգտէին: Հովուութիւն եւ արգելուք պահ-

դըմսոց՝ որպէս յիշեցաք վերագոյնս՝ էին սեփականութիւն Առաջնորդի, որ յանձնէր միում ի քահանայից առ ի հովուել զնոսա. ստանայ Առաջնորդ զբաժինս ի գանձանակաց վերաբերելոց լնդհանուր քահանայից, որպէս եւ ի կտակաց: Գէորգ Եպ. յաճախ թողոյր քահանայից զբաժինս իւր, միանդամայն պատուիրէր նոցա վարել ընդ ժողովրդեան խոհեմութեամբ եւ քաղցրութեամբ ի կողոպուտս եւ ի սուրս հարսանեաց, ննջեցելոց եւ այլոց: Պատօէր զորոց լսէր զբողոքս ըստ նուիրաց եւ ըստ կամաւոր տրոց, որ եւ առիթ լինէր երբեմն զժգոհութեանց քահանայից: Հստ մտաւորականին պակասէին քահանայից բարեկրթութիւնք քաղաքավարականք, յորպիսիս էր Գէորգ Եպ. նախանձախնդիր: Արգելոյր նոցա շրջել ի քաղաքի եւ ի մէջ ժողովրդեան՝ առեալ յուսս զվերակուս իւրեանց փոխանակ ագաներ, որպէս առնէին սամիկք եւ հասարակ ժողովուրդք: Էին եւ այլ թերութիւնք այնպիսիք, որոց ոչ ներէր, միանդամայն յետ երրեակ իրատուց սաստէր զըմբռոստս եւ պատօէր:

Այսպէս ուրեմն յառաջ վարեալ Գէորգ Եպ.-ի զինամս իւր եւ ըգուգս արթնութեամբ շահէր օր ըստ օրէ զսէր եւ զհամակրութիւն ժողովրդեան, թէպէտ ոչ պակասէին եւ հակառակորդք սակաւաթիւք, կուսակիցք Գապահնեանց, ընդ որոց յաճախ խոժուոէր Գէորգ սակս ազգային ինդրոց, եւ Մատթէոս աղայ Գապահնեան հետեւէր լինել ինորոյ ներկայացուցիչ ի կառավարական ժողովս ի դիմաց Հայոց՝ մինչ չարաչար յուղեալ էր յաճախ զդժգոհութիւնս Գէորգայ եւ ժողովրդեան: Եւ զի Սիմէօն աղայ Տէր-Յակոբեան մէծն զգուեալ հրաժարէր ի յիշեալ պաշտօնէ, կարգեաց Տ. Գէորգ ի տեղի նորա զայլ ոք (Կարապետ աղայ Ամիրայեան), 1 Յունիսի 1849 ամի, յորմէ դրգուեալ էր Մատթէոս յոյժ եւ խարդաւանէր, դաւագրէր եւ դրգուէր զկուսակիցս իւր ընդդէմ Առաջնորդի:

Յորժամ Գապահնեան էր ներկայացուցիչ ի կառավարական ժողովոյ, որպէս էր եւ անդամ ազգային վարչական ժողովոյ իշխանապետաց, ջանայր արդիւնաւորել զազդեցիկ գերս յազգային գործս, կապտէր զազդային եկամուտս ինչ, խարդաւանէր ի հոգաբարձութեան աղքատաց եւ Հիւանդանոցի, լսանդարէր զարդար բաշխումն արքունական տրոց զլիսահարկի հաստատելոյց փոխան խարամի ի նըպաստ կուսակցաց իւրոց եւ ի զրկանս ստուարաթիւ ժողովրդեան:

Ուստի սպառեալ էին բարեկամական յորդորք եւ համբերութիւն Գէորգայ, եւ հարկեցաւ հուսկ ուրեմն չէզոքացուցանել զԳապահնեան և յայլ գործս և ի ինդիրս, ոչ մոռացեալ յաւէտ փշրել և ըդխարդաւանութիւնս առնն ճարտարի եւ լեզուանուց

ԳԼՈՒԽ ԺԶ.

ՅԱՂԱԳՍ ԱԶԴԵՑՈՒԹԵԱՆՑ ԳէՈՐԳԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
Ի ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ.

Բստ նորոգ կարգադրութեանց եւ օրինաց Օսմ. Պետութեան համաձայն հրովարտակի կիւլհանէի բացարձակ հրամանաւ լուսամիտ եւ հպատակասէր Սուլթան Մէծիտ կայսեր թուրքիոյ հաստատեալ էր յիւրաքանչիւր նահանգս կառավարական ժողով կեղրոնական ընդ նախագահութեամբ կուսակալ փաշայի, եւ վարէր զընդարձակ իրաւունս ըստ վարչականին, ըստ տնտեսականին, ըստ դատականին եւ ըստ այլոց ինդրոց բազմապիսեաց:

Էին ի նմա ներկայացուցիչք իւրաքանչիւր ազգաց հպատակաց, թէպէտ ստուարաթիւ մեծամասնութիւն անդամոց ժողովոյ բաղկանայր ի Մահմէտականաց, ունելով զայլ եւ այլ դիրս պաշտօնականս այլ եւ այլ անուամբք:

Մոաջնորդք եւ ազգապետք հպատակ ազգաց էին բնական անդամք ի ժողովի անդ ըստ նորոգ օրինաց պետութեան, առանց ստանալոյ զուօճիկ ինչ եւ զծախս ի գանձարանէ պետութեան:

Հստ այսմ կանոնի եւ կարգադրութեան՝ ուրեմն ստանձնեալ էր Գէորգ Եպ. եւ վարէր զանդամակցութիւն նահանգային ժողովոյ (վիւրայէթ իտարէիսի մէծլիսի), իրրեւ զԱռաջնորդ Հայոց, եւ պաշտանէր զշահս Հայոց ոչ միայն վիճակի իւրոյ, այլ եւ ընդարձակագոյն համայն նահանգին, յորում էին վիճակի կուտինայու, Նիկոմիտայ, Պանտրմայու եւ նման ինչ յԱնկիւրիոյ եւ ի Զմիւռնիոյ ըստ ժամանակին:

Պահէր Գէորգ եւ զսիրալիր յարաբերութիւնս ընդ կուսակալ փաշայից եւ ընդ Օսմանեան աւագանւոյ, որպէս նաեւ ընդ այլոց ազգաց եւ Ազգապետացն մանաւանդ ընդ Յունաց եւ Հրէից:

Եւ ի կարեւոր դէպս համարձակութեամբ իմն պարզէր Տ. Գէորգ զիւր կարծիս առ նոսա եւ ի ժողովս: Առանց խորութեան պաշտանէր եւ զօսմանցիս եւ զթոյնս, զշրեայս եւ զայլս, ուստի սիրէլի զանձն կացոյց բազմաց օտարաց: Սիրէին յոյժ եւ կուսակալք զսա, եւ ախորժ իմն հաճութեամբ ունկնդիրէին խորհրդոց եւ կարծեաց սորա:

Յաւուր միում առթիւ իւիք յուղէր ժողովն կառավարական զիւր գիւր ինչ վարչական ընդդէմ ոմանց պաշտօնէից եւ վիճաբանէր: Կուսակալն նամըդ փաշայ՝ այր զինուրական, արթուն, ժիր եւ խիստ մնայր եւ եթ եւ ունկնդիրէր: Տեսեալ Գէորգայ զաշառութիւն ժողովականաց, որ պարմանեալ միացեալ էին կանխաւ, եւ ոչ զօգուտ ժո-

զովրդեան կամ պետութեան պաշտպանէին, ետ զհակառակ կարծիս եւ յամառեցաւ։ Յորմէ զայրացեալ միոյ անդամոյ մահմէտականի քեօր (միականի) շէյլ կոչելոյ, անարգէ գէորգ եւ զշայ՝ ասելով. իրմէնի ինատը բուրտու եւ իրմէնի ինատը իւրէմիշ (կալաւ հայկական յամառութիւն)։ Ընդ որ զայրացեալ Գէորգայ կշռէ նմա զյանդիմանութիւն արժանաւոր, մինչեւ փութացաւ միջամտել կուսակալ փաշայն եւ յանդիմանութեամբ եւ անարգանօք արտաքսէ ըզ-չէյին ի ժողովոյ։

Յաւուր միում յուղէ զինդիր վկայութեանց որ առաջի դատարանաց (չէրի) եւ այլոց, մինչ մերժէին ցայն վայր զվկայութիւնս ոչ-մահմէտականաց, յորմէ օգտէին անարդար թուրքք, դատաւորք եւ վճռատուք (դազը, միւֆթիւ), օրինագէտք եւ անձինք շահամոլք։ Յետ բաղում վիճարանութեանց ի կառավարական ժողովի, ասէ, եթէ «իրաւացի էր երբեմն մահմէտականաց լսել զվկայութիւնս մահմէտականաց եւ եթ, որք ըստ հաւատոց իւրեանց ոչ ներէին անձանց խօսել զսուտ, զբարտել զայլ ոք, առնել զվկայութիւնս ստապատիրս, զորպիսի օրէնս ունիմք եւ մեք քրիստոնեայք եւ վարէտի յաճախ, զիտացեալ զի քրիստոնեայք ատել ատեն զսուտ վկայութիւնս, սակայն արդ զիտեմք հաւատատեսւ զհակառակ արդիւնս յերկուս կողմանս միանդամայն եւ ի մի բան. կարէ՞ք դուք ապացուցանել, զի զարդիս մահմէտականք ոչ տան հանապազ զվարձեալ վկայութիւնս սուտս, մինչ ես կարեմ ցուցանել զբաղում օրինակս ի պաշտպանութիւն առարկութեանց իմոց եւ յապացուցութիւնս»։ Ընդ որ պապմնձեայ ժողովականաց՝ տան միահամուռ իրաւունս եւ հաստատեն զառաջարելութիւնն Գէորգայ, յորմէ օգտին եւ այլ քրիստոնեայք եւ հպատակք։

Թողցուք զայլեւայլ ինդիրս թաղականս, շինականս, դատականս եւ ջրայինս, որք ստուարացուցանին զկենսագրութիւնս զայս. յիշեցուք զոմանս ի կարեւորաց միայն, որք պարզեն զինդիրս իրաւաբանականս եւ զկենցաղագէտ ընդունակութիւնս սորա ընդ վարչական հմտութեան։

Զերբակալեն զոմանս հայս ի գիւղօրէից նիկոմիտայ՝ ամբաստանեալ, իբր զի տան պաշարս աւաղակաց, եւ թէ գողակից եւ կամ դողոնաթաքոյց իցեն։ Ուր ուրեք ներկայացուցանեն զայս դատ կեղծոնական կառավարական ժողովոյ։

Գէորգ Եպ. յետ ունինդրելոյ վիճարանութեանց անդամակցաց համաձայն սովորութեան իւրում, յորժամ կամէին տալ զվճիռ, փութաց պարզել զկարծիս իւր։ Նախ պախարակէ զգողս, զգողութիւնս ընդ զողօնաթաքոյցս եւ ընդ պաշարատուս։ Ապա առարկէ, զի ի դը-

ուարանալ կուալարութեան ձերբակալել զգողս եւ զաւազակս, յոր-ժամ պնդեալ են զէտա նոցա խումբ խումբ ոստիկանք եւ պահակք ընդ շինականաց ի բազմաց հետէ, զի՞նչ պարտեն առնել ջաղացպանն եւ ընկերք որ զուրկ գտանին ի զինուց եւ ի զինավարժութեանց, պարապեն զցայդ եւ զցերեկ ի ջրազաց՝ հեռու ի բնակարանաց եւ իրը մենակեացս, վտանգ կրկնակի ծանրանայ ի վերայ նոցա, ի միոյ կողմանէ երկնչին ի կառավարութենէ, որ ունի զօրէնս, սիրէ զարդարութիւն, հետեւի ճշմարտութեան, եւ ի միւսմէ՝ զողան յաւազակաց, որ ոչ ունին զօրէնս կանոնաւորս, զէնք եւ քմահաճոյք իւրեանց պասունակեն զարդարութիւն և զճմարտութիւն. ոչ մոռասցուք և զնոսս, որք երբեմն ազդեցին կառավարութեան զյարաբերութիւնս եւ զպահանջս աւաղակաց՝ խնդրեալ եւ զպաշտպանութիւն, եւ ապա հարուածեցան չարչար եւ զրկեցան ի կենաց ընդ ընտանեաց իւրեանց եւ ընդ անմեղ անձանց, եւ կառավարութիւն փոխանակեաց զոհից կամ պարագայիցն եւ զոչինչ։ Ապա ուրեմն զի՞նչ պարտէին առնել եւ սոգայ յորժամ աւաղակք պահանջէին ի սոցանէ զպաշար կերակրոյ, տային պահէլ զգողօնս, եւ զի զործ սոցա էին եւ հանապազ ի բացօմեայ զաշտու եւ ի ճանապահս, զի՞արդ պարտէին առնել, մերժե՞լ զըմահաճոյս աւաղակաց, եւ զալ ապաստա՞ն լինել քաղաքաց, եւ յայնժամ ո՞ հոգայր զպիտոյից նոցա եւ ընտանեացն, ունի՞ կառավարութիւն ըստ այսոցիկ զկարեւոր օրէնս եւ զհրահանդս յապահութիւն այսպիսեաց բաց ի լակոնական կանոնաց եւ օրինաց վերաբերելոց զողոց, սւազակաց, զողօնաթաքուցից եւ այլն։

Յետ որոյ խորհրդակցեալ վարչական ժողովոյ ի նորոյ, արձակեն անպարտ զձերբակալեալս եւ զբանարեկեալս, զորոց ակնարկեցաք վերագոյն։

Դարձեալ յաւուրս կուսակալութեան հոչակաւոր նամրդ փաշայի վերոյիշեւոյ, յետ մեծի երկրաշարժի Պրուսայու (1854-5թ.), զորմէ ունիմք գրել ի կարգին, կործանեալ կամուրջ Սէր-Պաշի անուանելոյ, ի վեր քան զիրկանտը կամուրջն կամարակապ, դժուարութիւն մեծ էր ժողովրեան, մանաւանդ Հայոց, անցանել յայսկուսէ յայնկոյս (յաջակոյսէ ի ճախակողմն, նոյնպէս ի հակառակն) ժորոյ Կէօքտէրէի եւ երթեւեկել ի չուկայն մեծ, զալ ճախակոյսեան Հայոց ի վարժարանս եւ ի Ս. Եկեղեցի։ Եւ երկարէին ճանապահք առ ի անցանել ի կամրջէն լրկանաւոյ, որոյ ճանապահքածածք կամարն եւ իթ խոնարհեալ ոչնչացեալ էր, կամ ի կրկին կամրջոց Մաքսիմի (Մահղէնի) – ջրամբարի, որ եւ հաստատեալ կայ անդ ի հին ժամանակաց հետէ առ ի ամբարել զվտանգաւոր եւ զկործանարար սեւ

Բաժանորդ կարելի է գրել հետևեալ տեղերը -

Ֆրանս՝ Լ. Գեւոնեան, 17, Rue Damesme, Paris.

Ն. Կակուեան, 49, Rue Nationale, Marseille.

Յունաստան՝ «Նոր Օր», 20-Ա, Rue Vouli, Athènes.

Կիպրոս՝ Յ. Մահտեսան, Arasta St. No. 1, Nicosia.

Բուլգարիա՝ Յ. Տէլէնան, 82, Bld. Hristo Botev Sofia.

Ռումանիա՝ Յ. Սարգսեան,

Տր. "Astoria", 14, Str. Pictor Lichian, Bucarest.

Եգիպտոս՝ Գ. Մխիթարեան, խմբագր. «Յուսաբեր»-ի,

Բ. P. 868, La Caire.

Երովիա՝ Յ. Պուրսալեան, Hirna.

Սիրիա՝ Յ. Սիմոնի, B. P. 208, Alep.

, Յ. Սպածեան, B. P. 870, Beyrouth.

, Յ. Պոյաճեան, B. P. 321, Damas.

Իրաք՝ Մ. Սոսեան, South Gate Badaveen, 29-1, Bagdad.

Պարսկաստան՝ Խ. Մելքոնմեան, Թաւրիլ:

, Յ. Մուրադեան. (Խովիստանի ընդհ. դործակալ),
Արագան, P. O. Box 22.

, Վ. Յովհաննիսեան, Թէհրան,

Teint. "Havar", Khiabane Nadery, Tehéran.

Հիւս. Ամերիկայի ընդհ. գործակալ՝ Յ. Կոբոյեան,

H. Gopoian, 359 W. 28th St. New York, N. Y., (U. S. A.).

Հարաւ. Ամերիկա՝ «Արմենիա», Canning 1087, Buenos-Aires.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ամերիկա, Բրիտ. Կայսրութիւն, Եգիպտոս, Խալիս:

Մարեկան 65 ֆրան

Ֆրանս եւ այլ երկիրներ

, 50 ֆրան

Ռումանիա, Բուլգարիա, Յունաստան Սիրիա, եւ

Պարսկաստան՝ , 40 ֆրան

Հայոց՝ Յամակների, Պրամի, յօդածների եւ որիշ ամեն

տեսակ առաքումների համար -

S. VRATZIAN — 13, Rue des Platanes, Cité Jardins de Plessis-Robinson (S.)

«Յ Ա Ռ Ա Զ»

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԽՄԲԱԳԻՐ՝ ՇԱԽԱՐԾ ՄԻՍԱՔԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ Տարեկան Վեցամսեայ Խամսեայ

Ֆրանս եւ Գաղութներ 140 ֆրան 70 ֆրան 35 ֆրան

Ենթիա, Եգիպտոս, Զիցերիա, Խալիս 250 ֆրան 130 ֆրան

Ռիք երկիրներ 200 ֆրան 100 ֆրան

Ամերիկա 200 ֆրան 100 ֆրան


ՀԱՅԹ. — 17, Rue Damesme, Paris XIII

զուր) : Վասն որոյ առաջարկէ Գէորգ Եպ. կառավարական ժողովոյ վերաշինել զկործանեալ կամուրջ Սէթ-Պաշի :

Յետ երկար խորհրդակցութեանց յաղագս գրամական անձկութեանց քաղաքի եւ վարչութեան յերեսաց այլեւ այլ ձախորդութեանց խորհրդակցութեանց երկրաշարժի, Հրկիզութեան խանգարմանց այգեաց և որթատնկից եւ այլոց եւ այլոց մեջ մանաւանդ աղքատաց, հաստատեալ առնուլ զինգական փարայս յանցորդաց յերկուց կողմանց մինչեւ վճարեսցեն պարտք լերաշինութեան : Յայնժամ առարկէ Տէ. Գէորգ Եպ., Եթէ գժուարութիւն մեծ լիցի մանաւանդ աղքատաց, որք զնոյ առնեն ի շուկայէ զկարեւոր պէտս իւրեանց օրականս և զհաց, եւ առ ի գնել զօյայ զհաց ի մերձաւորագոյն շուկայէ Սէթ-Պաշույ, որ արժէ 30-40 փարայ, եւ զնեսցեն տասն փարայի միայն, պարտին վճարել յերթեւեկելս իւրեանց ընդ կամուրջ զհնդական փարայս երկից, մինչ դժուարութեամբ իմն զտանեն զտան փարայ ի գին քառորդ կամ կիսոյ մասի հօյանց հացի, զիա՞րդ վճարեսցեն զտուրս կամքջոյ. եւ եթէ սեփական պարտք քաղաքի կամ քաղաքային վարչութեան են վերաշինել զկամուրջի: Եւ այսպիսի առարկութեամբ ազգէ ժողովոյն եւ տայ փոխել զորոշումն իւր: Եւ արդարեւ վերականդնեցաւ կամուրջ Սէթ-Պաշույ յարդեանց քաղաքին (ի 1855-6 թուականս), ի ձեռն Հայազդի ճարտարապետի Սարգիս անուամբ եւ Հայազդի արհեստաւորաց :

Հստ այսոցիկ վայելէր Գէորգ զազդեցիկ դիրս ի ժողովս, եւ զհամակրութիւնս եւ զսէր յօտարազդիս, մանաւանդ Յոյնք եւ թեմակալ Եպիսկոպոս նոցա եւ Քահանայապետն Հրէից եւ Հրեայք ապաւինէին պաշտպանութեան Գէորգայ ի ծանրակշիռ զործս իւրեանց ազգայինս:

Ոչ էր հետի (իբր 10-15 վայրկեաէ հետիունն) Սէրայ անուն պաշտօնատունն կառավարական Առաջնորդարանէ Հայոց, յայնկոյս- ի ձաւակողմն Կէօֆ-ակրէի, եւ միանդամայն եւ եթ յեօթնեկի մասնակցէր ժողովոյ բաց ի կարեւոր խնդրոց, Երթեւեկելով Երիվարաւ եւ պատուով, ուղեկցութեամբ քահանայից Երկուց, որոց մին տանէր յառաջոյ զցուալ Առաջնորդ - Եպիսկոպոսի բարձրացուցեալ ի ձեռս, Երկուց համագետեամբ ժամակոչաց իրրեւ բարապանաց եւ ազգային մըքտարի Հայոց (բատ տեղուոյն քէինա կոչեալ): Ի պաշտօնական եւ ի տօնական այցելութիւնս ուղեկցէին եւ ոմանք յիշխանաց եւ յերեւեկեաց, եւ փոխանորդ - վարդապետ նստեալ ի ձիս (եւ ի վերջին ամս կառօք): Ոչ միջամտէր սա պաշտպանութեան անձանց և գործոց իրաւամբ դատապարտեեաց, միանդամայն զդուշանայր յոյժ ի գըրամական եւ տասանորդական զործս եւ ի կապալառութիւնս: Սէրէր



Imp. ARTISTIQUE, K. Matikian — 42, Rue de la Jonquière, PARIS (17^e)